

ԷԶՄԻԱԾԻՆ



Թ
2005



ԱՄԵ 146 ԿԱ ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ



Ու լ ա ղ Ե Վ Բ Ե Ր
2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Լիոն	3
--	---

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Այսօր Բոյաջանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	10
Հայրապետական գնահատություն	12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով	13
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով	14
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքը ՀՀ Գիությունների Ազգային Ակադեմիայում տեղի ունեցած Հայոց Գրերի Գյուրի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներին	15
Մեծ եղեռնի զոհերի սրբադասման հարցն ուսումնասիրող հանձնաժողովի անդրանիկ նիստը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	17
Տ. Ղուկաս արքեպիսկոպոս Զաքարյանը նշանակվել է Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի տնօրեն	18
Տ. Վազգեն արքեպիսկոպոս Նանյանը նշանակվել է Գևորգյան Հոգևոր ճեմարանի փոխտեսուչ	19
Հայաստանի Հանրապետության Անկախության տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	20

ՔԱՐՈՋԻՈՄԱԿԱՆ

Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հաշվեերացի տոնին մատուցված Ս. Պատարագի ընթացքում կատարված քահանայական ձեռնադրության ընթացքում	21
Տ. Վիգեն եպիսկոպոս Այբալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագի ընթացքում կատարված քահանայական ձեռնադրության ընթացքում	25
Տ. Տարոն եպիսկոպոս Ծերեմյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագի ընթացքում կատարված քահանայական ձեռնադրության ընթացքում	27

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐ ԲԱՆԱՍԱՐՅԱՆ - Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարը շարունակականություն	29
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Սրբոց Թարգմանչաց նվիրված միջնադարյան գանձերը	35
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱՂՅԱՆ - Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ»-ը և նրա պատվիրատուի ինքնության խնդիրը	47
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մխիթարիչ Ապարանեցի մատենագիրը (շրջ. 1345-1417 թթ.)	56
Ռ. Ս. ՆԱԿԱՊԵՏՅԱՆ - Աղձնիքահայերի հարսանեկան շարքի ավանդական որոշ սովորույթների ու ծեսերի մասին	66
ՆԵԼԻ ՄԱՐԳԱՅԱՆ - Ուսուցիչ Պատկանյանի հուշերը Մկրտիչ Էմինի մասին	80
ԿԱՄՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ - Հայ հոգևորականությունը և ֆիդայական շարժումը	85
ԲԱՆԱՍԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Նիկոլ Աղբալյանը՝ գրականության պատմաբան	93
ԼՈՒՍ ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ - Երևանի Կաթողիկե եկեղեցին	101

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԽԱՉԻԿ ԲԱՐԻԿՅԱՆ - Արժեքավոր աշխատություն Մաշտոցի և Հայոց Այրուրենի մասին	115
--	-----

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Գիտաժողով՝ նվիրված Գրերի Գյուրին	119
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Զթուլացող եռանդով	123

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և սարկավազական ձեռնադրություն Երևանի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցում	126
Տ. Խաչատուր քահանա Զեսաբլյան	127
Տ. Մեբեոս քահանա Ղալաջյան	128
Տ. Դերենիկ քահանա Միքայելյան	129
Տ. Գրիգոր քահանա Գրիգորյան	130
Տ. Մաշտոց քահանա Հակոբյան	131
Տ. Մեսրոպ քահանա Մկրտչյան	132
Տ. Սյրեփաննոս քահանա Ավետիսյան	133

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	134
Տ. Հովհաննես քահանա Ալեքսանդրյան	135
Տ. Սյրեվաննոս քահանա Մարգարյան	136
Տ. Մեսրոպ քահանա Հարությունյան	137
Տ. Սիմեոն քահանա Տեր-Մկրտչյան	138
Տ. Մաշտոց քահանա Սրեդիանյան	139
Տ. Զգոն քահանա Աբրահամյան	140
Տ. Շնորհք քահանա Մաթևոսյան	141
Տ. Թորգոմ քահանա Մարգարյան	142
Տ. Գևորգ քահանա Տեր-Բարսեղյան	143

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	144
Տ. Շահն աբեղա Անանյան	145
Տ. Զավեն աբեղա Յազեկյան	146
Տ. Տարոն աբեղա Ղուկիյան	147
Տ. Շահան քահանա Միրզոյան	148
Տ. Վարազ քահանա Հակոբյան	149
Տ. Վահան քահանա Առաքելյան	150
Տ. Ներսես քահանա Ռուշանյան	151

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նոր ուսումնական փարվա բացման արարողությունը	152
Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում	153
«Հանրակրթության արդի իրավիճակը Հայաստանում և Եկեղեցու դերը կրթական համակարգում» թեմատիկ ըննարկում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	154

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ԱՔԵՂԱՍ ԴՈՌՇԱՄԼ - Բոսնի վանքում փեղի ունեցավ 13-րդ Միջազգային Էկումենիկ Կոնֆերանսը	155
---	-----

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՐՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Կենսաթոշակային հիմնադրամի նախագահին	157
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Միևդեմոս»-ի անդամներին	157
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆինլանդիայի Հանրապետության նախագահ Տարյա Հալոնենին	158
Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունեց ՀՀ-ում իր պաշտոնավարությունը ավարտող Հունաստանի դեսպանին	159
ԱՊՀ անդամ պետությունների Ներքին գործերի նախարարներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	160

Եկեղեցական բնմ. յուրեր	161
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата	162
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	166
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine	169

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՄԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԶՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՏԱՆԲՈՒԼ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՏԱՆԲՈՒԼ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



143474 II

2002

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՈՆ

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հոգեշնորհ Տ. Վազգեն արքեպիսկոպոս Նունյանի, որպես գավազանակիր, ուղեկցությամբ, մեկնեց Լիոն (Ֆրանսիա)՝ մասնակցելու Կաթոլիկ Եկեղեցու Լիոնի Արքեպիսկոպոսարանի և Սուրբ Էջիդիո համայնքի համարող կազմակերպած՝ խաղաղությանը նվիրված միջազգային համաժողովին: Թվով 19-րդ այս համաժողովը կրում էր «Le Courage d'un Humanisme de Paix» խորագիրը:

Վեհափառ Հայրապետին Լիոնի միջազգային օղանավակայանում դիմավորելու էին եկել Լիոնի Արքեպիսկոպոս Կարդինալ Ֆիլիպ Բարբարենը, Արևմտյան Եվրոպայում Հայրապետական պատվիրակ Տ. Գյուլտ արքեպս. Նազգաշյանը, Լիոնում Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Կիար Էդուարդ Նալբանդյանը, Սուրբ Էջիդիո համայնքի ներկայացուցիչ Հայր Մարկո Նիավին, Ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ: Օղանավակայանի պատվո հյուրերի սրահում Լիոնի Կարդինալի հետ հանդիպմանը Վեհափառ Հայրապետին իր գոհունակությունը հայտնեց կրկին Ֆրանսիայի հյուրընկալ հոգում գտնվելու և Կարդինալ Բարբարենին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին իր այցելությունից հետո ևս մեկ անգամ հանդիպելու համար: 2001 թվականի հովվապետական այցից հետո սա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկրորդ այցելությունն էր Լիոն:

Ծրագրի համաձայն, նույն օրնեկ համաժողովի բոլոր հրավիրյալ մասնակիցները հյուրընկալվեցին Լիոնի քաղաքապետարանի ընդունելությունների սրահում՝ քաղաքապետ Ժեռար Կոլմերիի հրավերով:

Նաջորդ օրը, սեպտեմբերի 11-ին, Ֆուլվիե Մայր Տաճարում (Basilique de Fourvière) լիոնյան ծեսով մատուցվեց Սուրբ Պատարագ՝ բարձր նախագահությամբ Հայոց Հայրապետի և Լիոնի Կարդինալի: Վերջինս հայերեն «Բարի՛ եկաք, Վեհափառ Տեր» խոսքերով ողջունեց Նորին Սրբությանը: Սիրազան արարողության ընթացքին, որն ուղիղ եթերով հեռարձակվում էր Ֆրանսիական հեռուստատեսությամբ, Վեհափառ Հայրապետը հայերենով ընթերցեց իր ուղերձը ներկա բազմաեզգար հավաքագյալներին: Անհրաժեշտ է նշել, որ Ս. Պատարագին իր մասնակցությունն էր բերում նաև Լիոնի Հայաստանյայց Սուրբ Հակոբ եկեղեցու Կոմիտասի անվան երգչախումբը:

Նույն օրը Լիոն քաղաքի Աուդիտորիումի (Auditorium Maurice Ravel) դահլիճում կատարվեց համաժողովի պաշտոնական բացման արարողությունը՝ ներկայությամբ Հայոց Հայրապետի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մուրաֆյանի: Բացման հանդիսությանը ելույթ ունեցան Մոզամբիկի Հանրապետության նախագահ Արմանդո Էմիլիո Գերուզան, Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Նիկոլաս Սարկոզին, Իսրայելի Բաբունապետ Յոնա Մաթգգերը, Ջենթրեբերի Արքեպիսկոպոս Ռոան Վիլյամսը, Սուրբ

Էջիդիո համայնքի երմնագիր Անդրեա Բիկկարդին և ուրիշներ: Այնուհետև ժողովականներին ընդունեց Ռոն-Ալպ շրջանի նախագահապետ Ժան-Պիեռ Լակլուան: Հանրային ընդունելությանը նախորդեց նախագահապետի և Վեհափառ Հայրապետի առանձնագրույցը, որին ներկա էր նաև փիար Էդուարդ Նալբանդյանը: Զրույցի ընթացքին Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքն ուղղեց փիար Լակլուային՝ Հայոց գեղասպանության հուշարձանի կանգնեցման համար քաղաքի ամենակենսաբերական տեղերից մեկում փարածք հատկացնելու համար: Իր եերթին Ռոն-Ալպ շրջանի նախագահապետն իր շնորհակալությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ ևս մեկ անգամ հավաստելով Ֆրանսիայում հայ համայնքի վստահական բարի համայնքի մասին:

Մեպտեմբեր 12-ին սկսվեցին բուն ժողովական նիստերը: Լ.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ-ն մասնակցեց «Հովհաննես Պողոս Բ-ի ժառանգությունը՝ Ասիզիի ոգին» (Un héritage de Jean-Paul II: l'esprit d'Assise) խորագիրը կրող նիստին:

Լ.Ս.Օ.Տ.Տ. ԳԱԲԵԳԻՆ Բ ՄՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՄԸՐ ԼԻՈՆԻ ՍՈՒՐԲ ԷԶԻԴԻՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՐՄԻՏ ՀՐԵՎԻՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Ձերդ Սրբազնություն Կարդինալ Ֆիլիպ Բարբարեն,

Միրելի հոգևոր եղբայրներ և քույրեր,

խաղաղության միջազգային այս հավաքի մեծարգո մասնակիցներ.

Գոհություն եմք մատուցում Աստծուն, որ Մեզ ընծայեց հնարավորությունը իրավերով Կարդինալ Բարբարենի աղոթակից լինելու ի սեր խաղաղության զուգորդող ավանդական այս մեծ ու ներկայացուցական հավաքին՝ խնկաբույր ույս Տաճարի կամարների ներքո, զորավոր ու գթառատ քարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի: Մենք Առաքնորդն եմք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու: Եկի՛ւ եմք բիրիական Հայաստանից և օրհնություն եմք բերել Սուրբ Էջմիածնից՝ պնդականորեն կառուցված առաքին Մայր Տաճարից, որը 17 դար Զրիստոսի էջի աքրագան խորհրդով իր թևերի ներքո պահպանում է աշխարհապարտ հայոց հույր: Հանուն մեր ժողովրդի ողջունում եմք Ձեզ և Մեր աղոթքը բարձրացնում երկինք՝ հայցելով, որ խաղաղությունը իրական դառնա ու պարզաբերի աշխարհի բոլոր կողմերում, բոլոր մարդկանց ու ժողովուրդների կյանքում:

Մեզ համար ուրախություն է խոսք ուղղել այս հավաքին, որի նպատակն հավատարմությունն է խաղաղության ճանապարհներին: Արդարև, մարդկության պարտության մեջ հաճախ են մուրրվել խաղաղության ճանապարհները, բայց եղել ու մնում են ձգտումը բոլոր ժողովուրդների: Այդ մասին է վկայում նաև միջկրոնական այս աղոթաժողովը, որ նախանձախնդրությամբ Սուրբ Էջիդիո համայնքի, երկու տասնամյակ համախմբում է տարբեր կրոնների ու ազգերի ներկայացուցիչներին:

Մենք հոգևոր առաքելորդին ենք մի ժողովրդի, որը իր հնագույն պատմության մեջ շատ փորձություններ, ավեր, հալածանք ու կտրորած է տեսել, կրել է ցեղասպանություն և վշտահար հոգու աղոթքով հաճախ է խաղաղություն հայցել երկրներից՝ հայացքի տալիս Արարարը, որտեղից փրկության ու վերածնության շնորհը գտավ մարդկությունը: Բոլոր կրոնները փնտրում են խաղաղությունը երկրի ու երկրի: Եվ առաքելություն ունեն փնտրելու խաղաղությունը մարդկանց մեջ: Սուրբ Էջեղիոյի աղոթածողովի ծնունդից ի վեր շատ իրավիճակներ են փոխվել՝ մասնավաճառ առաքնորդելով դեպի պեղծությունների նոր հարստություններ ու ավելի սերտ համագործակցություն: Մակայն սյուսթ էլ աշխարհը հուզում են միջպեղծական, ազգային ու կրոնական հակասություններ, տուգնապետ են հնչում բոլոր են լսվում բռնությունների, ահաբեկչության և աբյուսալիզմի խնդիրներ: Այսօր էլ աղքատության, օրինազանցության, իրավունքի ուրանահարման և այլ չարիքներ խոսվում են հասարակությունների կյանքը, առկա են առողջապահական, բնապահպանական և այլ խնդիրներ, որոնք պահանջում են անհերքելի վճիռներ ու միասնական մոտեցումներ:

Արդի ժամանակների ընթացքների մեջ ամեն բան դարձել ու դառնում է այնքան փոխադրված, որ իրականում ճիշտ է ասելը, թե փոքրանում է Երկիր մոլորակը՝ այն առումով, որ նրա որևէ անկյունում կարաքվող որևէ իրադարձություն արձագանքվում է այլ տեղերում: Համընդհանուր մարահոգության ու համընդհանուր ցանքերի կարիքն է զգացվում բարեկարգելու համար մեր ընդհանուր տունը, որպեսզի այնտեղ փրապետորդ և դեպի կարգավորումներ առաքնորդող լինի խաղաղությունը: Խաղաղության մեջ Աստուծո օրհնությունն է, կյանքի առաջընթացն ու երջանկությունը, խաղաղության մեջ հույսն է գալիքի:

Ջրիսարկյաններին համար խաղաղության կոչել՝ նշանակում է վրայել Ջրիսարտին: Մեր Տիրոջ ու Փրկչի պարգաւն է՝ «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մարկ. Թ 49): Աստվածաբանություն է խաղաղություն գործելը և խաղաղություն կերտելը: Առ Աստված մեր հավատի դրսևորումն են խաղաղությանն ուղղված մեր քայլերը, քանզի հավատն ինքը մարդու խաղաղության ուխտն է Աստուծո հեղ: Աստուծո հեղ հաշտ հոգու խորհուրդը՝ սերն ու հաշտությունն է մարդկանց հեղ, ու նրա պարտը՝ գործը հանուն մարդու ու հանուն կյանքի: Եթե հավատ ունենք, ուրեմն նաև՝ պարտականություն խաղաղաբար լինելու՝ արդարություն գործելով, իրավունք պաշտպանելով, բարին ընտրելով, ուսուցանելով, և այս ճանապարհին բոլոր գործերը մեծ են:

Հավատը, որ ունենք առ Աստված, պիտի օգնի մարդկության կյանքի նորոգմանը իր ճշմարիտ բնության, կոյնան ու նպատակի մեջ՝ ընթանալու դեպի Աստված, որպեսզի Երկրների արքայությունը հաստատվի այս աշխարհում: Այս է մեր դավանանքն ու քարոզությունը: Ժամանակները փոփոխվել ու փոփոխվելու են, շարունակ աճելու են մարդու գիտելիքներն ու հնարավորությունները, և միշտ արդիական է լինելու անհրաժեշտությունը, որպեսզի գեղական ու վերահսկող լինի հասարակական գիտակցությունը, որի ակունքը նրա հոգևոր-բարոյական սկիզբն

է: Մենք բոլորս Տիրոջ տանն ենք ապրում և մենք չէ որ հասարակել ենք կյանքը, բայց մենք գործակիցներն ենք Արարչի, որպեսզի այն ծաղկի, լեցուն լինի ուրախությամբ ու պայծառությամբ: Արդ, տարբեր ժողովուրդներ, տարբեր մարդիկ, բայց մեկ Աստծո զավակներն ենք՝ կոչված միմյանց հանդես խաղաղություն գործելու:

Նշարենքսց չեն խաղաղության ճանապարհները, բայց միշտ հնարավոր, եթե ճշմարտապես ունենք խաղաղության ձգտումը: Արդարությունը, միմյանց ազատությունն ու իրավունքը ճանաչելու և հարգելու հիմքերի վրա կարող է կառուցվել խաղաղությունը և իրականում բարի արդյունքներ բերել՝ իբրև ճշմարիտ մարդասիրության արժեք ու արտահայտություն: Դժվարությամբ՝ տևական քանքով, համոզումով ու նվիրումով են նաև միջազգային օրենսդրական դաշրում ամրագրվել ու կյանքի կոչվել մարդու և ազգերի ազատության ու իրավունքի նորմերը, ուրպեսզի ծառայեն համընդհանուր բարիքին, ողջ մարդկության խաղաղ ու սկսելով ծագործ կյանքի հույսերին ու նոր օրվան: Չեղք ձեռքի են ազատությունն ու արդարությունը, սերն ու խաղաղությունը, միմյանցով գորացող և Աստծուն հաճելի «Այն, ինչ անում է Տերը, արդարությամբ է ու ճշմարտությամբ», իսկ «Եթև Տիրք տունը ջրհի, իզուր են բարձրվում այն շինողները» (Մղմ ԴԶ 11, ԾԻԶ 1):

Ազատության քրիստոնեական ըմբռնումը, այնուամենայնիվ, ամենաթողությունը չէ, այլ հավատարմությունը Տիրոջով օրհնված ընթացքներին: Եվրոպական սահմանադրությունը նույնպես պիտի արտահայտի քրիստոնեական ճանաչողությունն ու ըմբռնումները: Եվրոպան քրիստոնեական հավատի ու մշակույթի կրողն ու վկայողն է և պահպանողը ազատության, իրավունքի ու մարդասիրության այն արժեքների, որոնց համար պայքարել է ու զոհողություններ կրել:

Այս տարի մեր ժողովուրդը, որը իր հալածանքների քառուղիներում, տարագրության մեջ չի դադարել հուսալ իրավունքի և արդարության դարի ստավորը, աշխարհում խաղաղության պահպանման և մարդու կյանքի ապահովություն համար աղոթքով հիշարակում է Հայոց ցեղասպանության 90-ամյա տարեկիցը: Մենք հավատում ենք, որ Հայոց ցեղասպանությունը պիտի գրվի համընդհանուր ճանաչում և արդար գնահատական ու դատապարտում, որով կարող են կանխվել նման բռնություններն ու ոճիրները աշխարհում: Ի սեր խաղաղության և ժողովուրդների եղբայրության ու համագործակցության՝ աշխարհասիյուն հայությունը պարտաւոր է բերել իր բոլոր քանքերը: Բազմաթիվ երկրներում ապրող մեր ժողովուրդը վկան է մշակույթների երկխոսության և հավատում է, որ մարդկանց կանքով ու քանքերով իրական է դառնալու մարգարեական խոսքը, երբ ազգերը «իրենց սուսներնեից խոփել պիտի ծուլեն և իրենց սվիններից՝ մանգաղներ ազգ ազգի վրա սուր ճպիրի բարձրացնի, և նրանք այլևս չեն սովորելու պարերազմել» (Եսայի Բ 4):

Թող Աստված ունկնդիր լինի մեր միասնական աղոթքին, զորացնի մեզ մեր առաքելության մեջ և օրհնի բոլոր ազնիվ քանքերը հանուն խաղաղության և ժողովուրդների եղբայրության:

Թող սերն ու շնորհն Աստծո աշխարհի հեղ լինեն այսօր և միշտ, ամեն:

Նաթորդ օրր Վեհափառ Նայրապները գիրաժողովում հանդես եկավ «Քրիստոնեական մարտիրոսությունը 20-րդ դարում՝ հավաքքի և միության ժառանգություն» (Le martyre chrétien au XXème siècle: un testament de foi et d'unité) թեմային նվիրված հեղինակալ խոսքով:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՆԱԿԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՆԱՎԱՏՔԻ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ

Միրելի հոգևոր եղբայրներ և քույրեր,

Այսօր հավաքվել ենք խորհելու Քրիստոնեական Եկեղեցու մեծագույն սրբերի մասին՝ մարտիրոսների: Նահապարկություններով է սկիզբ առնում Եկեղեցու պարմությունը, որը կարելի է կոչել «Նահապարկությունների հանդիսարան»: Առաջին նահապարկները առաքյալները և նրանց հեղինակները եղան: Առաքիները, որ հավաքացին, թե Քրիստոս Փրկիչն է աշխարհ եկած, ով խորտակել է մահը ու կյանք պարգևել մարդուն: Նազար-հազարներ, հայրնի ու անհայր անուններով, իրենց կյանքով ու մահով վկայեցին Քրիստոսին, քանզի ճանաչեցին Աստծո Սերը՝ իր առարածների հանդեպ և հարուցյալ ու հաղթանակող այդ Միտո հեղ աներկյուղ ու հաստատուն մնացին իրենց հավաքի մեջ: «Եվ ով է, որ հաղթում է աշխարհին եթե ոչ նա, ով հավատում է, որ Վստու է Աստծո Որդին».— ասում է առաքյալը (Ա Տովհ Ե 5): Ինչպես կյանքով լի սերմը, որ մեռնելով հողի մեջ՝ բազում հասկ է պարգևում, մարտիրոսները հաղթում էին: Նաղթում էր հավաքը մահը մերժելու, մարդկության փրկության, սիրտ, հույսի ու մխթաբության կյանքի ու խաղաղության Ավետարանի հանդեպ: Այն սրտեր նվաճեց, աշխարհներ, վերափոխեց ժողովուրդների կյանքը:

Ավետարանի քարոզության հեղ մարտիրոսությունը տարածվեց ժողովուրդների ու ազգերի մեջ՝ որպես քարոչականության մեծագույն դրսևորում, անսակարկ սիրտ և աննկուն հավաքքի ու հավատարմության արտահայտություն, իբրև մահ իմացյալ, որ անմահություն է, ինչպես ասում է Նայ Եկեղեցու վարդապետներից և մարենագիրներից ոսկեղենիկ Եղիշեն: Նահապարկության գաղափարը դարձավ բազում ժողովուրդների մշակույթի մաս՝ նպաստելով նրանց քրիստոնեական ինքնության հաստատմանն ու պահպանությանը և հոգևոր արժեքների կերտմանը: Մեր ժողովուրդը առաքելական ժամանակներից նույնացրել է իր կյանքը առ Քրիստոս հավաքքի հեղ: Տիրոջով զորացրել է իր նկարագիրը ու բարձր պահել իր մշակույթն ու արժեքները՝ դարեր ի վեր, անուր փորձություններին ու հալածանքներին հանդիման՝ արդյունավորելով իր զավակների վկայության ու արյուն սերմերով:

Միրելի ներկաներ,

Փառաբանելով նահապարկների ոգին ու հայցելով նրանց քարեխոսությունը, չպիտք է նաև մոռանալ, որ մարտիրոսության առկայությունը վկայում է նաև բռնության, անհուսկնորժողականության, անարդարության դրսևորման մասին: Դժբախտաբար, շատ հաճախ քրիստոնյաների խոնարհությունը, իրենց հավաք-

քի հանդեպ անհրեղ սերը ի շարքս են գործադրել՝ նրանց համախո ենթարկելով հասարակական, բնութային, մասսայական քարոզիչ՝ դատապարտելով բնաջնջման ու ոչնչացման:

Պարմությունը շար է արձանագրել նման դեպքեր: Այդպիսին էր Օսմանյան կայսրության տարածքում ապրող ժողովուրդների պարմությունը դարձրել շարունակ, ինչպես և վերջին հարյուրամյակների ընթացքում: Հայ ժողովրդի համար աղետաբեր եղավ օսմանյան իշխանությունների կազմակերպած Յեղասպանությունը, որ տևելի ունեցավ 1915-23 թթ.: 20-րդ դարասկզբին եղեռնի ու տեղահանության ենթարկվեցին հույն և ասորի ժողովուրդները: Յեղասպանության ռճիրը կրկնվեց հրեա ժողովրդի դեմ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:


Յավոք արդի, բնության անպարժեկությունը նպաստում է, որ արելությունն ու թշնամությունը այսօր ևս շարունակվի: Հայ ժողովուրդը նման վիտեզի առջև էր կանգնել 20-րդ դարի վերջին տասնամյակում, երբ Ադրբեջանի տարածքում՝ Մուլգայիքում և այլ վայրերում գրեկող հայերը ենթարկվեցին մասսայական քարոզների: Այդպիսի իրականության կրախվեր Արցախի հայ ժողովուրդը, եթե 1991 թ. չդիմեր ինքնորոշման ու ազատ ապրելու հանրաքվեին:

Միևիկ ներկաներ.

Մենք գիտենք նաև, որ նահապետությունը բնության, հարստանքի ու թշնամության հանդեպ լուր ու խոնախ պատասխան էր, հաշտության ու համեմատության դրսևորում: Զանգի Եկեղեցու առաջին նահապետն իր աղոթքում սուրբնեցնում էր «Տեր, առ մեղք մի համարիր դրանց» (Գործք Է 59):

Միանալով Ս. Սրեպիանոսի աղոթքներին ու հայցելով Տիրոջ ողորմությունը, պեղք է դիմենք նաև մարդկության ողջախոհությանը՝ կոչ անելով դատապարտելու ցանկացած բնության բնություն, հալածանք ու թշնամություն: Ընդունել նախկինում գործած սխալները, ճանաչել ու դատապարտել բոլոր այն ռճրագործությունները, որոնք գործվել են մարդկության ու մարդկայության դեմ: Արդի աշխարհը Զրիարոսի սիրտ կենդանի վկայության կարիքն ունի: Կարիքն ունի հավատի և հույսի, որ մարդկային մեր ջանքերով պիտի կյանք առնեն ու գործանան:

Նույն երկկյան Ֆուլվին Մայր Տաճարում կարարվեց Էկումենիկ աղոթք՝ բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, Լիոնի Կարդինալի և Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի նախագահ պապվելի Ժան-Անտու դը Կլեդմոնտի, աղոթք, որին ներկա էր նաև Կ. Պոլսո Ս. Մեսրոպ Ամենապատիվ Պատրիարքը: Հավարտ այս արարողության քրիստոնեական բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները թափոր կազմած դուրս եկան Լիոնի Մայր Տաճարից՝ ողջագուրվելու մտքի մոտ բամախումբ իրենց սպասող ռաբբիների և իմամների հետ: Քիչ անց ողջագուրման նույն արարողությունը տեղի ունեցավ նաև Հեռավոր Արևելքի քաղաքներ կրոնների ներկայացուցիչների հետ: Համաժողովի բոլոր մասնակիցները մեկ ընդհանուր թափոր կազմած ուղևորվեցին դեպի քաղաքի պատմական ամֆիթատրոն, ուր և տեղի ունեցավ համաժողովի փակման հանդիսավոր արարողությունը, որի



ԼԻՈՆԻ ԿԱԹՈՒՆԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՅՐ ՏՆՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ



ԼԻՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀԱՐԱՌՈՒԹՅԱՆ ՏՈՒՐԱԲԵՐ ԿՐԹՆԵՐ ԵՎ ՄԵԼԱԿՈՒԹԱՆԵՐ ՆԵՐԱԿԱԾԱԾՆԱԴ
ՊԱՏՃԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԱՐԱՌՈՒԹՅԱՆ ԹԱԳԻՐԸ

ընթացքին մասնակից անդամները, ջահերը վառելուց հետո, միասնաբար ստորագրեցին հաղադրության ուղերձը, որով ի սեր փառապաշտ մարդկության համերաշխության և բարեկամության կոչ էր արվում պետությունների և ազգերի ղեկավարներին:

Սեպտեմբերի 15-ին, առավոտյան, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Լիոնի Արքեպիսկոպոսարանում հյուրասիրություն էր կազմակերպել Նորին Գերազանցություն Կարդինալ Ֆիլիպ Բարբարենը: Այնուհետև Նորին Սրբությունը մեկնեց օդանավակայան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադառնալու համար: Վեհափառ Հայրապետին օդանավակայան ճանուպարհելու էին եկել Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդուարդ Նալբանդյանը, Արևմտյան Եվրոպայում Հայրապետական պատվիրակ Տ. Գյուր արքեպս. Նազգաշյանը և հայ համայնքի ներկայացուցիչները:

ՎԱՋԳԵՆ ԱՔԵՂԱ ՆԱՆՅԱՆ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱՂԵՐ ԲՈՅԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԼՄԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՂԵՌ ՊՈՅԱՃԵՄՆ,
ՈՐ Ի ԹԱՐՋԱՆԱ, ԱՄՆ**

Մեծարգո պրն Պոյաճեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ:

Տակաւին Արարապեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդութեան փարիսնքից ճանաչում ենք Ձեզ եւ քաջածանօթ ենք Ձեր եռանդուն ու անխոնջ գործունեութեանը՝ յանուն հայ ժողովրդի բարօրութեան եւ Հայոց պետականութեան բարգաւաճման: Երկար փարիսներ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունեութեան ոլորտից ներս գտվելի ծառայութիւնը բարի անուն ու համբաւ է բերել Ձեզ, քանզի Դուք մեր ժողովրդի առաջընթացի ու պայծառ ապագայի տեսլականով Ձեր ջանքերն ու կարողութիւններն էք ներդնում Միութեան բացառիկ առաքելութիւնը հայոց կեանքում արդիւնաւետութեամբ իրականացնելու եռմար: Հայաստանի եւ Արցախի անկախացումից ի վեր Դուք գործուն մասնակցութիւն էք բերում մեր Մայր Հայրենիքին եւ Արցախ աշխարհին զօրակցելու ծրագրերին՝ աստուածաեանոյ բարերարութիւններով սաղար լինելով հայրենակերպումի նուիրական առաքելութեանը:

Մեծապէս գնահատելի է, որ Դուք ազնիւ նուիրաբերութեամբ աջակցում էք նաեւ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդարանի Մայր Տաճարի կառուցմանը, որն իրապէս նոր աշխուժութիւն պիտի բերի թեմի ազգային-եկեղեցական կեանքում: Ձեր բոլոր բարի ձեռնարկումներին Դուք յաւելցիք Ձեր սրտաբուխ իշխանական նուիրապտութիւնը Մայր Աթոռի ծրագրերի իրագործմանն ի խնդիր՝ որպէս նոր վկայութիւն եկեղեցաշինութեան եւ

ազգաշինության գործում մաս և բաժին ունենալու Ձեր պատրաստակամության ու նախանձախնդրության:

Ցարգարժան պրն Պոյաճեան, բարձր գնահատելով Ձեր ազնիւ ծառայութիւնները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, ինչպէս նաեւ ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպէրեանի խնդրանքին, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Վայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՄԷՈՐԻՉ

պատրույ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենառաւր շնորհները Ձեզ և Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն, ամենայն բարիք և գործոց յարանոր յաջողութիւններ:

Մեր աղօթքն է նաեւ, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի հայրենաւորիքումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

Ողջ լսելուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգոյն և յաւեր օրհնեալ ի Մէնջամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28-և Սեպտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾՂ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ եամարաւ 317

ՆԱՅԻՐԱԴԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2005 թ. սեպտեմբեր ամսին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի Սրբա-
պատ Կոնդակով՝

«Ա. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.
Վարդգես Պողոսյան (Դամասկոսի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Վարուժան Մալաթյան (Դամասկոսի հայոց թեմ)

Գրիգոր Բարսեղյան (Դամասկոսի հայոց թեմ)

Բոր Զարր (Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ)

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխական խորհրդին (Մինգապուր)

Ս. Գևորգ եկեղեցու ծխական խորհրդին (Բրազիլիայի հայոց թեմ)

Մարտիրոս կազմակերպված հայ երիտասարդաց հավաքին

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԱՔԱՆՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուսումնական տարվա վերաբացման առիթով ողջունում ենք ձեզ, սիրելի դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության գործի բոլոր նվիրյալներ, և հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը:

Բարիք է ուսումը, գիտելիքն ու կրթությունը և գովելի ամաչիկություն՝ այն մարդկանց, կյանքին ու առաջընթացին ծառայեցնելը: Մեր ժողովրդի դժվարին պայմանության դարավոր փորձությունների մեջ գիրն ու դպրությունը եղել են նաև փրկության ուղի՝ հայ և քրիստոնյա մնալու, ապրելու և վերածնվելու: Այս տարի տոնախմբում ենք Հայոց Գրերի սպեղծման 1600-ամյա հոբելանսը, որի խորհրդով առանձնապես պայծառ ու ոգեշունչ է նոր ուսումնաշրջանի բացումը: Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց մեր մեծ Ուսուցչապետների գործին և անմահ ավանդին հավատարիմ՝ գորացյալ եղեք առ Աստված հավատով, սիրով՝ հանդես գալով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Հայրենիքը:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Փրկիչ Տերը հոգու և մտքի ամալվել լույս, ամալվել կոթով, եռանդ ու ջանասիրություն պարզևի ձեզ՝ ուսանելու և ուսուցանելու, փոխադարձ սիրով ու նվիրումով, արդասավորությամբ աշխատելու, որպեսզի նոր ուսումնական տարին մեծ հաջողություններ բերի բոլորիդ և նոր տրախություններ:

Թող աստվածային ամենաառաք սերն ու շնորհները մեր Տիրոջ՝ Հիսուսի Ջրիսպոսի միշտ ձեզ հետ լինեն ու բոլորի՝ ամեն:

Ս. Էջմիածին,

1 սեպտեմբերի 2005 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Համայն մեր ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս ողջույն ենք հղում և օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և շնորհավորում Հայաստանի Հանրապետության Անկախության Օրվա փոխական առիթով:

Մեր պարմության նոր էջն է բացում 1991 թ. սեպտեմբերի 21-ը: Օր աստվածօրհնյալ, որի գերապանծ խորհուրդը նշանավորելու ու փոխելու են նաև մեր սերունդները:

Չընկրկեց մեր ժողովուրդը Արցախի ազատագրության պայքարի, երկրաշարժի ու շրջափակման դժվարությունների և զոհողությունների տաջն, այլ միասիրտ ու միաբան աներկբա պաշտպանեց ազատ ապրելու իր իրավունքը: Դժվարին, բայց վերընթաց ուղի ենք անցել նաև մեր նոր պետականությունը ու նոր կյանքը կառուցելու ճանապարհին, որը մեր ժողովրդի միասնական ջանքերով, հավատով, նվիրումով ու սիրով առավել լայնախոն պիտի դառնա ու լուսավոր: Պիտի հոգանք ազատ Հայաստանի ամեն օրվա համար՝ հանուն մեր Հայրենիքի առաջընթացի ու բարօրության, հանուն համայն հայության միաջյալ ու պայծառ գալիքի:

Այդոթք ու մաղթանք ենք բարձրացնում երկինք: որ Տերը Հայրախնամ Իր Աջի ներքո պահպանի Հայաստանի Հանրապետությունը, շնորհով լեցուն ու հավատով գորացյալ պահի մեր ժողովրդին՝ ապրելու և գործելու ի սեր և ի փառս հայրենյաց:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեսուն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեւեւսն»:

Ս. Էջմիածին,

21 սեպտեմբերի 2005 թ.

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում ենք Հայոց Գրերի Գյուլի 1600-ամյակի առիթով ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախաձեռնությամբ և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնակցությամբ ու օժանդակությամբ կազմակերպված միջազգային այս գիտաժողովը և Մեր օրենությունն ու բարեմաղթանքները բերում կազմակերպիչներին և մասնակիցներին:

Մեծապես ուրախ ենք, որ դուք՝ անվանի մրավորականներ ու գիտնականներ, համախմբվել եք այսօր՝ ձեր ուսումնասիրությունները ներկայացնելու և մրաձումները կիսելու համաշխարհային մշակույթի մեջ ուրույն տեղ ունեցող Մեսրոպյան գրերի և հայոց ազգային-եկեղեցական հարուստ ժառանգության վերաբերյալ:

Մեր պարմության հերոսական օրինաչափություններից է, որ հաճախ, անգամ օրհասական պայմաններում, հայ միպըը ծնունդ է տալիս հիասքանչ ստեղծագործությունների և արարումների, որոնք փրկարար գործությամբ հաղթական ուժ և ոգի են ներշնչում աստվածասեր մեր ժողովրդին: Այսպես նաև 16 դարեր առաջ շնորհազարդյալ Մեսրոպ Վարդապետի պայծառ ու հանճարագործ գյուլը աստվածային գիտության աղբյուրը բխեցրեց հայ ժողովրդի համար, և հայոց պարմության ոսկեդարը մտքի ու հոգու զարթոնքով սնեց և կրթեց ըրիստոսասեր մեր ազգը Աստվածաշնչի իմաստությամբ: Մեր պարմության հեղափոխական բոլոր դարերին հայի միտքն ու հոգին զորացել են Սահակ-Մեսրոպյան մշակույթի ավանդներով, և հարարել է ժողովուրդը հայոց՝ սիրեցյալ Սուրբ Թարգմանչաց նվաճումներին նոր իրագործումներ հավելելով:

Հայոց գրերի արարման 1600-ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովը հարգանքի և երախտագիտության արժանի է հայ ինքնությունն ու դպրությունը նվիրումով ու տրանսլյուց կերպով մեծանուն գործիչներին, ովքեր հարստացրեցին նաև համաշխարհային մշակույթը ինքնուրույն և թարգմանական բազմաժանր անգին գոհարներով: Մաշտոցյան գրերին նվիրված այսպիսի միջոցառումները նաև կոչ են հայտնողաց՝ անաղարտ պահելու ու առավել պնդացնելու սրբազան մեր ժառանգությունը:

Գիտաժողովի սիրելի մասնակիցներ, Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք վերստին բերում ձեզ ձեր գովարժան աշխատանքի համար և Տիրոջ սերն ու շնորհներն ենք բարևաղթում ամենքիդ:

Աղոթքով առ Աստված իայցում հենք, որ Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ և անվտոգ պահի Հայաստան աշխարհը, մեր ժողովրդին շնորհի մեսրոպանման նոր հանճարներ՝ ի խնդիր հայոց ազգի նոր առաջընթացի և լույս գալիքի:

Թող Ամենակարողն Աստված խաղաղ երկինք, մշտապես բարգավաճում ու պայծառ ապագա պարգևի հումայն մարդկությանը և թող հարանոր հաջողություններով պսակի սրեղծագործական ու գիտական ձեր օրհնյալ գործունեությունը: Բարի ընթացք գիպածողովի աշխատանքներին:

Շնորհք, սէր և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան Ամէն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱԹՈՅ

Ս. Էջմիածին,

12 սեպտեմբերի 2005 թ.

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՏԵՐԻ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ՆԱԲՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՆԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 3-ից 6-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Մեծ եղեռնի զոհերի սրբադասման հարցն ուսումնասիրող հանձնաժողովը գումարնց իր անդրանիկ նիստը:

Հանձնաժողովի անդամներն են՝

1. Գերաշնորհ Ս. Սեպուի արքեպս. Սարգիսյան (համաարենապետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն),
2. Գերաշնորհ Ս. Եզնիկ եպս. Պետրոսյան (համաարենապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոսություն),
3. Գերաշնորհ Ս. Գեղամ եպս. Խաչերյան (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն),
4. Նոգեշնորհ Ս. Բարկեն ծ. վրդ. Չարյան (արքեպիսկոպիտ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն),
5. Նոգեշնորհ Ս. Զապիկ վրդ. Ավետիքյան (արքեպիսկոպիտ, Ամենայն Հայոց Կաթողիկոսություն),
6. Նոգեշնորհ Ս. Դանիել վրդ. Ֆնդկյան (Ամենայն Հայոց Կաթողիկոսություն):


Նիստից առաջ հանձնաժողովի անդամներին ընդունեց և իր օրհնությունները բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ կարևորելով նախաձեռնված աշխատանքները և հաջողություն մաղթելով հանձնաժողովին:

Գերաշնորհ Ս. Եզնիկ եպս. Պետրոսյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց Վեհափառ Հայրապետին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը: Գերաշնորհ Ս. Սեպուի արքեպս. Սարգիսյանը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջույնները և հանձնաժողովի աշխատանքների համար հղած հաջողության բարեմաղթանքները:

Հանձնաժողովն իր առաջին հանդիպման ընթացքում, մտքերի փոխանակությունից և հիմնավոր քննարկումներից հետո, հաստատեց առաջադրանքը, ուսումնասիրության շրջանակները, աշխատանքային ժամանակացույցը և ընդգծեց հիմնական հարցադրումները:

Առաջին աշխատանքային ժողովը տեղի կունենա սույն թվականի նոյեմբերի 8-ից 12-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԳ**



Տ. ՂՈՒԿԱՍ ԱՐԵՂԱ ԶԱՔԱՐՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ

Սույն թվականի սեպտեմբերի 1-ից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաղեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Տ. Ղուկաս արեղա Զաքարյանը, ավարտելով բարձրագույն ուսումնառությունը Հոռոմով, նշանակվել է Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի տնօրեն:

Տ. Ղուկաս արեղա Զաքարյանը ծնվել է 1973 թ. նոյեմբերի 9-ին Երևանում:

1980-1988 թթ. ավարել է Երևանի թիվ 52 միջնակարգ դպրոցում:

1988-1990 թթ. ուսումը շարունակել է հայագիտական թեքումով Երևանի թիվ 10 դպրոցում:

1990-1997 թթ. ընդունվել է ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

1993-1994 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1996 թ. դեկտեմբերի 24-ին ստացել է սարկավագական աստիճան՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոյանի:

1997-2000 թթ. պաշտոնավարել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Զարթոգության Կենտրոնի հրապարակչական բաժնում, լինելով և կրոնի ուսուցիչների վերապատրաստման լսարանների դասախոս: 2000 թ. ձեռամբ Երջանկահիշարակ Տ. Շառեն արքեպս. Աճեմյանի ստացել է քահանայական աստիճան:

2000-2002 թթ. եղել է Ս. Գեղարդա վանքի վանահայր:

2002-2005 թթ. ուսանել է Հոռոմի Արևելյան Պոնտիֆիկալ Ինստիտուտի կանոնագիտության ֆակուլտետում, որտեղ պաշտպանել է գիտական թեզ՝ «Բարձրագույն իշխանությունը Հայ Եկեղեցում (մինչև V դար)» թեմայով, և ստացել կանոնագիտության մագիստրոսի աստիճան:

ՄԱՅՐ ԱԹՐԱՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ՎԱԶԳԵՆ ԱՔԵՂԱ ՆԱՆՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՓՈԽՏԵՍՈՒՉ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի բարձր փնօրինությամբ Տ. Վազգեն արքեպիսկոպոս Նանյանը, որը վերջերս է ավարտել բարձրագույն ուսումնառությունն Իրախյա-
յում, սեպտեմբերի 1-ից նշանակվել է Գևորգյան հոգևոր ճեմարանի փոխտեսուչ:

Տ. Վազգեն արքեպիսկոպոս Նանյանը ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 15-ին Երևան քաղաքում:
1983 թ. ընդունվել է Երևանի Ձերժինսկու անվան թիվ 20 և 1993 թ. ավարտել թիվ 149
միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան հոգևոր Դպրանոցում:
1998 թ. Վիլնոյի Ուղղափառ Ակադեմիայում հետևել է անգլերեն լեզվի դասընթացներին:
1998-1999 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան հոգևոր ճեմարանում:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպիս. Գալփաք-
յանի:

1999 թ. պաշտոնավարել է որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի
բարրություն և ապա՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման գրասենյակի
գործավար-բարրություն:

1999-2002 թթ. եղել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի գավազա-
նակիրը:

1999-2000 թթ. մասնակցել է հայաստանի Ամերիկյան համալսարանի կողմից եկեղե-
ցականների համար կազմակերպված մենեջմենտի դասընթացներին:

2000 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Սուրբ Հոգու եզրաբանությունը և «բխում» եզրի
արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրան քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարե-
գին Բ Վեհափառ հայրապետի:

2002-2005 թթ. սովորել և ավարտել է հոմի Պապական Գրիգորյան համալսարանի
դավանաբանական աստվածաբանության ֆակուլտետը՝ ավարտաճառ՝ պաշտպանելով
«Տյառնընդամաքի աստվածաբանությունը հայ մանրանկարչական ավանդության մեջ»
թեմայով:

2003-2004 թթ. հետևել է հոմի Պապական Զրիստոնեական հնագիտության համալ-
սարանի դասընթացներին:

2004-2005 թթ. մասնակցել է Ֆրանսիայի Բեզանտոն քաղաքում կազմակերպված ֆրան-
սերեն լեզվի դասընթացներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՂԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻՒՄ

Մեպրեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության փոնի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Լ.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց գոհաբանական մաղթանք Հայաստանի Հանրապետության համար:

Եկեղեցականների մեծաշուք թափուրով Նորին Սրբությունը Վեհաբանից առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Ավագ Ս. Մեղանի առջև հոգևորականաց դասը միահամուռ աղոթք վերառաքեց առ Աստված Հայաստան աշխարհի անսասանության և խաղաղության համար: «Ամենագոր Աստված» հոգեզմայլ շարականի երգեցողությունից հետո ընթերցվեցին Ս. Գրային հատվածներ, ապա Ամենայն Հայոց Հայրապետը ծնրադիր աղոթք բարձրացրեց առ Աստված. «Գոհություն ենք հայտնում Քեզ, Տե՛ր, որ այցելեցիր հայոց ազգին, ցույց տվեցիր մեզ Քո մեծ ողորմությունը և հաստատեցիր Հայոց Հանրապետությունը Հայաստան աշխարհում: ...Աբղ, մենք ամենքս խոնարհվում ենք Քո առջև, Տե՛ր Աստված մեր, և հայցում Քո ամենատաք ողորմությունից, որպեսզի պահես ու պահպանես Հանրապետությունը Հայաստան աշխարհի խաղաղության, բարօրության և անսասանության մեջ: Օրհնի՛ր, Տե՛ր, Հայաստանի հավատարիմ ու նվիրյալ բոլոր պաշտոնյաներին... Օրհնի՛ր բոլորին, որ Հանրապետության իշխանության ներքո են՝ եկեղեցականներին ու աշխարհականներին, մեծերին և փոքրերին, արամարդկանց ու կանանց և ողջ Քո հավատադյալ ժողովրդին՝ պահելով նրանց Քո Ս. Աջի հովանու ներքո»:

Հավարտ Հայրապետական աղոթքի կատարվեց անդաստան: Մաղթանքն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պաշպանիչ»-ով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՄԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒԾ ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

(11 սեպտեմբերի 2005 թ.)

*«Եթէ ոչ հաւրս ցորենոյ անկեալ յերկիր մեռա-
նիցի, ինքն միայն կա. ապա եթէ մեռանիցի, բա-
զում աւրդիւնս առնէ:*

...Ուր Եսն եմ, անդ եւ պաշտօնեայն Իմ եղիցի»:

(Նովե. ԺԲ 24, 26)

* Սիրելի հավատացյալներ,

Այսօր ուրախ օր մըն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ համար, ուրախ օր մըն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և անոր քաջարի միաբանության համար, ուրախ օր մըն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին համար, ուրախալի օր մըն է բնականորեն այն քահանայից համար, որոնք ձեր վկայությամբ, ձեր ներկայությամբ, ձեր աղոթքներով և Սուրբ Հոգւով ձեռնադրվեցան և կոչվեցան քահանայության, իրենց ազգա-կաններ ու բարեկամներ և մենք բոլորս այսօր ուրախ ենք:

Մի տեսակ տոնական, հարսանեկան օր մըն է, հոգևոր խնջույք, հոգևոր հարսանիք մըն է, ուր փեսաները Եկեղեցւոյ, որպէս «Քրիստոսի ծառայք կմարչին, կմոտենան իրենց սիրե-լիին, կնվիրվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ծառայության և Հայաս-տանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ միջոցով՝ Ընդհանրական Եկեղեցիին: Այս առի-թով, որպէս իմ մտածումներու ամփոփում, ես առի մի հարված մեր Տիրոջ Ավետարանի խոսքեն, որը իրեն Երեկոյան արարողության ընթացքին կարդացինք: Այնպէս կըսվի. եթե ցորենի հարիկը գետին չի ընկնի, չմռնի՝ գոհողություն չընեն, որևէ արդյունք չի տա: Բայց եթե ինչպէս մեզ ինկալ գործնը, երբ որ ցորենը ցանվե և իր կյանքը տա, այսպէս իր կյանքը տալով նոր կյանք կտա նորերուն և հսկա արօր հունձքով կ'իցնի: Նաև այդ խոսքի շարու-նակության մեջ մեր Տերը կըսէ. «Ուր Եսն եմ, անդ եւ պաշտօնեայն Իմ եղիցի»:

Ներսարար, սիրելիներ, կուգի նախ անդրադառնալ Տիրոջ խոսքին առաջին մասին, որը և մեզի կ'բացատրեն և կ'ընդգծեն կարևորությունը գոհողության ֆիզիկական, բարոյա-կան, ամեն տեսակի գոհողության: Տիրոջ ու Ավետարանի ծառա եղողը կամ առհասարակ կյանքի մեջ, ընտանիքի մեջ, ազգի մեջ, եկեղեցւոյ մեջ, մշակույթի մեջ, գիտության մեջ, եթե որևէ մեկը գոհողություն չընեն, որևէ արդյունք չի տա: Գիտնականն ալ, արվեստագետն ալ պէտք է որ գոհողություն ընեն. երբեմն իր գիշերները գոհեն, երբեմն իր կյանքը գոհեն, որպէս-գի լավ արդյունք տա: Նմանապէս մեր Տերը մեզմե անձնական գոհողություններու արդ-յունք կ'ապահանջեն, որպէսզի մեր կյանքը արդյունավոր դառնա, որպէսզի մեր կյանքը հա-

մաճայն Ավետարանի իր պարուղը և հունձքը ընեն: Այդ ձևով ուրեմն գոհողության պահանջ-
քը երեկ երեկոյան ձեռնադրության կարգի ստաջին մասի մեջ շեշտվեցավ և րացադրվեցավ:

Երևոտո՞ւ այն է, որ մեր Տերը կըսեր, ուր որ էս եմ, այնտեղ նաև Իմ պաշտոնյայոց պիտի
լլան, և մեր Տեր Հիսուս Քրիստոս աներևութապես կրնա ըլլալ մարդկանց մոտ գացած,
այցելած ըլլա, բազմած ըլլա անոնց տանը, կրնա ըլլալ մեր Տերը աներևութապես եկվանդի
մը աչքիւմ ըլլա, կրնա ըլլա մեր Տերը աներևութապես բանտարկյալի այցելություն տված
ըլլա, և մենք զգալով այդ հոգը, ուրեմն որպես պաշտոնյաներ Ավետարանի և Սուրբ Եկե-
ղեցվո, պիտի հեգնենք Տիրոջ քայլերուն: Ուր որ Հիսուս է, այնտեղ նաև մենք պարտաստ
պիտի ըլլանք ծառայելու, գործելու: Ուր որ մեր Տերը Հիսուս է, այնտեղ որպես հոգևորա-
կան պիտի հասնինք և օգնենք, օգտակար ըլլանք, ծառայենք: Միայն ձխակապարտությունը
չէ, սիրելիներս, քահանայությունը և խոսքիս այս մասը բնականորեն ձեզ՝ նորած մեր քա-
հանա հայրերուն կուղղեն: Շար կարևոր է պաշտամունքը, շար կարևոր են Սուրբ Խոր-
հուրդները, բայց միայն այդ չէ քահանայի պաշտոնը: Նույնքան Սուրբ է Ավետարանի
խոսքը:

Մենք և՛ խորհրդակապարտությանց ծառաներն ենք, և՛ Սուրբ խոսքի ծառաներն ենք:
Սուրբ խոսքը սուրբ և ճշմարիտ ձևով ժողովրդին պիտի բացադրենք, ժողովրդի սրտին մեջ
պիտի դրոշմենք Ավետարանի խոսքը: Պիտի դրոշմենք այն ձևով, որ մեր հայրերը հասկը-
ցած են, պիտի փոխանցենք մեր ընտանիքներուն, քրիստոնյա ընտանիքներուն, և որովհե-
տև փորձությունները շարք են, աղանդները շարքած են նաև այստեղ՝ մեր Հայաստան աշ-
խարհին մեջ, ուր որ Լուսավորիչը իր քարոզությունները ըրավ, ուր որ քրիստոնեությունը
պետական կրոն դարձավ, անգամ այստեղ ուրեմն եկած են նորաբոյս շարք աղանդներ:
Երբ որ Պապարագ կընեն, չլլա որ առանց քարոզի Պապարագ ընեն ձեր կյանքի մեջ, երբ
որ Պապարագ կընեն և եպիսկոպոս չկա, անպայման պիտի քարոզեն, երբ որ մկրտություն
կընեն, պսակ կընեն, թաղում կընեն, անպայման այդ խորհուրդը ժողովրդին պիտի բա-
ցադրենք, որպեսզի ժողովուրդը հասկնա, որպեսզի իմանա ինչ որ ըրեցիք:

Անավասիկ, սիրելիներ, ասիկա մեր քահանայից կարևոր պարտականություններն և
պաշտոններն են և, որոնք ես շարք պիտի փափագեի, որ նոր այս ձեռնադրալիները նկա-
պի առնեն և այդ ձևով հասնեն ամեն տեղ, ուր որ մեր Տերն է, և այդպիսով աղքատի,
հարուստի, բանտարկյալի օգնության հասնիք:

Միրելիներ, դուք միշտ հավաքարիմ պիտի մնաք ոչ միայն մեր Եկեղեցվո բարձրագույն
հեղինակության, ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այլև մեր քահանա հայրերը,
վարդապետ, եպիսկոպոս, մենք բոլորս հավաքարիմ պետք է մնանք մեր Եկեղեցվո մեծ
վարդապետներուն, մեր անգերազանցելի մեծ հայրապետներուն և հայրերուն:

Անավասիկ, սիրելիներ, այս մի քանի համեստ մարածումներս ձեռնադրության այս առի-
թով ցանկացա փոխանցել ձեզի: Ուրախությունը կպատեն մեր հոգին և սիրտը: Ես կեիջեմ
տասը, քսան, երեսուն տարիներ առաջ, երբ որ ձեռնադրություն կըլլար, ձեռնադրող եպիս-
կոպոսը կկրկներ Տիրոջ խոսքը. «Զի հունձք բազում են եւ մշակք սակաւ» (Մատթ. Թ 37):
Հունձքը շարք է, գործը շարք է և մշակները քիչ են: Փառք Աստուծո, այդ ժամանակները ան-
ցած են, և մենք կեդրւով մը ծառայողներ մըն ենք, և դուք պարտաստ պիտի ըլլաք նոր ձևով,
նոր ոճով, նոր ուղղությամբ, նոր ոգիով ուրեմն ծառայել մարդոց, ծառայել հայ ժողովրդին,

ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Մենք մեր աղոթքներու մեջ երեկ և այսօր ըսինք, որ չէ, փկար չենք, կկոչվինք սարկավագութենն քահանայության, և Սուրբ Հոգին է, որ գիրենք կանչեց, իրենք կոչում ունեցան: Այդ մեր Լուսավորչի, մեր Սուրբ Մեսրոպի, մեր Սուրբ Սահակի և անոնց հոգևոր գավակաց կոչում է: Ինչ կնշանակի կոչում, մեզանից կախում չունի: Սուրբ Հոգին է, որ կկանչե, մեր մեջ կդնե այդ հոգին:

Դուք, սիրելիներ, կոչված եք քահանայության, ինչպես առաքյալները կոչվեցան առաքելության: Սուրբ Հոգին լեցված էր իրենց մեջ, և իրենք սկսան փարբեր-փարբեր լեզուներով բարոզել մեր Տիրոջ Ավետարանի խոսքը: Ընդհանրապես մենք 1600-ամյակը կտոնենք մեր Այր Բնն Գիմի և անոր սրբեղծման: Ո՛վ էր, որ կանչեց Սուրբն Մեսրոպ, որ Այբուբենը սրբեղծե, երբ ան բարձրաստիճան գինվորական մըն էր, նա Արշակունյաց գավառի մեջ դիվանապետ էր, շքանշաններ ուներ, սիրված հրամանատար մըն էր:

Սիրելի քահանա հայրեր, փառք Աստծու, ուրախությունը, բախտը և ամոթը ունեցա փոխանցելու ձեզի Սուրբ Հոգու խոսքերը, այդ կամքը, որ Գրիգոր Լուսավորիչն էր կուգա:

1953 թ. հուլիս սկիզբը ինքս ձեռնադրվեցա քահանայ և այսօր 52 փարիներ վերջը, որ կշարունակեմ քահանաներ ձեռնադրել, արիկա ինձի բախտավորություն մըն է: Ուրախ եմ և երջանիկ:

Կուգի ձեզի հեղեղալ կարճ բացաբությունը ընել շնորհավորանքներու ու բարեմաղթանքներու կողքին:

Վազգեն սարկավագը կոչեցա Տեր Խաչատուր, քանի որ այսօր Խաչի օրն է, Խաչվերացի օրն է, անոր համար չէի կրնա անտեսել այս փոնը, Խաչը, Խաչիկը, Խաչատուրը և այդ պարճառով Վազգեն սարկավագին անվանեցա Տեր Խաչատուր քահանա:

Մանուկ սարկավագը կոչեցինք Մեքենոս, սա մի ինչ-որ անսովոր անուն է վերջին փասնամյակներուն: Մենք ունեցել ենք 7-րդ դարում Մեքենոս եպիսկոպոս, որ ժամանակի պարճությունը գրած է, և Մանուկ սարկավագին համար ես ընտրեցի Մեքենոս անունը թերևս անհամեստ պարճառով մը, որ Մեքենոս եպիսկոպոսի մասին և իր պարճության մասին ես գրած եմ մի հարտը, ամբողջական գիրք մը և ուզեցի որ այս անունը այս ձևով կենդանի ըլլա մեր Եկեղեցվո մեջ, ապրի և ապրեցնի:

Դավիթ սարկավագը կոչվեցավ Տեր Դերենիկ, և առաջին ամոթով ձեր միտքը կուգա Դերենիկ վարդապետ, որ օրեր առաջ պարաբաճ ավտովթարին ողբերգականորեն զոհ գնաց, բայց նաև, ինչպես եիշեցի, 52 փարիներ առաջ Տեր Դերենիկ եպիսկոպոս Փոլաղյան ինձ կուսակրոն քահանա ձեռնադրեց և դժբախտաբար նա էլ դառը ճակատագիր ունեցավ և ցանկացա, որ այս ձևով ևս իր եիշատակը պահվի և նոր սերնդի մեջ մնա:

1600-ամյակի ամոթով Անդրանիկ սարկավագը կոչեցի Մաշտոց և Արմեն սարկավագը կոչեցի Մեսրոպ: Մեսրոպ Մաշտոցի փարին է, 1600-ամյակն է, նաև իմ հոգևորական անունն է:

Վարդան սարկավագը կոչեցի Սրբփաննոս, որովհետև դարձյալ ես մինչ քահանայական ձեռնադրությունը փակավին սարկավագ էի, սակայն ոչ միայն քրիստոնեական Եկեղեցվո առաջին սարկավագին անունն է Սրբփաննոս, այլ նաև մենք ունեցած ենք Սրբփաննոսներ, մասնավորաբար 7-րդ դարում Սյունյաց աշխարհի մեջ արքեպիսկոպոս մը ունեցած ենք, շատ փաղանդավոր, մեծ գիտնական, մեծ աստվածաբան: Ես ալ համեստա-

բար Մարեփաննոս արքեպիսկոպոս Սյունեցու մասին սարկավագության շրջանին գիրք մը գրած եմ և ապա 1958 թ. հրատարակած, և այդ հիշատակներն էին, որ ուզեցի արտահայտել: Վարդան սարկավագն այժմ Տեր Մարեփաննոս կոչվեցավ:

Բոլորը բացատրեցի, մնում է Գոռ սարկավագ Գրիգորյան, որ այժմ կկոչվի Տեր Գրիգոր: Գրիգոր անունը և՛ իմ ազգանունի մեջ կա, և՛ իմ հորս անունն է, և՛ մեր Գոռ սարկավագի ընտանիքի մեջ կա: Մեր Եկեղեցվո մեջ ալ, ինչպես գիտեք, Գրիգոր Լուսավորչի անունն է, Գրիգոր Նարեկացիի, Գրիգոր Տաթևացիի անունն է, բազմաթիվ պատճառներ կան, որպեսզի մեկը Գրիգոր կոչեն: Բախտավոր անուն մըն է, որովհետև մեր պատմության մեջ մեծագույն մեր դեմքերը կկոչվին Գրիգոր: Գրիգոր Լուսավորիչը մանավանդ, ինչպես և Գրիգոր Նարեկացին ու Գրիգոր Տաթևացին, և այս ձեռնադրությամբ կցանկանայի, որ մեր մեծ Գրիգորներու մրաձումները և զգացումները կերպով մը ձեզի փոխանցվին:

Այժմ կխնդրեմ բոլորս միասին հորընկայս աղոթենք առ Աստված և փառք տանք, փառք տանք, որ այսպիսի ուրախ հարսանեկան փոնի մը արժանի եղանք՝ ես և դուք: Փառք Աստծո, ուրախ եմ, որ այսօր կարողացա այս ձեռնադրությունը կատարել, կշնորհավորենք իրար բոլորս, կշնորհավորենք և թող Աստված մեզ բոլորիս առողջ պահե, թող Աստված մեր Հայրենիքը անսասան պահե, թող Աստված Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցին անսասան պահե, անշարժ պահե և դուք բոլորդ ընտանյոք հանդերձ վայելեք Աստծո օրհնությունը: Ձեր հույսը երբեք ձեր մեջ չպակսի, հույսը և հավատը երբեք չպակսի և դիմանաք ամեն կարգի դժվարությանց:

Փառք Սուրբ Երոդդության, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

**Տ. ՎԻՓԵՆ ԵՊԻՄԿՈՊՈՍ ԱՅԲԱԶՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ
ԿԱՏԱՐՎԱԾ ՔԱՆՄԼԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**
(18 սեպտեմբերի 2005 թ.)

*«Ես եմ հովիսն քաջ, հովիս քաջ գանձն իւր
դնէ ի վերայ ոչխարաց»:*

(Հովհ. Ժ 11)

«Յանուս Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այս խոսքերը կվերաբերին նաև այսօրվա մեր նորընծաներուն: Քրիստոս գինքն կներկայացնէ Իր աշակերտներուն և հավաքացւոյններուն որպէս հովիվ, հովիվ մը, որ քաջ է, հովիվ մը, որ բարի է, հովիվ մը, որ Իր պարտականության գիտակցությամբ լեցուն է, հովիվ մը, որ Իր հոգը կառաջնորդէ դեպի հավիտենական կյանքը: Հիսուս Իր անձը օրինակ տալով Իր աշակերտներուն և հետևորդներուն, կըսէ, թե ես եմ քաջ հովիվը, որ երբեք Իր հոգը առանձին չի ձգեր: Այն հովիվը, որ երբեք իր ոչխարները առանձին չի ձգեր: Այն հովիվը, որ իր ոչխարները կարածն:

Քրիստոս այդ պարտականությունը եեւրո կփոխանցէ Իր սիրելի աշակերտներուն, պարտականություն մը, որ Հին Կտակարանի մեջ ալ գոյություն ունի, մանավանդ սաղմոսներուն մեջ, ուր Աստված կներկայացվի մեզի որպէս լավ հովիվ, որպէս բարի հովիվ: Հին Կտակարանի մեջ միևնույն արեւն Հիսուս կներկայացվի որպէս օծյալը Տիրոջը և այդ ավանդությունը առաքյալներն կանցնին նաև Եկեղեցու պետներուն, եկեղեցու մեծավորներուն, ինչպէս նաև Եկեղեցու սպասավորներուն:

Հիսուս միևնույն արեւն Ինքզինք ցույց կուտա որպէս հովիվ հոգիներու: Ասկիւ շատ կարևոր կետ մըն է, որովհետեւ չես կրնա հովիվ ըլլալ, եթե մարդոց հոգիներու համար հովիվ չես, եթե չես կրնար մարդոց հոգիները ազնվացնել, եթե չես կրնար մարդոց հոգիները դեպի լավը, դեպի բարին, դեպի ազնիվը առաջնորդել: Ներկաբար Ինքը հոգիներու հովիվն է և կթելադրէ մեզ, որպէսզի մենք ալ ըլլանք հոգիներուն հովիվը:

Սիրելի նորընծա քահանա հայրեր, դուք այսօր կոչված եք ծառայելու Աստուծո, ծառայելու ձեր Եկեղեցու միջոցաւ՝ ձեր ժողովրդին, և դուք այդ ծառայության մեջ առաջին անգամ Քրիստոսը պիտի ունենաք որպէս սիմվոլը, որպէս խորհրդանշիչը ձեր ապագայի սպասավորության՝ քահանայության: Ումանք կկարծեն, թե արիկա պարզ բան մըն է, սակայն քահանայությունը Աստուծո կողմից տրված պարգև մըն է, և դուք այդ պարգևը լավ օգտագործել պետք է իմանաք: Քահանայությունը սակայն ամեն մարդու չէ տրված, քահանայություն կտրվի անոնց, որոնք ընտրված են, որոնք ընտրույալ պիտի կոչվին Աստուծո խորանին առջև: Որպէս քահանաներ՝ ձեր պաշտօնը, ձեր պարտականությունները չարաչար գործադրելու իրավունք չի պիտի ունենաք, այն արեւն իսկական հովիվներ չնք կըրնա ըլլալ, եւ-

տեսաբար ունենալով Զրիստոսը որպես իսկական հովիվը և իսկական խորհրդանիշը ձեր ապագայի գործունեության, պիտի առաջնորդեք ձեր ժողովուրդը դեպի եավիտենական կյանք: Եղեք քաջ հովիվներ, հովիվներ առանց ամոթի. ունեցեք որպես ձեր զենքը ձեր խաչն ու ձեր Ավետարանը:

Հովիվին մեծագույն պարտականություններն են երկուսը քարոզությունն է և հովվությունը: Քարոզությունը, որպեսզի կարենաք ձեր ժողովուրդը կրթել քրիստոնեության ոգիով: Հովվությունը կենսական ամենօրյա նվիրում, ամենօրյա ներկայություն: Դուք չեք կրնաք հովիվներ ըլլալ, եթե դուք ձեր ժամանակը լիապես չբաժանաք ձեր հոգին, ձեր ոգխարեններուն, և այն արեն, երբ ձեր ոգխարենն է հեղ կրթմանը իրենց ցավը, իրենց դժվարությունները, կհաղթահարեք իրենց խոչընդոտները, այն արեն դուք կդառնաք իսկական քաջ և բարի հովիվներ:

Քրիստոնեական ոգով դաստիարակելը, անշուշտ նաև քարոզության մեջ, շատ կարևոր տեղ կգրավի: Հովիվ ըլլալու համար անհրաժեշտ է սեր և նվիրում: Նախ չեք կրնաք դուք լինել մեկը սիրել, եթե նախ դուք ձեզ չսիրեք: Պիտի սիրեք ձեզ, սիրելի սիրեք ձեր եարագավրերը, պիտի սիրեք ձեր ժողովուրդը, ձեր ոգխարենները որպես ձեր անձերը, խորություն երբեք չպիտի դնեք ձեր ժողովուրդի միջև ո՛չ աղքատի, ո՛չ եառուստի, ո՛չ երիտասարդի, ո՛չ ծերի, ո՛չ եզի և ո՛չ ալ արուի: Եվ սակայն պետք է նաև գիտությամբ լեցվիլ:

Հստակ եմ, որ այսօրվա մեր աղոթքներու մեջ դուք լսեցիք, թե ինչ խրատներ ձեզ կտրվի մեր Եկեղեցու հայրերու կողմն՝ լեցվեցեք գիտությամբ և այդ գիտությունը, որ ունիք, փոխանցեցեք ձեր հավաքագլխներուն, ձեր ժողովուրդին: Գիտության և ծառայության հարաբերությունները շատ կարևոր են: Դուք չեք կրնաք տեր ըլլալ, եթե առաջ ծառայ չըլլաք: Բոլորս ալ գիտենք Ավետարանի այն սքանչելի պարտությունը, երբ Քրիստոս իննսուհինը ոգխարեններ կթողու և կփորձեն գտնել կորսված մեկ ոգխարը:

Այսօրվա ձեր պարտականությունները նա դժվար են: Դուք մեկ ոգխար կորսեցուցած չեք, եազարավոր ոգխարներ կորսնցուցած եք: Ձեր պարտականությունը պնդեք է ըլլա անոնցմէ ամեն մեկի երեսն երթալու և կանչելու դեպի Աստված, դեպի մեր Եկեղեցին, դեպի մեր հայրերու սրբեղծած այս փառավոր Եկեղեցին, դեպի մեր առաքյալներուն սրբեղծած այս փառավոր Եկեղեցին: Դժվար է, փշուր է ձեր ճամփան, որովհետև ձեր դիմացը այնպիսի քայլեր կան, այնպիսի քայլեր պիտի գտնվին, որ դուք ձեր խաչով պիտի պայքարեք անոնց դեմ: Բոլորս ալ գիտենք. երկություն մը չէ, որ մեր Հայրենիքը այսօր որոշ չափով լրացված է աղանդավորներով: Ձեր պարտականությունը անոնց դեմ պայքարելու պիտի ըլլա, սակայն գիտակցությամբ, ձեր սիրով և միշտ ձեր զենքը ունենալով խաչը և Ավետարանը:

Ես կաղոթեմ Աստուծու, որպեսզի Իր Սուրբ Հոգին այսօր իջեցնե ձեզ վրա, որպեսզի դուք լցված այդ Սուրբ Հոգիով քառասուն օրեր ետք սկսիք ձեր քարոզությունը ի նպաստ մեր Եկեղեցիին և մեր ժողովուրդին: Այս ամօթիվ ես երախտապարտ եմ և իմ հարգանքս կնախադասեմ Ամենայն Հայոց Հայրապետին, Հայոց Հովվապետին, որ ինձ ընծայեց օծելու Հայ Եկեղեցիի համար ինը նոր հովիվներ, և կնաղթեմ և կաղոթեմ, որ Աստված մեր Հայրապետին փառաբանություն, երկար կյանք, որպեսզի ցուպը ձեռին առաջնորդեք մեր ժողովուրդը դեպի բարին, դեպի լավը և դեպի կատարյալը. այժմ և միշտ և հավիտյանս եավիտենից, ամեն:

**Տ. ՏԱՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՑԱՆԻ ՔԱՐՈԶԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**

(25 սեպտեմբերի 2005 թ.)

*«Զի ահաւոր եւ անպարտում պաշտօնին
կապարեցաք եւ հրաւիրուեցաք»:*

(Մաշտոց ձեռնադրության)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ. ամեն»:

Սուրբ Պապարագի ծածուկ աղոթքների մեջ կարդում ենք մեր աղոթող վարդապետի այս մտածումը և զգացումը հանդիսացող աղոթքը, որուն մեջ Ջրիսարտսի մարմնի և աղյան փոխարկվող հաց ու գինիի դիմաց, վերացած, հավաքում է, թե ինքը ահավոր և անպարտում մի պաշտոնի է կոչված: Ահավորը՝ ինչպես ընդունիլ մարդկային մեր չափանիշների համեմատ Աստուծո ռոջանկիզումը, մասերու բաժնվիլը և մահը, իսկ անպարտումը՝ այդ պաշտոնին սահման չի դնում բոլոր անոնց, որոնք քաջությամբ են մոլորենում՝ սրտանալու շնորհը, դառնալու համար պաշտոնյան Աստուծո:

Եվ ահավասիկ այսօր յոթ նվիրյալներ, ավարտելով իրենց մարքի և հոգիի պարտաստության շրջանը, քաջությամբ և վստահությամբ կոչվում են ահավոր և անպարտում այդ խորհուրդին որպես սպասավորներ: Ձեռնադրությամբ և Սրբալույս Մյուռոնով օծմամբ, այսօր նրանք արդեն իսկ դարձել են հոգևոր պաշտոնյաներ: Ինչ ահավոր և անպարտում է այս արարողությունը, որուն մեջ են հիմը ներվում է, նորն է փեղը գրավում, անցյալը մոռացվում է, անոր փեղ նոր իր պաշտոնի անհրաժեշտությունը նրա սրբության հետ միասին իր փեղն է գրվում:

Իմ խոսքը ուղղելով նորընծա քահանաներիդ ձեր պաշտոնի սկզբից, երբ այսուհետ կանցնին քառասուն օրեր խոկումի և պարտաստության օրերից հետո, առաջին իսկ օրը, երբ կսկսիք քահանայական Ձեր գործունեությունը, ձգտեցեք ձեր կապը անխախտ պահել ամեն մեկ հայի հետ, հայու հավաքավոր զավակի հետ, որ ձեր ծուխի կամ համայնքի մեջ կա, քանդակագործի նման հավաքական աղոթքներից վերջ, հավաքական քարոզներից կամ հավաքությաններից հետո ամեն մեկ հայու հետ կարողացեք պահել ձեր հարաբերությունը՝ դրոշմելու համար անոր մարքին և սրտին մեջ քրիստոնեական մեր Սուրբ Եկեղեցու վարդապետությունը, հայ ժողովրդի դարավոր արժեքները, գիր ու լեզու և որպես հայ ապրելու կոչումը, այն ժամանակ, երբ դուք ձեր աշխատանքի ոգին անպարտում սահման պիտի դնեք և ոչ թե սահմանափակյալ օր կամ ժամանակ կամ երևույթ:

Վերը բերված աղոթքին մեջ ես այս եմ գգում, որ ամբողջությամբ դու անպարտում է փաս քո ժողովրդին, և այսպեղ է, որ տարբերվում է հոգևորականի պարտականությունը և պաշտոնը աշխարհում եղած մյուս բոլոր պաշտոններից: Տարբեր զբաղումների փեր աշխարհողեն-

րը ունեն օրվա ժամանակներ: Այդ ժամանակների մեջ աշխատում են, նայում են իրենց ժամացույցը և մեկնում են տուն: Արդար է, դեմ չեմ դրան, բայց հայ հոգևորականն ի մասնավոր ի ժամացույց ունենալու, նայելու պարտավորություն չունի. որովհետև իր կյանքը նվիրում է, և հայ հոգևորականին նվիրումը փարբեր չափանիշ ունի, փարբեր մեծություն ունի, ուրիշ է Եվրոպայում, նրանք այլ չափերու մեջ են դրել, բայց մեր եկեղեցականը իր ժողովուրդին նվիրյալ, ամբողջական և լիարժեք ներկայանալու է:

Ահավասիկ այս մի քանի մրցեորից հետո, Ավետարանի հերկյալ խոսքով ուզում եմ ավարտել, քի ճշմարիտ ծառան արժանի է իր վարձքին: Հայ ժողովուրդը հավատարմոր է: Ինքզինքը ամենաանհավար կոչողը նույնիսկ հավատարմոր է, կապված է իր Եկեղեցուն, իր ազգյին: Եթե այդպես չլինի, նա իր ինքնությունը կկորցնե: Ահա թե ինչու հոգևորականին կմնա անոնցմա յուրաքանչյուրի դիմաց ցույց չչալ ծուկություն, ցույց չչալ հոգևորակ, նույնիսկ եթե ֆիզիկապես հիվանդ ես: Դիմացինին պետք է մոտենաս միշտ այն համոզմունքով և այն ոգեկանությամբ, որ այս պահուն ընդունեցիք ձեռնադրություն և օժտում Վեհափառ Հայ-Քապեպի որոշումին համաձայն, ավարտելով ձեր ուսման շրջանը:

Ձեր ուսման շրջանը սակայն այսօր առավել ևս նոր է սկսվում, որովհետև մինչև այսօր ամբարեցիք, այստեղից կրաշխեք, ուրիշներին պիտի հասնեք տալու: Բողոքովին անչափելի, անհամեմատելի իրականություններ չեն սրանք, այլ մեկը մյուսին հետ կապված օղակավոր ճշմարտություններ՝ ի երջանկություն և ուրախություն յուրաքանչյուրին համար: Դուք ալ պետք է ըլլաք երջանիկ, բայց մեր երջանկությունը հոգևոր է և մեր հաղթանակին արդյունքն է, մեկ հոգիի հավատքին բերելու արդյունքն է: Եվ եթե ուրիշներ ուրիշ բաների մեջ են փնտրում իրենց հաղթանակը և ուրախությունը, դուք պիտի փնտրեք ձեզի ընկած բաժնին մեջ, ժողովուրդը հավատարմոր բերելու դեպի մեր սուրբ հավատքի և մեր հայկականության ամբողջության մեջ:

Թող Աստված օրենի ձեզ, ինչպես ձեռնադրությամբ և օժմամբ շնորհը ստացաք, առավել ևս Սուրբ Հոգու շնորհը թող հեղվի ձեր վրա, որպեսզի ըլլաք այն, ինչ որ ես հավատում եմ, ինչ որ սիրելի մեր Վեհափառ Հայրապետը հավատում է, որ դուք պիտի լինեք պաշտոնյաները անչափելի և անպատում այս աստիճանի ճամփով տրված պաշտոնին, որին այսօր արժանավորապես կոչվեցաք:

Թող Աստված օրենի ձեզ, և ձեր օրենությունը վերադառնա մեր ժողովուրդին՝ հուրախություն և ի բժշկություն հիվանդաց և մեր Սուրբ Եկեղեցվո անասասնության:

Շնորհակալություն, Վեհափառ Տեր, որ այս ընծայալներուն ձեռնադրելու մեծ շնորհքը ինձի տվիք. ամեն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԵՐՊԱՐԸ ՇԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ

Սուրբ Գրիգոր կամ Սուրբ Գրիգորիոս՝ Լուսավորիչ Հայաստան աշխարհի, ում հիշատակը Հայ Եկեղեցին նշում է տարեկան երեք տոների միջոցով¹։ Դրանցից առաջին երկուսն արտացոլում են սրբի երկրային կյանքի առավել հանգուցակետային իրադարձությունները. վիրապ նետվելը՝ «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսատուչին մերոյ սոսկալի չարչարանացն եւ մտից ի Վիրապն», հրաշափառ վերադարձը վիրապի բանտից՝ «Սրբոյն Գրիգորի Լուսատուչին մերոյ ելն ի Վիրապէն», իսկ երրորդը նվիրված է Սեպուհ լեռան Մանենա կայրում Հայոց աշխարհի Լուսավորչի նշխարների գտնվելու խորհուրդին՝ «Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսատուչին մերոյ»։

«Չորեքստասաներորդ առաքելա»² անվանվող Ս. Գրիգորը, իր հղացումը գտավ Ս. Թադեոս առաքյալի հանգստարանի մոտ, որից և ստացավ առաքելական շնորհը³։ Ընդհանրական Եկեղեցու մեծագույն գործիչներից⁴ «Երկնաքաղաքացի այր»⁵, որ լուսավորիչը և մկրտիչը եղավ ոչ միայն հայերի, այլև կովկասյան մյուս ժողովուրդների համար⁶, որից մեծակյացները ողջունում էին՝ ասելով. «Բարով եկար լուսոյ աստղ արդարութեան, (...) անպական մշակ, երկնից բարձր աշտարակ»⁷, նաև «քնար աստուածախօս և քաղցրանուագ»⁸, «արեգակնափայլ ջափ, անշիջանելի լուսով լցեալ»⁹ և այլն։

Դարերի ընթացքում հետզհետե ձևավորվել է Ս. Գրիգորի հետ կապված մի ամբողջ մշակութային ասպարեզ, որն ընդգրկում է մտավոր և գեղարվեստական գործունեության բազմաթիվ ոլորտներ։ Ստեղծվել են նրա կյանքին և գործունեությանը նվիրված պատմագրական, վկայաբանական երկեր, նաև ներբողյաններ, որ հեղինակել են հայ և օտարազգի մեծերը՝ Հովհան Ոսկեբերանը¹⁰, Ագաթանգեղոսը¹¹, Հովհաննես Երզնկացի Պյու-

¹ Շնորհք արք. Գալուստյան, Հայագի սուրբեր, Երևան, 1997, էջ 34։

² Նույն տեղում, էջ 27։

³ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1997, էջ 186։

⁴ Ինչպես հայերն է, Լուսավորիչը «խամարքիստոնական բնորոշությունն և պոետականությունն արժանացած է» (Շնորհք արք. Գալուստյան, Հայագի սուրբեր, էջ 27)։ Սրբի պաշտամունքի մասին, մասնավորապես, ռուս ուղղափառ եկեղեցում տնն *Крыжовник А., Писемность святому сиятельному человеку Григорию Епископу Вселенной Армянской - Иерусалимской и древнерусской и восточной православной XII-XVII вв.*, Մանրուսում, միջազգային երաժշտագիտական փառնփիր, հաղորդ Ա, Երևան, 2002, էջ 176։

⁵ Սովնբք հայկական, Վենետիկ, 1853, Ե-Զ-Է, էջ 103։

⁶ Այս մասին տնն *Н. Марр, Крестное слово, прозвие, вхождение и явления святому Григорию, С.-П. Петербург, 1905*։

⁷ Հովհան Մամիկոնյան, Տարեկ պատմություն, Երևան, 1989, էջ 52։

⁸ Սովնբք հայկական, Ե, էջ 106։

⁹ Նույն տեղում, էջ 103։

¹⁰ Երանկոյն Յովհաննես Ոսկեբերանի Աստղանդեմալոսի եպիսկոպոսապետի Ներբողյան, ասացնալ յա-

Գա Ռանդեն է գալիս տարբեր գործառնություններով.

ա) բարեխոս «առ Աստուած»՝

*«Հայրապետ սուրբ և անբիծ և ըմտրեալ լորովայնէ.
Սքանչեղագործ վըկայ և պարծանք ազգի մարդկան՝
Առ Քրիստոս բարեխօսեա վասըն մեր տօնողացս»¹⁷*

բ) առաջնորդ՝

*«Ով երջանիկ Տէր Սուրբ Գրիգոր՝
Սրբութեանցըն պաշտօնեայ եւ առաջնորդ բանաւոր հօտի»¹⁸*

գ) Լուսավորչի տոհմի մահապետ՝

*«Այսօր ընդ երկնային զուարթունքն
Ժողովուրդք Հայաստանեայց տօնելով զյիշատակ
Սուրբ հայրապետաց շառաւիղաց Սրբոյն Գրիգորի»¹⁹*

դ) Գահատակ՝

*«խոստովանող Քրիստոսի ճշմարիտ վկայ՝
Բազմաշարչար մահատակ տէր Գրիգորիոս»²⁰*

ե) որոշ շարականներում սուրբը ներկայացված է համադրված գործառնություններով՝ բարեխոս, լուսավորիչ, առաջնորդ՝ «Նմանեալ Մովսէսի» և այլն.

*«Արդ աղայեմք ըզքեզ լուսաւորիչ հոգւոց մերոց
Նմանեալ Մովսէսի մախամարգարէին մեծի.
Լուսափայլեալ դիմօք աստուածահրաշ տեալեամբ
Բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց»²¹*

4. Սրբի գործառնությունները ընդհանրացված են մրան մվիրված երկու կանոններում՝ «Կանոն սրբոյն Գրիգորի Բ. Լուսաւորչին», առաջինը՝ «Այսօր զուարճացեալ» իւր սարօքն²², երկրորդը՝ «Ով երջանիկ», իւր սարօքն²³:

5. Կանոնները կատարվում են Ս. Գրիգորի երեք տոներից, մաս դրանց մախորդող մախատոնականերին, եկեղեցու ատյանից, փոխեփոխ (դաս առ դաս) երգեցողությամբ:

6. Կանոններում շարականները մեծ մասամբ բաղկացած են երեք տնից, բացառությամբ «Այսօր զուարճացեալ» օրհնությունից, որը հորինված է կացուրդի ձևով (այբբենական ծայրակապով՝ 36 տուն):

7. Գերիշխում է սրբի կերպարի փառաբանական մեկնությանը համահունչ խրոխտ, կա-

¹⁷ Չայնրադ Շարական, էջ 458:

¹⁸ Նույն տեղում, էջ 454:

¹⁹ Նույն տեղում, էջ 404:

²⁰ Նույն տեղում, էջ 140:

²¹ Նույն տեղում, էջ 409:

²² Չայնուգրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 322: Կանոնի «Այսօր զուարճացեալ» և «Արիւնք ամենայն» Օրհնության և Ճաշո շարականների հեղինակն է համարվում Հովհաննես Երզնկացի Պլուգր, տն՝ Ն. Գարրիկ Սևերինեան, Բազապրոթիս շարականաց, Վենետիկ, 1814, էջ 191:

²³ Չայնուգրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 669: Կանոնի «Ով երջանիկ» Օրհնությունը վերագրվում է 5-րդ դարի շարականագիրներին, որոնք են ենթադրաբար Մովսէս Խորենացին կամ Հովհան Մանդակունին, Ն. Գարրիկ Սևերինեան, Բազապրոթիս շարականաց, էջ 427:

Վաղին, Բանդիսավոր տրամադրությունը :

Յ. Շարականցերը ծավալվում են Բանդարտ տեմպերով՝

Չափաւոր. Միջակ:

«Լերինք ամենայն»²⁴

(Նոտային օրինակ 1)

Andante

Լե - ռինք ա - մե - նայն այ - սօր ցըն - ծա - ցեք

ընդ մե-ծա - պայ - ծառ փառ - սըն Ան - պու - իոյ

զե - րա - զանց լե - ռինն, քան - զի ի մեծ

քնա - կե - ցաւ սուր - քըն Գրի - զո - ռի - ոս,

սին չու - սոյ Դա - յաս - տան - եայց սուրբ

ե - կե - ղեց - տոյ, ո - - - ռով ցըն - ծան

ի փառս վեր - մոյն Աի - ով - նի:

9. Մեղեդիական ռեբեր են՝ վանկայինը, մաւ խառը՝ վանկային-մերվանկայինը:
վանկային մեղեդիական ռե.

²⁴ Չայնազրեալ Շարական հոգեւոր երգաց, էջ 332: Շարականների փոխադրությունը եայկական տրամադրությունից՝ եվրոպականի կազմարկ է պողեբրիս հեղինակը: Նոտային օրինակ 1-ում և 3-ում «Ե» նոտայի կողքի թեք գծիկը կշանակում է «ցածր դո»:

«Որ կոչեցեր»²⁵
(Նոտային օրինակ 2)

Andante

Որ կո - չե - ցեր ըզ - հե - ռաց-եալքս ի հար - սա - ճիս
քո մի - ած-նին ըմ - պել գրա-ժակն ի - մաս - տու-թեան
ի ձե - ղըն սըր - թոյն Գրի-գո - բի քա - բե - խօ-սու -
թեամբ սո - րա ո - ղոր - մեա մեզ մա - տը - ուած:

10. Խորհրդանշական է կանոնների ձայնեղանակային մեկնությունը: Այսպես, Լուսավորչի կենդանի մահատակությանը նվիրված շարականները (առաջին կանոն), Ռորիմվաձ են հիմնականում ԳԿ (Օրհնություն, Ժաշու) և ԴԿ (Հարց, Ողորմեա, Տէր յերկնից) ձայնեղանակներում²⁶, որոնց ձայնակարգի միջոցով (էոլ.)²⁷, ինչպես Քայտցի է՝ արտահայտվում են տրտմագին, ինքնամիտի հոգեվիճակներ²⁸: Սակայն տվյալ դեպքում «Մարտիրոս յաղթող Տէր Գրիգորիոսը»²⁸ մարմնավորվում է գաղափարի համար ինքն իրեն գոհաբերելու, մահատակվելու պատրաստականությանը խրոխտ, առնական, կամային տրամադրությամբ:

«Այսօր գուարճացեալ»²⁹ (Նոտային օրինակ 3)

Միաժամանակ, Լուսավորչի հաղթարշավին, ցաւ ցրա սուրբ մասունքների Քայտմաբերմանը նվիրված շարականներում (երկրորդ կանոն) գերիշխում են լավատեսական ԲԶ-ը (Օրհնություն, Հարց, Տէր յերկնից, ԲԶ-ի ձայնակարգն է էոլ.)³⁰ և էպիկական ԴԶ-ը (Մանկունք, Համբարձի, ձայնակարգը՝ էոլ.)³¹:

«Ով երջանիկ»³¹ (Նոտային օրինակ 4)

²⁵ Չայնսկայնայ Շարական հոգևոր երգոց, էջ 337: Վանկային-ներվանկային ոճի օրինակները տնն նուրա-յին օրինակներ 1, 3, 4-ում:

²⁶ Կանոնի Մանկունքը ԳԶ-ում է:

²⁷ Տնն Կытарец X. C., Вопросы истории и теории армянского монодийского музыкал. Л., 1958, с. 437.

²⁸ Չայնսկայնայ Շարական հոգևոր երգոց, էջ 326:

²⁹ Նույն տեղում, էջ 322:

³⁰ ԲԶ-ի և ԴԶ-ի ձայնակարգերի՝ 1-ը 5 և էոլ. 4, հուզական բովանդակության մասին տնն Կытарец X. C., ух. соч. со. 448 и 465.

³¹ Չայնսկայնայ Շարական հոգևոր երգոց, էջ 669:

(Նոտային օրինակ 3)

Moderato

Այ - սօր զուար - ճաց - եալ զըն - ծայ ե - - -

կե - ղե - ցի, դրախտ աստ - դա - ծա - տունկ

ծաղ - կեալ, յոր - մէ տը - ուալ մեզ տունկն ան -

մա - հու - քեան տէր Գրի - գո - - ըի - ոս,

և պիտ - դովն իւ - թով ե - լից ըզ -

տի - - ե - զերս ա - մե - նայն:

(Նոտային օրինակ 4)

Andante sostenuto

Ով եր - ջա - միկ տէր սուրբ

Գրի - գոր սըր - բու - քեան - զըն պաշ -

տօն - եայ եւ ա - ռաջ - մորդ քա -

մա - տր եօ - տի:

Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված կանոնները հայ հոգևոր երգաստեղծության լավագույն մանրանշանն են, որոնք բնորոշվում են հորինվածքի բանաստեղծական և երաժշտական քաղաղորհների ճշգրտաշնչական միասնությամբ:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՑԱՆ

Բաևաասիրական գիտությունների թեկնածու

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՆՁԵՐԸ

Պէտք էր հայերէն գիր հնարել: Այս հնարքը Մատուած մեր քահանայապետին մովսիսական զաւագանին չբուսաւ, այլ իրեն առաջնականն աջակցին՝ Ս. Մեսրոպայայ:

Տ. ՂԵՎՈՆԴ ԱՒԵՇԱՆ՝

Հայ Ռոզնոր բանաստեղծության մի ուրույն տեսակն են գանձերը: Նրանցով սկսվեց հայ բանաստեղծության զարգացման մոր շրջանը, որն իր հերթին պայմանավորված էր հայկական վերածնության և դասական միջնադարի առաջ բերած մոր աշխարհընկալմամբ և վերջինիս թելադրած գրական մոր ըմբռնումներով:

Այս ստեղծագործությունները գանձեր են անվանվում հետևյալ պատճառով: Միջնադարում ընդունված կարգով չափածո շատ գործեր վերնագրվում և բերվում էին իրենց սկզբնատողով և կամ էլ անգամ առաջին բառով, ինչպես, օրինակ, Կոմիտաս Կաթողիկոսի՝ Հոփսիսիյանց ճշանավոր շարականն է հայտնի «Անձինք նուիրեայք» և կամ էլ «Անձինք», իսկ Ներսես Շնորհալու՝ Վարդանանց մվիրված շարականը՝ սկզբնատողային «Նորահրաջ պսակաւոր» անվամբ:

Միջնադարյան բանաստեղծություններում մեծ ակրոստիքաային ընդունված սկզբունքով յուրաքանչյուր տան սկզբնատողի առաջին բառերը կազմում էին մի ծայրակապ, որը հիմնականում ներկայացնում էր տվյալ ստեղծագործության հեղինակի անունը:

Ինչպես հայտնի է, առաջին գանձերի հեղինակը Գրիգոր Նարեկացին է: Ծայրակապային ընդունված այս սկզբունքով Նարեկացու այս ստեղծագործությունների առաջին տան առաջին տողի առաջին բառը պետք է սկսվեր Գ-ով, որպեսզի հաջորդող տներով կազմվեր ԳՐԻԳՈՐ ծայրակապը: Զարմանալի Ռոզնոր մի խորհրդով և կամ էլ ասես կանխագուշակով, որ իր ընտրած սկզբնաբառով են կնքվելու հայ բանաստեղծության այս ժանրի ստեղծագործությունները, «Գրիգոր» ծայրակապի Գ-ի համար մեծ բանաստեղծը քանիցս իր այս գործերը սկսել է Գանձ բառով, որի համար էլ հիշյալ ժանրով գրված գործերը սկսել են անվանվել «գանձ», իսկ ըստ եկեղեցական-տոնական և ծիսական կանոնների ի մի հավաքված գանձերի ժողովածուն՝ «Գանձարան»²:

Ծարականների մեծան, գանձերը ևս գրվել են եկեղեցական տոների և արարողություն-

¹ Տ. Ղ. Արիշան, Յուրիկը հայրենեաց հայր, Եր. Ա. Վենետիկ, 1869, էջ 323:

² Գանձարան ժողովածուի և գանձերի մասին, որպես գրական ժանր, տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և պոեմներ, աշխատասիրությամբ Ա. Զյոշկևյանի, Երևան, 1981 թ., էջ 21-51:

մերի ժամանակ կատարվելու համար: Նույն այս պատճառով, ինչպես որ շարականները ավելի շատ բերված են ոչ թե ըստ հեղինակային շարքերի, այլ Օարակնոցում ցրված են եկեղեցական տարբեր տոների կանոնների մերժող, այնպես էլ զանգերը բերվում են ոչ թե այս կամ այն հեղինակի ստեղծագործությունների շարքում, այլ Գանձարաններում՝ այն տոնի կանոնի մերժող, որին մվիրված է տվյալ զանգը: Ի տարբերություն, սակայն, շարականների և Օարակնոցի, զանգերը և Գանձարան ժողովածուն ամփամեծապես քիչ են ուսումնասիրված և հրատարակված, որը բացատրվում է մի քանի պատճառներով:

Նախ, որ առաջին շարականագիրներն են եղել Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, և որպես գրական ժանր այն կապվում է մեր մատենագրության դասական շրջանի և վերջինիս մշակավոր դեմքերի հետ, ուստի և բնականաբար, շարականները գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Երկրորդ՝ Գանձարան ժողովածուն, Օարակնոցի մեծ մասնատեսված լինելով եկեղեցական տոների և ծեսերի կատարման համար, այնուամենայնիվ, բուն եկեղեցական արարողությունների մաս չկազմեց, այլ որպես առավել մոտ շրջանի երևույթ, ավելի շատ մնաց որպես տվյալ տո՞ւ, և և ծեսերի խորհրդեր վեր հանող հոգևոր-գրական երևույթ: Ուստի, եթե «Օարակնոց», «Մաշտոց», «Ժամագիրքը», «Պատարագամատուցը», «Խորհրդատետրը» և «Մաշտոց» ձևաբանը, ունենալով եկեղեցական կիրառություն, քանիցս հրատարակվել և վերահրատարակվել են և մույն ծիսական առումով ճիշտ կատարվելու համար ենթարկվել համապատասխան եկեղեցագիտական ըմբռնության, ապա Գանձարանները քանի որ եկեղեցածիսական կանոնական այս ժողովածուների շարքում չեն եղել, ուստի և մերանց հրատարակության եկեղեցակիրառական ամփածեշտությունը չի եղել:

Նույն այս հանգամանքն ամփամեծապես դժվարացրել է զանգերի և Գանձարանների ուսումնասիրությունը հետևյալ պատճառով. Վերը մշված եկեղեցածիսական ժողովածուների միջև առկա տարբերությունները պայմանավորված են եղել Տոնացույցի և ծեսերի՝ դարերի ընթացքում կատարված փոփոխություններով և որոշ չափով էլ՝ ձեռագրերի ընդօրինակությունների ժամանակ առաջ եկող գրչագրական տարրմթերցվածներով, ուստի կանոնական մեծ ժողովածուները որոշակի դասակարգման և խմբավորման են ենթարկվում: Այսինքն՝ կանոնական ժողովածուներում փոփոխությունները պայմանավորված են կանոնի փոփոխությամբ: Վիճակը, սակայն, միանգամայն այլ է զանգերի և Գանձարանի պարագայում:

Չունենալով վերոնշյալ ժողովածուների կանոնացվածությունը՝ մերանց փոփոխությունները պայմանավորված են եղել ոչ միայն եկեղեցական կանոնի, այլև ժամանակի գրական ըմբռնումների փոփոխությամբ:

Ամփածեշտ է մաս հաշվի առնել, որ ոչ միայն շարականներն էին կանոնացված ստեղծագործություններ, այլև մերանց հեղինակներն էին մվիրագործված անուններ մեր եկեղեցական կյանքում և մատենագրությունում, ուստի շարականների ընդօրինակության ժամանակ գրիչները իրենց չէին կարող թույլ տալ ցուցաբերել այնպիսի ազատություն, ինչպիսին զանգերի պարագայում էր: Այսինքն՝ եթե շարականների դեպքում գործում էր հոգևոր-գրական եկեղեցական կանոնացված ավանդույթը, ապա զանգերն ընդօրինակելիս գրիչները դրանք հարաբերում էին իրենց ապրած ժամանակի, եկեղեցական խնդիրնե-

րի և ազգային անկալիքների հետ՝ կատարելով համապատասխան փոփոխություններ և հավելումներ: Ընդօրինակությունից ընդօրինակություն կատարվող այս փոփոխություններն էլ անհամեմատ դժվարացնում և խճողում են զանգերի բուն բնագրի վերականգնումը, ինչպես և՛ այդ բնագրերի ջնջությունը:

Հատկանշական է, որ հայկական տպագրության սկզբնավորումից ի վեր հրատարակվել ու արժեվորվել են գլխավորաբար Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու զանգերը: Այս հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է այս հեղինակների ունեցած հոշակով: Միաժամանակ նրանք ներկայացնում են հայ զանգագրության առաջին շրջանը, և նրանց անվան հետ է կապվում և Գանձարան ժողովածուի սկզբնավորումն ու ձևավորումը: Հայ զանգագրության առաջին այս շրջանի համակողմանի ջնջությունը Նարեկացու և Շնորհալու տաղերի ու զանգերի գիտաքննական բնագրերի հրատարակությամբ 1980-ական թթ. իրականացրեց Մատենադարանի աշխատակից Արմինե Քյոշկերյանը³: Գանձարան ժողովածուի և զանգերի՝ որպես գրական ժանր, զարգացման երկրորդ փուլը կապվում է Գևորգ Ակնտացու և հատկապես Մխիթար Այրիվանեցու անվան հետ:

Գարեգին Հովսեփյանը, արժեվորելով Մխիթար Այրիվանեցու գրական ժառանգությունը և ցավ հայտնելով զանգերի ոչ միայն չուսումնասիրված, այլև անգամ հրատարակված չլինելու համար, գրում է. «Գանձերը, տարաբախտաբար, մինչև այժմ անուշադրության են մատնված, թեև նրանց ուսումնասիրությունը կօգներ և մեր միջնադարյան բանաստեղծության հասկացողությանը: Նրանք կարևոր դեր են կատարել մեր անցյալում՝ կապված լինելով տերունական և սրբոց տոների և եկեղեցական արարողությունների հետ»⁴:

Հայ ձեռագրային աշխարհի հմուտ գիտակը Գանձարանների խմբագրությունների մասին գրում է. «Այսպիսի զանգերի (և հոգևոր ներգրի) ժողովածուների երկու իրարից տարբեր խմբագրություններ յայտնի են մեզ. մեկը հին եւ առեղի արժեքաւոր, հազուադիստ, միւսը Գրիգոր Խլաթեցու ձեռքով հաւաքած եւ կաֆաներով ևս ճոխացրած, յետագայում յաւելումներով ուրիշների կողմից»⁵:

Հովսեփյանի մատնանշած հավելումները ըստ էության ներկայացնում են ժն դարում կատարված ավելացումները, որով Գանձարանը ավելի է ճոխանում նորանոր միավորներով՝ ներկայացնելով Հայոց Եկեղեցու տոնական ողջ ընթացքը:

Գանձարանների ջնջությունը վկայում է, որ իրար հաջորդող այս երեք խմբագրությունների առաջ զալը պայմանավորված էր այս ժողովածու ժամանակի գրական և ազգային-եկեղեցական ըմբռնումներից համահունչ դարձնելու ձգտմամբ, ինչպես նաև աստիճանական ընթացքով նրանում ներառելու Հայոց Եկեղեցու տոներից և մի շարք կարևոր ծեսերից վերաբերվող զանգերը, որով յուրաքանչյուր տոն ստանում է զանձատաղային իր միավորը:

Գանձարանների զարգացման այս ընթացքը ևս մի գուգահետ է գծում շարականների

³ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանգեր, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981: Ներսես Շնորհալի, Տաղեր և զանգեր, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի, Երևան, 1987:

⁴ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, Նորագույն արձանագրություն և նրկեր, Երուսաղեմ, 1931, էջ 3:

⁵ Նույն տեղում:

անցած ճանապարհի հետ: Ինչպես որ եկեղեցական երկու գլխավոր տոներն են Ս. Ծնունդը և Ս. Հարությունը ու նրանց միջև ընկած Մեծի Պահոց շրջանը, այնպես էլ մեր հմայուն՝ Սահակ-Մեսրոպյան շարականները վերաբերվում են տոնական այս ժամանակահատվածին, իսկ նրանց հաջորդող դարերի շարականագիրները մորանոր շարականներով ամբողջացրել են տարեկան տոնական այս ընթացքը:

Նույն այս հանգամանքով է բացատրվում և Ներսես Ծնորհալու այդքան մեծ թվով շարականներ, զանգեր և տաղեր գրելը: Ծնորհալի Հայրապետը, ձեռնամուխ լինելով եկեղեցական արարողությունների և ժամակարգության ամբողջացմանը, մի շարք տոների համար, որոնց տվյալ օրվա շարականը չուներ, համապատասխան այդ շարականներն է գրում:

Համանման ձևով զանգերի պարագայում, երբ թեմատիկ քննության ենք ենթարկում Նարեկացու զանգերը, ապա տեսնում ենք, որ դրանք հիմնականում նվիրված են եկեղեցական գլխավոր տոներին, և հաջորդող շրջանի հեղինակներն էլ նպատակային ձևով աշխատում են զանգեր և տաղեր գրել այն տոների համար, որոնք չուներին իրենց համապատասխան զանգային և տաղային միավորները: Այսինքն, տարբեր հեղինակների կողմից այս ստեղծագործությունների գրությունը պայմանավորված էր ոչ միայն նրանց գրական-թեմատիկ նախասիրություններով, այլև թելադրված էր Ծարակնոցը և Գանձարան ժողովածուն համապատասխան միավորներով լրացնելով:

Այս հանգամանքը առավել ցայտուն ձևով է երևում Գանձարանի առաջին խմբագրության առավել հին օրինակներում, որոնցում ըստ տոնական ընթացքի զետեղված յուրաքանչյուր կանոնի ներքո հիմնականում մեկ միավոր է: Հետագայում, երբ տվյալ տոնի թեմայով մոր զանգեր և տաղեր են գրվում, արդեն տվյալ տոնի կանոնի ներքո զետեղվում են տվյալ տոնին նվիրված այս ստեղծագործությունները: Այս պարագայում իսկ, սակայն, կարելի է վերականգնել Գանձարանի հին խմբագրությունը, քանի որ մոր հավելված միավորների խորագրում նշվում է՝ «այլ տաղ», «այլ զանգ» և կամ էլ՝ «այլմե ասացեալ»: Համաբնույթ նշումներով գործերը նաև հանձնք, ապա վերստին կունենանք Գանձարանի առաջին խմբագրությունը:

Գանձարանի առաջին և երկրորդ խմբագրությունների համեմատությունը միաժամանակ վկայում է, որ մի շարք միավորներ դուրս են մնացել և տեղ չեն գտել Գանձարանի երկրորդ խմբագրությունում և հաջորդող դարերի ընդօրինակություններում: Այս հանգամանքը չի կարելի բացատրել միայն նրանով, որ աստիճանաբար մեկնույն տոնին նվիրված մի քանի ստեղծագործություններ են գրվել, և ամենամեծը է դարձել ընտրություն կատարել դրանց միջև: Մի շարք կանոնների ներքո երբեմն բերված են մինչև հինգ-վեց ստեղծագործություններ, այնինչ այլ կանոնների պարագայում երկու-երեք գործերից մեկը դուրս է թողնվել և կամ էլ եղած անգամ մեկ ստեղծագործությունը փոխարինվել է մի մոր գրված գործով: Ասվածը լիովին վերաբերվում է և Սրբոց Թարգմանչաց նվիրված զանգերին:

Որքան էլ զարմանալի է, մինչև ԺԳ դարը Թարգմանչաց նվիրված որևէ զանգ հայտնի չէ, թեև, ինչպես վկայում են կորյունը և խորենացին, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի հիշատակների տոնը սկսել է կատարվել նրանց վախճանմանը հաջորդող տարիներից:

Անգամ Ներսես Օճորճալիմ, որը Օարակնոցը և Գանձարանը հարստացրել է տասնյակ զանգեքով և շարականներով, Թարգմանչաց նվիրված որևէ ստեղծագործություն չի գրել, բացառությամբ «Վիպասանութեան»⁶ Գրերի Գյուտին նվիրված հատվածը, ինչպես նաև Դավիթ Ամհաղթի՝ Խաչի ճառի մեկնության Թարգմանչաց նվիրված հատվածը:

Թարգմանչաց «Որք զարդարեցին տնօրինաբար» շարականը գրել է ԺԳ դարի ճշագավոր մատենագիր Վարդան Արևելցին:

Նկատելի է այն օրինաչափությունը, որ Թարգմանչաց նվիրված գեղեցիկները և տարբեր երկերի գեղեցիկները հատվածները սկսում են հաճախ զալ ԺԲ ու առավել ևս ԺԳ դարերից: Եթե մինչ այդ թիմնականում Գրերի Գյուտի մասին պատմական տեղեկություններ են հաղորդվում տարբեր պատմիչների գործերում, ապա այս շրջանում գրվում են Կարապետ Սասնեցու (ԺԱ-ԺԲ դդ.) ճշամատուր գեղեցիկները⁷, Նույն Վարդան Արևելցու գեղեցիկները⁸, Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» Գրերի Գյուտին և Սրբոց Թարգմանչաց վերաբերվող գեղեցիկները ծավալում հատվածը⁹:

Նույն այս դարում են գրվել Թարգմանչաց նվիրված միջնադարյան երեք զանգերից երկուսը՝ Գևորգ Սկևռացու «Գանձ Սրբոց Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ» և Մխիթար Այրիվանեցու «Գանձ Սրբոց Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ»:

Գանձարանի թիվ խմբագրությունը ամբողջացել է ԺԴ դարում: Գանձարանների ձեռագրային քննությունը ցույց է տալիս, որ ԺԴ դարի այս ժողովածուների մի խմբում Թարգմանչաց կանոնի ներքո բերվում է Գևորգ Սկևռացու, իսկ մյուսներում՝ Մխիթար Այրիվանեցու զանգը: Այսպես, հնագույն գանձարան-տաղարաններից երկուսում Փարիզի Ազգային գրադարանի հմր. հմր. 79 և 80 ձեռագրերում (որոնցից առաջինի գանձարանային մասը գրվել է ԺԴ դարում, իսկ երկրորդ ձեռագիրը՝ 1381 թ.), Թարգմանչաց կանոնի տակ բերված է Գևորգ Սկևռացու զանգը¹⁰: Այս զանգն է գտնվում նաև Երևանի Մատենադարանի հմր. 7785 Գանձարանում¹¹, որն, ինչպես գրում է Ա. Բյոշկեյանը, ընդօրինակվել է 1370-1380-ական թթ. Սուրխաթում (Ղրիմ)¹²:

Գևորգ Սկևռացին Թարգմանչաց զանգը սկսում է վաղարշապատի Կաթողիկեի կառուցման գեղեցիկներով: Ինչպես որ Սահակ Զորափորեցի Կաթողիկոսն էր Հայոց Դարձի և Մայր Տաճարի կառուցման համար գրում, թե այստեղից մեզ ծագեց Հայաստան աշխարհի փրկության լույսը, այնպես էլ Գևորգ Սկևռացին է վաղարշապատի Կաթողիկեն համարում այդ լույսը: Ինչպես եկեղեցին սկսվում է որպես քարեղեն շինվածք և ավարտվում որ-

⁶ Ներսես Շնորհալի, Զարագրություն իտմարական վիպասանութեամբ սոմա Նայկազանցն սեռի եւ Արշակունեաց զարմի, աշխտ. Մ. Մկրտչյան, Երևան, 1981, էջ 95-98:

⁷ Տնն Ներողեան պարմագրաբար ասացան սրբազան եպիսկոպոսի եւ վարդապետի Կարապետի Սասնեցու, Վաղարշապատ, 1897, 74 էջ:

⁸ Նորին Վարդանայ վարդապետի ասացան Բան զովստի պատմագրարար վասն Սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց Թարգմանչացն, «Բանբեր Մաթենագրարանի», 1964, № 7, էջ 377-397 (աշխտ. Ժ. Անթարյանի):

⁹ Տնն Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխտ. Կ. Ա. Մխիթ-Օհանեսյանի, Երևան, 1961, էջ 25-30:

¹⁰ Տնն Փարիզի Ազգային գրադարան, ձեռք. հմր. 79, 149ս-154ր եւ հմր. 80, 372ա-374ր:

¹¹ Տնն Երևանի Մաթենագրարան, ձեռք. հմր. 7785, 117ա-120ա:

¹² Տնն Գրեգոր Նարեկացի, Տաղեր և զանգեր, Երևան, 1981, էջ 52:

Այսպիսով, Լուսավորիչը իր քարոզությանը աստվածային խոսքը սերմանեց, որը Գրե-
րի Գյուտի առաջ քերած կրթական շարժմամբ հնչեցրին և իրենց կողմից ստեղծված հայ
դպրության երկերում ամբարեցին Սուրբ Թարգմանիչները:

Հաջորդող տներում Գրերի Գյուտը հարաքերելով հոգևոր երկնային խորհուրդների
հետ, Ակևռացին այնուհետև համառոտ ներկայացնում է Գրերի Գյուտի պատմությունը,
ապա թվարկում Ս. Սահակի և Ս. Մեսրոպի աշակերտներին՝ այս թվարկումը խորհրդանշ-
շական կերպով սկսելով Մովսես Խորենացուց, ում անվանում է առաջին աշակերտը Ս. Սա-
հակի և Ս. Մեսրոպի: Գևորգ Ակևռացին ինքը քերականության և գրչության արվեստի
մեկնիչ և տեսաբան լինելով, Մովսես Խորենացուն մեծարում է ոչ թե որպես Հայոց պատ-
մահոր, այլ որպես առաջին քերթողի, ինչպես որ Խորենացուն եմ անվանել նաև Մովսես
Քերթող, թեև բանասիրությունը հետազայում, իհարկե, ապացուցեց, որ Մովսես Քերթողը
այլ հեղինակ է, Մովսես Խորենացին՝ այլ:

Ինչպես Ակևռացին է գրում Պատմահոր համար՝

*Ինչպես առաջին մեզ հայր քերթողաց պայծառն Մովսէս այն Խորենացին,
Նախնին աշակերտ Սրբոյն Մեսրոպայայ ի քերըս բայից հզար քան ըզնա:*

Դիոնիսիոս Թրակացու քերականությունից եկող ըմբռմամբ Ակևռացին «քերակա-
նություն» բառը բացատրում է «քերել» բառով, որպես բայի քերում՝ «ի քերըս բայից»։ Այ-
նուհետև հաջորդաբար հիշում է Հովսեփ Պաղնացուն, Եզնիկ Կողբացուն, Դավիթ Ան-
հաթիին, Կորյունին և քերականաց դասին:

Թարգմանչաց դասին կենդանի ներկայություն համարելով մեր ազգային եկեղեցական
կյանքում, Թարգմանչաց աշակերտներին անվանում է նրանց «ստույգ աշակերտք», որոնց
էլ իրենց հերթին աշակերտել են և իրենք: Այսպիսով, ինչպես որ քահանայական իշխա-
նությունը Քրիստոսից փոխանցվեց առաքյալներին, ապա եկեղեցու միջոցով շարունակ-
վեց առաքելական հաջորդությանը, այնպես էլ վարդապետների միջոցով Թարգմանչաց
գործն ու առաքելությունն է շարունակվում:

Հայտնի է, որ Մխիթար Այրիվանցու Գանձարանի գրությունից հարյուր տարի անց՝
1386 թ. Գրիգոր Նյաթեցին եղել է Այրիվանքում, ծանոթացել Այրիվանցու գանձերին և
ապա հիմնովին վերախմբագրել Գանձարան ժողովածուն՝ շատ հին գանձեր փոխարինե-
լով նորերով, իսկ շատ գանձեր էլ տրոհելով և տանելով տարբեր կանոնների տակ:

Ինչպես նշում է Էլեոնորա Հարությունյանը Մխիթար Այրիվանցուն նվիրված իր
ուսումնասիրության մեջ, սկզբնապես Այրիվանցու գանձերը անհատական մի Գանձա-
րան են եղել՝ իրենց ընդհանուր ծայրակապով, և հետո Գրիգոր Նյաթեցին է, որ դրանք նե-
րառել է ընդհանուր Գանձարան ժողովածուում¹⁴:

Այրիվանցու գանձերի այն օրինակը, որը տեսել է Գրիգոր Նյաթեցին, ունեցել է չա-
փածո հիշատակարան, ուր ապվել է. «ԻԱ գանձ կա՝ տէր Մխիթարայ Այրիվանցւոյն ի
գիրքս և Բ երգս նորկերտ գրոց և պատկերաց սրբոց. ՉԼԵ (1286 թ.)»¹⁵:

¹⁴ ՏՆՆ Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանցի, Երևան, 1986, էջ 148-149:

¹⁵ ՏՆՆ Գաբրիելի արքեպս. Հովսեփյանց, Մխիթար Այրիվանցի, Նորայնիսի արձանագրություն և երկեր, էջ 6:

Մխիթար Այրիվանեցու չափաճո հիշատակարանի վերջում խլաթեցին ավելացրել է հետևյալ տողերը. «Տեր Մխիթարն ի ՉԼԵ թրինն ասացեալ էր զհիւր բանսն և Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387 թ.) թվին հանդիպեցաւ նորա բանիցն. ՊԼԶ»¹⁶:

Գանձարանի՝ խլաթեցու խմբագրությունից հետո Թարգմանչաց կանոնի ներքո Այն-ռացու գանձի փոխարեն արդեն Այրիվանեցու գանձն է որվում:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ մինչ խլաթեցու խմբագրությունն էլ հին գանձարանների մի մասում այս կանոնի ներքո, ինչպես ասացինք, Այրիվանեցու գանձն է եղել: Այսպես, Վենետիկի Մխիթարյանների ԺԴ դարի երեք Գանձարաններից երկուսում՝ իրենց հնությամբ երկրորդ և երրորդ գանձարաններում, գրված համապատասխանաբար 1394 և 1396 թթ., կա Թարգմանչաց կանոնը, և երկուսում էլ Այրիվանեցու գանձն է¹⁷:

Այրիվանեցու՝ Թարգմանչաց նվիրված գանձն ենք գտնում և Երևանի Մատենադարանի ԺԴ դարի հետևյալ ձեռագրերում. հմր. 3540, 106ա-109բ (1286, 1408 թթ.), հմր. 5328, 115ա-118ա (ԺԴ դ.), հմր. 4273, 62ա-65բ (1396 թ.), հմր. 8251, 106ա-109ա (ԺԴ դ.), հմր. 4068, 271ա-275բ (ԺԴ դ.):

Գևորգ Այնտացու այս գանձը այնուհետև Այրիվանեցու գանձով է փոխարինվել, որովհետև վերջինս առավել պատմական հիմքի վրա էր խարսխված և ավելի շատ էր հարաբերվում գրության ժամանակի և հաջորդող դարերի ընթացքում հայության ունեցած ձգտումների և ակնկալիքների հետ:

Քանի որ Հայոց գրերը խորեմացու վկայությամբ աստվածային տեսիլով են տրվել, մեր մատենագրության մեջ համարվել են հոգևոր արարչություն, ուստի արարչագործության հետ զուգահեռով Այրիվանեցին իր գանձը սկսում է չորս տարրերի մասին գրելով, այնուհետև ներկայացնում Գրերի Գլուխը ըստ մեր պատմիչների վկայությունների, ապա ամցնում դրանց ազգային-հոգևոր խորհրդի վերահամանը ու արժեքորմանը:

Այնտացին Գրերի Գլուխը եթե հարաբերում էր Ա. Գրիգորի քարոզության հետ, ապա Այրիվանեցին հոգևոր լուսավորության և փրկագործության բուն ակունքից սկսելով այս գանձի երկրորդ տան սկզբում նախ գրում է Փրկչի մարդեղացման, ապա առաքելական քարոզության մասին, որն այնուհետև հաջորդական փոխանցմամբ հասավ մինչև Ա. Սահակ Հայրապետը, ում զահակայության շրջանում տրվեցին հայոց գրերը:

Քրիստոս մարմնացեալ, քարոզ առաքեալ, քանոն մեզ եղեալ,
Թաղէոս եկեալ, յԱրտագ վկայեալ, Սանդուխտ սպանեալ,
Եւ Բարդուղիմէի, ի քարմ վկայեալ, փոքրը հաւտ թողեալ,
Սուրբ Գրիգոր յայտնեալ, զՏրդատ մըկրտեալ, Յոհաննէս կոչեալ,
Մեր հաղքն որ ընտրեալ, յոյն գրով վարեալ, ասորով վարժեալ,
Սահակ սրբասնեալ, կաթողիկոս լեալ, ամս յիսուն ճըզնեալ:

Կորյունի հետևողությամբ Այրիվանեցին Մեսրոպ Մաշտոցին համեմատում է Մովսես Մարգարեի հետ, որ ինչպես Մովսեսը Աստծուց ստացավ քարեղեն տախտակները, այն-

¹⁶ Լույն տրվում:

¹⁷ Տե՛ս Վենետիկի Մխիթարյանների Մաքնադարանի ձեռք. հմր. 382, 50ա, ձեռք. հմր. 1672, 37ա:

պես էլ Ս. Մեսրոպը Աստվածային մույն Աջով՝ հայոց գրերը¹⁸:

Մեր միջնադարյան մատենագրությունում յուրովի են իմաստավորվել Ներսես Մեծի և Սահակ Պարթևի տեսիլքերը: Ամեն մի դարաշրջան յուրովի է մեկնաբանել Ս. Սահակի տեսիլը և հատկապես տեսիլում նկարագրվող մագաղաթի ոսկյա գրերի ջնջված տողերը: Այս տեսիլի կատարման առաջին ադրասահայտությունը համարվել է Վարդանանց մահատակությունը: Մագաղաթի ոսկյա գրերը քանի որ ըստ տեսիլի մեկնաբանության խորհրդադրույթում են Ս. Գրիգորի տոհմից Հայոց Հայրապետական Աթոռին վերընձնուղելով մտող գահակալներից, ուստի տեսիլի այդ հատվածի կատարումը համարվեց Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչների՝ կաթողիկոսական գահին քազմելը, քանի որ, համաձայն ավանդության, նրանք սերում էին Ս. Գրիգորի տոհմից:

Հետաքրքրական է, որ այս գանձերը ընդօրինակող խմբագիր-գրիչները ասես չբավականացալով Սահակ Պարթևի տեսիլի՝ Այրիվանեցու բանաստեղծական մեկնաբանությունից, իրենց կողմից կատարել են նոր հավելումներ՝ առավել ազգային-հայրենասիրական շունչ հաղորդելով այս գանձին:

Այսպես, Ս. Սահակի տեսիլում հիշվում են և սեղանի շուրջը խմբված երիտասարդները, որոնք այնուհետև լուսավոր թևերով պատվելով թռչում և շրջապատում են սեղանը:

Այրիվանեցին տեսիլի այս տողերը բերում է առանց մեկնաբանության՝ պարզապես բանաստեղծական թվարկմամբ գրելով.

Տղայք նորահասակ, սկուտեղին դիմակ, թևքն հրեղինակ¹⁹:

Այս գանձի մի շարք ընդօրինակություններում այս տողից հետո հանդիպում է հետևյալ հավելում-մեկնաբանությունը.

Որ էր մշամակ, սըրթոց մահատակ, Վարդանանց լըստակ
Եւ այլ քազմյարիմակ, իրաց նըշամակ, յետին ժամանակ²⁰:

Այս հավելում-մեկնաբանության առաջին տողը տեսիլի հիշյալ հատվածն ուղղակիորեն կապում է Վարդանանց հետ, իսկ հաջորդ տողը տեսիլի հետ է հարաբերում հաջորդող դարերի հայոց բոլոր մահատակներից:

Ազգային-հոգևոր այս շեշտադրումները առավել են խորանում գանձի բարեխոսական հատվածը կազմող «Ջարթիր ողորմած» սկզբնատողով տնում:

Գանձի մախավերջին տունը ներկայացնում է Ս. Սահակի և Ս. Մեսրոպի վախճանումը: Հետաքրքիր է, որ Այրիվանեցին Կորյունի հետևողությամբ Ս. Սահակի վախճանման օրը չի մշում, այլ դարձյալ ասում է ամսավերջին. «ի մատասարդի, ի վերջին արի»:

Եթե Գևորգ Այկուացու գանձը սկսվում էր Վաղարշապատի Սուրբ Կաթողիկեով, ապա

¹⁸ Տես Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և Տաղեր, աշխատասիրությամբ Է. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 114:

¹⁹ Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և տաղեր, էջ 115:

²⁰ Նույն տեղում:

Այրիվանեցին էլ իր գանձն է ավարտում Մայր Տաճարին նվիրված վերջին տնով՝ գրելով.

Ով գմբեթաշէն, Սուրբ Գրիգորաշէն, դու աստուածաշէն:

Բուն գանձում զարմանալիորեն որևէ ակնարկ չկա Լուսավորչի տեսլի մասին, սակայն գանձի մի շարք խմբագրություններում այս տողերի վերաշարադրմամբ լրացված է այս բացը և համաձայն Լուսավորչի տեսլիի ասվում է.

Ուռամբ ոսկեղէն, հարեալ ի հզարէն, միայնոյ փրկչէն:

Բուն գանձում այսպիսով թեև Լուսավորչի տեսլիի մասին ուղղակի հիշատակություն չկա, սակայն վերջինիս հետևողությամբ բանաստեղծորեն այն միտքն է արտահայտվում, որ Միածնի աստվածային լուսով էջքով աստվածության հուրն է բնակվում այս տաճարում, ինչպես որ աստվածության հուրը Մովսեսին երևաց անկեզ մորեցիով.

Ի քեզ բնակեալ էն, հուրն ի մորեցին, վառեալն ի թրփէն:

Ինչպես վկայում են ձեռագրային տվյալները, Գանձարանի երրորդ խմբագրությունը կատարվել է Ժն դարի սկզբում: Այս խմբագրությունից հետո Թարգմանչաց կանոնում կատարվում է երկու էական հավելում: Առաջին՝ Այրիվանեցու գանձին զուգահեռ առանձին մի կանոնով հանդես է գալիս Առաքել Բաղիշեցու (1380-1454 թթ.) «Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ» գանձը. ինչպես նաև Թարգմանչաց բուն կանոնի՝ Այրիվանեցու գանձը գանձարանային ընդունված կանոնով հավելվում է տաղային և փոխային հետևյալ երեք միավորներով՝ «Եկայք զուարճացեալք պայծառասցոյք տանին», «Սուրբ վարդապետն մեր ընտրեալ» և «Արդ երկոցին սոքա ընտրեալ»:

Նրանցից առաջինը՝ Ներսես Շնորհալու՝ Առաքելոց նվիրված տաղի փոխն է, որը ԺԴ դարի գանձարաններում մույն ձևով բերվում է Առաքելոց կանոնի ներքո, որպես այդ կանոնի փոխ: Այն այսպես է երևանի Մատենադարանի № 7785 ձեռագրում (469աբ), ինչպես նաև Վեներիկի Մխիթարյանների 1394 թ. գրված հմբ. 382 ձեռագրում (50ա) և 1396 թ. գրված հմբ. 1672 ձեռագրում (37ա):

Ժն դարի սկզբից, սակայն, այս փոխը արդեն բերվում է Թարգմանչաց կանոնի ներքո և դրվում որպես վերջինիս փոխ: Այսպես, Վեներիկի Մխիթարյանների 1425 թ. գրված Գանձարանում Թարգմանչաց կանոնի ներքո Այրիվանեցու գանձին հաջորդում են այս և «Սուրբ վարդապետն մեր ընտրեալ» գործերը: Այս երկու միավորները կամ նաև երևանի Մատենադարանի 1466 թ. գրված հմբ. 425 Գանձարանում (95ա-96բ): Այս երկրորդ՝ «Սուրբ վարդապետն մեր ընտրեալ» փոխն էլ վերցված է Շնորհալու «Վիպասանությունից»։ Մասնակի փոփոխություններով այն համապատասխանում է «Վիպասանութեան» 900-914 տողերին: Ժն դարից սկսած Գանձարաններում, որպես Թարգմանչաց կանոնի մաս, բերվում է նաև Շնորհալու «Վիպասանութեան» 920-942 տողերն ընդգրկող հատվածը՝ «Արդ երկոցին սոքա ընտրեալ» սկզբնատողով:

Ինչ վերաբերվում է Առաքել Բաղիշեցու զանձին, անհրաժեշտ է նշել, որ այն գրվել է ոչ թե բուն Գանձարանի համար որպես նոր միավոր, այլ սկզբնապես մաս է կազմել նրա ամհատական Գանձարանին: Ինչպես նշում է Ա. Քյոշկեթյանը, Բաղիշեցին սկզբնապես հեղինակային անհատական մի Գանձարան է կազմել ըստ տոմական ընթացքի՝ Ծննդյան ութօրեքից մինչև Ավագ տոները, այն ավարտելով ծիսական զանձերով²¹:

Այս շարքում Սրբոց Թարգմանչաց Ուրված զանձը ևս գտնվում է իր ընդունված տեղում՝ Բուն Բարեկեմությանից առաջ և նախորդում է Ղևոնդյանց տոմին: Այն ունի հետևյալ սկսվածքը.

Արհմեալ ես Հայր Սուրբ անքրճնական,
Գովեալ անճառ ծընունդ հայրական...

Այս զանձը ևս սկսվում է Արարչագործությամբ և գալիս-հանգում է Հայոց գրերի արարմանը:

Այստեղ արդեն հստակորեն շեշտվում է Գրերի Գյուտի ազգային նշանակությունը, թե մինչ Թարգմանիչները հայերը գրում էին հունարեն գրով, որովհետև չունեին «գիր ի հայ բառեն»: Բաղիշեցին ևս համառոտակի հիշում է Ս. Սահակի տեսիլը, սակայն առանց որևէ հոգևոր-գեղարվեստական վերամեկնաբանման:

Բաղիշեցին ևս Մեսրոպ Մաշտոցին համեմատում է Մովսես մարգարեի հետ.

Երևեցաւ Մեսրոպ ցանկալին
Համանման մեծին Մովսէսին²²:

Այստեղ ևս Գրերի Գյուտը և թարգմանչաց շարժումը համարվում է Հայոց աշխարհի երկրորդ լուսավորությունը, որը կատարվեց Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ձեռամբ.

Եւ լըծակցեալ Մեծի Սահակին
Սուրբն Մեսրոպ քաջն այն թաքունին,
Ջազգըս հայոց նոր նորոգեցին,
Որպէս յաւուրն Լուսաւորչին:

Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շարունակական զուգահեռն ենք գտնում զանձի «Առաքել» ծայրակայի Լ-ով սկսվող ներբողական տնում: Կարծում ենք, որ պատահաբար չի ընտրվել հենց այս տունը: Լ տնագլխով այստեղ ըստ երևույթին ակնարկվել է մաս նրանց լուսավորիչ լինելը:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գործակցությունը բանաստեղծորեն ներկայացվել է իրար

²¹ Այս մասին տե՛ս Ա. Քյոշկեթյան, Մի տրամադր անհատական Գանձարան, «Էջմիածին», 1970, Զ-Է, էջ 98-103, և «Առաքել վարդապետ Բաղիշեցու տրամադր Գանձարանի կյուբերի ցանկը» ըստ Մաշտոցի անվան Մասնաշաղկի հմր. 6527 ձևապրի», «Էջմիածին», 1970, Թ, էջ 50-55:

²² Մաշտոցի անվան Մասնաշաղկի, ձև. հմր. 424, 184ր և հմր. 6527, 51ա:

Քաջորդող զույգ տողերի առաջին տողով Ս. Սահակին և երկրորդով Ս. Մեսրոպին բնորոշելով, ինչպես օրինակ.

Սահակ ցուցող զմարդկան զապագայն,
 Մեսրոպ եղեալ մայր իմաստութեան:
 Սահակ հովիւ հաւտիս տիրական,
 Մեսրոպ տեսուչ թորգոմեան:

12 զույգ տողերով այսպես բնորոշվում են Ս. Սահակը և Ս. Մեսրոպը: Ընդ որում, ընդհանուր մեքենական տողերը ուղղակի կամ անուղղակի ձևով Քարաբերվում են մրանց կյանքի և գործունեության հետ. ինչպես վերը բերված տողերի առաջին զույգի առաջին տողով ակնարկվում է Ս. Սահակի նշանավոր տեսիլը:

Գրերի Գյուտով Քայ եկեղեցական մատենագրության և ընդհանրապես եկեղեցական արարողությունների Քայազգի և Քայալեզու դառնալն է ակնարկվում հետևյալ տողերով.

Աջ Հրգարին գիր մեզ պարգևեալ,
 Անծախելի պըտղով առըցեալ,
 Զեկեղեցիս Քայոց կերակրեալ:

Այս գանձն ունի իր տաղը²³: Եթե բուն գանձում Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը բնորոշվում էին իրարաճառող տողերով, ապա «Անպատմելի շնորհալք լըցեալ» սկսվածքով տաղում նույնը կատարվում է իրարաճառող տներում, արդեն Ս. Մեսրոպ-Ս. Սահակ հերթագայությամբ:

Տիպաբանական և կաոուցվածքային նման ընդհանրությունները վկայում են, որ այս երեք հեղինակների գանձերով արդեն ձևավորվում է Սրբոց Թարգմանչաց նվիրված հոգևոր-գրական այն կանոնը, որին որպես գրական կադապարի դիմելու և որի շրջանակում ստեղծագործելու էին և Քաջորդող շրջանի հեղինակները՝ գրական ամենատարբեր ժանրերի գործերում պատկերելով Մեսրոպ Մաշտոցին ու Սահակ Պարթևին և ընդհանրապես Սրբոց Թարգմանչաց:

²³ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձևագ. հմր. 6527, 55ա-56ա:

ՊԱՐՈՒԹՐ ՄՈՒՐԱԴԹԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐԻԿ»-Ը ԵՎ ՆՐԱ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայաստան կատարած իր անդրանիկ այցելության տարիներին երիտասարդ Նիկողայոս Մառը հնարավորություն ունեցավ ծանոթանալու Էջմիածնի մատենադարանի ձեռագրական հավաքածուներին և 1891-ին հրատարակելու նրանցից կատարած իր քաղտմներն ու դիտարկումները: Դրանք փաստորեն մինչև այսօր էլ իրենց ձեռագրագիտական-աղբյուրագիտական արժեքը պահած ինքնակա հոդվածներ են, թվով 15 միավոր¹: Նրանցից 6-րդ համարակալումն ունեցող դրվագը Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աստվածաբանական ժողովածուն քվամդակող ձեռագրերի (Էջմ. N 1632, 1633, 1634 – երևանի Մատ. N 1454, 1455, 1476) նյութի ներկայացումն է և «Ոսկեփորիկ» անվանումի արծարծումը:

Կարծում ենք, սխալված չպիտի լինենք, եթե ենթադրենք, թե Արևելք եկած պապական քարոզիչների դեմ պայքարելիս Տաթևացին ծանոթացած պիտի լինի նրանց հրատարակությունների երբեմն խոսում անվանումներին և «Ոսկեփորիկ» խորագրով յուրովսան փոխադարձած դրանց: Եվ հիշալի՝ մեծ մի խորագիր ունի Հանվեմսիայի եպիսկոպոս Հակոբ Վոռունհիմոյի ճառերի ժողովածուն՝ «Բանք ոսկիական», որը 1739 թ. Ղուկասի կողմից (Հարություն վարդապետի պատվերով) թարգմանվել է հայերենի²:

«Ոսկեփորիկ» ժողովածուն ընթերցողին հայտնի էր 1746 թ. Պոլսոյ հնատիպ հրատարակությամբ, որի համար հանձնարարական առաջարկ է գրել Պատրիարք Հակոբ Նալլանը³: Ն. Մառի անդրադարձումից երկու տարի անց «Ոսկեփորիկ»-ի կազմության հանգամանքների հիշատակություն ենք գտնում Ղ. Ալիշանի մոտ. «Վերջին գրատուր գործոց իւրոց և մի ի գլխատուրացն համարելի է զՈսկեփորիկն, յերուրեալ յամի 1410, որ է «Հարցումն խօճայ Մաստուշայի և պատասխանից Գրիգորի» զհաւատոյ խնդրոց, զհարցողն կոչէ իւր անդրանիկ ըստ հոգւոյ եղբայր»⁴: Ինչպես երևում է, Ղ. Ալիշանի ձեռքի տակ եղած ընդօրինակության հիշատակարանը մասամբ տարբերվել է Ղ. Փիրղալեմյանի, Հ. Տաշյանի և Լ. Խաչիկյանի հրապարակած հիշատակարանների բնագրերից, քանի որ «Ոսկեփորիկ»-ը⁵

¹ Н. Марр, Из жизни послов в Армению. Замечан и извлечения из армянских рукописей. — "Замечан Восточн. студ. Имп. русск. археолог. общества" (ЗВО), т. V (1891), стр. 211-241, т. VI (1891), стр. 135-228.

² Մառ. ձեռ. N 404 (Ա), 306:

³ Ն. Ա. Ոսկանյան, Զ. Ա. Կորեյոյան, Ա. Մ. Ալվազյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, լք 383-384: «Ոսկեփորիկ»-ը 1995 թ. Երևանում լույս տեսավ Հակոբ Զյոսյանի աշխարհաբար թարգմանություններով:

⁴ Տ. Անոն Ալիշան, Սիսակյան, տնդադրոթիս Սիսեւաց աշխարհին, Վենետիկ, 1893, լք 240-241: 1410 թվականը թերևս տրվադրական վրիպակ է՝ 1401-ի փոխարեն:

⁵ Նուրբար Հայոց, Խաթանայ և ի յոյս առնայ ձեռամբ Ղեոնդ վարդապետի Փիրղալեմյան Տարբերոյ, Կ. Պոլիս, [1888], լք 27: Ընդօրինակումը կապարված է Տարոնի Սուրբ Առաքելոյ վանքի ձեռագրից:

[illegible]

2^{го}. N 1476, 147v - 148r, N 5118, 196v

Յիշատակարան⁷

Եւ եւ՝ տարտաւս յոսումնասիրաց Գրիգոր պիտականուն խնդրող բանի, հաւաքեցի զգիրս՝ աստուածաբանութեան որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ, զի՝ և՛ ըստ իրից և զանուն՝ առեղեալ՝ ունի ոսկի՝ այսիցն անապական և պատուական՝ զանձիւք աստուածային աւոյցեալ, որ և զստացող իւր և զսիրողս աստուածաբանութեամբն փարթաւացուցանէ՝:

Արդ, գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյն՝ առաքելական աթոռոյն Եւստաթէի և այլ բազմաբազմ սրբոյթեանց, ի ճեղ և ի նուազեալ ժամանակի՝ թուականութեան մե-
րոյ՝ ազգի ՊԾ՝ երոդոյ ի խնդրոյ ումեմբ բարեպաշտի խոճայ՝ Մաստուշահի՝ բնակու-
թեամբ ի սեպուհ արանց Դաւրեժ քաղաքի՝ զոր խնդրեաց թագով անգամ գրով և բաժի-
գրել յաղագս Սրբոյ Երրորդութեանց՝ և յաղագս Քրիստոսի աստուածութեանց՝

Եւ ես տկար հոգով¹⁵ և ծիւղեալ¹⁶ մարմնով¹⁷ հաւաքեցի¹⁸ ի սրբոց արամց¹⁹ զճշմարիտն և զուղիղն և գրեցի²⁰ կարճառօտ բանի²¹ և ի Ռ. հատորս բաժանեցի վասն դիւրութեան ընթերցողաց, և յաւելեալ²² թան²³ ի մերոց վարդապետոց իբր թագաւորական կնիք, և մեկնութիւն ի վերայ եղեալ²⁴:

Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, պատիւ և իշխանութիւն յաւիտեանս յաւիտեանից,
ամէն՝²³

1 Գիրքս Տ 2 զի և ըստ իրիմ... փարթամացուցանել Փ 3 և Ս 4 զանուց Տ 5 ումի... փարթամացուցանել Տ 6 և պատուական Փ Տ 7 ժամանակիս Տ 8 մերում Տ 9 ՊԾԶ Փ Տ 10 խաւջալ Տ 11 Մաստոշաֆի Փ 12 Դարեւ թ քաղաքի Տ 13 Երրորդութեան Փ, Սրբոյ Երրորդութեանն Տ 14 աստուածութեան 15 տկար ոգով Փ 16 ծիւրեալս Փ 17 +գրեցի և Տ 18 ի Փ 18, Փ 19 արանց Փ 20 և գրեցի Փ Տ 21 բանից 22 և յաւելեալ... ամէն յիշեցեք ի Քրիստոս զվերոյ ասացեալն բարեպաշտ զխոջալ Մաստուշանն Բանդեր ծնողօք իւրովք՝ զհայր ճորա զՅակոբշանն և զմայրն Էլիսաբէթ: 23 բանն Փ Տ 24+ Արդ աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, որք ազտից ի սմանէ յիշեցէք ի Քրիստոս զվերոասացեալ բարեպաշտ խաւջա Մաստուշանն Բանդեր ծնադաւ իւրովք, զհայրն ճորա զՅակոբշան և զմայր ճորա Էլիսաբէթ և զաւագ եղբայրն ճորա զԲնդերցոյ նկեղեցոյ զՅուսուֆշան: Այլն աղաչեմ

⁶ Տ. Յակովբյան վ. Տաշևան, Յուդակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիննա, Վիննա, 1895, էջ 400-402: Հմմտ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 9-10:

⁷ Համեմատության առևմտ իրավաբանությունները ներկայացվում են իրավաբանական ազգայնական սկզբնադրանքով ժամանակագրական հաջորդականությամբ: Լիսաբոնյան այն բաղկի է Մատ. N 5118 ձեռագրից, իսկ Վ. Հակոբյանը տպագրի վրա իր ձևերով ավելացրել է «դեռևս նաև N 5586, 69 291 ա-ր»:

որ ընդարիճակէք զրեսչիք զսակաւ յիշատակս մերոյ մաղթանաց Տ. 25 եւ Քրիստոսի... ամէն] խ:

Անկախ Հ. Հակոբոս Տաշլանի նկարագրության մեջ կատարված որոշ կրճատումներից, այնուամենայնիվ համեմատաբար ընդարձակը դարձյալ նրա ներկայացրած ձեռագրի (ԺԶ դար) տարբերակն է, ուր կոչված են պատվիրատու *Մասուղշաֆի* թե՛ ծնողները՝ *Հակոբշան* և *Էլ-խուրու*, թե՛ եղբայրը՝ *Յուսուֆշաֆ*: Հիշատակարանում եղած «քարեպաշտ» բնութագրումը թույլ է տալիս եզրակացնել, թե իսլամական անուն-կրող *սեպուր* *Մասուղշաֆը*, այնուամենայնիվ, օտարազգի և այլադավան չէ, մանավանդ որ պատվիրատուի ավագ եղբայր *Յուսուֆշաֆը* «ընթերցող եկեղեցույ» է, այսինքն՝ գրակարդաց, սաղմոսասաց, տիրացու: Թերևս անունների այս իսլամական ձևման պատճառով է, որ «Ոսկեփորիկ»-ի հեղինակային հիշատակարանն ընդօրինակողները երբեմն անպատշաճ են նկատել քրիստոնեական աստվածաբանության նվիրված ժողովածուի պատվիրատուին հասցեագրված խոսքի մեջ նրանց հիշատակել: Կրճատումը շրջանցել է Մասուղշաֆին (տպագրում այն «խմբագրված» է «Մաշդուս»), որովհետև «Ոսկեփորիկ»-ի առաջին իսկ էջի խորագրում ասված է «Հարցմունց Մասուղշաֆի իշխանի բարեպաշտի և պատասխանից Գրիգորի եռամեծի՝ աշակերտի տնտն Յոհաննու Որոտնեցույ տիեզերալոյս վարդապետի նախ յաղագս Սրբոյ Երրորդութեան և ապա յաղագս Բանին մարդեղութեան ի Սուրբ Գրոց և յուղղափառ վարդապատաց հառաքեալ» (ձեռ. 1476, է 13r) «Ոսկեփորիկ»-ի հեղինակի և պատվիրատուի փոխադարձության վերաբերող որոշ տեղեկություններ կարելի է քաղել Գրիգոր Տաթևացու ուղերձից, որ պահպանել են⁸ առանձին ձեռագրեր (Ձեռ. N 1476, 146v, ձեռ. N 1454 էջ 258- 253r)

Արդ զայս սակատուք զաստուածաբանութիւնս, որ հառաքեցի ի Սուրբ Գրոց՝ յանսկզբնական բանէն սկսեալ, ի հաւատս և ի գործս աւարտեալ, ըմճայեցի քեզ զանձո հոգևոր և յիշատակ թարեաց ի Քրիստոս, որդի լուսոյ և ծնունդ վերնոցն Սիոնի, հաւատարիմ ծառայ Աստուծոյ Մասուղշաֆ: Եւ երիս ինչ խնդրէ ի քէն հատուցումն փոխարինաց քանքարս տուեալ շահեցողաց. նախ՝ միշտ աշխատաւէր մտաւք առանց ձանձրանալոյ ընթերցցիս զգիրս զայս յարածամ և զդժուա[րա]լուր բանս հայցեսցես ի մտաւորաց և զդիրմս ի մտի պահեսցես, և զայս ուսուցես: Եւ երկրորդ՝ զի հաւատս հաստատում և անխափան կացցես մինչև ի կէտ կոչմանց քո: Երրորդ խնդիր՝ զի ի քազում սուտապատիր քանից և աղանդոց հերձուածողաց ի քաց հեռացցիս, զի յետին ժամանակի և կարապետք նեղինքն քազմացեալ, խաբէութիւն և սուտն յառաքեալ, արդարութիւն և ճշմարտութիւն յետնեալ և ամենեւին մուգեալ ի մարդկանէ՝ ըստ սաղմոսերգութեանն Դաւթի: Եւ տէրն համաձայնի՝ ասելով. Որդի մարդոյ եկեալ գտանցիք արդէտք հաւատս յերկրի: [Հմտ. Սաղ. Ը, 3: Դուկ. ԺԸ 8]

Վասն որոյ, որդեակ լուսոյ և ուղղութեան, փախիր ի նետտորաց՝ որպէս ի կատաղի շանց, զի յայտնի ուրացողք են աստուածութեանն Քրիստոսի և համաձայն այլազգեաց Հրէից խաչողաց, մանաւանդ մարդադաւան և կոապարիշտ, որք զսոսկ մարդոյ միս և յա-

⁸ Ուղերձի գոյությունը արձանագրված է. Լ. Խաչիկյանի կազմած ԺԵ դարի էիջադատարանների և հայոցի ծանոթագրության մեջ, էջ 10, ծան. 1:

ծածկն, այլ մարդածին, և զծնեալն ոչ Աստուած, այլ մարդ դաւանեաց:

Չայս դաւանութիւն Բաւատոյս և զկամոն քրիստոնէութեանս երեք առ մեզ բազմաչարչար Բայրն սուրբ լուսաւորիչն մեր Գրիգորիոս և որդիք և թողունքն ճորա Սուրբն Ներսէս և Սուրբն Սահակ և այլք ամենայն միմչն ցայժմ, որ ունիմք յեկեղեցիս և անփոփոխ պահեցաք և պահեմք միմչն ի կէտ կոչման մերոյ և որոշումն շնչոյս:

Եւ դու, զաւակդ ուղղափառութեան, որպէս վերոյ գրեալդ ուսուցանէ փոքր ի շատէ, զսակաւ ընթերցիր և բազում ուսիր և ի ճոյն Բաստատում լեր, անփոփոխելի: Զի ամենայն ճշմարիտ դաւանողքն զՔրիստոս Աստուած խոստովանեցան և ի ճոյն Գաճապեցան և առ ճշմարտութիւնն Քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: Եւ զմեք(!) զնոյն պիմդ կալցուք՝ անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու, և նորին խոստացեալ բարեացն արժանատր լիցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում ընդ Հար միանգամայն և Հոգոյն Սրբոյ փառք, պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յալիտեցից: Ամէն:

Եթե այս երկու աղբյուրներից քաղած տեղեկությունները մեկտեղենք՝ կարող ենք ամփոփել, որ բարեպաշտ Մասուդշահը «բնակութեամբ ի սեպուհ արանց Դարեժ քաղաքի է», «որդի լուսոյ և ծնունդ վերնոցն Սիովմի, Բաւատարիմ ծառայ Աստուծոյ», որին Գրիգոր Տաթևացին անհրաժեշտ է նկատել զգուշացնել ոչ միայն զանազան հերձվածողություններից, այլ նաև երկաթմակներից:

Մասուդշահի անունը, որոշ որակումների կրկնությամբ, հիշատակվում է նաև «Ոսկեփորիկ»-ի Ա զլխի վերջում. «որ և դու երևիս որդի լուսոյ և զաւակ տուրնջեան Բարազատ վերնոյն Սիովմի և անդրանիկ ըստ հոգւոյ Մասուդշահ, որ ի խնդիր ելեր զանձին ծածկելոյ և պատուական մարգարիտն, և գտեր մի պատուական և գեղեցիկ զամխոս մարգարիտն, որոյ ոչ գոյ զին»⁹: Ասել է, թե՝ Մասուդշահը միաբնակ դավանության հետևորդ է, հայազգի իշխանական տան շահապիղ («սեպուհ») այս պարագայում պիտի հասկանալ «իշխան», «իշխանագուն», ինչպես նա կոչված է N 1476 ձեռագրի վերտառության մեջ, էջ 13ա)¹⁰:

Թավրիզաբնակ իշխանական այս ընտանիքին վերաբերող մի ուշագրավ տեղեկություն էլ աղբյուրներից քաղել է Ղ. Ալիշանը¹¹, ըստ որի՝ 1378-1383 թվականների միջև Տաթևի եպիսկոպոսներից Ստեփանոսը «նեմգութեամբ կոչեցեալ» իր եպիսկոպոս և արքեպսկոպիտների հետ զնում է կողմնակալ Սոֆի խալիլի մոտ, որը Ստեփանոսի երկու հարազատներին դաժանորեն սպանել է տալիս, իսկ իրեն հիմզ տարի բանտարկում: Ստեփանոս եպիսկոպոսի քույրը զնում է «ի Դարեժ առ մայր Եաղուպշահի», որը՝ դշխուհին, «առաքեաց առ Սոֆին պատուելը՝ արձակել զչարչարեալն»: Սրան ի պատասխան բռնավորը կոչ է անում՝ «զայ և բռնութեամբ կորզել ի մմանէ»: Ինչպես և կատարում են:

Նախ նկատի ունենա՞նք, որ Ստեփանոս եպիսկոպոսը Օմավոն եպիսկոպոսի որդին էր՝ «յազատ տամէ և ի մեծ ազգէ», որն ուներ «բազում ճորտս այլազգիս», ուրեմն ուներ իր զո-

⁹ Ձև. 5118, 19 5v - 6r:

¹⁰ «Սեպուհ» կարի մասին տե՛ս H. Я. Марр, Этимология армянского "сепути" и грузинского "сепуг" ЗВО, т.

V, стр. 286.

¹¹ Ղ. Ալիշան, Եվ. աջխ, 19 241:

րաջողատը, որով կարող էր հարձակում գործել և ազատել որդուն: Այստեղից դժվար չէ մակարեքել, թե **Ռիշյալ Օմալուն** եպիսկոպոսն ու նրա որդի Ստեփանոս եպիսկոպոսը, ինչպես նաև ապամված զարմիկները հոգևոր աստիճաններ առած ավատատերեր էին՝ պաշտոնապես իրենց վերաբերում է թավրիզում բնակվող Յաղուաշահի մայր դշխուհուն, որի պահանջը Սոֆի խալիլը փորձում է մերժել և հարկադրում է ուժ գործադրելով ազատել Ստեփանոս եպիսկոպոսին, սա, ամտարակույս, «Ոսկեփորիկ»-ի պատվիրատու Մաստուշահի ընտանիքի ավագն է, նրա հոր՝ Յաղուաշահի կամ Յակոբշահի մայրը, որին դիմել է Ստեփանոսի քույրը:

Ի թիվս այլ խնդիրների՝ այս հիշատակարանները մղում են մտածելու, թե հայոց ազնվականական որոշ ընտանիքներ Հանկ թամուրի արշավանքների մախօրեին և անգամ նրա՝ Հարավային Հայաստանն ու Ատրպատականը գրավելուց հետո շարունակում էին պահպանել իրենց կալվածքները և նույնիսկ գորական որոշ ուժեր: Ավելին, ավատատիրական իրավունքի պատմության տեսակետից ուշագրավ փաստ է գերդաստանի տղամարդ ավագի բացակայության պարագայում կին ներկայացուցիչների իրավածառագծության դրսևորման հնարավորությունը: Մեկ դեպքում ընտանիքի այդ անդամները հոգևորական են ձեռնադրվել, ուստի Ստեփանոսի քույրն է ստանձնել միջնորդությունը, մյուս դեպքում, թերևս Յաղուա/Յակոբի բացակայության կամ բավարար տարիք չունենալու պատճառով, ուժով ազատելու մախաձեռնողի դերում համդես է գալիս մայրը՝ դշխուհին:

Պատմագիտական առումով կարևոր է ընդգծել, որ թեև ժամանակակից աղբյուրները միաբերան խոսում են Հանկ թամուրի կատարած ավերածությունների ու սրածությունների մասին, այնուամենայնիվ նրա ու հաջորդների տիրապետության ժամանակ ևս հայկական իշխանական որոշ ընտանիքներ պահպանել էին իրենց տիրույթները, արտոնություններն ու ամրությունները: Այս առումով խիստ ուշագրավ է 1403-1406 թվականներին վերաբերող իսլամացի ճանապարհորդ Ռույ Գոնցալես Դի Կլավիխտի վկայությունը Մակու ամրոցի հայազգի իշխան Նուր-ադ-դինի ընտանիքի վերաբերյալ: Ամրոցի պաշարումից ձեռք քաշած թամուրը իշխանի որդուն ընդգրկում է իր թոռ Օմար Միրզայի մերձավորների շարքը, մահմադականացնում Սիրուդաթմիշ (կամ՝ Սուրուդաթմիշ) անուն տալիս: Ընդհանրապարհորդին հյուրընկալող իշխանը «մեծ մխթարություն էր զգում այն իրողությունից, որ մեծ քրիստոնյա էինք»¹²: Իշխանագունի իսլամությունը առերես է, իսկ նրա հայրը պատրաստվում էր իր մյուս որդուն, որը «ավելի հայ լեզվի քերականության ուսանող է և վարպետ...», ուղարկել իսլամիստ և Պապի կողմից նրան ձեռնադրել տալ «եպիսկոպոս իր հոր նահանգի վրա»: Ընդհանրապարհորդն ինքն էլ զարմանում է, թե ինչպես են այս միջավայրում քրիստոնյա և «փաստապես հայ ազգին պատկանող» մնում¹³:

Ամրոցի տիրակալը, բնականաբար, զինական կարողություն ուներ իր տիրույթը պաշտպանելու, այլև նույն աղբյուրի վկայությամբ՝ քսան ձիավոր էլ տալիս է թամուրի բանակներին միանալու: Խառնակ այս ժամանակներում, երբ Հորսանյանների ու Ջելաիրյանների պատերազմներին հաջորդեցին թամուրյանների անողորմությունները, հայկական առանձին իշխանական տներից բացի, զինական ու դիվանագիտական հնարանքներ

¹² Նովի, հակոբյան, Ուղեգրություններ, հար. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253-1582), Երևան, 1932, էջ 115:

¹³ Անդ, էջ 116:

րի գործադրումով. «քազում ճորտ այլազգիս» և մամավանդ սեփական ջոկատ ունենալու շնորհիվ իրենց տիրույթներն ու հավատացյալներին պաշտպանելու լուրջ փորձեր էին անում հոգևոր իշխանությունները: Տաթևի մետրոպոլիտն, օրինակ, ինչպես ասվեց վերևում, կարողանում էր տեղ կանգնել իր տիրույթներին, իսկ Միջագետքում (նաև Ամիդում) գործող Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը, շինարարական ու վերականգնողական աշխատանքներից բացի, «քազում գեղիս ազատեաց յանօրինաց»՝ զորս գնելով, և զորս խնդրեաց ի պարոնաց, և զորս յափշտակելով ի ճանապարհին: Առաքել ի ծառայոց իւրոց արս գործելս և սրտապիմոյս, և խլէին գգեղիս յանաւրինաց և բերէին ի նորաշէն վանս իոր ապաստանի...»¹⁴

Վերևում կատարված քննությունը մեզ հիմք է տալիս ամփոփելու, որ

1. Գրիգոր Տաթևացին մեզանում հիրավի միջնադարյան գիտության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է, որը փորձում է իր կազմած ժողովածուներով ամփոփել գիտելիքների այն համակարգը, ինչ ձեռք էին բերել վաճառական ուսումնագիտական կենտրոնները, այսօրվա պայմանական տերմինաբանությամբ՝ համալսարանները: «Ոսկեփորիկ»-ը փաստորեն հայոց դավանական գիտելիքների առձեռն հանրագիտարան է, որի հիմքը Գրիգոր Տաթևացու այն համոզումն է, թե «քնական քննութեանն հետևի հերձուած, իսկ հաւատոյն՝ ուղղափառութիւն»: Թովմա Մեծոփեցու գնահատությամբ՝ «եւ էր սա (իմա՝ Գրիգոր Տաթևացին – Պ.Մ.) առատ և ճոխ բանի՝ ոչ գոյով նման նմա յազգս ամենայն, ոչ ի հինն և ոչ ի նորս, երկրորդ Աստուածաբան և Յոհան Ոսկեբերան...»¹⁵:
2. Հայկական իշխանական տների շառավիղները այս ու այնտեղ հարմարվում էին մոնղոլների, ապա և Թաթարյանների և նրանց հաջորդների օրոք երկրում ստեղծված կացությամբ՝ մերթ փոխելով իրենց տոհմիկ զբաղմունքը և «խոջա» հորջորջվելով, մերթ յուրացնելով օտար իշխեցողներին ընտանի անուն – տոհմանուններ, երբեմն նույնիսկ առերես կրոնափոխ լինելով, բայց պահպանելով իրենց տիրույթները, հաճախ նաև զինված ջոկատներով իրենց ինքնակայությունը ապահովելով:
3. Պահպանված իշխանական ընտանիքների պայազատները կապ էին պահում ազգային-մշակութային օջախների և ժամանակի երևելի հոգևոր գործիչների հետ, որոնց համար քաղաքական-դավանական հովանավորություն էին ապահովում՝ նույնիսկ զինական միջամտության գործադրումով: Ավելին, այդ պայազատները կարող էին հովանավորել մշակութային նշանակալի նախաձեռնություններ, որպիսին Գրիգոր Տաթևացու 1401 թ. գրած «Ոսկեփորիկ»-ի երևան գալն է:

Հավելված

Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ»-ի անդրամիկ՝ 1746 թ. հրատարակությունը, ինչպես նշվեց վերևում, ուղեկցվում է Հակոբ Պատրիարք Նալբանի համաձայնարական

¹⁴ Ժե դադի Իսկերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 626:

¹⁵ Թովմա Մեծոփեցի, Պատմություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 47:

առաջաբանով, որ գրված է «ի խնդրոյ մահտեսի Ղափանցի Ծաֆնազարին»: Հարկաւ, այս մահտեսին Տաթևացոյ «Գիրք հարցողաց»-ի 1730 թ. տպագրութեան մեկնմաններին մեկն է. մույնական «Արևելից մահտեսի Ծաֆնազարի» անձնավորութեամբ, որ Հովհաննես Կոլոտ Պատրիարքի հրամանին ակամջալոր գրասեր էր: Հակոբ Նալյանի «Առաջաբանութուն»-ը գտնուի ենք մահ տպագրից կատարած ընդօրինակմամբ, որ մրա ճանչողական արժեքի վկայութիւն է: Հենց այս պարագան մեզ թելադրեց այն վերստին հրատարակել՝ քաղելով Մատենադարանի N 1454 ձեռագրից:

ԳԻՐԷ ՈՐ ԿՈՉԻ ՈՍԿԵՓՈՐԻԿ, ԱՐԱՐԵԱՍ ՍՐԲՈՅՆ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՎԱՅԻՆՆԵՐՆԵՐԻՆՍ ԵՕԹՆԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Առաջաբանութիւն սրբոյ մատենիս: Նախերգանորէն յայտարարութիւն առ ընթերցողսն, արարեալ տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետի և պատրիարքի Կոստանդնուպոլսոյ ի խնդրոյ մահտեսի Ղափանցի Ծաֆնազարին:

Գերապատիւ և հոգեղի ճշմարտարան և եղիական մախանձոյ աստուածապետականին պաշտօնէի վառեալ մեծ վարդապետն Հայաստանեայց երանելին Գրիգոր Տաթևացի՝ անդով վաստակատուն, քրտմաջան մշակն, արդիւնարար աստուածաշտուրբեան շահավաճառն, երկնային ախոյանն և ծաղկառաւաք մեղրաշէնն, գոլով ճրագ յաշտանակի եղեալ, ոչ կամելով զքանցար բանին յերկրի ծովութեամբ թագուցանել, փոյթ յանձին կալեալ զփոքրատես և զյաճախաբան գրքուկս ընծայել Հայաստանեայցս իւրական ազգի, շանաց որքան և կարաց հաւաքումն առնել յԱստուածաշունչ գրոց՝ Հոց և Նորոց կտակարանաց և աստուածաբանից վարդապետաց, որպէսզի զկնի իմքեան իբրոյ փողով իմն ազդարար լինիցէր ազգիս Հայոց ի ձեռն գրչոյս այսորիկ, ազդելով զգալուստ մորթագեցիկ գայլոց, փոքունց ապականարար աղուխսոց և որոմնացանից թշմամեաց ի մէջ ցորեմական սերմանեաց սրբազանից գրուածոց: Թաւել և զայն իբր զառձեռն պատրաստական զէնս ընդդէմ գողիադասարաս ամբարտակաց և ոչ առանց արդեանց կոչեաց զանուն սորա Ոսկեփորիկ: Քանզի արդարն սոյն այս գրքուկ ունի իմքեան իբր ի փորի իւրում զէրիւտական ազնիւ ոսկիս՝ բուսուցեալ խոնաութեամբ աստուածայնոց շնորհաց և եփեալ հրով աստուածային սիրոյն: Սոյն այս գրքուկ իբր զտապանակն կտակարանաց պատեալ մերթոյ և արտաքոյ ոսկով սրբով, ունի մեր իմքեան զծաղկեալ գաւազանն Ահարօնի՝ ժողովիչ ոչխարաց և փախուցիչ գայլոց: Ունի և զքարեալ տախտակն աստուածայնոց օրինաց՝ ուսուցիչ սիրոյն Աստուծոյ և ընկերին: Ունի և զքոլովառն ոսկի, հրով տափման և անուշափոտ կնդրկաց իմաստիւք առլցեալ: Ունի և զսափորն ոսկի՝ լի մանանայի երկնատր շնորհաց ընդունարան: Իսկ կցեալն առ սմին շնորհալի վարդապետութիւնք սրբոյն Գրիգորի Վկայասիրի, մախապէս Վահրամ կոչեցելոյ, յիրաւի չքմաղ և զարմանալի, սակաւաբառ և բազմաբան ի խորհուրդ Սրբոյ Երրորդութեանն և ի վերայ մարդեղութեանն Քրիստոսի խօսեցեալ և արքունական պողոտայի արտադրեալ, զոր ոչ պակաս պատուով յարգելի վարկանիմ, քան զբանս սրբոյն Գիորգիսիոսի Արիսպագացոյ և քան զբանս Գանձունց և Պարապմանց Կիրղի Աղէքսանդրացոյ, և քան զԱռ որսն Գրիգորի Աստուածա-

բանից, որոյ արդիւնաւորութիւնքն մանաւանդ վերծանութեամբ և ընթերցմամբ, քան թէ գրօսնչովք ծանուցանին: Վասն որոյ յորդորենք զաստուածասիրութիւն ազինդ մերոյ ստանալ գտնես ի միտմ տփի իբր զերկփեղկեան տախտակս Կտակարանացն և իբր զերկու լծակս Տապանակին, որովք բարձեալ լինի Քրիստոս որդին Աստուծոյ՝ ոսկիաձոյլ բնութեամբն Աստուած Բանդերձ անփտելի փայտին անապական մարդեղութեանն: Որոց յանձն առնենք զայսոսիկ երկփեղկեան գրեանքս Բանայնից պասքելոց իբրև զօջարակս աստուածայինս, որովք արբեալք ի տկարութեանց ապաքինեսցին և փառս Աստուծոյ՝ պարգևօղին շնորհաց մատուցուք, ողջ կալով ի տէր Յիսուս առ յոյսն բնաւից. ամէն:

Ուսումնասէր եղբարցդ իմոց լիցի յայտ յաղագս յառաջաբանութեանս, զի գրեցաք թէպէտ՝ ի ձեռագիր Ոսկեփորիկսն ոչ գոյ գրեալ զայս, սակայն որովհետև ի քասմա գրքէ օրինակեցի զթերին ածելով ի վերայ առաջնոյ ձեռագրով գրեցելոյն ոչ ձանձրացայ այսպիսի գեղեցկագան գովեստիւ լցեալ բանս արտաթողով, այլ ի պատիւ յարմարողի սորին ներ ածի աստ:

Ձեռ. N 1454, էջ 8ա - 9ա

ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԽԻԹ-ԱՐԻՉ ԱՊԱՐԱՆԵՐՑԻ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ

(ՇՈՒՐՋ 1345-1417 ԹԹ.)

(Կենսագործունեության փվյալների քննություն)

Միջնադարի մեր գործիչներից շատերի նման՝ Մխիթարիչ Ապարանեցու աճծին վերաբերող տեղեկությունները ևս աղքատիկ ու կցկտուր են, ուստի և նրա կենսագրությունը¹ շատ հստակ չէ, կարիք ունի հաղորդումների միատեղման, ամփոփումների և ճշգրտումների: Մխիթարիչի ծննդավայրը, առանց որևէ կասկածի, Նախիջևանի գավառի Ապարանեցու գյուղն է. 1410 թվականին, երբ սկսել էր վերջնամշակման ենթարկել իր Ռիմնական՝ «Գիրք տրամաբանութեան» ներկը², ինքն իրեն կոչել է «Ֆրա Մխիթարիչ»՝ սպասաւոր կարգիս Միաբանողաց, ազգաւ հայկազեան եւ հաւաքով քրիստոնեայ, ի գաւառէն Նախջեւանո եւ յերջակո, ի գեղջէն Ապարանեքո» (Ա.8ա): Ծննդյան թվականը հայտնի չէ, սակայն ունի մահ հետևյալ ամուսնական ակնարկները. «քանզի այժմ Ծ. (ՏՕ) ամ մերժ է, որ ի դռնս Սուրբ Գրոց դեգերեալ կամք, եւ ի հին եւ ի նոր թարգմանեալ գրեանք ի յայտոց ազգաց եւ յերկաթագիր մատենան եւ ի յայլ պատմութիւնս, եւ ի սուրբ եւ ի նախնի վարդապետաց ասացուածս խոն մի վարժեալ» (Ա.10ա), «թեպէր Ծ. ամ մերժ է գոյով մեր ի յաշխարհան անդադար ի հին եւ ի նոր թարգմանեալ գրեանս» (Ա.314բ), «Ծ. ամ առելի է որ ի մեջ նոցա (հայոց - Ն. Տ-Վ.) եմք եւ ոչ լուեալ եմք եւ ոչ տեսեալ եւ այլն» (Ա.340բ), նրանց «գործնս եւ մեր Ծ. ամ առելի փորձեալ եմք ամենայն կերպիս, բայց լոնմք յիշել վասն ամօթո» (Ա.265բ):

Այս հաղորդումների Ռիման վրա Ղ. Ալիշանը եզրակացրել է, որ նա ծնվել է ԺԴ. դ. «կիսում կամ առելի առաջ»³, Մ. Ա. վան դեն Ուլենբրիյը գրեթե բառացի կրկնել է նրա խոսքը և ավելի մասնավորեցրել. «Մխիթարիչը պետք է որ ծնված լինի ԺԴ. դ. կեսերի շուրջ՝ հավանաբար մինչև 1350 թ.»⁴, իսկ Հ. Աճառյանը փոքր-ինչ իմաստափոխել է՝ գրելով. «Ապրել է ԺԴ. դարի վերջը եւ ԺԵ. դարի սկիզբը»⁵:

¹ Հայկական կենսամատենագիտական որևէ տեղեկատվություն մեջ արձանագրված չէ:

² Պատկանված է Մխիթարյանների Վենետիկի մատենադարանին պատկանող երկու օրինակով. Ա. ձև. ՀՊ 334 (հեղինակի ինքնագիրն է, որ 1410 թ. հեղու երկից վերամշակել և լրացրել է), Բ. ձև. ՀՊ 1663 (նախորդից արված անկախորդ լուսօրինակություն է): Առաջինը Վենետիկում է եղել դեռևս 1784-ից առաջ, երկրորդը 1790-ին Հունգարիայում ստացել և Վենետիկ է տարել Մ. Չանյանը: Շարադարների մեջ, փակագծված և Լցանամադով հղում ենք Ա. օրինակը (այսպես՝ Ա.4ա):

³ Հայտնվաբերում «Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Յօրինեալ եւ հաւաքեալ ի Հ. Ղևոնդեայ վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1901, հ. Ա. «Պատմիչք Հայոց, էջ 123 (այսուհետև՝ «Հայապատմ., Ա.» և «Հայապատմ., Բ.»):

⁴ M. A. v. d. Oudenryu, The Monastery of Apatan and the Armenian writer Fra Mxitaric. - Archivum Fratrum Praedicatorum, 1931, p. 283 (այսուհետև՝ Oudenryu, Fra Mxitaric):

⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնատուներին բառաբան, հ. Գ., Երևան, 1946, էջ 384: Անկնայտ թյուրիմացություն է հետևյալ արգամապատկերները՝ «15-րդ դարի վերջի և 16-րդ դարի սկզբի հայ տնիքոր Մխիթար Ապարանեցի» - Ե. Գ. Տեր-Միքայել, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմություն, Երևան, 1968, էջ 177:

Փորձեց, թեկուզ և թեակամորեն, մի փոքր փաստարկել և մանրամասնել ըստ էության ճիշտ այս տեսակետը. Ռիսուն տարվա ընթացքում «խում մի վարժեալ» ասելով, անկասկած, Ապարաներցի կիրառել է համեստության ընդունված եղանակը, այսինքն՝ արանով իրականում ասում է, որ լավ հմուտ է Սուրբ Գրքին, նախնի հայ վարդապետների գրվածքներին և այլ ազգերի լեզուներից արված հին և նոր (ունիտորական) թարգմանություններին։ Այս ամենը վարդապետական կամ, ցերկայիս բառով՝ բարձրագույն ուսման և ուսումնասիրման նյութերն էին։ Հայտնի է, որ ուսումնառության այս շրջանին պետք է նախորդեին տարրականը (գրաճանաչություն) և միջնակարգը (քահանայական), որոնց ընթացքում սովորողը հասնում էր բարձր ուսման բարդություններն ու նրբություններն ընկալելու ունակության ու տարիքի, որն, ըստ առկա տվյալների, շուրջ 15-ամյա հասակն էր⁶։ Ըստ այսմ՝ կարծում ենք, որ 1410 թ. Մխիթարիչը պետք է լիներ մոտ 65 տարեկան (15 + 50), ուրեմն և՛ ծնված շուրջ 1345 թվականին։

Դեռևս Մ. Չամչյանից սկսելով, Մխիթարիչին անդրադարձած գրեթե բոլոր հեղինակները համարել են, որ իր կյանքի սկզբում նա կաթոլիկ չի եղել, տասը տարի աշակերտել է Միաբանողների ճշմանվոր հակառակորդ, անգամ կարելի է ասել՝ հալածիչ Մաղաքիա Ղրիմեցուն և Սարգիս Ապրակունեցուն, ապա նրանցից հեռացել և մտել է Միաբանողների կարգ։ Այսպես՝ Մաղաքիայի մասին Չամչյանն ասում է. «սա աշակերտեալ առ ժամանակ մի Յովհաննու Կախիկ վարդապետի, ինքն ես ստացեալ էր յետոյ աշակերտս. եւ ես իսկ՝ ասէ Մխիթար Ապարանցի՝ կացի առ մեա ամս իբր տասն», ապա՝ «Մխիթար, որ կացեալ էր յառաջմեւ առ միմ Մաղաքեայ ամս տասն հանդերձ այլովք, մեկնեալ յետոյ ի մեմե՛ն զմաց եւ եմուտ ի կարգս ունիթօռաց»⁷։ Այլշանը ևս, Չամչյանին կրկնելով, Մխիթարիչին համարել է Մաղաքիայի և Սարգիս Ապրակունեցու աշակերտ. «գառաջինն աշակերտեալ Մաղաքիայ եւ Սարգիս վարդապետաց»⁸։ Թեև նույնը կրկնել են նաև հաջորդ ուսումնասիրողները⁹, սակայն սա մեր հեղինակի խոսքի թուրքնկալման հետևանքով առաջացած սխալմունք է, որի պարզումը հարկադրված ենք անելու սովորականից մի փոքր ավելի ընդարձակ քաղվածքներ անելով։

Իրենց կարգի նկատմամբ Մաղաքիա Ղրիմեցու գործադրած հալածանքների մասին բավականին մանրամասն պատմելու¹⁰ ընթացքում Ապարաներցին ասում է, որ նա Փորադաշտ գյուղում մահացել է¹¹ կերակրից թունալորվելու հետևանքով. «ամենակարողն

⁶ Մանրամասն տե՛ս Ն. Վարդան վ. Նազանկ, Դասփարակութիւնը իմն հայոց քով, Վեննտիկ, 1923, էջ 133-211։

⁷ Տե՛ս Պատմութիւն Հայոց, Ի սկզբանէ աշխարհի մինչև ցած Տեսն 1784... Եօրինեալ ի Նայր Միքայել վարդապետի, Չամչյանց Կոստանդնուպոլսեայ... Եւմի Տեսն 1786, Կ. Գ., ի Վեննտիկ, էջ 447-8, 449 (այսուհետև՝ «Չամչ. Գ.»):

⁸ Սիսական, տեղագրութիւն Սիւննաց աշխարհի, ի Ն. Անտոնյան Մ. Այլթան, Վեննտիկ, ի Մխիթարայ վանս, ի Ս. Ղազար, 1893, էջ 370 (այսուհետև՝ Սիսական):

⁹ Տե՛ս Անաթոյան Ն., եր. աշխ., էջ 384, Oudeartje, Fra Mexico, p. 284.

¹⁰ Ապարանեցա գրքի այս մասը տպագրված է տե՛ս M. A. v. d. Oudenrijn, *Linguae Haicanae Scriptores Ordinis Praedicatorum congregationis Fratrum Unitorem et FF. Armenorum ord. S. Basilii Citra mare...* Bernae, 1960, p. 216-21 (այսուհետև՝ Oudeartje, LHS):

¹¹ Ազգապատմ. Հայ ուղղափառ եկեղեցու անդերը սեփեղև մինչև մեր օրերը՝ յարակից ազգային պարս-

սրբության և գործած սքանչելիքների համբավը սուտ է: Միաժամանակ՝ «Ժ. ամ անելի կացեալ էաք մերձ առ ճմա» խոսքից հմարավոր է մակարեքել ճաև, որ Մաղաքիան Ղրիմից Հայաստան է եկել իր մահվանից տասը տարուց մի փոքր ավելի առաջ, այսինքն՝ Նախիջևանի գավառում Միաբանողների դեմ նա գործել է մոտավորապես 1373-1383 թթ. ընթացքում:

Ավելին՝ Մխիթարիչը նրան աշակերտած լինել չէր կարող ճաև այն պատճառով, որ իր գրքի թե՛ սկզբում և թե՛ վերջում ինքն իրեն համարում է ծնունդով ուղղափառ՝ կաթոլիկ. «հոգեւոր եւ մարմնատու ուղղափառ ծնողաց զաւակ, եւ ըստ ռիսիւրի սուրբ հօրն մերո Լուսաւորչին հա՛¹⁴ եւ հնազանդ եւ հլու կաթողիկէ եւ առաքելական սուրբ եկեղեցո» (Ա.8ա):

Գրքի վերջին մասում առ այս ունի ճաև գրեթե համեմատական մի հաղորդում. «ԽԱ. Յաղագս պատճառաց անդոռ[ու]ելի հաստատութեան կաթողիկէ սուրբ եկեղեցոյ ի ճշմարիտ հաւաքն «Զրիստոսի» զլիսի վերջին՝ ԺԷ. փաստարկի մեջ ասում է, որ կաթոլիկ եկեղեցու հավատի ճշմարտացիությունն անպատմելի է, ուստի «պարտ է քարակուսեալ անձանց երթալ եւ բնակիլ ի մէջ նոցա, եւ բազում ամ հոգեւոր եւ մարմնատու աջօք փորձել եւ որոնել ճճշմարտութիւնս նոցա», ապա կրկնում է իր մասին մի անգամ արդեն ասածը. «Քանզի եւ մեք, որ ի ծնողաց մինչեւ ի ծերութիւն ուղղափառ եւ կաթողիկէ հաւաքով դեգերեցաք ի դրոմս սուրբ եկեղեցո գրոց եւ գիտութեանց, մինչդեռ քոսաք զնոսա ամենայն իմաստաւիտս կառավարութեամբ» և «թէպէտ ունէաք բազում բարի կարգաւորութիւն ի շնորհացն Աստուծոյ եւ ի սուրբ եկեղեցո», սակայն «գի սակաւ մի սովոր էաք հայկազնան քիմար որպիսութեանցն, վասն այն մինչեւ յերկուս ամսն առ սակաւ սակաւ աճեալ իմացաք ճճշմարիտն, եւ ապա փառատրեւելով գոհացաք զԱստուծոյ», հետագայում՝ գործը սրբագրել-լրացնելու ժամանակ ավելացրել է. ճաև «մարմնատու սեղանն նոցա եւ քունն առաւել ճահաւորեալ է մաքուր սպասաւորութեամբ եւ զարդարմամբ եւ կարգաւորութեամբ, քան այլոց ազգաց եկեղեցի եւ պատարագ, որպէս եւ մեք շրջեալ քոսաք» (Ա.288բ-9ա):

Ամենահավանական եմթադրությունն այն է, որ ուսումնառության սկզբում՝ պատանեկության տարիներին, Մխիթարիչը կասկածներ է ունեցել, թե ո՞րն է ճշմարիտը՝ հայկապա՞րհը, որի կարգի մասին նախ գրել է «սովոր էաք», իսկ հետագայում ավելացրել՝ «գի սակաւ մի» ճշտգրումը, թե՛ կաթոլիկներինը. ապա երկու տարվա ընթացքում («մինչեւ յերկուս ամսն») հակվել է երկրորդի կողմը:

Մեզ հայտնի հաջորդ փաստերը բխում են Մխիթարիչի գրած և ստացած ձեռագրերից¹⁵, որոնց 11 միավոր են: 5-ի գրիչը և ստացողն ինքն է, 7-ը՝ ուրիշների գրած և իր ստացածն են. 11-ից 7-ը անթվական են, նրանցից 4-ը թվագրվում են ԺԴ. դարով, իսկ 3-ը՝ ԺԵ. դարով: Այս ձեռագրերից որոշակի թվական ունեցողները վերաբերում են 1383, 1392, 1402 և 1406 թթ.: Գրչության հայտնի վայրերն են. հավանաբար Նախիջևանի գավառ՝ 3 միավոր, Ապարաներ՝ 1, Նախիջևանի գավառի Սինեական վանք՝ 1, Մակու՝ 3:

Սրանցից մեկի մեջ, որ Միաբանողների կարգի Դատաստանագրքի պահպանված

¹⁴ «Հայոց» և «հայ» բառերը գրում է մեծ մասամբ այսպիսի առանց «յ»-ի:

¹⁵ Սրանց մակդասակարգի անդադարձել ենք առանձին հոդվածով՝ քնն Ն. Տեր-Վարդանյան, Մխիթարիչ Ապարանցու «Գիրք պատմարանութեան» նրկի աղբյուրներից (Հեղինակի գրած և ստացած ձեռագրերը). - Էջմիածին, 2005, է-Ը, Լք 94-109:

նը. նա պետք է տարիքով զգալիորեն ավագ լիներ մեր Մխիթարիչից. որը թվական չունեցող այս ձեռագիրը գրելու ժամանակ պետք է որ համեմատաբար երիտասարդ լիներ և վաճակաճ դպրոց գլխավորելու համար դեռևս ո՛չ այնքան հասունացած:

Մեր մատենագիրին առնչվող՝ որոշակի թվական ունեցող ձեռագրերի հիշատակարանները վկայում են, որ 1392 և 1406 թթ. նա եղել է Մակուում: Իր «Տրամաբանության գրքի» շարադրանքի մեջ հեղինակը մի քանի անգամ հիշում է Մակուն և իր՝ այնտեղ եղած լինելը. «ի նոյն ժամանակին կին ոմն եկն ի Մակու, մինչ ղեռ մեր անդ էաք» (Ա.301ա): Սակայն ուշագրավ է 1406-ին գրված ձեռագրի մի հիշատակարանի հաղորդումը՝ «գրեցի ի գտառու Արքազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ պարոն Նուրադնի եւ քարունայե-րիս Մխիթարիչ վերակոչեցեալ»²¹: Ըստ ընդունված սկզբունքի և ավանդույթի՝ աշխարհիկ տիրոջ, այս դեպքում՝ Մակուի իշխան կամ տեր պարոն Նուրադնի անունից հետո պետք է տրվեր գավառի հոգևոր տիրոջ՝ առաջնորդ եպիսկոպոսի անունը, մինչդեռ այդ տեղում Մխիթարիչի անունն է, որ, թվում է, գրվել է անկախ այն քանից, որ նա նաև ձեռագրի ստացողն էր: Սա շատ ուշագրավ է և առիթ է տալիս ենթադրելու, որ.

ա. Մակուի եպիսկոպոսության արժոն այդ ժամանակ գուցե թափուր էր, և առաջնորդի պարտականությունները կատարում էր Մխիթարիչը.

բ. մինևույն ժամանակ նա ղեկավարում էր Մակուի հոգևոր դպրոցը («բարունապետ» բառն այստեղ հազիվ թե պատվանուն լինի):

Եվ իրոք՝ մեր մատենագիրն ունի իր մանկավարժական առնվազն քսանամյա գործունեության մասին մի անուղղակի հաղորդում. «Այլ բարերար վարդապետն թեպէր քաջ արեղեակ լինի չարութեան աշակերտին, սակայն անտես արարեալ՝ վերստին հազորդս առնէ զչարն կամօք իւրո բարութեանն, զի մի՛ ոք ասացէ, եթէ նա երբ պարտառու չարութեան նորա, եւ դարձեալ՝ զի մի՛ արգել կարծեսցի յայլոց, վասն այն զլինելոցն ասէ հասարակաբար, բայց թշնամին ո՛չ ցուցանէ ակն արկելով եւ կամ անուամբ եւ կամ մատամբ, այլ ի ծածուկ եւ նշանաւ ցուցանէ սիրելեացն իւր եւ բարեկամացն, զի մի՛ արդմեսցին արարականեացն եւ կամ արեցեալ անարեցեսն զչարն: Արդ, զայս գոր գրեցաք, յոյժ սքոյգի բսան ամ կրնցաք»²² սակայն օրինակ ի մենջ շարադրեցաք, եղիցի մեզ ի փորձանս սրբութեան եւ պսակաց, եւ նոցա ի բաւութիւն եւ ի թողութիւն մեղաց» (Ա.150բ): Կարծում ենք, որ սա, որպէս դասավանդման ընթացքում հոգեբանական հմտւոյնի կիրառմանը վերաբերող տեղեկություն, կարևոր հաղորդում է նաև հայկական մանկավարժության պատմության համար:

Վերն արդեն տեսանք, որ Մխիթարիչը «Մեծ ու Փոքր Հայոց, Վրաց եւ Յունաց աշխարհները քալեց ճանապարհորդութեամբ»²³, այս հաստատումը ևս հիմնված է «Տրամաբանության գրքում» տարբեր առիթներով ասված խոսքերի վրա. «Այլ եւ մեր բազում հոգս ունէաք եւ ճանապարհորդ ի ի ղառն ժամանակի եւ ի ձերութեան եւ ի րկարութեան րիս մեր» (Ա.321ա): Մակուից ավելի նա կաֆայի մասին ունի տարաբնույթ այնպիսի հաղոր-

²¹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Կ. Բ. Կազմեց Նորայր Լալս, Պողոսեան, Երուսաղիմ, 1967, էջ 202:

²² Ա. «բսան ամ կրնցաք» դարձվածը քերական, Կ. Բ. 153ա՝ անխաբար 1:

²³ Զարպիսեանյան Գ. Վ., Պարմոթիւն հայկերէն դպրութեան ի պէտք ուսման ազգային վարժարանաց, Բ. Կապոր, Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 211:

դումներ, որոնցով ակնհայտ է, որ երկար ժամանակ ապրել է այնտեղ: Ահա մեկը. «Կաֆա եւ յամենայն րեղիս ցրտեալ հայք եւ ի ժողովք... Որ եւ ի գնալն մեր ի Մեծ Հառոց առ ծովն գերայսն, հա՛ վաճառականքն որք կաին ընդ մեզ իբրեւ հասանէին ի ջուր ինչ, այսինքն՝ ի գնար եւ ի ծով, առժամայն փութով յուզեալ ժողովէին զեռունս եւ ուրէին՝ եթէ՛ հում եւ եթէ՛ եփեալ եւ կամ խորովեալ, գոր մեք ամենեւին ո՛չ կերաք վասն անսովորութեանն: Այլ եւ հատորոյքն ի Կաֆա քաղաք եւ յայլ բազում րեղիս հայք են, եւ զըմբռնեալ թռչունսն ո՛չ զենուին սրով, այլ աստուածամորթ սարքեալ՝ ուրէին եւ ծախէին» (ԱՅԿԵ-ՃԿ):

Այս քաղվածքի, ինչպես մաս կաֆային վերաբերող մյուս հաղորդումների մեջ ուշագրավ տեղեկություններ շատ կան: Ներկա դեպքում մեզ համար կարևոր է այն, որ Նախիչևանի Միաբանողները կաֆայի իրենց եղբայրակիցներից այցելում էին մաս հետևյալ ճանապարհով. ցամաքով հասնում էին Ան ծովի հարավային ափի որևէ մավառացիստ (գուցե՝ Տրապիզոն) և այնտեղից իրենց ուղևորությունը շարունակում ծովով:

Նույն կաֆային վերաբերող մի այլ հաղորդում երկնտային իմացություններ է տալիս թե՛ ընդհանրապես Միաբանողների կարգի մատենագրության և թե՛ Մխիթարիչի «Տրամաբանութեան գրքի» ստեղծման հանգամանքները պատկերացնելու համար: Պատմելով, որ ուղղափառ (կաթոլիկ) եկեղեցում որևէ մեկը եթե «ամեն գիրք, փարեալ ցուցցե գերադրական սուրբ աթոռոյն Հռոմայ, եւ իմաստնագոյն ժեպոտոքն ընթեռնուցուն ասաջի րեառն պապին, յայնժամ եթէ լիցի եամայնեւ եւ միաձայն մութք ընդ Մէթենցիարին»²⁴, եւ այլ ամենայն նախկին ասացելոցդ, յայնժամ սուրբ հարքն եաւանութեամբ ամենեցուն խրով սիճինովն կնքէ զվկայութիւնն իւր ի վերայ գրոցն այն, զի ամենեքեան ընդունիցին եւ գրեսցեն: Այլ եթէ բան մի լիցի նմա ներեալ Մէթենցիարին, եւ ծրայգրոզն ասասցէ պարճառեալ զայն ի գոչէ»²⁵ կամ ի գործանէ եւ ո՛չ ի կամաց, ուղղեն զսխալեալն եւ ընդունիցին, ապաւ եթէ արարող գրոցն եակաճառութեամբ կամեսցի հաստատել զգրեալ ներեալութիւնն, յայնժամ այրեսցեն զգրոզն եւ զգրեալն» (ԱՅԿԵ-ՃԿ):

Առավել կարևոր է շարունակությունը. «Ջոր եւ մեք վասն նոյն խոճի մութք գտոյն գիրքս ցուցաք րեւ Ջվան արեւայիսկոպոսին, որ էր լիկար րեառն պապին ի յամենայն Արեւելս՝ ի րեղի Գրիգոր Լուսատոյցին, եւ քաջ րեւելեալ Սուրբ Գրոց եւ դաւանութեանց, եւ նա յոյժ հաւանեալ յանձն էառ, զի ո՛չ է ի մենջ, այլ ի շնորհաց սուրբ Հոգոյն հաւաքեալ ի հին եւ ի նոր թարգմանեալ գրոց, վասն որոյ եւ մեք նախ արկաք ի Կաֆայս ի սեղանաւորս, սպասելով վարձու ի Տեառնէ՝ պարգեւոյն ամենայն բարեաց» (ԱՅԿԵ-ՃԿ):

Այստեղից առավել ջան հստակ է, որ, Միաբանողների այլ գործերի պես, Ապարանցերցու «Տրամաբանութեան գիրք»-ը ևս եմթարկվել է պապական գրաքննությանը և հավանություն ստացել: Գրաքննիչը՝ պապական ճվիրակ (լիկատ) Ջվան արեւայիսկոպոսը, անկասկած, կաֆայի և Սուրխարի՝ 1398 թ. հունվարի 29 - 1401 թ. օգոստոսի 8-ի շրջանի

²⁴ Մի այլ րեւելում մանրամասն նկարագրել է այս «Մէթենցիար»-ը, «որ կոչի Վճող» արարեալ մեծ վարդապետին Պետրոսի» (ԱՅԿԵ-ՃԿ), ամենայն եանականությունը սա Միաբանողների Դատաստանալիքն է, որ հայերեն է թարգմանել Պետրոս Արագոնացին:

²⁵ Բնագրում նախ գրված է «կոչէ», ապա դարձված՝ «գոչէ». այս շարադրանքի մեջ բառիս իմաստը դժվարաբար ենք բացատրել:

²⁶ Նախկինակի ինքնագրում (ԱՅԿԵ. 334) այս մասը պակասում է՝ թերթեր են ընկել:

«Joannes de Saulo Ordinis Minoris»՝ ֆրանցիսկյան եպիսկոպոսն է²⁷:

Թվում է, թե Մխիթարիչի այս հաղորդման արժանաբազատությանը կասկածել պետք չէ, որովհետև նրա գիրքը գրվել է Միաբանողների կարգի միջավայրի համար, ուստի և որևէ մեկը հեշտությամբ կարող էր ստուգել և պարզել նրա որևէ հաղորդման իսկությունը: Այս դեպքում առաջանում է հաջորդ հարցը. Զվան (Հովհաննես-Ջիովաննի²⁸) եպիսկոպոսը Մխիթարիչի գիրքը կարդալ կարողանալու չափ հայերեն գիտե՞ր. թվում է՝ ոչ: Ուստի կարծում ենք, որ, հավանաբար, Մխիթարիչը կամ հայերեն և լատիներեն (գուցե՝ իտալերեն) ավելի լավ իմացող մեկը բանավոր թարգմանություն է արել Զվան եպիսկոպոսի համար և այդպիսով՝ ստացել նրա հավանությունը: Իսկ հաղորդումն ինքնին բերում է կարևոր այլ իրողությունների բացահայտման.

ա. 1400 թվականի շուրջ Մխիթարիչը տեղական ժամանակով եղել է Կաֆայում,

բ. այդ ժամանակ արդեն «Տրամաբանութեան գիրք»-ն ուներ նախնական-սկզբնական առումով ավարտում տեսք.

գ. միաժամանակ հայտնի է, որ Մխիթարիչը, գուցե ընդհատումներով, իր գրքի մշակումը շարունակել է ևս մի տասնամյակից ավելի²⁸.

դ. ուրեմն՝ հավանական է, որ իր ներկա վիճակով շուրջ 40 հրատարակչական մամուլ ծախյալ ունեցող նրա գրքի շարադրանքն սկսվել էր 1400-ից ևս մեկ տասնամյակ առաջ: Սա ենթադրություն է, սակայն՝ շատ տրամաբանական և իրականին մոտ, որ իր հերթին նշանակում է, թե կարող ենք վստահ լինել, որ ԺԴ.-ԺԵ. դարերի այս մատենագիրը, աշխատելով իր ապրած բոլոր տեղերում (Նախիջևան, Մակու, Կաֆա և այլն), առօրյա պարտականություններին և զբաղմունքներին զուգահեռ, իր գլխավոր երկը ստեղծել է քսան տարուց ավելի ժամանակի ընթացքում:

Կա նաև անուղղակի մի հաղորդում, որ ավելի առաջ է բերում «Տրամաբանութեան գրքի» վրա Մխիթարիչի աշխատանքի ավարտի թվականը. Մաղաքիա Ղրիմեցու մահվան հանգամանքները պատմելուց անմիջապես հետո նա գրել է. «Եւ յետ L. (30) ամաց անլի յաւելան եւ այլ եւս բազում կեղծաւորք վկայ վերոյ ասացելոցդ սպոյթեանց» (Ա.301ա), ապա պատմում է Մարաղացի աշխարհական մի քահանայի մասին, որ մարդկանց խաբում էր, թե ինքը կարող է արծաթը դարձնել ոսկի: Վերն արդեն տեսանք, որ Մաղաքիայի մահվան թվականը 1383-ն է, իսկ 1383 + 30 = 1413. եթե նկատի ունենանք նաև տարեքանակին կցված «անլի» բառը, ապա կարող ենք ենթադրել Գրքի շարադրման

²⁷ *Sl'u Hierarchy Catholica Medii Aevi sive summorum Pontificum, S. R. E. Conlunaliu Ecclesiarum antistitulu serie. Ab anno 1198 usque ad annum 1431. E documentis tabulari praescripti Vaticani collecta, digesta, edita per Conradum Eubel, S. Theol. Doct., Editio altera, 1, Monasterii (Munster), MDCCCXIII (1913), p. 155 (այսուհետք՝ C. Eubel): Կան նաև նրան ուղղված կամ կրա անվան հիշատակությամբ 1398 թ. մարտի 6-ի և 1399 թ. սեպտ. 22-ի գրություններ. *Ulu Pontificis commissio ad redigendum iuris canonici orientalis. Fontes, Series III, Volumen XIII, Tomus I. Acta Urbani P.P. VI (1378-1389), Bonifacii P.P. IX (1389-1404), Innocentii P.P. VII (1404-1406) et Gregorii P.P. XII (1406-1415), E regestis Vaticanis et Lateranensibus aliisque fontibus collegit Aloisius L. Taute, Romae, Typis pontificale Universitatis Gregorianae, 1970, pp. 111, 154-8.**

²⁸ Վերն արդեն անկախվել ենք, որ գրքին ինքնագիրը (Ա՝ ձև. 334) 1410 թ. գրկուց ենթո նվազագույնը նրկից՝ մի անգամ մոտ, մյուս անգամ բաց գույնի թանաքով լրացումներ է արել ձեռագրի ազատ մասերում, յուսակցներում և զոդամներին, իսկ սա կազմող էր արվել ևս 1-2 տարվա ընթացքում:

ապարտի ճան 1414 կամ Շոյճիսկ 1415 թթ.:

[illegible]

Մեռում է Ռիշել մի վկայություն ևս. 1421 թ. Միաբանողների կարգի վերախնամող Հովասապի Ապարաներցի³⁴ կաֆայի Ս. Նիկողայոս վանքում գրել է մի ձեռագիր ժողովածու, որի վնասված և թերի Ռիշատակարանում, իր ծնողների ամուսնները տալուց հետո, խնդրում է Ռիշել «նայ եւ զվարպետն իմ զառաջին եւ զերկրորդ՝ գփրայ Օգոստինոս եւ զՄխիթարիչ /// եւ զդաբունին»³⁵. Կատարեց, որ այս Մխիթարիչը մեր Ապարաներցի է։

²⁹ Սիսանյան, էջ 390:

³⁰ See C. Eubel, p. 354:

³¹ Տե՛ս **C. Eubel**, *Լույսն ընդդիմ հեծկո*, Սիսակյան, Լջ 388:

³² Սիսանյան, ԼԳ 390:

³³ Sh'ui C. Eubel, p. 155:

³⁴ Նրա մասին տե՛ս Գ. Տեր-Վաղդանյան, Նոր պոզիվիթյուններ երկու հայ միադարձների մասին.- Հայաստանի ԳԱ Լրագրեր հասարակական գիտությունների, 1980/10, էջ 84-88:

³⁵ Մաշտոցյան Մարենկոյարանի ձեռ. № 2037, 187ա. հիմք. ԺԵ. դարի իսլյերեն ձևադրերի հիշարարկա-
րանքը. Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմող Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, հ. II, № 296, էջ 270:

Ամփոփեմք.

- Մխիթարիչ Ապարաներցիմ Նախիջևանի Ապարաներ գյուղում ծնվել է շուրջ 1345 թվականին, հայրը Գորգիկն էր, մայրը՝ Երայր, որոնք Մխիթարիչի, իր եղբայր Ծափի և քույր Թուխտենիկի ծնվելուց առաջ արդեն կաթոլիկություն էին ընդունել.

- թեև առնչություններ և տեղեկություններ է ունեցել իր շրջակայքի հայադավան գործիչների ու ժողովրդի հետ, սակայն կրթվել է իր ծնված՝ միաբանողական միջավայրում. Մաղաքիա Ղրիմեցուն և Սարգիս Ապրակունեցուն չի աշակերտել.

- նույն միջավայրում էլ մշտապես ապրել և գործել է Նախիջևանում, Մակուտում և Կաֆայում.

- 1406 թ. Մակուտում եղել է տեղի հոգևոր դպրոցի «րաբունապետը» և, գուցե, կաթոլիկ թեմի առաջնորդ-եպիսկոպոսի պաշտոնակատարը.

- Իր «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց» գործի կազմում-շարադրումը սկսել է շուրջ 1390 թ., մոտ 1400 թ. այս գիրքն արժանացրել է Սուրխաթի և Կաֆայի Ջվան եպիսկոպոսի (Joannes de Saulo) հավանությանը, մաքրագրում-վերջնամշակումը իր հայրենի Ապարաներում սկսել է 1410 թ. և ավարտել երևի 1414-1415 թթ..

- 1410-1417 թթ. (մինչև մահ) եղել է Նախիջևանի Միաբանող հայ եղբայրների կարգի եպիսկոպոսը:

Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԱՂՁՆԻՔԱՅԱՅԵՐԻ ՎԵՐՄԱՆԵԿԱՆ ՇԱՐՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ԾԵՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարսանյաց ծեսը պատմաազգագրական կարևոր աղբյուր է ժողովուրդների էթնիկ պատմության, հատկապես միջնդասակարգային ժամանակաշրջանի հասարակական կարգի, ամուսնության ձևերի, հավատալիքների ու կրոնական պատկերացումների, հենց թույն հարսանյաց ծեսի հետազոտման համար¹։ Այն համարվել է հասարակական կյանքի մեծ իրադարձություն և, ըստ էության, սովորույթների, արարողությունների և ուրախությունների մի համալիր է։

Հարսանիքը հայոց մեջ գրեթե ամենուրեք կատարվում էր դաշտային աշխատանքներն ու ձմռան նախապատրաստությունը ավարտելուց հետո՝ սկսած աշնանից մինչև Բարեկենդանի վերջը։ Բաղեռնում հարսանիքը անում էին Բարեկենդանի վերջին օրերին՝ խուսափելով առանձին ծախսից։ Մեծ պահքից մինչև հաջորդ աշուն հարսանիք չէր լինում, միայն այրիներին էր թույլ տրվում ամուսնանալ։ Հարսանիքը, որ Սասունում *հարսնած* էր կոչվում, կարող էր նշանակվել շաբաթվա բոլոր օրերին, բացի չորեքշաբթիից։ Այդ օրը «ոչ հարսնած էր գնում, ոչ պսակ էր լինում, որովհետև չար օր էր համարվում»²։

Հարսանիքն սկսելուց մեկ օր առաջ տղայի հոր կողմից մի տղամարդ գնում է հարսնացուի հոր տուն՝ *հարսնածի* զալստյան օրվա ու պահի վերաբերյալ հաղորդելու։ Այդ մարդը հայտնի էր *աղվես* անունով։ Ինչպես նշանդրեքին, այս աղվեսը եթե չէր ծպտվում, երեխաների կողմից ծաղրուծանակի էր ենթարկվում։ Ըստ երևույթին աղվեսը խորհրդանշում էր հնագույն ժամանակներում հանդիպող առևանգողին, իսկ երեխաները՝ նրա ընդդիմա-

¹ Տե՛ս Խ. Սամուկյան, Հին Հայաստանի կոլպորան, Խ. III, Եր., 1941, էջ 99-132։ Վ. Բզաջան, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Եր., 1974, էջ 132-155։ Նույնի Հայաստանի ծեսերի ու սովորույթների նկարագիր, գրառված XIV դարում, «Բաների մարտնչադարանի» 1956, N 3, էջ 53-56։ Տե՛ս Զ. Կարաբեկով, Визиты и свадебные армян и его социальное-экономическое корени, «Աշխարհությունների Հայաստանի պարզության պետական թանգարանի», III, էջ 73-146, Ռ. Ա. Վարդուհանյան, Է. Տ. Կաթապեղյան, Հայաստանի կոլպորանականների ընդհանուր և ընդհանրական կենցաղը, Եր., 1963, Կ. Վ. Սևորոյան, Անհնականիների ժամանակակից հարսանիքը, «Տեղնկազիր գիթ. ակադ», 1965, N 9, A. B. Եր-Սարգսյան, Современная семья у армян, Москва, 1972, էջ 108-148, С. Դ. Լևոնյան, Очерки этнографии лорисполитического Армени, КЗС, I, Москва, 1955, Նույնի՝ Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 185-199, Լ. Մ. Երանյան, Пережитки патриархальной общины у армян (по материалам свадебной обрядности), ՊԲՀ, 1967, N 4, Զ. Կ. Խաթապեղյան, Հայոց հարսանյաց ծեսի ֆունկցիոնալ պարզամոտիվային կառուցվածքը, Գիտական նստաբանության նվիրված ՍՍՄ կազմավորման 60-ամյակին, «Զեկույունների թեգիսներ», Եր., 1982, էջ 13-14։ Նույնի «Եզ մորթելու» սովորույթը և փեսան հայոց հարսանիքում, ՀՀ ԳԱ, «Լրագիր հաս. գիտ», 1991, N 2, էջ 116-124 և այլն։

² Տե՛ս Վ. Պետրոսյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 241։

դիրներին: Հարսանիքը տևում էր 3-7 օր: Գյուղական հարսանիքներին մասնակից ու հանդիսատես էր դառնում ողջ համայնքը, և հարսանյաց յուրաքանչյուր հանդես վեր էր անվում մի յուրօրինակ համայնական տոնախմբության: Այն կազմակերպված ու պատշաճ անցկացնելու համար ընտրվում էին ղեկավար և գործող անձինք: Ինչպես Հայաստանի բոլոր պատմագագադրական մարզերում, Աղձնիքում ևս հարսանեկան ծիսակատարության գլխավոր դերը քավորն էր. կարևոր գործառնություններ ունեին մականքները, հարսնաքույրը, հարսնեղբայրը և այլք:

Աղձնիքում փեսացուի և հարսնացուի տներում հարսանեկան ծեսերն սկսվում էին հինգշաբթի օրվանից, որը հայտնի է *հաց ու խմորի օր* անվամբ, իսկ ուրբաթ օրը, որը փաստորեն հարսանիքի բուն գործողություններն սկսելու օրն էր, հայտնի է *եզ մորթելու* կամ *մսացուի օր*. *մական-խաչեղբայրների* կամ *ազապչարիների օր*, *փեսացուին ածիլելու* և *լողացնելու օր*: Այդ օրը, երեկոյան, տեղի էր ունենում մականքների (*խաչեղբայր, ազապչարի*) ընտրությունը, որոնք լինում էին 5-10 հոգի: Այդ երկու օրերը որոշ տեղերում կոչվում էր *տաշտադրոնք*: Աղջկա տան *ուրբաթօրյա* ծիսական անունը հայտնի էր *ծաղկոց* ձևով, աղջիկը ամուսնանալով պիտի ծաղկի ու պտղաբերի: Հարսնացուի տանը նրան ուրախացնելու, հոգսերը հոգալու և «պաշտպանելու» համար շուրջն էին հավաքվում ամենատներին ընկերուհիները, որոնց անվանում էին *ծաղկետ*: Որոշվում էր ուղեկցող *հարսնաքույրը* և *հարսնեղբայրը*. Ուրբաթ օրվա գիշերը լողացնում էին պաակվողներին, հինադնում ձեռքերը, ածիլում փեսային, պատրաստում և զարդարում փեսայի ուտքը: Մաղկոցը փեսայի տանը կատարվող տաշտադրոնքի համեմատ ավելի կարճատև ու զուսպ արարողություն էր: Ընթացում էր տխուր, քանի որ աղջիկը պիտի հեռանար տնից: Այստեղ հրավիրյալները բացառապես ազգականներն էին, հիմնականում՝ աղջիկներ ու կանայք: Մաղկոցի ուտելիքը՝ արջառ կամ մի քանի ոչխար, գինի և այլն, վաղօրոք ուղարկվում էր փեսայի տնից:

Մականքների և հարսնեղբայր-ծաղկետների հիմնական դերը հարս ու փեսային «պաշտպանել» էր: Փեսայի կողմը հրավիրում էր իր մերձավոր ընկերներից՝ իբրև թիկնապահների, որոնց հարսանիքի ամբողջ ընթացքում հոգում էին նրան, «պաշտպանում» հոգևոր և մարմնավոր «թշնամիներից», կրում ուտքը³, «ճակատամարտում» վերադարձող հարսնածիկտրիճների, ասել է թե՛ հարսնացուի զինվորների հետ և այլն: Նրանք ամենուրեք հայտնի էին մականքներ անուցով, որ *քաջերի, կտրիճների* խումբ կամ *քաջ զինվորներ* իմաստ ունեն: Սասունում *մական* եզրույթի փոխարեն օգտագործում էին *խաչեղբայր*, նաև *ազապչարի* հոմանիշները: Մականքները զինվում էին սառը զենքերով, մահալներով, անգամ հրացաններով:

Հարսնացուի և փեսացուի թիկնապահներ ընտրելուն զուգընթաց՝ տեղի էր ունենում

³ *Ուրբ*, այլ տեղերում՝ *ևռոմ*, բազկաչափ խաչածն փայտ, գաղափարված գույնզգույն թելերով, չրի, չամչի, ընկույզի միջուկի շաքաններով, նոներով, կարմիր խմորով, կարմիր ու կանաչ ներկած ձվերով: Համաքվում է Լուրդալսակ փնտա-թազվորի նշաններից մեկը, կոչվում է նաև *փնտաածառ*: Հասն ու փնտան պսակադրության գնալիս ոտքը կրում է *ազապչարի* մեկը և նրանց առջևից տանում եկնդեղու դուռը, ուր պատասխաններ ձգվում են խլի ոտքի վրայի մոզերը: Հարսանիքի ավարտին փնտայի թազը վերցնելու պարտությունը ուղեկցվում էր ոտքի ռարիքներ փնտայի և ազապչարի-մականքների կողմից փայելումով:

հարսանիք հրավիրելու ծեսը, որ հայտնի էր *կոչնկան* (նաև *կանչողք*) անվամբ, Բաղեշում⁴ *խոր կանչել* (հյուր կանչել):

Հարսանքավորներից՝ հարսնառ կամ հարսնած գնացողներից, Սասունում նաև անվանում էին *խոնդի*, իսկ Բաղեշում և շրջակա գյուղերում՝ *խրեր* (հյուրեր): Այստեղ հարսանիքը հրավիրելու համար նվագողները բարձրանում էին հարսնետան կտուրը և հատուկ կանչի եղանակով ավետում հարսնառ-հարսնածը նախապատրաստելու սկիզբը: Սասունում հրավիրում էին *ծաղերով* (կարկանդակ) և մի-մի բաժակ օղի կամ գինի հրամցնում: Խոնդիներից մատուցվող խոնչանքի վրա լինում էին նաև խորոված ոչխարի՝ խորվովի կամ հալի միս:

Խաղաղ գավառի Մլքիշան և Բրա գյուղերում հրավիրող էին նշանակում փեսայի ազգական մի տղամարդու կամ պատանու: Վերջինս, ներկայանալով ընտանիքներին, նրանց էր հանձնում մի-մի կարմիր խճճոր կամ թաշկինակ՝ որպես հրավերքի խորհրդանշան⁵: Հագո քաղաքում այդպիսի խորհրդանիշ էին համարում վրան նուռ ու խճճոր դրած հացը⁶: Աղձնիքին մերձակա Հայնի քաղաքում կնքահայրը, փեսան, մի երիտասարդ քարեկան տնից-տուն էին գնում և հրավիրում հարսանիքի: Հրավիրվածները փեսայի գրպանը չամիչ, քոֆու, նուռ էին լցնում, որոնք հայոց մեջ ունեցել են նորապասակներից պտղունակություն հաղորդելու իմաստ⁶:

Մեկ այլ տարբերակում հրավիրողները հարսանեկան հանդերձներով զարդարված դեռատի աղջիկներ ու տղաներ էին, որոնք երկու խումբ կազմած շրջում էին տները՝ ի պատահա՛ն ստանալով չորացրած պտուղներ, քաղցրավենիք, հավեր (հիմնականում աքլոր, հակառակ դեպքում՝ գոլանում էին՝ այն՝ որպես առնականության և հաղթանակի խորհրդանիշ): Կոչնկան գնացողներից մեկը փեսայի քույրն էր՝ ազգականության հետ: Տղա կոչնկաններից էր *թագվորը* (Աղձնիքում գործածվում էր նաև *թագավոր* ձևով)՝ իր թիկնագործի ղեկավարի՝ ազապաշու հետ, որին կոչում էին նաև *խաչեղբայր*: Վերջինս իր հետ տանում էր գինով լիքը փարչ ու *կթղա՝* մերթ ընդ մերթ գինի հրամցնելով խմբի երիտասարդներին ու հանդիպող մարդկանց: Թագվոր-փեսան՝ «թագը» գլխին և խաչեղբայրը գուգված ու զարդարված էին հարսանեկան զգեստներով: Փեսա-թագվորը և խաչեղբայրը հրավիրվող ընտանիքներից ստանում էին տնայնագործ բանված գուլպաներ, շալե գոտիներ, ասեղնագործ գդակ, իսկ մերձավոր ազգականներից՝ կով, ձի, ոչխարներ և այլն⁷: Փաստորեն հրավիրյալ և մասնակից էր դառնում ողջ համայնքը:

Այսպիսով, տղայի կողմը փեսայի և ազապաշու միջոցով հրավիրում էր հարսնածի համար նախատեսված անձանց, որոնց թվում հատուկ ընտրությանը պետք է լինեին հայտնի ըմբիշներ, ձեռնամարտի մեջ քաջավարժ տղամարդիկ, վազորդներ, ցատկորդներ, կատակակոպի փորձ ունեցողներ, ձիավարժներ, ձիով մականախաղերի մոլուտ երիտասարդներ: Նրանցից բացի, պետք է ներկա լինեին նաև համայնքի նշանավոր տները ներկայացնող մարդիկ, նվագողներ, երգողներ ու պարողներ, ինչպես նաև հարսի զգեստ-

⁴ Տե՛ս Ռ. Նախտախյան, Դաքոսյան ազգագրական կյութեր (այստեսլոն՝ ԴԱՆ), տ. 12, էջ 79, տ. 13, էջ 22:

⁵ Տե՛ս «Բիւրակ», 1899, թիվ 3, էջ 37-38:

⁶ Տե՛ս Բ. Ժամկոջան, Հայնի, Բեյրութ, 1952, էջ 68:

⁷ Տե՛ս «Բազմավէպ», 1867, էջ 308-309:

ճերը գովերգերով հազցնող երկու մանկամարդ կին և հարսին հասակակից աղջիկներ, կանայք, որոնց *քարքուտիկ* (հարսնառաջնորդ) էին ասում: Սրանք *հարսնջուրի* հետ հարսնացուից անբաժան էին մնում մինչև առաջաստի գիշերը: Բոլորը միասին 40-50 հոգի էին⁸:

Նկատենք նաև, որ Աղձնիքում հարսնածի կազմն ընտրվում էր երկու կերպ: Այսպես, լեռնային շրջաններում, օրինակ՝ Սասունում, փեսան, քավորը և մակար-ազապչարի-թիկ-նապահները հարսնածին չէին մասնակցում⁹: Փեսայի և քավորի քացակայության դեպքում հարսնածը ղեկավարում էր տղայի հայրը կամ ազգականներից մեկը, որը հարսնածի «նկատամարտը» ղեկավարելու փորձ ուներ: Մինչդեռ Բաղեշում և Աղձնիքի հովտային շրջաններում փեսան, քավորը և մակարները հարսնածի պարտադիր մասնակիցներն էին: Այս դեպքում հարսնածի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր քավորը¹⁰: Այստեղ ազապչարիներ ընտրվում էին 10 հոգի: Զիավորների թիվը և նրանց առաջնորդին որոշելու համար մրցույթ էր կազմակերպվում. քուրը կանգնում էին մի զծի վրա՝ սպասելով նվազի ազդանշանին: Պարկապզուկը փչում էր *ջիթիդ* նղանակը և քուրը սլանում էին. ով յոթ պտույտ կատարեր և առաջինը հասներ, նա փեսայի մորից ստանում էր Դիարեքիից գնված կարմիր շալ: Նրան էլ իրավունք էր տրվում ընթացիկ հարսնածի առջևից: Այդ մույն ձևով հարսի հոր տնից դուրս գալիս ով հարսնածի վերադարձի լուրը շուտ հասցնել հարսանջատուն, փեսայի մորից այս դեպքում կստանար մատանի¹¹:

Բուն հարսանյալ հանդեսը, որով վերջնականապես վավերացվում և ավարտին էր հասցվում ամուսնության գործարքը, բաժանվում էր հետևյալ փուլերի. հարսնառ, հարսանեկան հանդես, պսակ և առաջաստ: Այս ամենն իրագործվում էր մի շարք ծիսական-մոգական գործողություններով, ինչպիսիք էին հարսին հազցնելու, փեսային սափրելու, լողացնելու և հազցնելու, *ռուք* կամ *նուռ* կոչված փեսածառը զուգելու և այլ ծեսերը, որոնք լրացնում, ամբողջականացնում և առավել քազմերանգ էին դարձնում հարսանեկան հանդեսը: Միսաշարի մի շարք զծեր էլ դրան հաղորդում էին մի տեսակ թատերականացված բնույթ, որի առանձին արարներ ամուսնության իմացույն սովորույթների վերապրուկներ էին:

Ուրբաթ օրը, մայրամուտից հետո, իսկ Բաղեշ քաղաքում մույթն ընկնելուն պես, ջահերով (*ֆանար* կոչված նավթավառով կամ մոմերով) լուսավորելով երթի ճամպարին, *հարսնածն* անհրաժեշտ մթերքներով¹² ուղևորվում էր հարսնացուի տուն: Եթե հարսը մույն քնակավայրից էր լինում, հարսնածը գնում էր հետիոտն, իսկ եթե այլ գյուղից՝ ձիերով՝ հարսի համար տանելով էզ ձի: Պատահում էր, որ չուցևոր փեսայի հարսնածը հետիոտն էր գնում նաև հեռավոր գյուղ, իսկ ձմռանն ունենում էր միայն հարսնացուին բերելու *դախուկ* կոչված մի թեթև սահմակ: Այս դեպքում սահմակը հարսնածի երիտասարդներ-

⁸ ՏՆՍ ԴԱՆ, Գ. 13, էջ 20-21:

⁹ Այդ սովորույթի պատճառով Լ. որ նախապես ցույց տրված գնդեցիկ հարսնացուի փոխարեն հարսնածի օրը երբեմն հարսնաջուր էին կանգնեցնում տանը մնացած արդի աղջկան (տե՛ս ԴԱՆ, Գ. 13, էջ 24-25):

¹⁰ ՏՆՍ ԴԱՆ, Գ. 1, էջ 75, Գ. 2, էջ 200-202:

¹¹ ՏՆՍ ԴԱՆ, Գ. 13, էջ 19-20:

¹² Սովորաբար տանում էին երկնք կամ մի քանի ոչխար, քոլոր, յուղ և այլն:

րի օգնությամբ քաշում էր հարսնացուի եղբայրը:

Բաղնջ քաղաքում ևս հարսնառը կոչվում էր հարսնած, որի երթը հետիոտն էր: Փեսայի ծախ կողմում քայլում էր ազաաթաշին, որը ձեռքին պահում էր մերկացրած սուր՝ ծայրին խնձոր, աջ կողքից գնում էր քափորը, փեսայի հետևից՝ քափորկիներ: Հարսի հոր տնից անաշիներ դուրս են գալիս հարսն ու քույրը, որոնց մատնեցնում էին ծածկված դախուկի մեջ: Հարսնեղբայրը հարսին շալակով էր սուտքից սահմակը տանում, իսկ հարսնաքույրն ինքն էր գնում և բարձրանում սահմակ: Փեսայի կողմից եկած ազապչարիներից չորսը լծվում էին սահմակին, երկուսն էլ հորն էին: Փեսան երթին մասնակցում էր քափորի և մյուս ազապչարիների ուղեկցությամբ: Հարսնառը հարսի հոր տնից շարժվում էր եկեղեցի: Տեղ հասնելով՝ հարսնեղբայրը կրկին հարսին շալակում և տանում էր եկեղեցու բն: Այլ դեպքում՝ հարսին ձիու վրա էին մատնեցնում, ինչքան էլ տունը եկեղեցուն մոտ լիներ: Հարսնեղբայրը ձիու սանձը բռնած դանդաղ, հանդիսավոր երթով առաջնորդում էր հարսնածը դեպի եկեղեցի: Հարսնածի առջև ընկած աղվեսը հարսնետրների գալստյան մասին լուրն ավելտելով՝ տեղ հասնելուն պես ձիւ հանձնում էր իրեն դիմավորողներին ու այնուհետև երկար ճիպտոր ձի դարձրած՝ յոթ անգամ պտույտ էր գործում հարսնացուի հոր տան շուրջը՝ բոլորի ուշադրությունը ընկեցնելով իր վրա: Սովորաբար աղվեսները լինում էին երկու եռոցի, որոնք հարսի հայրական տուն էին տանում հարսանիքի ուտեստեղեցներ: Աղվեսները ծալվում էին ոչխարի, աղվեսի, գայլի մորթիներով՝ ավել կապելով մորթու պոչից: Նրանք պարտավոր էին զգուշանալ հարսի գլուխի երիտասարդներից՝ մրանց կողմից իրենց մորթե վիզը ծխախոտով կամ վառվող փայտերով չվառելու համար: Սովորույթի համաձայն՝ գլուխի ջահել տղաները աղվեսների վրա էին լցնում ինչ պատահել՝ մածուն, աղի թան, փշում փոխիկը կամ մոխիր: Աղվեսներին տալիս էին հալ և գաթա՝ հարսնածի վերադարձի ճանապարհին պարելով փեսայի տուն հասնելով¹³: Հարսնածը ճանապարհ էր ընկնում առանց երգ ու պարի՝ իր վրա ուշադրություն չգրավելու համար:

Հարսնածը թագվորի տնից հարսի տուն՝ մեկնելուց հետո տղայի ծնողները հատուկ մարդկանց միջոցով հրավիրում էին համայնքի մեծամեծներին, որոնք հարսնած չէին գնացել: Սասունում հարսանիքին մանակցում էին համայնքի բոլոր ընտանիքներից ընտրված մարդիկ, նույնիսկ առանց հրավերի: Անգամ պատահական անցորդը կարող էր հարսանեկան հանդեսին մասնակցել: Երբ հարսանքավորները հավաքվել, մի փոքր հանգստացել ու ճաշել էին, սկսվում էր թագվորին լողացնելու, սափրելու, թագվորի շորեր հագցնելու արարողությունը:

Ուրբաթ օրն, առավոտից մինչև երեկո, քանի դեռ հարսնածը տեղ չէր հասել, հարսնացուին լողացնում ու հարդարում էին: Լողացնելու գործողությունը «գլուխ լվալ» էր կոչվում: Սասունում դա արվում էր հարսի մերձավոր ազգական կնոջ տանը: Ազգականը հարսնացուին նվիրում էր թանկարժեք հագուստ ու զարդ կամ մի ոչխար և կամ մի կով, որը հարսի սեփականությունն էր դառնում սկեսրանց տանը¹⁴: Բաղնջում փեսայի քույրը, քափորկիներ մի քանի հարսների և աղջիկների հետ գնում էին հարսնացուի տուն՝ իրենց հետ հինա առած. այնտեղ լողացնում էին հարսին հարսնաքրոջ հետ:

¹³ ՏՆՍ ԴԱՆ, ք. 13, էջ 20-21:

¹⁴ ՏՆՍ Վ. ՊԵՏՅԱՆԻ, էջ. աջ, էջ 245, ԴԱՆ, ք. 13, էջ 97:

Լողացնելուց հաջորդում էր *Ռինադրեքի* ծեսը: Քավորկիցը մի քանի հարսների և աղջիկների հետ տանում էր սկուտեղը, որում գինով շաղախած Ռինա էր՝ շուրջը նուր և խնձորով ու քսան մոմով զարդարված՝ Ռինայելու հարսի ծեղքերն ու ոտքերի մատները: Ներկա կանայք և աղջիկները Ռինայում էին նաև իրենց խալերը: Հինա դնելը նմանողական մի ծես էր՝ մյուս մասնակիցներին ևս բախտավորություն շնորհելու, ջահել աղջիկներին թագ ու պսակի արժանացնելու համար: Ավելացած Ռինան վերադարձվում էր փեսայի տուն՝ նույնը այնտեղ կրկնելու¹⁵: Հայնիում Ռինայելու արարողությունը ուղեկցվում էր հետևյալ երգով.

Կանչեցեք նենեմ թող Ռինա բերե,
Կանչեցեք մամուն թող Ռինա բերե,
Կանչեցեք քորոմ թող Ռինա բերե,
Սիսեռ լցուցանեք ջուրը
Կանչեցանք փեսկան քուրը¹⁶...

Փեսացուին լողացնելու, սափրելու և հագցնելու արարողությունները տեղի էին ունենում նույն՝ ուրբաթ օրը, հարսնածը ճանապարհելուց հետո: Բաղեշում ուղեկից մակարիկները փեսային լողացնում էին բաղնիքում: Տաք եղանակին լողացնում էին գյուղից անուշ գետակի կամ աղբյուրի մոտ: Փեսայի եղբն ու վերադարձը ուղեկցվում էր երկու խմբի քաժանված մակար-ազապարիկների, գյուղի չամուսնացած երիտասարդության կողմից ու պարով: Ընդ որում, մի կողմը երգում էր, մյուս կողմը՝ երգով պատասխանում: Մակարիկների հետ տուն վերադառնալիս մրան դիմավորում էին մայրը և այլ կանայք՝ զանազան վրդերով ու քաղցրեղենով լի սալաները բարձր պահած¹⁷:

Աղծնիքի հոկտային Դուբին և այլ գյուղերում փեսային և երիտասարդների խմբում դիմավորում էին սիսեռով, չամչով և թարմ մրգերով լի սալայով՝ կողքերին նստրեղի¹⁸: 12 օրը ամրացված, որոնց զլխներին հագցրած էր նուր ու խնձոր, ձողերից էլ մախապատրաստվող փեսածառի չորացրած մրգերի շարանները կախված: Երիտասարդներին մրգերով ու չիր-չամիչով դիմավորում էին աղջիկներն ու ջահել կանայք՝ նոցների ու պարերի ուղեկցությամբ: Լողացնելու ծեսին այստեղ հաջորդում էին փեսային սափրելու, զանազան վրդերով արարողությունները և փեսածառի պատրաստումն ու զարդարումը: Այնուհետև զավառներում տղային լողացնում էին տանը:

Փեսային լողացնելուց հետո, ըստ սասունցիների սովորության, մրան հագցնում էին հավաքված տղամարդ հարսնետրների ներկայությամբ: Մակարիկներից ծեղը սկսում էր բերում էր մրա մոր զգեստները, երկրորդը հագցնում՝ յուրաքանչյուր ճիպուտակն ցվիրված երգեր երգելով և բարեմաղթություններ անելով: Ներկայություն էին. «Աստված շնորհավոր անե»:

Խարզանի Հազո քաղաքում փեսայի հավավորները երգերից ծեղը հետևյալն էր.

¹⁵ ՏՆՆ ԴԱՆ, Գ. 13, էջ 97:

¹⁶ ՏՆՆ Բ. Ժամկոցյան, Հայնի, էջ 68:

¹⁷ ՏՆՆ ԴԱՆ, Գ. 13, էջ 23-25:

Նայե փեսու իշխկին (բաճկոն),
 Նայե փեսու տալալին (գեղեցկությամբ),
 Դրածոին մեջ ժողովին,
 Եկեք տեսեք անուշին,
 Նայեք փեսու էրեսին,
 Որը կըմամի խնծորին,
 Նայեք փաշի (փեսու) աչքվնում,

Եկեք նայեք մեր փեսան,
 Համար քեֆով (ուրախ) հարսկան¹⁸:

Զգեստավորմանը զուգընթաց՝ երիտասարդները շուրջպարեր էին պարում՝ խմբերգեր երգելով:

Թագվորին մտնեցնում էին հանդիսականների մեջտեղը, կողքերը՝ երկու երիտասարդ՝ յուրաքանչյուրը մեկական մոմ ձեռքին, հետևում մեկ ուրիշ երիտասարդ՝ «թագվորի թագը» բռնած, և բոլոր «ազապները», երկու խմբի բաժանված, աջ և ձախ կողմերում, թևերով մեկ-մեկու ուսած, իսկ խաչեղբայրը՝ նրանց մոտ՝ զինով փարչն ու կթղամ ձեռքին: Վերջում *մախաղը* ուսին գալիս էր վարսավիրը և սկսում փեսայի սափրելու ծեսը, որը մնաց է ձմերուկ ծախելու արարողությամբ: Վիզը սափրելու փոխարեն վարսավիրը սկսում է գիծ-գիծ ու մեջ-մեջ սափրել այնպես, որ «սև ու ճերմակ քառակուսիների կմնամի թագվորի վիզն ու երեսը, ճերմակները ձմերուկի արտերն են, իսկ սևերը՝ ձմերուկները, որ պետք է վաճառքի հանվեր»: Նրանցից մեկը սկսում է կանչել. «Աղեկ հասուն, ճիտու (աջադաղի) արյուն ձմերկներ կան ծախու, զոռո կա, թող իզա»: Նախ փեսայի մայրն է գալիս, *ստակ* (փող) տալիս խաչեղբորն ու վարսավիրին, ապա համբուրում փեսայի ճակատը: Վարսավիրը սև արտերից մեկը սափրում է՝ իբրև թե մի ձմերուկ վաճառվեց: Այդ պահին երիտասարդներից մեկը բարձրաձայն սկսում է քարոզել. «Թագավորներն է եկել, չորեն բեռ մը ոսկի է բերի, մեր աչունու վրայեն է քելի ու եկել»: Այս խոսքերին հաջորդում են երիտասարդների «շեն մնա, շեն» գոչումները: Նույն արարողությունը կրկնվում է ամեն ձմերուկ ծախվելիս՝ տարբեր դարձվածքներով պատվելով փեսայի նվեր տվող ազգականներին: Դրանցից հետո թագվորի զլովսը դնում են վարդապատկ թագը, իսկ ազապչարիները բարձր ձայնով ու փոփոխական եղանակներով նրան են գովում «թագվոր բարով հազար խերով»¹⁹:

Բաղեշում երեսը սափրելիս 2-3 տեղ մազափունջ էին թողնում, որ կոչվում էր *փեսի նշան*:

Աթոռին լուռ ու մունջ մատած թագվորին հագցնում էին կարմիր ու բանված պնդմավոր չուխա, ճերմակ լաչակի մեջ դրված կարմիր խնձոր ձեռքը տալիս՝ մինչև պսակի ավարտը կրելու և մինչ լուսանալը երգով ու պարով շրջապատում նրան:

Զգեստավորմանը հաջորդում էր փեսայի *ածիլումը*: Վարսավիրը նրա երեսն ածիլում էր ընդհատումներով, իբր թե ածելին չէր կտրում և, փեսայի երեսը բոստան համարելով,

¹⁸ Տնն «Բիւրակ», 189, թիվ 3, էջ 37-38:

¹⁹ Տնն «Բագմալիս», 1867, էջ 310:

վաճառքի էր հաճում ու գործն ավարտին հասցնելու համար քաղորդից վարձ-տուգանք կորզում: Հաճողիսականները և փեսամայրը թագվորին և նրա թիկնապաճներին դրամական համեստ նվերներ էին տալիս: Այս արարողությունից հետո էր, որ մակարներից մեկը թագն ու պսակը դնում էր փեսայի գլխին՝ նրան թագավոր հռչակելով և քաղմեցնելով գահին²⁰:

Տաճը կերուխումը շարունակվում էր, որին մասնակցում էր թագվորն՝ իր թիկնապաճներով: Զուգընթաց պատրաստում էին պսակածաղը: Խնջույքի տաճը փեսայից աչք նշատում էր քավորը, ձախում և շուրջը կանգնում էին մակարները: Վերջիններից մեկը տաճ դռնից մինչև թագվորի գահն ու օջախը լայն ճամփա էր բացում, մի այլ մակար հայտարարում էր «թագավորի երես գալու» ծեսն սկսելը: Երգ-պարը դադարում էր: Քիչ անց շարան-շարան սկսում էին գերս մտնել փեսայի բարեկամ և հարևան կանայք՝ գլխավերևում պահած մի-մի մեծ սկուտեղ, որոնց շուրջքուրը մոմեր էին վառվում և ծամրաբեռնված էին լիճում նվերներով, խորվուներով, գաթաներով, սեր ու կարագով, մածունով, թարմ ու չոր մրգերով: Նրանցից ամեն մեկը սկուտեղը հանձնում էր մակարին, համբուրում թագվորի ճակատն ու այտերը, ապա և՛ քավորի ձեռքը (առաջինը թերում էին քավորի նվերն ու սեղանը): Այդ պահին մակարը հայտարարում էր «թագվորի երես եկող» կնոջ անունը, թվում նրան թերած նվերներն ու բարիքները և թագվորի անունից շնորհակալություն հայտնում, որին ի պատասխան հաճողիսականները միաբերան գոչում էին. «Ծնե մնա, շնե»: Ստացված բարիքները մակարը բաշխում էր հաճողիսականներին: Արարողությունը տևում էր մի քանի ժամ («թագվորի երես» եկողների թիվն անցնում էր 50-60 հոգուց): Այդ օրը *մանգդա-վագի* «կարգադրությամբ» ենթակա «գինվորները» կատակային թնույթի հանձնարարականներ էին կատարում. հարսանջավորներից ձեռք էին թերում հավ, ուտելիք, միրգ ու չամիչ, իսկ «չենթարկվողներին»՝ «ծնե» էին տալիս²¹: Ազապչարու գիշեր համարվող այդ օրը ամեն տեսակ զվարճություններ կազմակերպող երիտասարդներից էին այցելում լեռներում թաքցվող հայդուկները՝ ռազմահայրենասիրական դաստիարակչական նպատակներով:

Ուրբաթ լույս շաբաթ գիշերը կերուխումը մինչև լույս շարունակվում էր նաև հարսանջույի հայրական տաճը: Լուսաբացին տղայի կողմից ուղարկված հարսանեկան զգեստներն էին հագնում հարսնացուին, որով աղջիկը կերպարանափոխվում, *հարս էր դառնում*: Նորահարսին շրջապատում էին երկու կողմի աղջիկները՝ *ծաղկեղները*, քավորկը՝ մոռ զլխավորությամբ, մազերն էին հյուսում և զգեստ հագնում, մյուսները տխրեղանգ երգեր էին երգում: Թուրաքանչյուր զգեստ հագնելիս *ծաղկեղները* նոր երգ էին երգում՝ հուզելով աղջկան և նրա հարազատներին: Սասնա Հազո քաղաքում երգվող երգերից մեկն այսպիսին էր.

Մընջ տուն իջանք ուշիկ-ուշիկ,

Փեսան կաներ (կմայեր) լոկի, մնջիկ,

Մշու սարեր մշուշ էր,

²⁰ ՏՆ՝Ս Վ. Պետոյան, Լք 248-249, ԴԱՆ, տ. 2, Լք 201:

²¹ ՏՆ՝Ս ԴԱՆ, տ. 13, Լք 89:

Աղջկա ամուսն Բնքուշ էր.
 Հարսի քողը մախշուն էր.
 Փեսի մատեն (դեմքը) ամուշ էր.
 Փարա չիկա տուն ի գամ.
 Օսկի չիկա. քեզ ի տամ.
 Էկո երթանք Ս. Նշան.
 Օսկի մատնիք (մատանի) քու մշան,
 Հարսի սոլեղ կեղտոտ էր.
 Փեսի սիրտը քառաօտ (բարկացկոտ) էր²²։

Զգեստավորման ընթացքում մոր զգեստները օրհնում էր քահանային։ Հարսի հյուսքե-
 ռից մահ կախում էին չամիչ ու ընկույզի միջուկի շարեր՝ պտղունակություն հաղորդելու
 նպատակով։ Հովտային շրջաններում հարսի զգեստավորմանը ինչ-որ չափով մասնակ-
 ցում էր մահ մրա եղբայրը, որը հարսի հագուստի զանազան տարրերի մեջ որևէ «թերույ-
 թուն» հայտնաբերելու պատրվակով քավորից ստանում էր դրամական մվեր²³։

Հարսը, մրա մայրն ու քույրերը այդ գործողությանը հետևում էին արցունք թափելով,
 մինչդեռ զգեստավորողները քաջալերման և մխիթարանքի խոսքեր էին ասում, ոմանք էլ
 հարսի դեղին *մուճակների* (կոշիկների) մեջ կորեկի հատիկներ էին լցնում՝ ի մշան մրա
 արգասավորության։ Այս պահին հարսի հոդ տուն էր խուժում պատանիների մի խումբ՝
 «ակոա ժածալենը» պահանջելով. չտալու դեպքում իբր «հարս ու փեսի ատամները կսկսին
 շարժվիլ, խախտվիլ ու թափվիլ»։ Նրանց պահանջն էր մեկ խորվու գառ, որն ամփիջապես
 մատուցվում էր։

Հարսին հագցնելուց հետո գույնզգույն, մինչև ծնկները իջնող քող էին գցում գլխին,
 որից հետո հարսնաձը տնից դուրս էր գալիս մեծ աղմուկով, քանզի ոմանք հարսի հոդ
 տնից պուտուկի խուփ. *սկափառակ* (սկուտեղ, պմակ) կամ ափսե էին գողացել, որ իբրև
 վահան պետք է գործածեին պսակից հետո հարսի դեմ սրախաղությանը գնացած միջո-
 ցին։ Երբ լուր բերողները չլուստ աստղը եղավ՝ բացակամչություններով տեղեկացնում են
 հարսնաձի վերադարձի մասին, քավորակինը շտապ հիմա է դնում «*հարսնեց հյուրերո*»
 ձեռքերին, որից հետո՝ հարսանքատունը դատարկվում է, շտապում են հարսի կողմից
 եկած հյուրերին իրենց տուն հրավիրել²⁴։

Հրաժեշտի երկխոսություն էր սկսվում հարսնաձի դեկավարի և հարսնացուի մոր միջև,
 և *խոնդի* կոչվող հարսնետղները հարսի էգ ձին ուռքի մման զարդարելուց և մրա մեջքին
 օծիտի մաս կազմող կարպետն ու ապագա մորածնի համար մախատեսված վերմակը
 փոխելուց հետո՝ ճամփա էին ընկնում։

Աղձնիքի հովտային շրջաններում արարողություն էր մահ հարսին ձի մտնեցնելը։ Այդ
 պահին ասպանդակը բռնած հարսնաքույրը քավորից պահանջում էր իր մվերը՝ իբր հար-
 սը անկարող է ձի հեծնել։ Նվերը ստանալուց հետո քավորին թույլատրվում էր օգնել հար-

²² Տե՛ս «Թիւրակն», 1899, քիվ 3, էջ 37-38։

²³ Տե՛ս ՂԱՆ, ր. 13, էջ 19-20, 99։

²⁴ Տե՛ս «Բազմալևա», 1867, էջ 310։

սին: Հարսնաձիու սանձը բռնում էր հարսնեղբայրը, իսկ երկու կողմից ծիու ասպանդակ-
ներից բռնած ուղեկցում էին հարսնաձի մեկնած աղջիկները: Վերջիցնեքս կատարում էին
հարսի գովաճը՝ մի խումբը երգելով, մյուսը՝ կրկնելով: Նախքան հարսնածը հարսի հոր
տնից դուրս գալը՝ հարսնացուի համայնքի երիտասարդները ստեղծում էին *քիրինդափոր-
ների* խումբ, որը գլուղի սահմանագլխին հարսի ճանապարհը «բացելու» համար փեսա-
ցուի հորից կամ քավորից պահանջում էր *ազապների կիսկ* կոչված գառ կամ դաշույն:
Վերադարձի մասին շուտ ավետողը փեսայի մորից ճվեր էր ստանում: Հարսնաձի վերա-
դարձի ճանապարհը կարող էր փակել հովիվ՝ իր հոտով: Նա մի խոյ բռնած ընդհուաջ էր
գնում հարսին: Քավորը, իսկ Սասունում՝ փեսացուի հայրը, ընդունում էր խորհրդանիշ-
ճվերը, կտրում ակամջը, որի արյունով խաչ էր անում հարսնաձիու ճակատին, իսկ հովվին
տալիս էր դրամական ճվեր: Այլ տարբերակում այդ գործողությունը կատարում էր հարսի
ձիու սանձը բռնած հարսնեղբայրը: Երբեմն էլ գառան փոխարեն մատուցում էին ջրով լի
սափոր²⁵:

Առավոտյան հեռվից ճկատելով, որ հարսնառը գալիս է, փեսածառն եմ զարդարում:
Այն շատ տեղերում փշատեցնու ճյուղն է. յուրաքանչյուր փշի վրա անցկացնում էին թարմ
ու չոր մրգեր, չամչի, ընկույզի, սիսեռի շարաններ և պաստեղներ՝ պտուղների հյութից
եփած լավաշանման չորացած ուտելիք, մի կողմից էլ սպիտակ, մաքրված աքլոր կախում
ծառի զխից: Երբ հարսնառը մոտենում է, փեսային երգերի ուղեկցությամբ բարձրացնում
էին կտուրը և նստեցնում փեսածառի տակ: Ազապչարիները պարտավոր էին հսկել, որ
փեսայի պատիվն ու հեղինակությունը խորհրդանշող ծառը չգողանան: Այդ պահին թագ-
վորի մայրը խնձոր է տալիս որդուն, որը նա պարտավոր էր նետել հարսին. չդիպելը վատ
նշան էր: Մինչ ազապչարիները հսկում էին կտուրը և վայելում մրգեր, գլուղի պատանիներ-
ը աթարները իրեն ջահեր թոցրի շշերի վրա ամրացրած՝ պատրաստվում էին դիմավորե-
լու հարսանքավորների վերադարձը:

Փեսայի գլուղի (կամ մույն գլուղում) հյուրընկալողների մի բազմությունն սպասում էր
ճանապարհի զխից, և հարսնածը այստեղ հասնելուն պես սկսվում էր հրավերքը. բոլորը
տեղավորվում էին հարսանիքին մասնակցող գլուղական ընտանիքներում, ուր ճոխ հյու-
րասիրվում էին²⁶:

Փեսացուի թիկնապահները, իմանալով, թե մոտավորապես օրվա որ պահին հարսնա-
ռը կհասնե տուն, նախապես բարձրացնում էին փեսահոր տան կտուրը՝ *բերդը*: Իսկ գլուղի
պատանիները վառվող աթար-ջահերով ընդհուաջ էին գնում հարսնեղբայրին: Փեսացուի
գլուղում հարսին դիմավորում էին առատ սեղաններ բացելով: Մինչդեռ հարսի կտրիճնե-
րի բանակն աղմուկ-աղաղակով, ձիախաղերով, հրացանաձգությամբ և հոխորտանքնե-
րով հարձակվում էր բերդի վրա: Այստեղ թագվորը, քավորը և ուղեակիր մակարը կանգ-
նած սպասում էին՝ առանց կովին մասնակցելու: Մյուս մակարները, հրավելով բերդի բո-

²⁵ ՏՆՆ ԴԱՆ, տ. 1, 9 23-25, 99:

²⁶ Արագածոտնի մարզի Թայիկի ենթաշրջանի սասունցիներով ընկնկցված Վերին Բազմաբերդ գյուղում
Ավեր Դազարյանի հաքսանիքին, քանասաց Վռամ Գալոյանի հավաստմամբ, հաքսնաձի վերադարձին գլուղա-
միջյան ճանապարհին լուսվել էր ուրբասրեղենով և բեղեր խմբերով 22 սեղան՝ հաքսին պարկանող եվրոներով
(Լյութերը գրի ենք ամել 1973 թ.):

լոր մատչելի տեղերը, թույլ չէին տալիս, որ հարսի կտրիճները քարծրաման այնտեղ: Եթե հաջողվեր քարծրամալ և ձեռք տալ թագվորին կամ ուղքին, հաղթող էր ճանաչվում հարսը, հակառակ դեպքում հաղթությունը շահում էր փեսան:

Այս երկու բանակների միջև մղվող կատակակերիվը հետզհետե տաքանում և 1-2 ժամվա ընթացքում երբեմն վեր էր ածվում իսկական ծեծկոտուքի: Լինում էին մարմնական վնասվածքներ ստանալու դեպքեր, բայց ելք մեկը կամ մյուսը հաղթում էր, անմիջապես հաշտվում էին:

Այդ ժամանակ փեսամ կարսիի ինձողով Աջամ էր բռնում իր հարսնացուին, որով յուրաքանչե էր դարձնում նրան: Հարսնառը բակ մտնելիս ազապչարիները կողոպտում էին փեսածառը և այն մեռում բակը՝ հարսնառի գլխին: Փեսային իջեցնում են կտորից հարսին սաժառը և այն մեռում բակը՝ հարսնառի գլխին: Սկսվում էր հարսի և փեսայի գլխին չոր մրգեր տեղադրու ծիսական արարողությունը՝ նրանց արգասավորություն հաղորդելու նպատակով²⁷:

Աղձնիքի հովտային շրջաններում, Հզամիր, Գալուկ, Ղուբին և այլ գյուղերում փեսան ոչ միայն չէր մասնակցում, այլև չէր դիմավորում հարսնածին: Մինչև նա կտորին «պաշտպանվում» էր, հարսնածին դիմավորող փեսայի մայրն, աջ ձեռքում՝ շերեխ, ձախում՝ հաց, պարելով մոտենում էր փեսածառի նման զարդարված հարսնածիռն, շերեխով թեթևակիորեն խփում ձիու ճակատին, մի պատառ հաց տալիս կենդանուն, ապա շերեխն ու հացը հանձնում հարսին. սովորույթը խորհրդանշում էր տանտիկնության հանձնումը նորահարսին:

Հստ ուղանաքնակ սասունցի ծերունիների պատմածի՝ իրենց մոտ հարսանքավորներին դիմավորում էին հրացանաձգությամբ: Հարսին փեսայի տան բակում դիմավորում էին գլխին չիռ ու չամիչ լցնելով: Փեսայի մայրը երկու լավաշ ձեռքին ընդառաջ էր գալիս հարսի խմբին և, առանց երեսը քացելու, հացերը դնում նրա ուտերին՝ ասելով. «Խոքը խեղով լինի, ամբարներդ հացով լի»: Հարսի երեսի քողը հասնում էր մինչև ծնկները: Տան շերեխն դնում էին կավե քսառն, որը փշրելու էր հարսը՝ ուղքի հարվածով:

Այդ պահին կտորին երկու հակամարտող երիտասարդների խմբեր «պաքարում» էին փեսածառին տիրանալու համար: Փեսայի գլխարկը փակցնողը կարող էր իր ուզած գնով «վաճառել» ազապչարիներին, որոնք իրենց «պատվի» համար պարտավոր էին գնել այն²⁸: Իսկ Բաղեշի հարսանեկան սովորույթի համաձայն՝ փեսայի մայրը, որը մարդաթող կին չպետք է լիներ, այլ *բախտավոր*²⁹, յոթ հաց է գցում հարսի թևերին խաչի ձևով՝ *խաչ ու փաթ*: Այնուհետև ձիուց դեռ չիջած հարսի գիրկն էր տալիս կաթնակեր տղա երեխա՝ արու զավակներ ունենալու ակնկալիքով: Որպեսզի հարսին ձիուց իջեցնեին, ձիու սամձը պահող հարսնեղբորը տալիս էին նկեր՝ գառ կամ երինջ: Հարսնեղբոր ստացած բոլոր նվերները պատկանելու էին հարսին՝ որպես նրա օժիտի մի մաս: Հարսի եղբայրը նվերի խոստումը ստանալով՝ քրոջը հանձնում է հարսնաքրոջը և փեսայի քույրերին: Ձիուց իջեցնելուց հետո հարսի ձեռքն էին տալիս չոր մրգերով լի չօգտագործված սափոր, որը գետնին

²⁷Տե՛ս ՂԱՆ, Գ. 13, էջ 24-25:

²⁸Տե՛ս նույն տեղը:

²⁹ Այսինքն՝ մեկ մարդ առած կին, իսկ 2-3 ամուսին առած կինը իրավունք չունի անգամ հարսանիքի նաջ թխել:

խփելով պետք է կոտրեր՝ իբրև զոհաբերություն՝ հավանաբար հասցեագրված տնարարության աստվածուհի Նանեին: Բացի այդ, կապե սափոր գետնին խփելով կոտրելը կուսությունը զոհաբերելու ձեսի խորհրդանշումն էր:

Հայնիում պահպանվել էր մեկ այլ ուշագրավ սովորույթ. նորապսակների պատվին դրան սեմի վրա ոչխար էր մոտեցվում, մվեր տալով՝ փեսան անցնում էր ոչխարի արյան վրայով. Երա հետևից՝ կնքաճալրը, հարսն ու ժողովուրդը: Հարսը մախ աջ ոտըը ներս էր դնում, որ քախտավոր լինի, ապա կապե սափոր, կծեր էին տալիս, որ հարսն ու փեսան և կնքաճալրը կոտրեին սեմին, ոտքերի տակ՝ չարը խափանելու համար: Նախքան տուն մտնելը՝ հարսի ձեռքը նուր էին տալիս, որ սեմին հարվածելով կոտրեր, իսկ ազապ տղաներից մեկն էլ փեսային տալիս էր կոտրելու աղջկա հոր տնից գողացած գոլը²⁹: Մեկ այլ սովորույթի համաձայն՝ ախսեն կամ կապե փարչը դնում էին դրան շեմին, որի վրա մախ պետք է ոտքը դներ փեսան, ապա հարսը՝ կոտրելու նպատակով: Դրանից հետո սկսւորոջ ուղեկցությամբ հարսի շքախումբն առաջնորդվում էր Երան հատկացված կամանք քաժին, որպեսզի հարսը նստի, որտեղ ստանում էր սկսւորոջ մվերը՝ ոսկեշար *ճակատնոց* կամ այլ զարդ, և հարսի գիրկն էին դնում դարձյալ տղա երեխա՝ վերը մշված ակնկալիքով: Երկու դեպքում էլ հարսը տալիս էր պատասխան մվեր՝ վաղորոջ գործած գուլպաներ: Իսկ այն տղաները, որոնք այստեղ դիտում էին հարսին, վերջինիս կողմից ստանում էին *չիռ ու չա-սիչ*:

Հարսի դիմավորումը փեսայի հոր տան բակում ուղեկցվում էր մեծամարտի արարողությամբ: Փեսայի կողմի երիտասարդները և հարսնաձը դիմավորողները քաժանվում էին երկու հակամարտ խմբի և փեսայի ծնողներին մարտի հրավիրում՝ կոխ բռնել տալով: Փեսայի մորը ձգտում էին հաղթող դարձնել, իսկ հարսանքավորների զլխներին մրգեր ու քաղցրավենիք էին շաղ տալիս³⁰: Մակարները վերը նկարագրված «ճակատամարտից» հետո փեսային նստեցնում էին հարսնաձիում (այդ ձին փեսայի հոր տնից էր տարվում հարսին բերելու), երգելով ու աղմուկով պատեցնում գյուղի շուրջը, որից հետո ուղեկցում քավորի տուն, որտեղ նա հյուրընկալվում էր մինչև ուշ երեկու: Այսպես, որոշ վայրերում հարսին անմիջապես տանում էին փեսայի տուն, իսկ փեսային՝ քավորի տուն: Այդ առիթով քավորի տան բակում գառ էր մոտեցվում: Այդ միջոցին եթե հարսի «գինվորներից» մեկին հաջողվեր «գողանալ» փեսայի կոշիկներից մեկը և հասցնել հարսին, Երանից կստանար մրգեղեն մվեր, իսկ եթե փեսայի կտրիճներից մեկին հաջողվեր «գողանալ» հարսի կոշիկներից մեկը և հասցնել փեսային, քավորից կստանար նույնպիսի մվեր³¹:

²⁹ Հայնիում և շրջակա գյուղերում հարսնաձը և դիմավորողները բռնում լին շուրջայար (կոմրնար), երկու մասի բաժանվելով, երգում էին կաղապիքներ, ինչպես, օրինակ՝

Չի՞ իգի, չի՞ իգի (նմ գար),

Ոչխար չառնի՞մ չի՞ իգի

Երկրորդ խումբը պատասխանում էր.

Մքն ի գաս, մքն ի գաս (պիտի գաս)

Պապոխ, փթսխիս մքն ի գաս:

Երգը ուղեկցվում էր իսրս ու փնսի ուրբերի տակ ոչխարը մոթելով (տն՝ Բ. Ժամկոչյան, Հայնի, Լք 70):

³⁰ ՏՆՆ ԴԱՆ, տ. 2, էք 204:

³¹ ՏՆՆ ԴԱՆ, տ. 13, էք 26-27:

նստելու, ուտելու³⁵:

Հարսնառի վերաբերյալ նյութերը ցույց են տալիս, որ Աղծնիցում, հատկապես Սասունի լեռնաշխարհում, հարսանեկամ ծիսակատարությունները պահպանել են մի կողմից հայրատեղային (պատրիիական) բնակվածության, մյուս կողմից՝ առանցմամբ ամուսնության սովորույթների վերապրուկներ:

Ազգագրագետ Ն. Սամուելյանը նկատել է, որ հայ հարսանեկամ արարողությունների մասնակից մակաները և առհասարակ հարսնառի զինված անդամները երբեմնի *հրոսակներն* էին, որոնք փեսացուի գլխավորությամբ կազմակերպում էին աղջկա առանգումը³⁶:

Քանի որ մակաները Սասունում մնում էին փեսայի հետ, նրանց դերը լիովին ստանձնում էին հարսնառի զինված կորիճները, որոնք, սակայն, աղջկա գլուխը մեկնելիս զենքերը չէին գործադրում, որովհետև դրանք խորհրդանշական կիրառություն ունեին: Միայն զենքերի արտաքին փայլը ու հրացանաձգությունն էր, որ իր վրա էր հրավիրում աղջկա համայնքի ուշադրությունը³⁷:

Սասնա այս հարսնառի բնույթը երկակի էր: Այն գլխավորողը ոչ թե փեսացուն էր, այլ վերջինիս հայրը կամ հորեղբայրը, որն, իր հերթին, նույնպես երկդիմի անձնավորություն էր: Ըստ իս, իբրև տղայի համար հարսնացու բերող հայրը երբեմնի առանգիչների խորհրդանշալուստաբեր էր: Բայց նա նաև պատգամախոսությամբ հարս բերող անձնավորություն էր: Ծիսական այս սովորույթների մեջ կա խոր անցյալի այլ շերտ. հարսնառի անդամները և՛ առանգիչներ են, և՛ միաժամանակ հարսնացուի բանակը՝ փեսացուի բանակի դեմ կռիվ մղելու նպատակով: Եվ ահա, այդ «բանակը» հարսնառի վերադարձին իրոք կատաղի կռիվ է մղում փեսացուի «բանակի» դեմ: Ուրեմն՝ ո՞վ է այս հարսնացուն, ինչո՞ւ հարսնետրոսներ հանկարծ դարձան նրա բանակի զինվորները, ի՞նչ էր *քեռ* կոչվածը, որը հարսի կողմից պիտի գրավվեր: Ո՞վ էր այս փեսացուն, որին *ձեռք տալով*՝ հարսնացուի բանակը փառք ու պատիվ պիտի բերեր հարսին: Պարզ է, որ այստեղ գործ ունենք ամուսնության բոլորովին այլ մի ձևի հետ: Այսինքն՝ ծեսը հայրատեղային բնակվածության երևույթի հետ պահպանել է մայրական տոհմից աղջկան հայրիրավական տոհմում հարսնացնելու հնագույն սովորույթի անցումային ժամանակի հակասությունները: Իսկ գրավվող բերդն, ամենայն հավանականությամբ, խորհրդանշում է հայրիրավական տոհմը, որից աղջիկը ետ է պահանջում իր բռնադատված իրավունքը:

³⁵ Տե՛ս ԴԱՆ, Գ. 13, էջ 114:

³⁶ Ն. Սամուելյան, Նշխ. աշխ., էջ 102:

³⁷ Նկատենք, որ Սասունի հարևան Վասպուրական գավառում հարսնառի կրթիճները զինվում էին գույք մահակներով: Դրանցից մեկը ծառայում էր իբրև հարվածող գույք, մյուսը՝ իբրև վանան, երկուսն էլ խորհրդանշալու գնեթեր էին: Երբ հարսնառի այդպես զինված հասնում էր աղջկա գլուխը, վերջինիս ցանկերը նույն գնեթերով դիմագրավում և կռիվ էին բռնկում եկողների հեղ: Կապույտակոխվել տեսնում էր մոտ մեկ ժամ (Վ. Թղոյան, Հայ մոլորդական խաղեր, հ. 1, 1963, էջ 251-252): Սա աղղեն լիակատար կռիվ էր հանուն աղջկա առանգման:

ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՏ

Հայ գրականության ամբիոնի հայցորդ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՄԱՍԻՆ

1887-ից Ռափայել Պատկանյանը հուշեր է գրել Մոսկվայի Լազարյան ճեմարանում ուսանելու տարիների իր ուսուցչի՝ պրոֆեսոր Մկրտիչ Էմինի մասին¹։ Ռափայել Պատկանյանն այդ հուշերը գրել է, երբ արդեն հիսուսյոթ տարեկան էր։ Այս հուշերում նա տալիս է իր հետմտածությունները իր գնահատականներով և տալիս մանկավարժ, գիտնական ու ազգային գործիչների հետոյից իր գնահատականներ և տալիս մանկավարժ, գիտնական ու ազգային գործիչների հետոյից իր հետմտածությունները՝ «Մանկական հիշողություններ պր. Մ. Էմինի մասին»։ Հուշերի խորագրի տակ կա հղում՝ «Նվեր քարեկամական Գևորգ Քանանյանին»։

Ռափայել Պատկանյանն իր հուշերն սկսում է 1886-ին Մկրտիչ Էմինի 50-ամյա գիտական և մանկավարժական գործունեության և ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանի հիշատակումով, որն, անշուշտ, նորովի կարևորեց մեծ հայագետի դերը հայագիտության և գիտնականների մի ողջ սերունդի պատրաստելու գործում։ Ինչպես գրում է Պատկանյանը. «Այդ հանդիսության ժամանակ նրա գործունեության, մարդկային հատկանիշների, գիտական նվաճումների մասին խոսեցին այնպիսի մարդիկ, որոնք զանազան ազգերու մտավոր հառաջադիմության մի-մի պարագայում են ճանաչված»։ Ռափայել Պատկանյանը համեստորեն խոստովանում է, թե այդպիսի մարդկանց գնահատականներից հետո, իհարկե, իր հուշերը «ծաղրաշարժ են», բայց և այնպես ինքը ցանկանում է Մկրտիչ Էմինին տրված գնահատականների զանախարանում իր լույսն ածել, թեպետ «առաջվանն ասում եմ, որ այս իմ կատարածը Մկրտիչ Էմինի գլխին զարդարող դասից պակաս մի տերևիկով անգամ չի ճոխացնիլ»²։

Ռափայել Պատկանյանն իր հուշերի սկզբում հիշում է հորը՝ Գաբրիել Պատկանյանին, ով շուրջ 30 տարի իր ուժերի ներածին չափով առաջ է մղել Նոր Նախիջևանի մտավոր կյանքը. «Մի տեսակ բարոյական արեգակ էր, որ յուր շուրջը սփռում էր լույս և ճշմարտություն»³։ Հայրն արդեն իրեն ոգևորել էր, թե Մոսկվա գնալու դեպքում նա ունենալու է այնպիսի հռչակավոր ուսուցիչ, ինչպիսին Մկրտիչ Էմինն էր։ Եվ գրողը իր նրախաղաղությունը է հայտնում հորը, որն իրեն մղել է խոմարհվել նման մեծությունների առջև, որովհե-

¹ Տե՛ս Մկրտիչ Էմինի երկասիրությունները հայոց լեզվի, գրականության և պատմության մասին (1840-1855 թթ.), հայկագրանի մի պատկերով և կենսագրական կտրվածով, Մոսկվա, 1898, էջ 201-212։ Այս հուշերի մասին հիշատակումներ կան Մ. Սաղյանի «Ռափայել Պատկանյան, կյանքը և գործը» մենագրության մեջ (Երևան, 1980), ինչպես նաև Ստ. Զուլիյանի «Ռափայել Պատկանյան» առաջարան-հավաքածու (Երևան-Ռափայել Պատկանյան, Երևան, 1980, էջ 4)։

² Մկրտիչ Էմինի երկասիրությունները..., էջ 202։

³ Նույն տեղում։

տև «այս օրս մեր հայ պատանեկության և երիտասարդության սրտերեն թոլորովին անհետացած է այդ»⁴:

Ռափայել Պատկանյանը թվարկում է հայ և օտար այն գրողների անունները, որոնք նրա մանկության ու պատանեկության օրերի գրական ուղեկիցներն էին՝ Եղիշեն, Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Ղազար Փարպեցին, Լեոնտոսը, Տուրգենևը, Գոգոլը, Ժամ-Ժակ Ռուսոն, Բեռնարդեն դը-Սեն-Պիեռը, Մոլիերը, Շեքսպիրը, Շիլլերը և մի շարք հեղինակներ, որոնց գաղափարներով ներշնչված է նա մտել Մոսկվայի Լազարյան ճեմարան, ուր սովորել է 1843-1849 թթ.:

Ռափայել Պատկանյանը հիշեցնում է, որ ինքը չի գրելու իր ուսուցչի վարքը⁵, որովհետև ինքը չուի հմտություն՝ մանրամասնելու Էմիլի կյանքի պատմությունը:

Պատկանյանը խոսում է իր ուսուցչի մանկավարժական հմտությունների մասին: Էմիլը դասարան մտնում էր հինգ թռպե առաջ և յոտու էր ցայիս հինգ թռպե ուշ, սակայն իրենք թոլորովին չէին ձանձրացնում դասերի երկարատևությունն և ոչ էլ հոգնում էին նրա պատմածները լսելուց: Էմիլը ուներ մի մանկավարժական գաղտնիք, որը միայն իրեն էր հայտնի, որով նա շատ հետաքրքիր էր դարձնում իր դասը: Մանկավարժության մեջ ընդունված է, որ դասը բաժանվում է երկու հավասար կեսի, առաջին կեսը հին դասի հարցում, երկրորդը՝ նոր դասի մատուցում: Էմիլի մոտ դասն այդպես չէր անցնում: Նա աշակերտների հարցմանը տրամադրում էր հազիվ 1/4 ժամ, իսկ մնացած մասն ինքն էր բացատրում հազար ու մի օրինակներով, նուրբ մանրամասներով, մեկնություններով: Այդ պատմությունները աշակերտները միանգամից «կուլ էին տալիս»: Դրանք շարժում էին սովորողի երևակայությունը և օրերով ու շաբաթներով քննարկման առարկա դառնում: Պատկանյանը հիշում է, թե ինչպես էր Էմիլը քացատրում Աստվածաշունչը, չորս Ավետարանները: Ամսոհանայի է նրա համար ողջ ուսման ընթացքը, հատկապես գրաքարի ուսուցումը: Հինգերորդ և վեցերորդ դասարաններում այնքան էր հետաքրքիր գրաքարի մեջ, որ առանց բառարանների կարդում էր Եղիշեն, Խորենացի, Փավստոս, Հոմերոսի «Իլիականը», Միլտոնի «Դրախտ կորուսյալը» և ուրիշ հեղինակների ընտիր թարգմանությունները: Նա չի մոռանում, թե ինչպես իրենց ուսուցիչը առաջին անգամ կարդաց Ալիշանի «Պլպուլ Ավարայրի» և նրա մյուս գեղեցիկ քերթվածները՝ դրանով իր աշակերտների մեջ սեր առաջացնելով դեպի ժողովրդական բանաստեղծությունը:

Ռ. Պատկանյանի կարծիքով՝ այն վեց տարիները, որոնք իրենց համար երանելի էին, գուցե նաև իրենց ուսուցչի մանկավարժական գործունեության համար եղել են ամենագեղեցիկ ժամանակամիջոցը, որովհետև «Չեմ կարող ասել, որ այր. Էմիլի այն միջոցի աշակերտքս մեր Մայր Հայաստանի համար չնաշխարհիկ էականը հանդիսացանք, ո՛չ, բայց

⁴ Նույն տեղում, 19 203:

⁵ Հուշագրության այս հատվածը հիշեցնում է Նորյունի «Վարդ Մաքրոցի» նրկի ինքնյալ մասը. «Զասրանացեան Ազգիկն և զՀայաստան աշխարհիկն գաստուածապարզն ցրոյն. ևթ. կր և յորում ժամանակի մատակարարեցաւ և որպիսի տրամը այնպիսի նորոգապարտ աստուածնդն շերտն երևեցաւ և վասն նորին յուսառը վարդապետութեան և իրնշարակարտ կրօնիցն առաքիլութեան զմարտ ամենով յիշատակարանս տառնիծն մատնեալն ծաղկեցոյցանկ և միջն դեռ անդէն ի խորհրդանոցի մարգս վասն յոր արկաննոյ միայնագործ իողայի...» (յրև. Նորյուն, Վարդ Մաքրոցի, Երևան, 1981, 19 70):

և առանց մի հիմնավոր պատճառի չէր վատաբանում ո՛չ հայ վարժապետներին, ո՛չ հայ քահանաներին և վարդապետներին¹⁰։ Էմինը իր աշակերտների մեջ ներարկել է մի կարևոր հատկություն. հարգել ու պատվել ամեն ինչ, որ իր վրա կրում էր հայի ու հայության անունը։ Դրանք էին՝ *հայ լեզու, հայ գրականություն, հայ մատենագիր, Էջմիածնա Աթոռ, վեհափառ Կաթողիկոս, Մխիթարյան Ուխտ*¹¹։

Ազգային նվիրումի կողքին, սակայն, Էմինը երբեք ու երբեք չի ցուցաբերել օտարատեցության թեթև մշտյլ անգամ։ Ընդհակառակը, մա սիրով ծանոթացնում էր իր աշակերտներին օտարազգի մշտնավոր գրողների երկերին՝ մրանց մեջ գրական բարձր ճաշակ ձևավորելու համար. «Եվ այդ իսկ էր պատճառը, որ պր. Էմինի աշակերտների մեջ բավականին շատ թվով բանաստեղծական ոգով և ճաշակով երիտասարդներ երևան եկան, ինչպես Ասկարյանը, Փափազյանը, Միրիմանյանը («Հայոց աղջիկներ» ձեր հոգում մատաղ»), Դոդոխյանը («Ծիծեռնակ»), Շահագիզյանը և ուրիշներ»։ Ռ. Պատկանյանը խոսում է իր ուսուցչի մեկ ուրիշ հազվագյուտ հատկանիշի մասին։ Երբ վերջինս աշակերտների համար կարդում էր Փալատոս, Խորենացի, Փարպեցի և մեր մյուս մատենագիրներին, ունկնդիրները մոռանում էին, թե գրքից կարդացվող հատվածների դեպքերը կատարվել են վաղմջական ժամանակներում։ Հազար տարի առաջ ապրած մախնիները երևում էին որպես իրենց արյունակից հարազատներ. «Կարճ՝ պր. Էմինը դարձնում էր մամոռտած, փոշիոտած հայոց պատմությունը մեր հայրերից մեզ թողած հիշատակ և մեզ ինքներուս՝ հարազատ ժառանգորդ Հայաստանին... Հուսամ, որ պատմաբանի և մանավանդ ազգային *պատմաբանի հանճարը* երբեք չէ կարող դորանից վեր սավառնել, և Էմինն ուներ այդ արգասավոր *հանճարը*»¹²։

Աշակերտները, տեսնելով հայոց մատենագիրների երկերում առօրյա կյանքի և կենցաղի նկարագրությունների պակասը, իրենց ուսուցչից ուզում էին իմանալ, թե արդյոք հայոց մախնիներն ունեցե՞լ են տոնախմբություններ, Հոմերոսի, Օրփեոսի մամ երգիչներ, նվագարաններ։ Ուսուցիչն անպատասխան չէր թողնում այդ հարցումները, բայց գուցե հենց այդ հարցումներն էլ մրան մղեցին դեպի «Վեպքի խորհուրդը, որով քանի մի տարի հետո մորա անունը հուշակվեցավ եվրոպայի գիտնականաց կաճառումն»¹³։

¹⁰ «Փյուվի-ազգասեր» արդասպարությունն առկա է Ռափայել Պատկանյանի «Հայ և հայություն» բանաստեղծության մեջ։

Ո՛վ է հայր. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,

եվ կամ՝ որի մականունը հանգում է *յան* մասնիկով,

Որ ուրում է ամենայն օր ճաշին *տրամա ու փրափ*,

Կամ պարծանք միշտ հագնում է հայի զղակ ու հայալ։

(Տե՛ս Ռ. Պատկանյան, Երկեր, էջ 37)։

¹¹ Մկրտիչ Էմինի երկասիրությունները... էջ 209-210։

¹² Նույն տեղում, էջ 210։

¹³ Նույն տեղում, էջ 211։ Խոսքը Էմինի «ՎԱԿՔ հեռյն Հայաստանի» աշխատության մասին է, որ զբարայրով լույս տեսավ Սոսկվայում, 1850-ին, սրան հետևեց ռուսերեն լեզվով լույս տեսած մի նոր աշխատություն՝ «Монсей Хоревский и древний эпос армянский, исследование Н. Эмина, написанный по случаю V Археологического съезда в Тифлисе, Москва, 1881»։ Մ. Էմինի այս գիրքը ռուսերենից հայերեն է թարգմանել խաչատրոս Հովհաննիսյանը (տե՛ս Մ. Էմին, Մովսես Խորենացի և հին հայկական վկայ., Թիֆլիզ, 1877)։ Այս երկու գրքերն էլ վերստին

ԿԱՄՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՆԳԱՍ Պատմության ինստիտուտ

ՆԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻԴԱՅԱԿԱՆ ԸՄՐԺՈՒՄԸ

19-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին օսմանյան բռնակալության դեմ Արևմտյան Հայաստանում ծավալվեց դիմադրական շարժում՝ ֆիդայական կամ հայդուկային անունով: Չնայած շարժման հիմնական ուժը կազմում էր արևմտահայ գյուղացիությունը, սակայն հասարակության տարբեր խավերի անձինք ևս զինվորագրվեցին հայրենիքի համար մղվող պայքարին, այդ թվում և՛ բազմաթիվ հոգևորականներ:

Հայ հոգևորականությունը չէր կարող անմասն մնալ արևմտահայության հերոսական պայքարից: Ավելին, նրանցից շատերը ստանձնեցին առաջնորդի և կազմակերպչի դժվարագույն դերը: Կարծում ենք, սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ շրջանի հոգևոր գործիչների գերակշիռ մասը անցել էր մեծագույն հայրենասեր խրիմյան Հայրիկի դարանոցով. «Ինչ որ կարելի է ըսել, այն բացարձակ ճշմարտությունն է, թե խրիմեան Վարագեն և Ս. Կարապետի բարձունքներէն եղաւ Զարթօնքի առաջին բանքերը Հայաստանի մէջ և արթնցուց Տարօնի և Վասպուրականի Հայութիւնը, իրաւունքի պաշտպանութեան և ազատութեան մղելով զայն»¹:

Խրիմյանի «երկաթե շերտի» կոչը շարունակեցին տարածել իր սաները: Հայ հոգևորականները մեծ ավանդ ունեցան հայդուկային պայքարում: Կրելով հոգևորականի վեղարը, նրանք զադտնի և քացահայտ մասնակցում էին հայդուկային կոնվենտին, պատսպարում ֆիդայիներին, մասնակցում արշավանքներին, կազմակերպում էին զենքի փոխադրում, վանքերն ու եկեղեցիները դարձնում զենքի փոխադրման տարանցիկ կետեր ու ամրոցներ:

Բեռլինի վեհաժողովից ձեռնուցանյալ վերադարձած և Եվրոպայի հանդեպ հույսը կորցրած Հայրիկը այլ եղբ չէր տեսնում, քան ժողովրդին ազատագրական պայքարի կոչ անել՝ զենք վերցնել, ստրկական ոգին խորտակել և ազատ կյանքով ապրել: Ինչպես գրում է Է. Կոստանդյանը, «1880-ականներին սկսված ազգային-ազատագրական պայքարի վերելքի մեջ իր մեծ ավանդն ունեւր Մկրտիչ Խրիմյանը, որը ոչ միայն Վասպուրականի հոգևոր կյանքի ղեկավարն էր, այլև արևմտահայ շատ վայրերի հայության խորհրդատուն և կապող օղակը»²:

Նրա և իր սաների կողմից Արևմտահայ աշխարհի տարբեր վայրերում կայծեր էին բորբոքվում, որոնցից շուտով բոցեր էին բռնկվելու: «Խրիմեան Հայրիկի ազատատենչ գաղափարները տարածուած էին Սասնոյ շրջաններէն ներս, բազմաթիւ վանահայրերու

¹ Կարօ Սասունի, Պատմություն Տարօնի աշխարհի, Պլյուս, 1956, էջ 399:

² Է. Կոստանդյան, Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000 թ., էջ

միջոցառում ... որոնք դարձած էին Ս. Կարապետի, Ս. Յովհաննու, Առաքելոց վանքի, Ս. Աղ-
բերիկի եւ Մատնավանքի վանահայրեր ... աղօթքին հետ՝ զաղթօնքի ազատութեան
տենչեր կը տարածէին կիսանկախ այս շրջաններուն մէջ»³,- գրում է Կարո Սասունցին:

Ժողովրդական առաջին ընդվզումները բռնկվեցին Տարոն-Սասունի գյուղերում, որ-
տեղ թուրքական իշխանությունները և քուրդ աշիրթները կրկնակի հարկերի ու քոճութ-
յունների ճնշման տակ էին դրել ժողովրդին: Այլևս շեղքը հասել էր ոսկորին, և համբերութ-
յան բաժակը լցվել էր: Տեր Օհան քահանան ժողովրդին խրատներ էր տալիս. «Բնաւ եր-
բեռ մէկէ մը մի վախճաք»,- և իր համար մշանաբան էր դարձրել՝ «Զօռ պիւլքտէ (ոյժը
բազկին մէջ է)»⁴ բառերը: Իսկ Դավիթ վարդապետը, դիմելով ժողովրդին, հորդորում էր.
«...եթէ պաշտպանէք կրօնը, ազգութիւն և հայրենիք, քաջ կ'ըլլաք ... եթէ դասայիք ըլ-
լաք, բարբարոսներ կուգան ոտնակոխ կ'ընեն ձեր հայրենիքը, կը կործանեն ձեր եկեղե-
ցիները, կը ջնջեն ձեր ազգայնությունն ու կրօնը, որոնք իրարու հետ սերտ կապակցու-
թիւն ունին: ... ազգ մը պահպանող այս գլխաւոր պայմանները զենքով կարելի է պաշտ-
պանել, ուրեմն տէր եղէք ձեր զէնքին ... ամենահաւատարիմ պաշտպանը զէնքն է: ...
եթէ ձեզ կողոպտել ուզեն, դուք կողոպտեցէք, եթէ ձեզ սպաննել աշխատին, ճարպիկ
գտնուեցէք՝ դուք սպաննեցէք»⁵:

Նույն հայրենասիրական կոչն ու քարոզն էր անում Առաքելոց վանքի հայրենասեր
վանահայր Հովհաննես վարդապետը. «Այո՛, աչքի տեղ աչք, ակռայի տեղ՝ ակոռայ հանե-
լու է: Հայուն մոր անտառանը այս կը պատուիրէ մեզի: Որչափ հեզ ըլլանք, մեզ իբր եզ
կը գործածեն: Վա՛յ անոր, որ ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ՝ ստրուկի
կեանք կը վարէ»⁶:

Քահանա և հեղափոխական, հայդուկ, փոթորկալից կյանք, իսկապես որ տարօրինակ
է թվում, սակայն հայ զարթոնքի և ազատագրության ուժգին տենչը տապալեց դասային
շերտավորման պատմեքը, և բոլորը տարված ու արբեցած գերագույն զաղափարի վսեմ և
անխորտակելի շնչով, հրաժարվում էին անձնական ամեն վախելից ու զմում էին անծայր
քարավանի մման դեպի Հայ Ազատագրություն: Հայ ազատագրական պայքարի առաջին
սերնդի ներկայացուցիչներից էր Աղբակ գավառի Սորադեր գյուղում ծնված Տեր Վար-
դան Նալբանդյանը: Վարագում ուսում ստանալով Խրիմյանի վարժարանում և դաստիա-
րակվելով «Արծիվ Վասպուրականի» զաղափարներով՝ 1880 թ. ձեռնադրվում է քահանա:
Քանի որ գյուղը սահմանի վրա էր, ապա զենքի փոխադրության առումով շատ էր կա-
րևորվում: Հեղափոխականները և ֆիդայիները Երկիր անցնելիս հանգրվանում էին քա-
հանայի տանը, որը իշխանությունների աչքից չէր կարող վրիպել: Վերջիններս քրդերի
միջոցով փորձում են պատմել քահանային, բայց՝ ապարդյուն: Զոհեր տալով, քահանայի
տան վրա հարձակված քրդերը մահանջում են: Դրանից հետո ծայր է առնում հայաժանջ-
ների ու հետապնդումների շրթան հայրենասեր քահանայի նկատմամբ, որի արդյունքում
1893 թ. նա ստիպված է լինում անցնել Սալմաստ (Պարսկաստան):

³ Կ. Սասունի, Սաղերու Սլսանը (Գեղրգ Չառուշի կենսագրություն), Պետրոս, 1966, էջ 138:

⁴ Մեռցեղեան Սէճէթեան, Հրազնակիր քահանան եւ լեռնայն բարոյգիր, Կ. Պոլիս, 1910, էջ 47:

⁵ Լույս փնդը, էջ 54:

⁶ Սրբա՛ն Յ. երէցեան, Գեղրգ Չառուշ, Հալեպ, 1952, էջ 7:

1897 թ. Գա մասնակցում է խանութների արշավանքին և այդ պատճառով էլ հալածվում այս անգամ պարսկական իշխանությունների կողմից: 1897 թ. փախչում է Թավրիզ, որտեղից էլ ծալված, ջորեպանի հագուստով անցնում է Կովկաս: Հետագայում մասնակցում է Առաջին աշխարհամարտին, հայ կամավորական շարժմանը, իսկ 1918 թ., Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, գալիս է Երևան, որտեղից որդուն գրում է հետևյալ տողերը. «Որդի՛ս, մեր այսքան արիւն, տառապանք ու տանջանքից յետոյ, ահա աչքովս տեսայ մեր անկախութիւնը, մեր երազածը, որի համար այնքան տանջուցիցնք: Այժմ հանգիստ սրտով կարող եմ մեռնել»⁷: Ինչպես վկայում է Սարեյանը, «Հայդուկ-քահանան երբեք ձեռքից բաց չէր թողնում զենքը և Պատարագի ժամանակ անգամ ատրճանակը Աւետարանի հետ կողք-կողքի էր դնում»⁸:

Հայ հոգևորականության ամենակարկառուն դեմքերից մեկը, որն անմնացորդ նվիրվել է ֆիդայական շարժմանը, արևմտահայության պաշտպանության ու ազատագրության գործին, Մուշի Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան Վարդապետն էր (Վարդան Հակոբյան): Ինչպես նշում է է. Կոստանդյանը, «Լեզենդար ու առասպելական, անձնուրաց ու անձնագոհ այդ համեստ վեպարաւորը ասք էր դարձել դեռ իր կենդանութեան օրօք: Ոչնչով աչքի չընկնող, համեստ, պարզ կրօնաւորի հագուստով այդ մարդը առաջին հայեացքից թողնում էր մենակեաց վարդապետի տպաւորութիւն: Խրիմեանի ժամանակներից մինչև եղբրական 1915-ը նա եղել է Տարօնի եւ մասնաւորապէս Սասունի թուրք դէպքերի եւ իրադարձութիւնների վկան, ակտիւ մասնակիցը եւ ժողովրդի առաջնորդը օրհասական պահերին: Պատահական չէ, որ նրա յեղափոխական ծածկանուններն էին Հետու եւ Վկայ: Նրա ողջ գործունէութիւնը համապատասխանում է աստուածաշնչեան Հետուի՝ ժողովրդական առաջնորդին»⁹:

Վարդան Վարդապետը ամեն միջոցի, ամեն քայլի դիմում էր, որպեսզի հաջողեցնի ազատագրության գործը: «Եւ իրաւ, Վարդան Վարդապետ «նուէր» անուան տակ իր տըւած կաշառքներով կը «քողցնէր» աչքը թուր ամոնց, որոնք օգուտ կամ վնաս կարող էին հասցնել հայ ժողովուրդին եւ իրեն գերի կը դարձնէր զանոց: Լաւ ճանցնալով թուրքն ու քիւրտը, ան շարունակ կը կրկնէր. «Փամփուշտից, թոփ ու թֆանքից աւելի գօրեղ է դեղին, դեղին ոսկին: Տուր դու ինձ խալվարներով ոսկի, առանց կոռի ու դալմադալի հայոց թագաւոր իսկ հաստատեմ... Ապերախտներին, դաւաճաններին եւ ով որ դրամին չի ենթարկուի, պէտք է վերացնել մէջտեղից. այդպիսիներին էլ արճին ու երկաթ կամ սապոնած չուաններ պէտք է տալ», կ'ըսէր յաճախ: Իսկ հայ ժողովուրդը փարած էր անոր իբրեւ իր միակ ուժեղ պաշտպանին. անսահմանօրէն կը հաւատար անոր եւ կը սիրէր այդ տարօրինակ ու խորհրդաւոր վարդապետը»¹⁰, գրում է Ռուբենը: Իսկ երբ այդ միջոցը չէր գործում, նա դիմում էր ճարպիկ և ցուրբ դիվանագիտական հմարքներին, որոնց լավ էր տիրապետում: Մյուսը ահաբեկման մեթոդն էր, որը կիրառում էր թե՛ հայ մատնիչների և թե՛ թուրք ու քուրդ երևելի անձանց նկատմամբ:

⁷ «Դրոշակ», 1932, № 9-10, էջ 217:

⁸ Նույն տեղը, էջ 217:

⁹ Է. Կոստանդյան, Հայ հոգևորականության դերը Սասունի 1894 թ. ապստամբության մեջ, «Ազատամարտ», 1994, թիւ 49, դեկտեմբեր:

¹⁰ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Գ (3) համար, Թեհրան, 1982, էջ 131:

Մեծ է եղել Ռայ Ռոզևորտականության դերը այնպիսի օրհասական պահերին, ինչպիսիք էին Սասունի 1894 և 1904 թթ., Ջեյթունի 1895 թ. ինքնապաշտպանական կոիվները, 1901 թ. Առաքելոց վանքի կոիվը և այլն: 1894 թ. Սասունի հերոսական ինքնապաշտպանական մարտերին մեծապես աջակցել են Ա. Կարապետի վարդապետներ Սիմոնը, Ներսես Խարախանյանը, Առաքելոց վանքի փոխվանահայր Հովհաննես վարդապետ Մուրադյանը: Շուտով, երբ իշխանություններից հայտնի են դառնում Սիմոնի և Խարախանյանի հայրենասիրական ձգտումները, վերջիններս ձերբակալվում են: Եվ ահա Խարախանյանի բանտարկվելուց հետո, «թողնելով Կենցի Ռոզետոր առաջնորդի պաշտոնը՝ Ա. Կարապետ է շտապում Վարդան Յակոբեանը (Վարդան Վարդապետը – Կ. Ա.), որպեսզի թափուր չմնա վանքի վանահօր պաշտոնը»¹⁶:

Է. Կոստանդյանի վկայությամբ, Սասունի հերոսամարտին իրենց մասնակցությունն են բերել նաև տեղի քահանաները. «Պատմությունը խնամքով անթեղել է այդ հայրենասերների անունները, որոնք յաճախ խաչը փոխարինել են Ռաքացուկ եւ գեղքը ձեռքներից պայքարել են հաւատի, են հայրենիքի համար. Ալվառից գիւղի քահանայ Տէր Հասարաթ, Խասգիւղի յեղափոխական քահանայ Տէր Քերոբ, Խաշխալտուխից՝ Տէր Խաչատուր քահանայ Խաչատրեան, Գելիեզուզանից՝ Տէր Քաջ (նահատակուեց 1899-ին), Սեմալից՝ քաջ կոտոր Տէր Կարապետ, Տալվորիկից՝ Տէր Գաբրիէլ, Ընձքարից՝ Ս. Գեորգի վանահայր Տէր Խաչատուր, Բաւնքից՝ Վարդան Վարդապետի աջ բազուկը՝ ֆիդայի Ստեփան վարդապետը (ապստամբութեան պարտութիւնից յետոյ բարձրացաւ Անդոկ եւ այնտեղ էլ նահատակուեց), Ագոնք գիւղից՝ Մկրտիչ աւագ քահանայ Մուրադեանը»¹⁷:

Տեր Քաջը՝ Գելիեզուզան գյուղի քահանան, գյուղի երիտասարդությանը ուժ ու ոգի տվողն էր, իշխան Պետոյի հետ միասին. «Կեալիէ Կուզանէն ... քանի աւելի երիտասարդներու ... գլուխը կեցած էր Տէր - Քաջ քահանան... որ իսկապէս քաջ, կորովի եւ գիտակից երիտասարդ քահանայ մըն էր, Կեալիէ Կուզանի զինեալ ուժերու ոգին էր եւ իշխան Պետոյի կողքին՝ խանդավառող ուժը՝ այդ մեծ կեդրոնին մէջ»¹⁸, գրում է Կ. Սասունին: Բազում հերոսական կոիվների է մասնակցել Տեր Քաջ քահանան, և հերթական մարտերից մեկի ժամանակ էլ կնքել է իր մահկանացուն: Երբ մատնությամբ 1899 թ. թունավորվում են Աղբյուր Սեդրեն ու իր զինակիցները, քուրդ ավազակապետ Բշարե Խալիլը արշավում է Գելիեզուզանի վրա: Օստերի թվում ավազակներից դեմ է դուրս գալիս նաև անվախ քահանան: Ահա թե ինչ է պատմում այդ մասին Սասունին. «Տէր Քաջը, որ գիւղի (Գելիեզուզանի - Կ. Ա.) քահանան ու ընտիր մարտիկն էր, Ռաքացանը ձեռքից ցցուեցաւ յառաջացողներուն դէմ, որպէսզի արշաւը կասեցնէ, բայց ան ալ նահատակուեցաւ իրենց տան պատին տակ»¹⁹:

Ջեյթունի և Կիլիկիայի հայությանը պայքարը հայ ազատագրության անբաժանելի մասն են կազմում: Խոսքը վերաբերում է նաև Ջեյթունի Ռոզևորտականությանը: Կիսանկախ կյանքով ապրող լեռնական ժողովուրդը սահմանել էր հատուկ չափանիշներ Ռոզևորտական

¹⁶ Նույն տեղը, էջ 14:

¹⁷ Նույն տեղը, էջ 15:

¹⁸ Կ. Սասունի, Սարերու Ասյանը, Պէրթոք, 1966, էջ 129:

¹⁹ Նույն տեղը, էջ 283:

վանք գյուղում, որը Թալաս քաղաքից գտնվում էր մեկուկես ժամ հեռավորության վրա: 1871 թ. ստանալով վարդապետական աստիճան և «Թալսնի ըլլալով իր ձեռներեցությանը, քաջութիւնը եւ շինարար ոգին, կ'ընտրուի խարխլած Տերէվանքից վանահայր»²³:

Հայրենասեր վանահոր շնորհիվ կարճ միջոցում վանքը դարձավ «Չելլոների», ժիրայրի և հայդուկային մյուս գործիչների ապահով ապաստարաններից մեկը: Դանիել Վարդապետը շրջակա հայության համար սիրված դեմք էր, իր շինարար գործերով, մաքուր և անբասիր վարքով ու բարքով: 1891 թվականից կապեր է հաստատում Հնչակյան կուսակցության հետ, ապա անդամագրվում այս կուսակցությանը: Սկսում է կազմակերպել Մարզավանի հայ երիտասարդությանը: Նրա քաջությունների մասին պատմող շատ դեպքեր են արձանագրվել²⁴: Ալպոյանճյանը նրա մասին գրում է. «Իբր Յեղափոխական, Դանիել Վարդապետ կը ներկայանայ ամէնէն կատարեալ յեղափոխական նմոյշը: Քաջ, խիզախ, անձնուէր որչափ կարելի է երևակայել»²⁵:

Նա ամեն կերպ և ամեն միջոց օգտագործում էր երիտասարդությանը զինելու, հայ ֆիդայական խմբերին աջակցելու համար: Գործակցում էր ժիրայրի (Մարտիրոս Բոյաջյան՝ Ամմահ ժիրայր), Տիշլեկ Հովհաննեսի, Թորոսի, Կյուլպենկի և մյուս «Չելլոների» հետ: Վարդապետը իր արած գործերի և ժամանակի իրադարձությունների մասին մանրամասնել է հաղորդում իր «Հուշերում»: Պատմում է, թե ինչպես երկարատև մաքառումներից հետո, ողբերգական կերպով ձերբակալվում են «Չելլոները»՝ Կյուլպենկը, Փանոսը, Միրիջանը, Տիշլեկ Հովհաննեսը և 1893 թ. փետրվարի 17-ին՝ նաև Թորոս Ծառուկյանը: Ապա նկարագրում է, թե ինչպես են 80 բանտարկյալ հայերի տանում Գաղատիայի բանտ, որտեղ էլ մահվան են դատապարտում 17 հոգու, այդ թվում՝ «Չելլոներին», 15 տարվա բանտարկության՝ 6 մարդու, 10 տարվա արգելափակման՝ 8 հոգու, 7 տարվա՝ 10 հոգու²⁶:

Դանիել Վարդապետը թեև մահվան դատապարտվածների թվում էր, բայց խուսափում է դրանից՝ 8 տարվա՝ բերդարգելության փոխարինվելով (աքսորվում է Աֆրիկա, որտեղ սակայն մեկուկես տարուց ազատվում է), իսկ 5 «Չելլոները» 1893 թ. հուլիսի 18-ի գիշերը Գաղատիա քաղաքի՝ Թախտա Կալե կոչվող հրապարակում կախվում են: 1896-ից հետո, հեռանալով Երուսաղեմից, քսան երկար տարիներ նվիրվում է Ալեքսանդրիայի աղքատների օգնության գործին: Եվ ամա 1917 թ. հուլիսի 28-ին ավանդում է հոգին հայ հեղափոխության, Հայ Եկեղեցու ամենի այս զինվորը, ժողովրդի զավակը, որը ժողովրդի համար «աշխատեցաւ և զոհուեցաւ ամբողջ կէս դար»:

«Քաջաբազուկ հոգեւորականի մասին մեր խոսքը ցանկանում ենք եզրափակել Ալպոյանճյանի հետևյալ բառերով. «Ինք հուլիսն էր իրեն յանձնուած եկեղեցիին: Կոծեցը, ցեղը, ժողովուրդը պաշտպանելու պարտաւոր՝ թուրքին մէջ տեսած էր ցեղին և ժողովուրդին թշնամին՝ կեղեքողը: Պէտք էր փճացնել զայն՝ «ակն ընդ ական», ցեղը ազատել ստրկութենէ, ասոր համար կեղծիք, դաւ, սպանութիւն ամէն ինչ ներելի՝ մոյս իսկ անհրաժեշտ էր: Իր մաքուր հոգին բարդութիւններէ հեռու էր: Կեանքին համար ուղի մը գծած էր և անկից

²³ Սիբիլաթը, Թորոս Ծառուկյան, Փրայիդենս, էջ 41:

²⁴ Տե՛ս լույն տեղը, էջ 41-42:

²⁵ Ա. Ալպոյանճեան, Պարմութիւն Հայ Կենսաբիւլ, Գափիք, 1937, հ. Բ, էջ 1393:

²⁶ Տե՛ս Սիբիլաթը, Թորոս Ծառուկյան, Փրայիդենս, էջ 76-78:

³⁰ Նոյն տեղում, Լբ 49:

ՄՆԱԿՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բաևասիրական գիտությունների թեկնածու

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼՅԱՆԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ

(հայացք հին մարենագրությանը)

Նիկոլ Աղբալյանի ստեղծագործական կյանքում իր ծանրակշիռ բաժինն ունի հայագիտության մի շարք ոլորտներից վերաբերող գիտական ժառանգությունը, որը, ցավոք, համաժամանակների բերումով դուրս է մնացել գիտական մեկնաբանությունների շրջանակից: Հայոց լեզվի տարաբնույթ խնդիրների նորոպի արծարծումը, ստուգաբանական քննությունները, հայ ժողովրդի ծագմանն ու հին դպրությանն առնչվող նրա մոտեցումները այսօր էլ արդիական են իրենց համոզիչ պարզաբանումներով և գիտական ելակետերով:

Ն. Աղբալյանն ամցել է գիտական ուսումնառության հարուստ դպրոց, որն ուղղակիորեն անդրադարձել է նրա աշխարհայացքային դիրքորոշումների վրա: Եվրոպայում ուսանելու տարիներին հաղորդակցվում է գիտության և արվեստի նորագույն երևույթներին, ուսումնասիրում դրանք, ամբարում խոր, հիմնավոր գիտելիքներ: Նրա կողմից լուրջ ուշադրության են արժանանում 19-րդ դարի ոգին կազմող այնպիսի տեսություններ, ինչպիսիք էին Կանտի քննադատական փիլիսոփայությունը, միջնակետյան ռացիոնալիզմն ու իդեալիզմը, Լոկի և Հյումի տեսական ըմբռնումները, Ֆիխտեի սոցիալ-փիլիսոփայությունը, պրագմատիզմը, պոզիտիվիզմը, հոգեբանական մի շարք ուղղություններ:

Աղբալյանի գործերում մշված ուսմունքներից լուրաքանչյուրն իր արտացոլումն է գտել: Նա լայնորեն կիրառում է օգտագործում է դրանք որպես ելակետ՝ ինքնուրույն ճանապարհով, համադրման-քաղդատման մեթոդով, իր սկզբունքներին ու գաղափարներին, ճաշակին և ընկալումներին համապատասխան: Գիտական և հատկապես փիլիսոփայական ուսումնառությունը սկսում է Օգյուստ Կոնտի գրական-փիլիսոփայական երկերից, որը մի նոր աշխարհ է բացում նրա առաջ՝ գիտությունների համակարգման իր տեսությամբ. «Խիզախեցի մարդկային գիտութունն ընդգրկել՝ մեծ իմաստասերի կարգին հետևելով: Մտայն ուսողական և բնական գիտութենաց բաժիղների մէջ»¹, - խոստովանում է նա:

Հասարակագիտության հանդեպ Ն. Աղբալյանը մինչև վերջ պահեց իր ջերմ հետաքրքրությունը: Մոլի ընթերցող էր այդ գրականության և ծանոթ՝ նրա գլխավոր ուղղություններին ու դպրոցներին: Նրան ավելի հարազատ էր ֆրանսիացի փիլիսոփա, պոզիտիվիստ Էմիլ Դյուրկհեյմի դպրոցը, որի հետևորդներից էր ֆրանսիական հասարակագիտության մեծագույն դեմքերից մեկը՝ Լևի Բրյույլը: Է. Դյուրկհեյմի և Լ. Բրյույլի տեսությունները դարձան հիմնարար ատաղծ Աղբալյանի հայագիտական-քանասիրական պրպտումների համար: Վերջին տարիների աշխատանքների՝ «Բանասերի յուշագրի» և «Հայրենիք» ամսագրում հրատարակված լեզվաբանական վերլուծությունների մեջ ընդգծված կերպով երևում են նրա գիտական մոտեցումները արծարծված հարցերի առնչությամբ: Ազդեցությո-

¹ Ն. Աղբալյան, Ամրոցական երկեր, հր. 4, Պատմութիւն հայոց գրականութեան, Պլյուր, 1970, 19-10:

Աղբալայանի տեղական և մոլի ընթերցումները ձևավորում են գիտական մոտեցումներ, որոնք հայ իրականության մեջ դրսևորման մախադեպեր չունենին, իսկ լավագույն դեպքում՝ մոր-մոր ձևավորվում էին: Դրանք արտահայտվում են ինչպես նրա գրական-քննադատական, այնպես էլ գրապատմական երկերում: Այս տեսանկյունից ուշագրավ է «Պատմություն հայոց գրականության» աշխատության ստեղծման մախապատմությունը և մանավանդ այն սկզբունքները, որոնցով պիտի առաջնորդվեր Ն. Աղբալյանը՝ հիմք ունենալով ժամանակի նորագույն գիտա-փիլիսոփայական մոտեցումները խնդրի առնչությամբ: Նրան չէին բավարարում հայոց գրականության պատմությանը մվիրված երկերը՝ Հ. Գաթրոնյանից սկսած մինչև Մ. Արեշյան: Արեշյանը, Աղբալյանի կարծիքով, արտակարգ հմտություն ուներ իր նյութի սահմանում, ծանոթ էր բովանդակ գրականությանը, բայց նրան և մյուսներին գրականության պատմությունը գծելիս պակասում էին խորունկ և լայն հասարակագիտական հիմքերը: Աղբալյանը միակն էր մեր հայագետների շարքում, որ ժամանակի գիտա-փիլիսոփայական և սոցիոլոգիական առաջադեմ ուսմունքները կիրառում էր իր աշխատությունների մեջ: Եթե նա ավարտեր «Հայոց գրականության» պատմությունը», ապա այն, ամկասկած, պիտի լիներ եզակի երևույթ մեր հոգևոր մշակույթի մեջ՝ իր ցաղափարներով, մտքի ինքնատիպությամբ և մեթոդով: Այն շատ կողմերով պիտի լրացներ Արեշյանի համանուն աշխատությանը: Որպես կարևորագույն առանձնահատկություն

պետք է ընդգծել հասարակության էվոյուցիոն զարգացման միտումների արտահայտությունը գրականության մեջ, որ Հ. Տեմի «Անգլիական գրականության պատմության» և Ա. Պիպիմը «Ռուս գրականության պատմության» հիմքն է կազմում:

Աղբայանը մինչ այդ երկու մշակավոր երկերին ծանոթանալը արդեն իսկ ձևավորել էր իր պատկերացումները, ապագա գրականության պատմության ստեղծման մախաղարյուններն ու սկզբունքները, որոնք ուղղակիորեն առնչվում էին գրականության հիմնական խնդրի նկատմամբ նրա ունեցած հայացքներին: Գրականությունը, Աղբայանի տեսանկյունից, համագլխային խնդիրների լուծման կարևորագույն օղակներից է, ազգային ինքնատիպության պահպանման յուրօրինակ դրսևորում: Որքանով այն կնպաստի հասարակական, այս դեպքում՝ ազգային խնդիրների լուծմանը, համահունչ կլինի ժողովրդի ոգուն ու կենսակերպին, հոգեբանական կերտվածքին, կուլվածքի նրա իդեալի ուղիները, այնքանով շահեկան կլինի: Այս տեսանկյունից նրա հայացքների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում ազգային ոգին և գաղափարաբանությունը գրականության միջոցով պահպանելու և սերունդներին ավանդելու միտումը:

Հայ գրականության զարգացման տրամաբանության որոշակիացման մեջ Աղբայանը իր ժողովրդի ցոյի արծարծումը և նրա մպատակային ելակետն է մշտում: Այստեղից բխում է գրականության պատմական դերի ըմբռնումը: Գրողը ժողովրդի դարավոր ծառի մի ճյուղն է՝ ընդունակ տալու նրա մի որոշ հատկանիշը: Մասի և ամբողջի հարաբերության պատմական ընթացքը, իր մշտնջող և իրական դրսևորումներով, պայմանավորում է տվյալ ժողովրդի հոգեբանությունը գեղարվեստական ձևերով կերտող գրականության արժեքն ու որակը: Մի ընդգծում, սակայն, այստեղ պետք է կարևորել: Աղբայանը գրականության պատմական արժեքը, որ պայմանավորված էր նրա ժողովրդայնությամբ, էապես տարբերում է հանրային արժեքից. «Ոչ ամեն երկ, որ հանրային մեծ արժեք ունի, մահ իբր գրական-պատմական վաստակ մեծարժեք է», - այս բնորոշմամբ նա «գրականության ժողովրդայնություն» հասկացությունը զատում է դեմոկրատիզմից, որը, որքան էլ տեղին, բայց կարող է և ազգային չլինել: Միմյնդե, դատելով նրա գրականագիտական ժառանգության ոգուց, Աղբայանը ազգային գրականության զարգացման խնդիր ուներ, որի երկու թևերը՝ արևելյանն ու եվրոպականը, պիտի մեկտեղվեին՝ վերցնելով ամեն արժեքավորը, որ ստեղծել էր թե՛ եվրոպական, թե՛ Արևելքի գրական մշակույթը:

Այս ծրագիրը բնական շարունակությունն է հայ ժողովրդի ծագմանը վերաբերող նրա պատմական ուսումնասիրությունների: Աղբայանը առաջիններից մեկն էր, որ մեր ժողովրդի ծագման հարցը կապեց հնդեվրոպական և փոքրասիական տեղական ցեղերի ծուլման հետ: Էթնիկ բազմատարրությունը, բնականաբար, իր դրոշմը պիտի դներ մահ մշակույթի վրա: Արևելք-Արևմուտք քաղաքակրթությունների սահմանում Աղբայանը տեսնում էր իր հետավոր մախմիների թողած պատմամշակութային ժառանգության հետքերը և գրականության մեջ էլ այդ ներկայությունը համարում էր հասկանալի ու բնական: Իր լեզվաբանական աշխատություններում Աղբայանը բացահայտորեն առաջ է տանում այս տեսակետը՝ քերելով մի շարք փաստարկներ և ապացույցներով դրանց գիտական հավանականությունը: Սրանով պիտի բացատրել նրա ակնհայտ հետաքրքրությունը և որոշ գործնական քայլերը հիթիթների լեզվական և մշակութային ժառանգության ուսումնասիր-

նայ՝ պաշտպանեմք մեր կեանքի գնով»⁴:

Գրականության պատմության ստեղծման Աղբայրանի պատկերացումները ենթադրում են գրական մյուսի ամբողջական ուսումնասիրություն՝ արժեվորման և դասդասման նպատակով, համգամանք, որ բավականին հեռու էր բավարար համարվելուց և գիտական ուսումնասիրությունից բացի պահանջում էր նաև համապատասխան գրացուցակների կազմում: Համառու ու տքնաջան աշխատանք, որ վեր էր մեկ մարդու կարողության սահմաններից: Ն. Աղբայրանը 1902 թ., Պետերբուրգում եղած ժամանակ, ծեռնամուխ է լինում այս կարգի մատենագիտական աշխատանքի, որի մասին խանդավառությամբ գրում է Ավ. Խսահակյանին. «...կազմում եմ մեր պարբերական մատուլի միջոցի ցանկը և դրան զուգահեռ մի քանի ուրիշ ցանկեր. մի տեղ հաւաքում եմ այն քոլոր տեղեկությունները, որ կայ որևէ մշակակութիւն ունեցող անձի մասին մեր գրականութեան մէջ... մի այլ տեղ՝ որևէ գրքի մասին ինչ կայ գրած, մի ուրիշ տետրակում ցուցակագրում եմ որևէ հեղինակի գրածը առհասարակ...»⁵: Համգամանքների և ծավալի բերումով այս աշխատանքը մնում է անավարտ: Սակայն մասնակի ուսումնասիրությունները ավելի են ամրապնդում մեր համոզմունքը գրականության պատմության ստեղծման՝ իր որդեգրած մեթոդի առումով: Անկասկած, հայ բանավոր ստեղծագործությանը, սրբախոսական, և գրապատմական մյուսի՝ մեր անդրադարձները որոշակի միտման արտահայտություն են:

1930 թ. Ն. Աղբայրանի և Լ. Ծանոթի ջանքերով Բեյրութում հիմնվում է «Համազգային» հայ կրթական ճեմարանը: Հայ գրականության պատմության և գրաբարի դասավանդումը ստանձնում է Ն. Աղբայրանը:

Տասնհինգ տարի կանոնավոր ավանդում է հայ գրականության պատմությունը՝ հնագույն շրջաններից մինչև 19-րդ դարի 80-ական թվականները: Դասընթացը կազմում է գրականության պատմության սեփական դիրքորոշումները ի մի բերելով՝ մախապես տալով գրական պատմությունը, ապա այդ հենքի վրա՝ գրականության պատմությունը՝ գրական տեսակի զարգացման հաջորդական փուլերի ներկայացմամբ: Նրա դիտարկումները, փաստական, թվական տվյալները, ներկայացված երկերի շուրջ արված վերլուծությունները, բնագրային ուղղումներն ու բանասիրական դիտողությունները կազմում են տետրակի ավելի քան 2000 էջ: Բարեպատեն առիթով այս գրառումները ներկայացնում է որպես դասախոսություն՝ երկու հաջորդական տարիների ընթացքում ներկայացնելով հայ գրականության պատմությունը հնագույն շրջանից մինչև 7-րդ դար: Բարեբախտաբար, այս խիստ շահեկան դասախոսությունները իր ժամանակին տպագրվել են Լիբանանահայ մատուլում, իսկ 1951 թ. ամբողջացել մեկ գրքով՝ «Դասախոսություններ հայ մատենագրութեան մասին» վերնագրի ներքո ընդգրկելով հետևյալ խորագրերը. *Բանավոր ստեղծագործություն, Սրբախոսական գրականություն, Ազգաթանգեղոս, Փափստոս, Հայ գրերի գյուտը, Ոսկեդարի թարգմանական գրականությունը, Կորյուն, Եզնիկ, Կանոնական գրականություն, Ղազար Փարպեցի, Հունաբան դպրոց, Եղիշե, Զենոբ Գլակ, Հովհան Մամիկոնյան, Մովսես Խորենացի, Ծարականներ, Հովհան Մայրազոմեցի, Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի*: Եթե այս ցանկի սկզբում ավելացնենք նաև դեռևս 1927 թ. «Հայրենիք» ամսագրում տպա-

⁴ Ն. Մորյախան, Հայ մշակույթի մասին, «Ազդարար», Պէյրոս, 1946, թ. 213:

⁵ ԳԱԹ, Աղբայրան ֆոնդ, ինքնագիր, թ. 2638:

գրած «Գողթան երգերի մասին» շարքը, ասիա կուրվագծվի այն շրջան, որի ճաշորդական փուլերի մեթոդիկ վերլուծությամբ Աղբալյանը կառուցում է հայոց գրականության պատմությունը: Իհարկե, այն խորապես հետու է գրականության «լավ» պատմության՝ նրա իդեալի մարմնացումից, բայց հստակ պատկերացում է տալիս որակական այն չափանիշների մասին, որոնց արդեն անդրադարձանք:

Այս շարքի անցակետի մասն են կազմում նրա «Ընդհանուր հայեացք հայոց գրականության վրա» և «Ե դարու գրական ըմբռնումը» հոդվածները, որոնք թեև ավելի վաղ շրջանի աշխատանքներ են (առաջինը՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, երկրորդը՝ «Հայրենիք», Բոստոն, 1938), սակայն տալիս են նրա տեսական ըմբռնումների առավել որոշակի պատկերը քննարկվող հարցի առնչությամբ: Այս առումով արժեքավոր է հատկապես «Ե դարու գրական ըմբռնումը», ուր քննական-վերլուծական եղանակներով հեղինակը տալիս է մի ամբողջ դարաշրջանի ըմբռնումների հիմնական ուղղությունները, որն իր պատմա-գեղարվեստական մարմնավորումն է տալիս գրականության միջոցով:

Հարազատ մնալով իր որդեգրած գրական մեթոդին՝ Աղբալյանը հայ հին դարության խնդիրներին անդրադառնալուց առաջ կարևորում է պատմական տվյալ շրջանին բնորոշ հասարակական-քաղաքական միջավայրը և որպես դրա արտահայտություն՝ հոգեբանական այն դրսևորումները, որոնք այս կամ այն կերպ իրենց արտահայտությունն են գտնում առանձին մատենագիրների երկերում: Ըստ էության, Հ. Տեմի եռաթև բանաձևի՝ կենսագրություն-ստեղծագործություն-միջավայր, կիրառմամբ Աղբալյանը ստեղծում է հայ հին գրականության պատմության իր տարբերակի նախատիպը՝ այս հենքի վրա հիմնական շեշտը դնելով 5-րդ դարին բնորոշ տրամադրությունների և հոգեբանական մոտեցումների վրա: Եվ այսպես, ի՞նչ բնութագրական կողմերով է առանձնանում 5-րդ դարի մատենագրությունը և որո՞նք են նրա հիմնական ուղղությունները: Աղբալյանի տեսանկյունից բնորոշ հատկանիշը «ծաղկեցումի ոճն» է, որ սկիզբ է առնում Կորյունից:

Կորյունի այս երկի մասին Աղբալյանը գրում է, որ առաջինի և սրբակրոն վարքի երկրավոր վարձատրությունն, այսպիսով, գովքն է, «մատենապատում երկնաբերձ պանծացումը»: Սա է Կորյունի գրական ըմբռնումը: Գրականության նպատակը գործնական է. պետք է գրել գովերգելու համար բարի գործն ու առաքինի մարդուն: Իբրև գովք ու դրվատանք այս ոճը արևելյան է՝ պարսկական, իբրև կանոն և օրինակ՝ բովանդակությամբ հայ-քրիստոնեական: Դասական շրջանի գրական չափանիշն է սա, որ զալիս է նախորդ դարից: Այդպես «ծաղկեցուցեալ» է Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքը Ազաթանգեղոսի կողմից: Փավստոսը ձերբողում է Վրթանեսի և Ներսես Մեծի, Վասակ, Մուշեղ և Մանվել Մամիկոնյանների կյանքը: Այս ոճի էական հատկանիշը իրական չափերի խախտումն է ու մեծացումը: Բոլորն է այդ ոճը ոչ միայն գովեստի, այլև պարսավի մեջ: Այդպես է հեթանոս միջավայրը Ազաթանգեղոսի մոտ, ուր թագավորը վերածվում է վալդի վարագի, այդպես են Մեհրուժանն ու Պապը Փավստոսի պատմության մեջ:

Պարթևական տիրապետությունը իր հետ բերել էր արևելյան ոճ: Քրիստոնեությունը մի անջրպետ ստեղծեց Հայաստանի և Պարսկաստանի միջև: Սակայն արևելյան հին ճաշակի և ոճի անհետացման համար դեռևս ժամանակ էր պետք: Պետք էր հայ արքունիքի քայքայումը և հումական մշակույթի զորավոր ազդեցությունը, որ «ծաղկեցումի» արևելյան

ըմբռնումը տեղի տար հունական չափազգաց ճաշակի առջև: Ազգային բարձր գիտակցության ոգին էր, որ սնունդ էր տալիս ծաղկեցումի ոճին:

Կորյունը արքայական Հայաստանի ծնունդն էր, և բովանդակ հայոց ազգի զգացումն է խոսում նրա մեջ: Ազգային գիտակցության այս հզոր թռիչքն է, որ խախտում է իրականության սահմանը: Պատահական չէ, որ Աղբալյանը Կորյունին համարում է հայ ազգայնական մտայնության հիմնադիրը⁶: Գրական այս հոսանքը է՛լ ավելի զարգացում ապրեց գրերի գյուտից հետո, երբ թարգմանվեցին ասորական գրականության մոտիչները, և խորացավ ասորական ազդեցության չափը հայ մտավորական դասի վրա: Կորյունն այդ սերնդին էր պատկանում: Այն եկավ ոչ թե հիմն ավերելու և փոխարինելու, այլ միայն զորացնելու և տարածելու: Այս դպրոցի սանն ու ոգու կրողն են խորենագից, Եղիշեն, 5-րդ դարի պատմագրությունն իր բովանդակ էությամբ: *Ազգային ինքնագիտակցության վերընթաց ոգին դառնում է թելադրող և առաջնորդ գրական ողջ շարժմանը, և դրան զուգընթաց գրականությունն ինքնին ձեռք է բերում որակական նոր հատկանիշներ, որ բնորոշում է մի ամբողջ դարաշրջանի մտայնությունն ու հոգևոր բովանդակությունը:*

Առանձին մատենագիրների աշխատանքները քննելիս Աղբալյանը կամա թե ակամա ակնարկում է այն առնչությունները, որոնք այս կամ այն կերպ ծառայում են հայ հին մատենագրության հիմնական խնդրի լուսաբանմանը: Գրականության պատմագիրն, անշուշտ, այս հարթության վրա չի անտեսում բանասիրական աշխատանքը, որ գրականության պատմության ստեղծման անբաժանելի մասն է: Աղբալյանը քաջածանոթ էր իր ժամանակի ո՛չ միայն հայ, այլև եվրոպական հայագիտությանը: Ն. Մառի, Յ. Մարկվարտի, Ֆ. Մակլերի, Լ. Գրեյի հայագիտական մի շարք աշխատությունների գրախոսությունները վկայությունն են նրա հիմնավոր գիտական պատրաստվածության: Գրաբարի խոր իմացությունը միշտ էր բնագրական, աղբյուրագիտական աշխատանքների համար, որ շատ դեպքերում հակադրվում էր գիտական ասպարեզում հաստատված տեսակետներին:

Բավարարված չէր հայագիտության ձեռքբերումներից և այդ հանգամանքը լուրջ խոչընդոտ էր համարում գրականության պատմության համար. «Գրականութեան պատմագրին պէտք են հաստատուն բնագիրներ և ստուգուած փաստեր, կենսագրական տեղեկութիւններ և բնագրական քննութիւններ, որ անոցն օգնութեամբ կարենայ կառուցանել իր պատմութեան շէնքը: Պայմաններու բերումով, հայոց բանասիրութիւնը յայնօրէն զարգացած չէ, որքան և մեծարժէք աշխատանք կատարուած է այդ մարզի մէջ վերջին հարիւր տարուան ընթացքին: Այնպէս որ յաճախ փոխանակ գրականութեան պատմութիւն ընելու՝ մարդ ստիպուած է բանասիրական քննութիւններու տաղտուկը հրամցնել ունեղիտներուն»⁷:

Թե բանասիրական աշխատանքը ինչ ծավալներ է ընդգրկում Ն. Աղբալյանի «Դասախօսութիւններ հայ մատենագրութեան մասին» աշխատության մեջ, ընթերցողը կարող է պատկերացում կազմել՝ կարդալով շուրջ 200 էջ կազմող քննական-վերլուծական աշխատանքը: Իհարկե, ոչ բոլոր մատենագիրներն են հայտնել հավասար խորությամբ ուսումնասիրված և ներկայացված: Այս հանգամանքը, մեր տեսանկյունից, պայմանավորված է

⁶ Տե՛ս Ն. Աղբալյան, «Կեցողութիւններ գրերի գիտելի շուրջ», «Եռագիր», Գափիլ, Բաքու, 1934, ք. 1:

⁷ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հր. 4, Պատմութիւն հայոց գրականութեան, էջ 384:

մյուսի՝ բանավոր մատուցված իրողությամբ: Աղբայրանը հանգամանալից մանրամասնե-
րով անդրադարձնում է գրապատմական այն խնդիրներին, որոնք նախ և առաջ ունեն ար-
դիական հնչելություն, հարազատ են գրականության պատմական դերի՝ իր ըմբռնումնե-
րին և ապա՝ կարևորվում են հայագիտության մեջ շրջանառվող վիճահարույց խնդիրների
սիրական ժառանգությամբ: Այս համատեքստում նա լուրջ, գիտական անդրադարձներ է անում բանա-
տկաչությամբ (Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Հ. Գաթրընյան, Մ. Օրմանյան և
ուրիշներ) և համեմատական վերլուծության արդյունքում հանգում նոր մոտեցումների և
տարբեր հիմնական դիրքերի լուծման դեռևս չմեկնաբանված ելակետերի:

Այս տեսանկյունից ուշագրավ են հասկանալի Ազատամեղեդուհի, Եզնիկ Կողբացուն,
Եղիշեհի, Ջենոր Գլակին, Մովսես Խորենացուն, Սեբեոսին նվիրված գլուխները, որոնք
գրապատմական առումով արժեքավոր են գիտական խնդիրների՝ երբեմն զարմանք հա-
րուցելու չափ նուրբ ու տարողունակ, գրական-պատմական մթնոլորտի խոր զգացողույթ-
յան ռացիոնալիզմով: Աղբայրանի գրական վաստակի մի սովոր հատված, այսպի-
սով, դեռևս կարոտ է հիմնարար ուսումնասիրության ու արժեքլորման: Մեր խնդրից դուրս
համարելով հարցի այդ կողմի վերլուծությունը՝ այդտեղեղեղ հույս ունենք, որ ոչ ոչ ապա-
գայում նրա բանասիրական հետազոտությունների այս ոլորտը կստանա իր լիարժեք որա-
կումը՝ որպես նոր խոսք հայագիտության մեջ:

ԼՈՒՍ ԴՈՒՈՒԽԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ

(Արխիվային նյութեր բանդման պատմությունից)

Ճարտարապետական հուշարձանները կարևոր դեր են կատարում քաղաքների կյանքում: Նրանք քաղաքների գեղարվեստական կերպարի անբաժանելի մասն են կազմում, նպաստում են քաղաքի ընդհանուր պատկերի ձևավորմանը, ստեղծում են որոշակի հոգևոր և գեղարվեստական միջավայր:

1924 թվականին Թամանյանը, Երևանի մոտ հատակագիծը կազմելիս, պատմական բոլոր հուշարձանները ներգրավել էր մոտ քաղաքաշինական կառույցներում, և պետք է կազմվեին հետաքրքիր ճարտարապետական համալիրներ: Բայց շուտով արտահայտվեցին ժամանակի հակասությունները: Մի կողմից միտում կար հուշարձանները պահպանել, իսկ մյուս կողմից՝ մրանց պահպանումը դրված էր հարցականի տակ, որովհետև, համաձայն տիրող գաղափարախոսության, մերժողական վերաբերմունք գոյություն ուներ դեպի կրոնական շինությունները: Խորհրդային Միության գրեթե բոլոր քաղաքներում վերացվում էին եկեղեցիները, իսկ լավագույն դեպքում՝ շրջափակվում տարբեր շինություններով: Ջերմ չմնացին նաև Երևանը և Լեռնականը (Գյումրի):

Գյումրիի կենտրոնական հրապարակի վերակառուցման ժամանակ Ս. Աստվածածին և Ս. Ամենափրկիչ եկեղեցիները «քղարկվեցին» դպրոցի և հանրախանութի շենքերով, որի պատճառով աղավաղվեց հրապարակի ավանդական գեղարվեստա-ճարտարապետական միջավայրը: Նույն այս վերաբերմունքի զոհը դարձան գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ եկեղեցիներ: Այժմ ընկնող եկեղեցիների քանդման հարցն սկսեց հիմնավորվել նաև քաղաքներում մոտ շինարարական աշխատանքներ սկսվելու պատրվակով: Երբաղխորհրդի գործկոմը որոշում ընդունեց «Երևան քաղաքի տերիտորիայում նյութական կուլտուրայի պատմական հուշարձանների առանձնացման գոտի հաստատելու մասին»: Ճիշտ, այդ որոշումն ինչ-որ չափով անտեսվեց, երբ հարց բարձրացվեց Պողոս-Պետրոս և Կաթողիկե եկեղեցիների քանդման մասին:

Կաթողիկե մուսնախ տիրող գաղափարախոսության զոհը դարձավ: Արդեն կատարված էր ամեներելի սխալը՝ Պողոս-Պետրոս եկեղեցու քանդումը, որի հետևանքով հայ մշակույթը կրեց անդառնալի կորուստներ: Ուստի Կաթողիկեի քանդման հարցում փորձում էին ավելի զգույշ մոտեցում ցուցաբերել՝ նկատի ունենալով Պողոս-Պետրոս եկեղեցու կորուստի ողբերգությունը: Այս հարցի շուրջ ժամանակին տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ և մտքերի փոխանակություններ: Այն տարբեր կարծիքների բախման և լայն բանավեճերի առիթ հանդիսացավ:

Կաթողիկե վերաշինվել է Եղիազար Կաթողիկոսի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցած մեծ երկրաշարժից հետո (1679 թ.), ավերված հիմ եկեղեցու տեղում, ինչպես քաղաքի մյուս եկեղեցիները: Պատմիչների վկայությամբ՝ եկեղեցին XIII դարից սկսած մի

քանի ամբաստանություններով է:

Կաթողիկեն Երևանի աչքի ընկնող եկեղեցիներից մեկն է եղել, գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում, որը այն ժամանակ կոչվել է Օաֆար (Քիմ քաղաք): Օարդենի նկարագրությամբ՝ «քաղաքում կային շատ եկեղեցիներ, որոնցից ամենազվազաններն էին՝ Իրարադրությամբ» (երկու երեսանի) կոչված Առաջնորդարանը և Կաթուկիլը (Կաթողիկեն): Այս երկու եկեղեցիները գոյություն ունեն Հայաստանի թագավորների ժամանակներից¹:

Եկեղեցու մասին կարելի է տեղեկություններ քաղել Հովհաննես Եպիսկոպոս Օաֆարացի, Մարոպ Սմբատյանցի, Ի. Օոպենի, Թ. Հակոբյանի աշխատություններից: Երվանդ Օաֆարի վկայությամբ՝ Կաթողիկեն եղել է «Ռատուկ օթևան Ռոգևորականների համար»: Այստեղ են ապրել Մովսես Սյունցի և Մեղիսե Կաթողիկոսները²:

Հետևաբար, Ռուշարձանի շուրջը կառուցված են եղել մաս ալ շինություններ: Եկեղեցուն կից գործել է վարժարան:

«Յիշատակ է Դաիթ Սրբազան Կաթողիկոսին ի դուռն Երևանու Կաթուկիլ եկեղեցույ նորակերտ վարժարանին ի թուին 1230 (1781) և ի դեկտ. ամսեանն»³, «նշված է Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրներից մեկի ճիշատակարանում:

Այս եկեղեցուն ընդօրինակվում և պահպանվում էին շատ ձեռագրեր: Պատմությունից հայտնի է, որ Արղումբեկի որդի Խոջա Գրիգորը կառուցել է Կաթողիկենի ժամատունը և 1652 թ. եկեղեցական սպասքի հետ միասին մկրիլը «չոքս ձեռագրեր, որոնցից մեկը Հայսմավորք էր, մեկը՝ Շաշոք, մեկը՝ ոսկեռուսիով մագաղաթյա Ավետարան, իսկ մյուսը՝ Սաղմոսարան»⁴:

Երվանդ Օաֆարի ճիշատակում է, որ 1923 թվականին «Երևանից հավաքվել և էջմիածնի ձեռագրատանն են հանձնվել 78 ձեռագիր, որոնցից 25-ը պահվում էին Կաթողիկեն եկեղեցում»⁵:

Կաթողիկեն եղել է մաս Երևանի գոյության կենտրոններից մեկը:

Վերաշինությունների հետևանքով մեծացել է ոչ միայն կառույցի ծավալն ու չափերը, այլև եկեղեցու գեղարվեստական արժեքը: Այստեղ հայտնաբերած որմնանկարները, ինչպես և Պողոս-Պետրոս եկեղեցունը, ըստ Գարեգին Լևոնյանի, կատարել է Նաղաշ Հովհաննիսյանը:

Եկեղեցին զբաղեցնում էր այժմյան Սպար-Նովա և Արվյան փողոցների խաչմերուկը: Այստեղ, երևի թե, պետք է ստեղծվեր գեղարվեստորեն հագեցած քաղաքաշինական հանգույց: Ըստ Թամանյանի հատակագծի՝ այս Ռուշարձանը ևս ընդգրկված էր մոր հատակագծում: Ցավոք, իշխանությունները մայատակահարմար գտան կառուցել դպրոցական շենք և սկսեցին եկեղեցու քանդումը: Ստորև կներկայացնենք այս եկեղեցու քանդմանը վերաբերվող նյութերը:

¹ «Путешествие Шердена по Закавказью в 1672-1679», վերցված է Թ. Հակոբյանի «Երևանի պատմությունը» (1500-1800 թթ.) գրքից, Երևան, 1971 թ. (ինչպես նաև հաջորդ վկայությունները), էջ 352:

² Լույս տեղում, էջ 356:

³ Լույս տեղում, էջ 379:

⁴ Լույս տեղում, էջ 383:

⁵ Լույս տեղում, էջ 382:

Եկեղեցու քանդմանը հետևեց Հնությունների պահպանության կոմիտեի մամուլը քաղաքի դեկավար մարմիններից⁶:

(Արձանագրություն – 9.I.37 թ.)

Հուշարձանների Պահպանության Կոմիտեն խնդրում է հետաձգել 10 օրով Կաթողիկե եկեղեցու 13-րդ դարի հուշարձանի զմբեթի քանդումը, մինչև այդ հուշարձանի չափագրության և ֆրեսկոների արտանկարման աշխատանքների ավարտումը: Մերժելու դեպքում Կոմիտեն ստիպված կլինի գործը հանձնել դատախազության:

Կմ. փոխնախագահ՝ Հ. Թումյան

Այնուհետև ստեղծվեց մասնագետներից կազմված հանձնաժողով՝ որոշելու համար շինության կարևորությունը և զեղարվեստական արժեքը:

Քաղվածք

Խ. Հ. Կենտգործկոմի նախագահության նիստի

N19 արձանագրությունից

21 հունվարի 1937 թ.

ԼՍԵՑԻՆ

Երևանի Քաղխորհրդի կողմից քանդվող Կաթողիկե նախկին եկեղեցու շենքի պատմա-հնագիտական ուսումնասիրությունը կազմակերպելու մասին:

/Գործ նո 535/

/Զեկ. ընկ. Հ. Թումյան/

ՈՐՈՇԵՑԻՆ

ա) Երևանի Քաղխորհրդի կողմից քանդվող Կաթողիկե նախկին եկեղեցու շենքի պատմա-հնագիտական ուսումնասիրությունը կատարելու, ինչպես և շենքի չափագրելու, լուսանկարելու, արձանագրությունները էստամպաժահանելու համար պահանջվող ժամանակամիջոցը և հնարավորությունները պարզելու նպատակով ընտրել հանձնաժողով բաղկացած հետևյալ ընկերներից.

1. Ռ. Դաշտոյան (նախագահ)

2. Հ. Զորյան (անդամ)

3. Հ. Թումյան (անդամ)

4. Ս. Բարխուդարյան (անդամ)

5. Հ. Միրզոյան (անդամ)

բ) Ընտրված հանձնաժողովին հանձնարարել ներկայացնել Կենտգործկոմին իր եզրակացությունը:

Քաղաքային իշխանության կարծիքն արտահայտվեց 1937 թ. փետրվարի 2-ի հետևյալ

⁶ Արձանագրությունների տպագրությունը ընդուն ենք նույնությամբ՝ նամակազատախանեցենով միայն այլընտրանքային ուղղափառություններ:

գրություն մեջ.

«Դպրոցի շինարարության իրականացման համար անհրաժեշտ է անհապաղ քանդել եկեղեցին, որն իր մեծ մասով ընկնում է դպրոցի շինարարության տարածքում, այդ պատճառով խուսափել եկեղեցու քանդումից տվյալ դպրոցական ուրվագծի դեպքում անհնարին է: Խոսք չի կարող զմալ եկեղեցու քանդման անհրաժեշտության մասին: Ինչ վերաբերվում է 13-րդ դարին պատկանող մատուռին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ.

1. Մատուռի մի մասն արդեն քանդված է: Այդ պատճառով հուշարձանն ամբողջությամբ պահպանելու մասին խոսելու կարիք չկա:
2. Ինչ վերաբերվում է ճարտարապետական մամրամասնություններին՝ այս հուշարձանը համեմատած այլ հուշարձանների հետ իրենից առանձնահատուկ արժեք չի ներկայացնում: Հուշարձանը հետաքրքրություն է ներկայացնում իր հմությամբ, իր քարերի վրայի արձանագրություններով: Դրա համար էլ ցանկալի է հուշարձանի պահպանումը»⁷:

Ստեղծված առաջին հանձնաժողովի կարծիքը դպրոցական շենք կառուցելու անհրաժեշտության մասին հանգցեց մրան, որ եկեղեցու ուսումնասիրման համար ստեղծվեց մասնագետներից կազմված մոր հանձնաժողով:

Հ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմի ... նախագահության ... միստի N2 արձանագրությունից

7 փետրվարի 1937 թ.

ԼՍԵՑԻՆ

Դպրոցաշինարարության հետևանքով քանդելու ենթակա կաթողիկե եկեղեցու ժարտարապետական և պատմա-հնագիտական արժեքը պարզելու համար հատուկ հանձնաժողով կազմակերպելու մասին:

/գործ. նո. 535/

/գեկ. ընկ. Ռ. Դաշտոյան/

ՈՐՈՇԵՑԻՆ

Դպրոցաշինարարության հետևանքով քանդելու ենթակա կաթողիկե եկեղեցու ժարտարապետական և պատմա-հնագիտական արժեքը պարզելու համար նշանակել հատուկ հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Մալխասյան Վ. (նախագահ)
2. Ջորյան Հակոբ
3. Բալանթար Աշխարհբեկ
4. Բունիաթյան Նիկոլայ
5. Բարխուդարյան Նիկոլայ
6. Թումյան Հ.


⁷ ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 306, էջ 5:




Ս. ԿԱԹՈՂԻԿՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԺԸ ԱՐԵՎԵԼՔԻՑ
 Լուսանկարը՝ Ա. Վրոյրի, 1937 թ.
 Հայաստանի Պարմության պետական թանգարան, N 6280



Ս. ԿԱԹՈՂԻԿՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԸ
 Լուսանկարը՝ Ա. Վրոյրի, 1937 թ., ՀՊՊԹ, N 6283





Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԱՏՏԱՆ ՃԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ
Լուսանկարը՝ Ա. Վրոյթի, 1937 թ., Նյույորք, N 6285



Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԱՏՏԱՆ ՃԱՄԱԿԱՆ
Լուսանկարը՝ Ա. Վրոյթի, 1937 թ., Նյույորք, N 6281

7. Ղափաղարյան Կ.

Հանձնարարել հանձնաժողովին 1 օրվա ընթացքում տեղում ուսումնասիրել այդ հարցը և տալ իր գրավոր եզրակացությունը: Ներկայացնել Կենտրոնականին՝

Հանձնաժողովի եզրակացությունը հետևյալն էր՝

Նյութ 1

Արձանագրություն

Հուլարձանների Պահպանության Կոմիտեի 1937 թ. հունվարի 9-ին տեղի ունեցած խորհրդակցությունից

Ներկա էին – Հ. Թումյան, Գ. Լևոնյան, Ե. Ծահագիզ, Տարագրոս, Գ. Հովսեփյան, Կ. Ղափաղարյան, Ա. Բալանթար, Հ. Եղիազարյան

Հանգին – Երևանի Կաթողիկե եկեղեցու շենքի քանդելու վերաբերյալ Քաղխորհրդի որոշման մասին:

Մտքերի փոխանակություն

Ե. Ծահագիզ Կաթողիկեի մասին մանրամասն խոսում է Ծարդենը: Առանձնահատկությունները կազմում են խորանների պատերի մեջ դրված առանձին հին բեկորները, որոնք պատկանում են 12-րդ դարին և անհրաժեշտ է պահպանել, սակայն նկատի ունենալով, որ քանդում են՝ անհրաժեշտ է կատարել չափազորություններ և լուսանկարներ, և հատուկ հսկողություն ունենալ հնագիտական արժեքները հավաքելու համար:

Տարագրոս Եկեղեցու սեղանին կից խորանների արևելյան պատը յուրահատուկ ձև ունի ճարտարապետության տեսակետից: Գմբեթի կառուցվածքը մույնպես ունի յուրահատկություններ, որոնք վերաբերում են 11-րդ դարին: Սեղանի պիլաստրներն ու խոյակներն իրենց կառուցվածքով 11-րդ դարի են, ինչպես և պատի միջերի ամեն կետ պետք է պահպանել:

Գ. Լևոնյան Քրիստոնեության տարածման ժամանակ ամբողջովին ավերվեց հեթանոսական շրջանի կուլտուրան, և ոչ մի պատմական հետքեր չկան նրանցից այժմ. չպետք է այդ թույլ տալ մասն ներկայումս քրիստոնեական-ֆեոդալական շրջանի նյութական կուլտուրայի մնացորդների նկատմամբ: Հոռոմում մոր շենքերի կառուցմամբ չեն քանդում հուշարձանները, հին և մոր Հոռոմ իրար կից են: Արձանագրելով Կաթողիկեի

քանդվումը՝ պետք է նախագծողացնել, որ հետագայում նման դեպքեր տեղի չունենան:

Աշխ. Քալանթար. Ըողորձում էր եկեղեցու քանդման դեմ, և նշում էր, որ հուշարձանի ու տաճարի պահպանումը չի նշանակում նրա արժեքի պահպանումը: Հուշարձանի ներսում մեր բացված մնացորդները հաստատում են նրա անվիճելի 7-րդ դարին պատկանելը: Անհանդուրժելի է, երբ առանց խնդիրը համաձայնեցնելու սկսվել է քանդումը, որ անկախ դրանից էլ, հնարավորություն չի տրվում կատարելու ամենաամհրաժեշտ ուսումնասիրությունը:

Հուշարձանի վրա մկատվող քաղմաթիվ, տարրեր ժամանակներից պատկանող կառուցումները մեծ արժեք են տալիս նրան, որպես տարրեր էպոխաների արժեք ներկայացնող հուշարձան: Որպես 7-րդ դարին պատկանող հուշարձան ոչ մի կերպ չպետք է թույլ տալ նրա քանդումը: Եթե վերադաս մարմինները հաշվի չառնեն տեղական գիտ. հիմնարկներից: ապա պիտի հարցը փոխադրել կենտրոնական գիտ. հիմնարկներ՝ Ակադեմիա:

Առաջարկություններն ընդունվում են: Դեմ է ընկ. Քալանթարը, որը շարունակում է պնդել քանդումները կտրականապես արգելելու վրա:

Բերենք ևս մեկ պաշտոնական կարծիք եկեղեցու քանդման աշխատանքների վերաբերյալ:

Հ. Թումյան

Ոչ ոք Հուշ. Պահպ. կոմիտեին չի արգելում ուսումնասիրել, չափազորել, լուսանկարել կաթողիկեն: Առաջարկում են չառարկել կաթողիկեի մեր մասի քանդման դեմ՝ հնարավորություն տալով Քաղխորհրդին կառուցելու դպրոցական շենքը այդ վայրում: Թե որ մասը կունենա հնագիտական արժեք, այդ կորոշի քանդումների ընթացքում սահմանված արխեոլոգիական հսկողությունը: Համենայն դեպս, կաթողիկեի վերաբերյալ եղած տեղեկություններն ասում են, որ մեր շրջանի շինությունը միայն պարունակում է հին մասեր, ահա այդ հին մասերը պետք է պարզել: Հուշ. Պահպ. կոմիտեն նշանակում է կաթողիկեի չափազորող ընկ. Տարագրոսին, նկարիչ ընկ. Արա Վրույրին և արխեոլոգ ընկ. Կ. Ղաֆադարյանին: Այդ կազմը, ըստ կարիքի, հետագայում կոմիտեացվի մեր աշխատակիցներով:

Առաջարկությունն ընդունվում է: Դեմ է ընկ. Ա. Քալանթարը, որը շարունակում է պնդել քանդումները կտրականապես արգելելու վրա:

ՀԱԱ, ֆ.1063, ց.1, գ.306, էջ 1-2

Հուստողոմոսի կողմից հրավիրված հիշյալ հանձնաժողովի մասնակցությանը ճարտարապետներ պրոֆ. Նիկողայոս Բուճիսթյանին և Միքայել Մազմանյանին, պատմաբաններ պրոֆ. Աշխարհբեկ Բալանթարին, Հ. Ջորյանին, արվեստագետ Տարազրոսին հանձնարարվում է տալ եզրակացություն Երևանի «Կաթողիկե» հուշարձանի պատմա-հնագիտական և ճարտարապետական արժեքի մասին:

Հանձնաժողովի եզրակացությունը.

1. Նյութի ներկա վիճակով պարզվում է, որ ամբողջ շենքը բաղկացած է երկու հուշարձանից (մեծ և փոքր), և մի շարք տարբեր դարերին պատկանող կառուցումներից: Հուշարձաններից մեկը՝ մեծը իր պլանով, հիմքերով և պատերի ներքին շարվածքներով ունի 7-րդ դարին պատկանող հուշարձանների առանձնահատկություններ, երեք մեծանի բազիլիկա կենտրոնական առանցք ունեցող, ներքին չորս պիլոնների վրա բարձրացող գմբեթով: Այս տիպի կառուցումից Հայաստանում կան ընդամենը չորս հուշարձան (Գալանե, Մրեն, Բազավան, Օձուն՝ Խորհրդային Հայաստանում սրանցից միայն երկուսը, իսկ Վրաստանում՝ մեկը /Մրոմիս/): Այս տիպը խոշոր արժեք ունի քրիստոնեական ճարտարապետության զարգացման տեսակետից: Հուշարձանի վերին կեսը ենթարկվել է ձևափոխության հետագա դարերում՝ անաղարտ պահպանելով հատակագիծը և ներքին շարքերը:

Փոքր հուշարձանը պահպանվել է իր նախկին ձևով, և կրել է անհամեմատ ավելի քիչ փոփոխություններ: Սա իր կառուցման տեխնիկայով՝ քարերի մեծությամբ ու բարձրությամբ, տաշվածքով ու շարվածքով ունի 10-11 դարերի հուշարձանների բոլոր բնորոշ հատկանիշները նման Անիի Մայր եկեղեցուն՝ Մարմարաշենին. իր թե՛ տեխնիկայով և թե՛ պլանով ու ներքին մշակությամբ, որոնմասյուներով, խոյակներով: Հուշարձանն ունի ճարտարապետական մեծ հետաքրքրություն և խնդիրների օրիգինալ լուծում, որոնք ուսանելի են նաև մեր օրերում:

2. Կաթողիկե հուշարձանը իր թե՛ հմությամբ (7-րդ դար) և թե՛ մի շարք տարբեր դարերի նորոգումներով ու կառուցումներով (7-18 դդ.) ներկայացնում է պատմահնագիտական ու ճարտարապետական ուսումնասիրության համար բացառիկ արժեքի միութ, որը ժանդապում է մեզ թե՛ տարբեր ժամանակաշրջանների կառուցողական արվեստի առանձնահատկությունների և թե՛ Երևան քաղաքի պատմության մի շարք էպիսոդների հետ: Այս արժեքը մեծանում է նրանով, որ շենքի՝ հատկապես ավելի անաղարտ պահպանված փոքր հուշարձանի պատերի վրա պահպանվել են բազմաթիվ արձանագրություններ: 13-17 դարերից մինչև այժմ բացվել է 9 արձանագրություն՝ 1363, 1303, 1318, 1498 (1598), 1605, 1609 թվ., որոնք իրենց բովանդակությամբ՝ պատմական, օրենսդրական (դեկրետային) և մկրտավական, և թե գրչության արվեստի պալեոգրաֆիական առանձնահատկությունների տեսակե-

տրից առաջնակարգ տեղ են գրավում հայ վիճակագրական արձանագրությունների շարքում, և ներկայացնում են բացառիկ արժեքի պատմական դոկումենտներ Երևան քաղաքի պատմության համար (1263 թվի արձանագրությունը մի դեկրետ է վերաբերող Երևանին, տրվեց Անիի «Տանգաչի» կառավարիչ պր. Սահմադինի կողմից Ելզանի /Մոնգոլ, արևմտյան կայսրության/ օրոք: Հուշարձանի անունը «Կաթողիկե», որը եկեղեցու ճարտարապետական տիպի իմաստն ունի – մեծ զմբե-թով և միաժամանակ այն հանգամանքը, որ այդպես կոչվում էին կարևոր քաղա-քական-կուլտուրական կենտրոն հանդիսացող քաղաքների Մայր եկեղեցիները միայն: Անիի, Վաղարշապատի, Դվինի, Նոռյի, Հաղպատի կաթողիկեներն ա-պացույց են հանդիսանում Հին Երևանի առաջնակարգ դերի, մի քան, որ նոր է միայն պարզվում մեզ համար:

3. Կաթողիկե հուշարձանն իր գոյության ամբողջ ընթացքում 17-րդ դարից մինչև մեր օրերը տեսել է մի շարք մեծ երկրաշարժեր. նրա վերանորոգումները համընկնում են այն ժամանակներին, որոնք անմիջապես հետևում են մեզ հայտնի մեծ երկրա-շարժերին, որոնք խոշոր ավերածություններ են գործել այս միջավայրում (9-րդ դարի սկզբում, 9-րդի վերջում Դվինի կործանումը, 14-րդ դ. Անիի կործանումը, 16-րդ, 17-րդ դդ. Երևանի և շրջանների ավերումը): Համեմատողովը նշում է հուշար-ձանի սելսմիկ հետազոտության համար ունեցած խոշոր նշանակությունը: Երկրա-շարժի հետքերը բացվելու են հուշարձանի պատերի ծեփերի տակ:
4. Բացի վերոհիշյալ նյութերից շատ ուշագրավ են և կերպարվեստի տեխնիկայի տե-սակետից մեծ արժեք են ներկայացնում այն ֆրեսկոները, որոնք բացվեցին ար-տաքին ծեփի տակ երեք տարբեր սվաղաշերտերի վրա՝ իրար վրա նկարված ջրա-ներկով և յուղաներկով. պլուստեն մարդանկարներ և բուսական ստիլիզացիա, ու-շագրավ է ծաղկենկարների մեջ բամբակի կոկոնի և դափրանի ծաղիկների գե-րակշռությունը:
5. Եզրակացություն: Նկատի ունենալով վերոհիշյալը՝ համեմատողովը գտնում է անհրաժեշտ.

ա) Պահպանել փոքր հուշարձանն ամբողջությամբ՝ մաքրելով ներսի ծեփը պա-տերի վրայից, որի տակ կարող են հայտնաբերվել նոր այլ արձանագրություններ ևս՝ պահպանելով ճակատի ծեփերը ֆրեսկոներով երեք շերտի վրա:

բ) Մեծ հուշարձանը պահպանել իր ներքին շարքերով, որոնք պատկանում են 7-րդ դարի շենքին:

գ) Նշել, որ քանդումը կատարվում է աղմպիսի պայմաններում, առանց կազմա-կերպված վերահսկողության, երբ անուշադիր են մնում գիտական պահանջները, որի հետևանքով արդեն վնասվել են և ոչնչացել մի քանի խիստ կարևոր մասեր: Համեմատողովը գտնում է անհրաժեշտ մեծ հուշարձանի պատերի վերին մասերի քանդումը կատարել հնուտ մասնագետների վերահսկողությամբ ֆիկսացիայի են-թարկելու համար բացվող յուրաքանչյուր փոփոխությունը շենքի կառուցվածքի մեջ՝ կապված տարբեր էպիսոպներում նրա կրած հիմնական նորոգումների հետ և առանձնացնելու կարևոր բեկորները:

Ընկ. Զորյանը, գտնելով շատ հետաքրքիր շենքի 7-րդ դարի վերաբերելու մասին հանձնաժողովի կարծիքը, նրա վերջնական պարզաբանումը կապում է շենքի վրա կատարվելիք ուսումնասիրության հետ:

Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
Քաղվածք⁹

ԼՍԵՑԻՆ

Ներկայումս քանդվող Կաթողիկե նախկին եկեղեցու շենքի մեջ եղած միջնադարյան հուշարձանի վերաբերյալ Կենտրոնական մշակված հանձնաժողովի եզրակացությունը:
/զեկ. ընկ. Ռ. Դաշտոյան/

ՈՐՈՇԵՑԻՆ

Նկատի ունենալով, որ դպրոցական շինարարության համար ներկայումս քանդվող Կաթողիկե նախկին եկեղեցու շենքի մեջ դուրս եկած հուշարձանը պատկանում է 12-13-րդ դարերին, և իր արձանագրություններով ներկայացնում է խոշոր պատմական արժեք ոչ միայն Երևան քաղաքի, այլև ընդհանրապես Հայաստանի պատմության ֆեոդալական ժամանակաշրջանի ուսումնասիրության համար, անհրաժեշտ համարել պահպանել այդ հուշարձանը, որի համար առաջարկել՝

1. Երևանի Քաղխորհրդին՝

ա) վերակազմել հուշարձանի հողամասում կառուցվելիք դպրոցական շենքի նախագիծն այն հաշվով, որ դուրս եկած 12-13-րդ դարի հուշարձանը պահպանվի:

բ) Կատարել սեփական քանվորական ուժերով այն բոլոր աշխատանքները, որ Հուշարձանների Պահպանության Կոմիտեն կհամարի անհրաժեշտ հուշարձանն ավելորդ ծեփերից, հողից, կողմնակի պատերի մնացորդներից ազատելու և պատշաճ վիճակի մեջ դնելու համար:

գ) Հուշարձանի արձանագրությունները, քանդակները և ֆրեսկոները պահպանելու համար ամբողջ հուշարձանը ժամանակավորապես ծածկել տախտակով՝ ղեկավարվելով Հուշարձանների Պահպանության Կոմիտեի ցուցմունքներով:

2. Հուշարձանների Պահպանության Կոմիտեին հանձնարարել կազմակերպել հուշարձանի պահպանությունը:

ՀԽՍՀ Կենտրոնական քարտուղար Ռ. Դաշտոյան

Քանդման ժամանակ գտնված եմ եղել մի քանի տասնյակ ամբողջական կամ բեկորների վերածված արձանագրություններ, որոնք բացվել էին եկեղեցու պատերի վրայից, քանդվող դափիճի պատերի միջուկից և հիմքերի միջից: Ըստ երևույթին այդ քարերի բեկորներն օգտագործվել են երկրաշարժից հետո եկեղեցին վերականգնելու ժամանակ:

⁹ ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 306, էջ 14:

Եկեղեցու արձանագրություններն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և հրատարակել է հնագետ-վիմագրագետ Կարո Ղաֆադարյանը¹⁰:

Այստեղ մենք ցույց կտանք միայն արիսիվի փաստաթղթերից վերցված մի քանի արձանագրություններ, իրենց մեկնաբանություններով, որոնք առանձնապես հետաքրքիր են Երևան քաղաքի անցյալի պատմության համար:

Արձանագրությունները ներկայացնում ենք այն ձևով, ինչպես որ պահպանվել են արխիվում: Դրանք թվով հինգն են:

Արձանագրություններ

Թիվ 1

«Ի թվին 1264 (ՉԺԳ), Աստծո ողորմության և եղանի
(փոխարքայի) ուժով, ես պարոն Ավետենց որդի Սահմադինս
զնեցի Երևանը, իր բոլոր հողով ու ջրով և հետևյալ կարգը
սահմանեցի. ով որ Երևանում հող զնած լինի
և վկաներով ու մուրհակով հաստատված լինի և տասանորդը (հարկ) վճարած,
և ով որ իր այլ տեղում եղած նախկին հողամասը թողած լինի ու եկած բնակած լինի և
մի տարի անցած լինի՝ այլևս իր նախկին տեղում եղած հողի վրա իրավունք չունի:
Ով որ այս օրենքը խախտի և թշնամությամբ սուտ
ու սխալ տեղը խոտվություն քարձրացնի՝ խոտվության համար
սահմանված տուգանքը տա: Ով որ այս օրենքին հակառակի,
և զրաճս խախտան՝ երեք սուրբ ժողովներից նշույնի, հուշայի բաժինն ստանա և Աստ-
ված զլխին խոտվ կենա
և բոլոր ազգերի նշույնը նրա վրա լինի»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Այս արձանագրությունը Երևանի զննան կալվածագիրն է, որ վերաբերվում է 1264 թվ.: Որպես այդպիսին՝ եզակի է ոչ միայն Երևանի, այլև ընդհանրապես Հայաստանի պատմության համար. նման ուրիշ փաստաթուղթ չկա զրավոր կամ արձանագրական:

Դա մի չափազանց կարևոր պատմական դոկումենտ է, որ լույս է ափոտում ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա՝ պարզելով ճորտական իրավունքի հիմնական մոմենտները ֆեոդալական Հայաստանում: Այստեղ Անիի հայտնի հարկահավաք Սահմադինը (13-րդ դար), զնելով Երևանը, մի տարի բնակվողին զրկում է այլ վաղը տեղափոխվելու իրավունքից:

Թիվ 2

«Աստծո շնորհիվ ես Գեշմարդս

¹⁰ Կորո Ղաֆադարյան, Երևանի Միջնադարյան Հուշարձաններ, Երևան, 1975 թ.: Տե՛ս նաև Ղաֆադարյան, Երևանի Կաթողիկոսի և Երանայր իուշարձանի վիմական արձանագրություններ, «Տեղեկագիր» ՀՍՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի, Գիտք I, Երևան, 1938 թ.:

միաբանեցի Երևանի ժամատեղերին

և նվիրեցի իմ երկու կրպակները (խանութները)

իրենց ներքնատներով և կից շենքերով և այլ բազմաթիվ եկամուտներ և այստեղի քահանաները սահմանեցին մեզ տարեկան յոթն պատարագ՝ մեկը Գեշմարդուն, մեկը Ամրոտութին, մեկը Մամախաթունին, մեկը Պետրոսին, մեկը Պողոսին, մեկը Նուրսեին, մեկը Մամբրեին: Կատարողներն օրհնվին Աստծուց և խափանողները պատժվեն (Աստծուց) թվին 1301»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Երևան քաղաքի պատմության մասին պատմական տեղեկություններ կան միայն 16-րդ դարից սկսած. այս արձանագրությունն ապացուցում է, որ Երևանը 13-րդ դարում եղել է քաղաքատիպ - առևտրական վայր. ունեցել է շուկա: Պատմությունից հայտնի է, որ միայն քաղաքատիպ առևտրական վայրերում են եկեղեցիներին խանութներ նվիրել:

Արանով ժխտվում է ենթադրությունների վրա հիմնված այն կարծիքը, թե Երևանը միջնադարում սոսկական գյուղ է եղել:

Թիվ 3

«Բարերար Աստծո կամքով և Ս. Հոգու ազդմամբ ես Գորգ, Աստուծո մեղավոր ծառա և իմ ամուսին Դովլաթը միաբանեցինք (նվիրեցինք) Երևանի (այս) ժամատեղերին Նորազավիթի Դիվկան (կոչված հանդից) մեր 50 կոպչուտեղ հողը և սպասավորները (սույն եկեղեցու քահանաները) խոստացան տարին երկու պատարագ կատարել՝ մեկը ինձ և մեկը Դովլաթի անունով: Կատարողներն օրհնվեն Աստծուց. ի թվին 1318»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Այս արձանագրությունը միակն է, որպես պատմական փաստաթուղթ, մեր միջնադարյան գրականության մեջ: Այս եզակի դոկումենտի հիման վրա մենք այժմ հնարավորություն ունենք ճշտորեն որոշելու Հայաստանի ֆեոդալական կարգերում ընդունված հողի արժեքը: Այդ արձանագրության մեջ նշանակված է հողի չափը: Այստեղ «50 կապճի» տեղին տրված է 2 պատարագ: Պատարագի գինն արդեն հայտնի է պատմությունից: Նա եղել է 20 արծաթ (դրամական միավոր): Դրանից մենք վստահորեն կարող ենք եզրակացնել, որ 50 «կոպճի» (հավասար է 50 կոտ սերմ ցանվող հողամասի) արժեքը եղել է 40 արծաթ:

Ինչպես հայտնի է, Հայաստանի ֆեոդալական ժամանակաշրջանի տնտեսական պատմությունը տակավին շատ թույլ է լուսարանված: Այդ տեսակետից վերոհիշյալ արձանագրությունը մեզ համար ստանում է բացառիկ արժեք Հայաստանի տնտեսական պատմության համար:

Թիվ 4

«Ճահաքասի թագավորության, Ամիրգունա խանի իշխանության, Տեր Մեղքիսեթ Կա-

թողիկոսի հայրապետության և Տեր Համազասպի եպիսկոպոսության գործը եւ՝ Գրիգոր Թեղագույենց Մարգարի որդի, և իմ ամուսին պարոն խաթունը միաբանեցինք (եկեղեցուն) և շինեցինք այստեղի գավիթը հիմքից և ուրիշ բազմաթիվ եկամուտներ տվեցինք: Սուրբ տաճարիս և եկեղեցու ծառայողները (քահանաները) խոստացան տարեկան երկու պատարագ կատարել մեկը (Գրիգոր Լուսավորչի) խոր վիրապից դուրս գալու և մեկը խոր վիրապ մտնելու տոներին, գրիս կատարողները օրհնվեն Աստծուց, թվին 1609, Հակոբ գրողիս հիշեցեք»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Շնորհիվ այս արձանագրության որոշվում է այնտեղ հիշված պատմական անձնավորությունների գործունեության թվականը: Միաժամանակ պարզվում է, որ 1673 թվին մեծ երկրաշարժի ժամանակ ավերվել են ոչ թե այստեղ գտնվող կրոնական բոլոր շենքերը, ինչպես կարծվում էր մինչև այժմ, այլ այս արձանագրության մեջ հիշված գավիթը միայն, որի տեղում շինվել է մեծ եկեղեցին 1694 թվից, որ 12-13-րդ դարերի հուշարձանն էր, իր միջև օգտագործելով որպես բեմ:

Թիվ 5

«Աստծո կամքով եւ Դավիթս իմ սրտի կամքով, իմ այգու երեք փայլ տվի Սուրբ Կաթողիկեին մկեր: Սպասավորները (քահանաները) խոստացան տարին երկու պատարագ կատարել, գրիս կատարողները օրհնվեն Աստծուց, թվին 1538»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Այս արձանագրությունը, ինչպես մվիրատվականը և այլ բազմաթիվ արձանագրություններ, ապացուցում են, թե հոգևոր ֆեոդալները ինչպես էին օգտագործում կրոնական թույլը եկեղեցիների շուրջը կուտակելու համար խոշոր կալվածներ⁶:

Եկեղեցու քանդման հետ կապված մի ամփոփիչ հոդվածով համոզեւ եկավ հնագետ Ս. Բարխուդարյանը: Դրան նախորդեց Հնությունների պահպանության կոմիտեի ուղղած նամակը «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությանը, որում ասվում է. «Ուղարկելով Հայաստանի Հուշարձանների Պաշտպ. կոմիտեի ավագ գիտաշխատող ընկ. Ս. Բարխուդարյանի հոդվածը՝ «Հազվագյուտ մյութեր Երևանի պատմության համար» խորագրով, խնդրում ենք զեռեղել այն «Խ.Հ.»-ի մոտակա համարներից մեկում, հմարավորության չափ առանց կրճատումների, որովհետև դա առաջին ինֆորմացիան է Երևանում հայտնաբերված արժեքավոր հուշարձանի մասին»:

Ներկայացնում ենք այդ հոդվածն ամբողջությամբ:

Հուշարձանների Պաշտպ. կոմիտեի քարտուղար՝ Թումյան

Հազվագյուտ մյութեր Երևանի պատմության համար

(«Խորհրդային Հայաստան» թերթի համար)

⁶ ՀՀԱ, § 1063, գ. 1, գ 306, էջ 23-27:

Երջադիտորհրդի որոշմամբ Արքայան փող. վրա գտնվող Կաթողիկե նախկին եկեղեցու վայրում պետք է կառուցվի խոշոր դպրոցական շենք: Այդ նախկին եկեղեցու շենքը կառուցվել է 17-րդ դարի վերջին և ճարտարապետական ու պատմահամագիտական տեսակետից արժեք չէր ներկայացնում:

Միայն այդ նորակառույց շենքի արևելյան պատի կենտրոնական մասը և նրա բարձրացող գմբեթը իրենց երևացող մասերով ցույց էին տալիս հնության նշանները: Հնությունների Պահպանության Կոմիտեի ձեռք առած միջոցներով քանդման աշխատանքները վերածվեցին իսկական պեղումների: Նախապես ճարտարապետական լափագրությունների ենթարկվեցին բոլոր շենքերը, այնուհետև մշտական հսկողության շնորհիվ մանրամասն ֆիկսացիայի ենթարկվեցին քանդվող շենքի բոլոր մասերում երևան եկած առանձնահատկություններն ու հավաքվեցին պատերի միջից դուրս եկած 13-17-րդ դարերին պատկանող բոլոր քանդակազարդ և արձանագրված բեկորները:

Պարզվեց, որ «Կաթողիկեի» շենքն ունի երկու մաս: Դրանցից մեկը շենքի արևելյան մասում, գմբեթի տակ գտնվող մասը գմբեթով միասին ավելի հին է, իսկ նրա առաջ կառուցված մեծ բազիլիկաձև մասը 17-րդ դարի վերջի շենք է: Մի քանի մասնագետների ենթադրությունները այդ նոր շենքի ներքին մասերում 7-րդ դարի շինության հետքեր լինելու վերաբերյալ անհիմն դուրս եկան:

Շենքի արևելյան մասում բացվեց մի բոլորովին ինքնուրույն հուշարձան, 12-13-րդ դարերում շինված, որը երեք կողմից առնված էր վերոհիշյալ 17-րդ դարի շենքի մեջ և արևմտյան պատը բաց արվելով օգտագործվել էր վերջինիս համար որպես արսիդա: Երբ այդ փոքրիկ արժեքավոր հուշարձանը երեք կողմից բացվեց, այն ժամանակ միայն երևան եկան նրա ճարտարապետական և պատմահամագիտական արժեքները: Նախ և առաջ դա ճարտարապետական մի հետաքրքիր հուշարձան է և գրեթե միակը Երևանում: Բացվեցին նրա պատերին մի շարք արձանագրություններ 13-14-րդ դարերից, որոնք բոլորովին եզակի արժեք ունեն Երևանի պատմության համար: Ամենահինը կրում է 1264 թ.:

Նրանք միանգամայն նոր լույս են սփռում Երևան քաղաքի պատմության վրա 13-14-րդ դարերից մինչև 17-րդ դարը: Միաժամանակ խոշոր նյութեր մատակարարում Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար:

Հուշարձանը ճարտարապետական իր մի շարք կազմերով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Սա առայժմ միակ շենքն է Երևանում, որ միջնադարից ամբողջ վիճակով մինչև մեզ է հասել:

Ի՞նչն է պատճառը նոր հուշարձանի այդ դիմացկունության: Բացի ընդհանուր կոնստրուկտիվ համաչափություններից պետք է ենթադրել, որ շենքի դիմացկունության հիմնական ազդակն է համդիսացել հետևյալ բացառիկ տեխնիկական պրիոնը:

Սկսած ամենաներքին քարաշարքերից մինչև նույնիսկ գմբեթի շարքերը լուրջանյութ վերին քարաշարքը ներքինի համեմատությամբ 5 միլիմետրով ներս է քաշված, պատերի թե՛ արտաքին ու թե՛ ներքին կողմերից, այսպիսով քարերի շրթունքները երբեք չեն համդիպում իրարու և պատերի վերին մասերը ավելի ենթեք են, քան ներքևիները, սակայն այդ բոլորը այնպես է կատարված, որ շենքի կոնստրուկտիվ համաչափությունը չի խախտ-

վում: Տեխնիկական այս պրիոմն անշուշտ տվել է շենքին բացառիկ սելսմոդիմացկունությամբ: Այս խնդիրը մեծ նշանակություն ունի երկրաշարժերով հարուստ մեր երկրում:

Ս. Բարխուդարյան

Մինչև եկեղեցու քանդելը գիտնականներից շատերը արդեն Քանգել էին այն եզրակացությանը, որ 17-րդ դարում երկրաշարժից վերանորոգված եկեղեցու ներսում պարփակված է եղել բուն Քիմ եկեղեցին: Ականավոր գիտնական Թորոս Թորամանյանը, մինչ եկեղեցու քանդելը, կոսաձել էր, որ Կաթողիկեի շինության մեջ պարփակված են Քիմ եկեղեցու հետքեր և պետք է չափազանց զգուշությամբ մոտենալ այս հուշարձանին: Այս հանգամանքը մատնանշում էին մի շարք «տարօրինակ» նշաններ, որոնք քնորոշ չէին այդ ժամանակաշրջանի եկեղեցիներին:



ԲԱՆԱՍՈՒԹՅՈՒՆ



ԽԱՉԻԿ ԲԱՂԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՇՏՈՅԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վերջերս հրատարակվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ Աելիտա Դոլուխանյանի «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և Հայոց Այբուբենի մասին» հանրագիտական արժեք ունեցող աշխատությունը, որը նվիրված է Հայոց Այբուբենի ստեղծման 1600-ամյա հոբելյանին: Գրքի խմբագիրն է գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դևրիկյանը:

Մինչ այս գրքի լույս աշխարհ գալը Դոլուխանյանը խորհել էր նմանատիպ ճանաչողական արժեք ներկայացնող համահավաք աշխատանք հրատարակել և այդ նպատակով, սկսած 2001 թվականից, հաջորդաբար հրատարակեց չորս տարբեր նշանավոր հայագետների դիմանկարային ու հայագիտությանը նվիրված ուսումնասիրությունները: Այդ մույն թվականին լույս տեսավ այս շարքի մեր առաջին մենագրությունը՝ նվիրված քեզիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նևիին, որին հաջորդեց Մարի Ֆելիսիտե Բրոսսեին նվիրված մենագրությունը՝ 2002 թ.: 2003-ին հրատարակվեց Վիկտոր Հանգյուային նվիրված գիրքը, իսկ 2004-ին՝ Էդուարդ Դյուլորիեին նվիրված մենագրությունը: Իսկ այժմ հրապարակի վրա է Դոլուխանյանի վերոհիշյալ աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն ներկայացրել է եվրոպական շուրջ 20 նշանավոր հայագետների՝ հայ ժողովրդին, մեր պատմությանն ու մշակույթին նվիրված ուսումնասիրություններն ու կարծիքները:

Հայտնի է, որ եվրոպացի հայագետները հայոց պատմության, հայոց լեզվի ու գրականության, փիլիսոփայության ու երաժշտության հարցերով սկսել են զբաղվել դեռևս 17-րդ դարից: Ֆրանսիացի, քեզիացի, անգլիացի, գերմանացի ու այլազգի գիտնական-հայագետներ իրենց աշխատություններում հայագիտության հետ կապված ամենատարբեր հարցերի հետ միասին անդրադարձել են նաև Մաշտոցյան Այբուբենին՝ այն քննորոշելով որպես գիտական սխրանք:

օրացմանը մեկը, որն իր ներդրումն ունի համընդհանուր քաղաքակրթության ու մշակույթի մեջ¹:

Խոսելով Դանիելյան մշակագրերի մասին՝ մա գրում է, որ դրանք ժամանակավորեալ էին և գործածության մեջ չմտան, իսկ Մեսրոպյան Այբուքեմը հայ ժողովրդին փրկեց ուժացումից և ազգային պետականությունը ամրապնդելու լավագույն միջոցը եղավ. «Հայերն ազատվեցին ընդմիջտ Արևելքի մյուս ազգերից, դարձան զտված մի ազգ՝ ամուր քրիստոնեական հավատով՝ մերժելով այլևս որևէ ազգի այբուքեմը՝ իրենցից դուրս մղելով զրադաշտության կռապաշտական բոլոր սովորությունները: Ահա այս ձեռնարկումներն էին, որոնք պահեցին հայոց լեզուն և հայ գրականությունը: Հավանական է, որ առանց քրիստոնեության այս ազգը չէր ուշացնի իր ձուլվելը պարսիկների հետ և կանգնեռամար ամբողջովին, ինչպես Ասիայի ուրիշ ժողովուրդներ», - գրում է Լամզյուան²:

Միսիթարյան Միաբանության և Մաշտոցյան գրերի մասին արժեքավոր աշխատություններ է գրել մահ բելգիացի հայագետ Ֆելիքս Նևը՝ հայերենը դասելով հնդեվրոպական լեզուների շարքը:

«Հայագիտության ուսումնասիրման հարցերում իրենց ուսուցիչներին հետևեցին մահ Մարի Ֆելիստին Բրոսսեն և Էդուարդ Դյուլորիեն: Նրանցից առաջինը ֆրանսերեն թարգմանեց 13 հայ պատմիչների բնագրերը՝ հատուկ տեղ հատկացնելով Մեսրոպ Մաշտոցին և Հայոց Գրերի գյուտին:

Իսկ Էդուարդ Դյուլորիեն թարգմանեց Ստեփանոս Ասողիկ Տարոնացու «Տիեզերական պատմությունը»՝ իր բազմաթիվ ծանոթագրություններով ու մեկնաբանություններով:

20-րդ դարի ֆրանսիացի հայագետներից այս գրքում ներկայացված են Ֆրեդերիկ Մակլերի, Ամտուան Մեյի և Ֆրեդերիկ Ֆելդի կյանքի ու գործունեության հետ կապված մանրամասներ և վերլուծվում են մրանց հայագիտական աշխատությունները:

Հատուկ նշվում է, որ Ֆրեդերիկ Մակլերը հայ ժողովրդին, մրա մշակույթին ու հավատայինքներին ավելի մոտիկից ծանոթանալու համար գիտական ուղևորություն է կատարել Հայաստան, ուսումնասիրել Ա. Էջմիածնի մատենադարանի ձեռագրերը, Կոմիտաս Վարդապետի հետ մեկնել է Օշական՝ Ա. Մաշտոցի գերեզմանին այցելության: Մակլերը հիացել է հայկական լեռնաշխարհով, հայերի հյուրասիրությամբ: Նա գրում է, որ ամեն տարի ճեմարանի միաբաններն ու ուսանողները թարգմանչաց տոնը այստեղ են նշում: Նա Հայաստանի և հայերի մասին գրել է բազմաթիվ աշխատություններ՝ սկսած հին շրջանից, վերջացրած 1915 թ. Մեծ եղեռնով:

Մաշտոցյան գրերի, հայոց լեզվի ցեղակցության, մրա հնչյունական, բառագիտական ու քերականական կառուցվածքների մասին բազմաթիվ արժեքավոր աշխատություններ ունի մահ Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, Հրայր Աճառյանի ուսուցիչ Ամտուան Մեյեն: Նա Աճառյանի հրավերով եղել է Օուշիում, այն անվանել Կովկասի մարգարիտ, հիացել է շուշեցիների հյուրասիրությամբ ու մարդամոտությամբ, եղել է Էջմիածնում, հիացել Մայր Աթոռի ձեռագիր գանձերով ու Կոմիտասի երաժշտական կատարումներով: «Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ըն-

¹ Տե՛ս Ա. Դելուսեան, Վիկտոր Լակյուան հայագետ, եր., 2003, էջ 114:

² Նույնի՝ եվրոպական իսկագետները Մաշտոցի և Հայոց Այբուքեմի մասին, Ա. Էջմիածին, 2005, էջ 22:

թափափում, որքան հույս ազգը: Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել և ավելի խնամքով չի մշակել իր սեփական լեզուն³, - ասեա մեծ հայազետ Մելեի կարծիքը հայերի և հայոց լեզվի մասին:

Ա. Մելեի և Ֆ. Մակելերի հայագիտական բեղուն գործունեությունը շարունակեց Ֆրեդերիկ Ֆերիին⁴, - գրում է ֆրանսերենից հրաշալի տիրապետող գրականագետ Դոլուդերիկ Ֆերիին⁴, - գրում է ֆրանսերենից հրաշալի տիրապետող գրականագետ Դոլուդերիկ Ֆերիին և ավելի հանգամանորեն խոսում մեր օրերի մեծ հայազետ, Սորբոնի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, բազմիցս Հայաստանում եղած, հայկական բոլոր Միջազգային գիտաժողովներին մասնակցած հայազետի ու նրա բազմաթիվ հայգիտական բարձրարժեք աշխատությունների մասին: Դոլուդանյանն անդրադառնում է հայ ժողովրդի մեծ բարեկամի հատկապես երկու աշխատություններին՝ 394 էջերից բաղկացած «Հայոց լեզվի դասագրքին» և 1964-ին Փարիզում ֆրանսերենով հրատարակված «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք քննարկին:

Ֆերիի վերջին աշխատությունը «Նկատառումներ Ս. Մեսրոպի Այրուբեցիի և հետազոտություն հայերենի հնչյունաբանության» 3 մասից բաղկացած գիրքն է /1982 թ., Վիեննա, 216 էջ/, որտեղ հեղինակը ամենայն մանրամասնությամբ խոսում է Մաշտոցի գործունեության, նրա կողմից գրերի ստեղծման և հայերենի հնդեվրոպական համակարգի մասին: Այս գրքի երկրորդ հրատարակությունում Ֆերիին իր տեսությունները հաստատում է՝ վկայակոչելով հայ անվանի լեզվաբաններ, ակադեմիկոսներ Հ. Աճառյանի, Գ. Զառուկյանի, Էդուարդ Աղայանի, Ա. Ղարիբյանի և ուրիշ լեզվաբանների կարծիքները:

Գրքի այս մասում Դոլուդանյանը խոսում է նաև հայազետ Ժ. դը Մորգանի մասին:

Գրախոսվող գրքի երկրորդ և երրորդ մասերում ներկայացվում են գերմանացի և անգլիացի հայազետներ Կարլ Նոյմանի, Սեն Մաիտենի, Ֆրանց Բոպպի, Ֆրանց Մայուլերի, Գ. Ֆեթթերի, Հայնրիխ Հյուբշմանի, Հ. Մարկվարտի և Էլի ուրիշների հայագիտական աշխատությունները, որոնցում առանձնահատուկ առջեւ են գրավում Մաշտոցին և հայ գրերի գյուտին նվիրված բաժինները: Գրքի հեղինակը գրում է, որ Եվրոպայում առաջինը գերմանացի լեզվաբաններն են թարգմանել Կոլոյնի «Վարք Մաշտոցի» աշխատությունը:

Անգլիացի գիտնականներից Ֆրեդերիկ Կոնիքերը հսկայական չափերի հայագիտական ժառանգություն է թողել, որն այսօր էս պահպանում է գիտական իր կարևորությունը:

Իսկ Ա. Պետկյանը անգլերեն լեզվով հրատարակած իր մի քանի գրքերում խոսում է եվրոպական հայազետների ուսումնասիրությունների մասին: Նա հայ գրերի գյուտը ազգափրկիչ հրաշք է համարում, որով հարատևեց հայ ժողովուրդը և հարատևելու է զայիք դարերում:

Գիրքն ազարտվում է ամփոփումով և ումի փոքրիկ հավելված:

³ Տե՛ս Ա. Ղարիբյանի, Եջվ. աշխ., էջ 41:

⁴ Նույն տեղում, էջ 43:

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՆ

Հայոց Գրերի Գյուրի 1600-ամյակի հանդիսությունների գիտա-տեսական հանրագումարն էր ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում սեպտեմբերի 13-16-ը տեղի ունեցած գիտաժողովը:

Բացման խոսքով ներկաներին դիմեց ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Մարգարյանը: Արժեքներով Մաշտոցյան Գյուրը և այն դիտարկելով նաև աշխարհի այսօրվա մարտահրավերների տեսանկյունից, Ազգային Ակադեմիայի նախագահը ի մասնավորի ասաց. «*Այսօր մեր ժողովուրդը կրկին վայելում է պատմական բախարի բացառիկ մի շնորհ. վերականգնվել է մեր ազգային պետականությունը: Հայոց լեզուն վերստին հռչակվել է հայաստանի հանրապետության պետական լեզու: Հարյուր հազարավոր հայ մանուկներ ու պատանիներ իրենց մայրենի լեզվով և Մաշտոցյան 1600-ամյա գրերով են հաղորդակցվում աշխարհի մշակութային մեծ արժեքներին:*

Բայց XXI դարը բերում է նաև փոքր ազգերի հոգևոր ինքնությանը սպառնացող նոր վտանգներ: Մենք պետք է հավատանք, սակայն, որ հայ ժողովրդի հոգևոր անկումությունը կդիմագրավի նաև այս նոր փորձությունները, բանի որ Մաշտոցյան գրերի նման զենք ունի իր ձեռքին, տասնվեց դարերի հոգևոր մաքառման դասեր ունի թիկունքում: Վստահ լինենք, որ մեր լեզուն և գիրը Մայր Հայրենիքի և աշխարհայության հոգևոր միասնության համար հաստատարահիմն կռվան կլինի նաև ապագայում, ինչպես եղել է հազար վեց հարյուր տարի»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունի իր խոսքն էր հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, խոսք, որն ընթերցեց նախագահի օգնական Վիգեն Մարգարյանը, որտեղ ասվում է. «*Ողջունում եմ Հայոց Գրերի Գյուրի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը, նրա կազմակերպիչներին և մասնակիցներին:*

Հայ Գրերի Գյուրով մեր ժողովուրդը թևակոխեց մշակութային, գիտական ու քաղաքակրթական նոր ժամանակաշրջան: Այդ առաջընթացը հնարավոր եղավ երկրի մտավորականության, հոգևորականության և բարձրագույն պետական իշխանության միահամուռ ջանքերի շնորհիվ:

Մասնավորված հայության բոլոր հատվածները Գրերի Գյուրի շնորհիվ միավորվեցին հայալեզու դպրոցների լայն ու միասնական ցանցով, ձևավորվեց միասնական ազգային ինքնագիտակցություն, ինչը վճռորոշ դեր խաղաց երկրի ու ազգի հետագա ճակատագրում:

Մաշտոցյան Գրերի Գյուրը հայոց պատմության այնպիսի ընդգրկուն և նշանակալի դրվագ է, որ գիտնականների յուրաքանչյուր սերունդ այն նորովի ընկալելու և վերափնտրելու հարկը ունի: Ներկա գիտաժողովը մենք դիտարկում ենք այս համատեքստում և հաջողություններ մատչում նրա մասնակիցներին»:

Այնուամենայնիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպիսկոպոս Կոնյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը (տես էջ 16):

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Ս. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինի օրհնության խոսքը, որում ասվում է. «1600 տարիներ շարունակ մեր ինքնության աղբյուրը, մեր միության շաղախը, մեր գոյապայքարին առանցքը դարձած Մեսրոպեան ԱԳ-ը առանկի քան երբեք մեզի համար կը մնայ այսօր ու միշտ մեր հզորության, մեր միասնականության ու մեր յանդուրժանության ամենէն ապահով ճամբան:

Տնու հայ լեզուն՝ հայ ընտանիքը պիտի կորսնցնէ «փոքր Հայաստան» դառնալու իր առաքելությունը: Տնու հայ լեզուն՝ հայ դպրոցը պիտի կորսնցնէ իր գոյության պարճառը: Տնու հայ լեզուն՝ հայո ինքնությունը պիտի զուլանալի մշակոյթ ու ինքնության քանդող համաշխարհայնացումի հոսանքներուն դիմաց:

Արդ, Մեսրոպեապետը հայ լեզուին առողջ պահպանումը, անոր ճիշդ ու հարագար գործածումը, յարկապէս մեր նոր սերունդին կողմէ ու տակասին՝ լեզուաբանության, քերականագիտության, բանահիստության, գրականագիտության եւ հայագիտության այլ բնագաւառներէն ներս հայ լեզուի զանազան ծալքերուն, նրեղոյներուն ու խնդիրներուն լուրջ ուսումնասիրութիւնը Մենք կը նկատենք առաջնահերթութիւն: Այս ծիւղէն ներս Հայաստանի պետութիւնը իր կարևոր դերը ունի կարարելիք: Պետության կողքին՝ մեր Եկեղեցին, Հայաստանէն ներս թէ դուրս, կոչուած է անկի աշխարհութեամբ յառաջ տանիլ հայ լեզուի տարածման աշխատանք՝ վերականգնելով ու վերականգնակերպելով կրթական ու մշակութային իր պարմական առաքելութիւնը: Մեր մշակութայնները, բանասերները, հայագէտները, ուսուցիչները ու հոգևորականները, խրաքանցիւրը իր մօրեցումով ու շեշտաւորումով, կենսական դեր ունի կարարելիք այս ուղղութեամբ:

Արդ, 1600-ամեակի նշումը սոսկ յորելեանական հանդիսութեան պէտք չէ վերածուի: Ան պէտք է դառնայ հայ լեզուի նկատմամբ մեր ունեցած նախանձախնդրութեան շօշափելի արտայայտութիւն տալու մարտահրաւեր: Ան պէտք է դառնայ Մեսրոպեան ուղղագրութեան, արեւելահայ ու արեւմտահայ լեզուներու գործածութեան ու ընդհանրապէս հայ լեզուին առնչուած խնդիրներու լուրջ ու համապարփակ ուսումնասիրութեան սքանչելի առիթ մը: Մեր սպասումն է, որ ներկայ գիտածողովը ա՛յս հայեցակէտով ու հետանկարով կազմակերպէ ու կարարէ իր աշխատանքները:

Լիազումար նիստում ընթերցվեցին Մաշտոցյան Մարենադարանի տնօրեն, ակադեմիկոս Սեն Արեշտայանի «Մեսրոպ Մաշտոցի եռերկր սխրանքը», ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանի «Գրերի Գյուպը և հայ ինքնությունը», Միջհայնի համալսարանի պրոֆեսոր Գևորգ Բարդակեյանի «Տառ, խոսք և միւրք. համառոտ ակնարկ հայոց լեզվի և հայ մարզի ու մշակույթի փոխառնությունների մասին», ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի տնօրեն, բա-

նասիրական գիտությունների դոկտոր Ազատ Եղիազարյանի «Մեսրոպ Մաշտոցի կերպարը հայ ժողովրդի գիտակցության և հայ գրականության մեջ» թեմաներով զեկուցումները:

Գիտաժողովն այնուհետև շարունակվեց իրար զուգահեռ ընթացող երեք բաժանմունքներում:

Առաջին «Հայոց Գրերի Գյուլը և նրա պատմական նշանակությունը» խորագրված բաժանմունքում կարդացված զեկուցումները նվիրված էին Մաշտոցյան շրջանի հայերենի հնչյունական համակարգին (Ջ. Բոլոնյեզի՝ Իլալիա, Գ. Գևորգյան), Դպրության Տիր աօրվածության հին պաշարամունքի ազդեցությունը Մաշտոցի գրական կերպարի ձևավորման վրա (Աշ. Պետրոսյան), Մաշտոցի գործունեության մշակութաբանական հենքին (Ն. Հակոբյան), Նախամաշտոցյան հայ գրերի հարցին (Ա. Մուշեղյան, Ն. Հակոբյան, Ս. Նմայակյան), Մաշտոցի կողմից գրերի Բալուում ստեղծված լինելու ավանդությանը (Ան. Պետրոսյան), Հայոց գրերի անվանումների ծագմանը (Ս. Մուրավյով՝ Ֆրանսիա, Ռուսաստան), Մաշտոց անվան ստուգաբանությանը (Տ. Դալալյան), Մաշտոցագիտական ուսումնասիրություններին (Ա. Սահակյան), հայոց գրերի, որպես ինքնապահպանության գործոնի (Վ. Վարդանյան), Մաշտոցյան գրերի մասին ֆրանսիացի և ռուս հայագետների հայտնած կարծիքներին (Ա. Դուլիսանյան, Ա. Փաշայան), հայոց դպրության միջազգային նշանակությանը (Վ. Տրուբնիկով՝ Ռուսաստան), Հայոց գրերի, որպես ազգային ինքնության գործոնի (Ալբ. Ստեփանյան, Մ. Հարությունյան, Ա. Էլիզաբեթ Ռեդգեյթ՝ Մեծ Բրիտանիա, Ս. Զաքարյան, Ռ. Միրումյան, Ռ. Տեր-Մերկերյան՝ Ֆրանսիա, Վ. Պողոսյան), հայապատեթություններն գրականությանը (Ն. Ստեփանյան), հայապահպանության արդի խնդիրներին (Լ. Եղիազարյան) թեմաներին:

Երկրորդ «Հայոց Գրերի Գյուլը և հայոց մշակույթը» բաժանմունքում կարդացված զեկուցումները նվիրված էին առաջին հայագիր հեղինակներին (Կ. Յուզբաշյան՝ Լեհինգրադ), 5-րդ դարի հայ մատենագրության հրապարակախոսական շերտին (Գ. Անանյան), Հայոց գրի զարդագրային ու մանրանկարչական արտահայտություններին (Նով. Հակոբյան), Հայկական պապ կերպրանդակներում առկա ուսումնառության թեմային (Ն. Պետրոսյան), Հայոց լեզվաբաղադրականությանը (Ն. Զաքարյան), «Երևան» տեղանվան ուղղագրությանը (Նովի. Բարսեղյան), Տին հայերենի հնդեվրոպական ծագման հոմանիշ բայերին (Ն. Միմոնյան), Հայտուկ անուններով կազմված բարբառային ածականական հոմանիշներին (Ն. Մեսրոպյան), 5-րդ դարի հայ մատենագրությունում և հայերենի բարբառներում առկա երկրագործական բառերին (Ա. Աբրահամյան), Հայոց հին ամսանուններին (Վ. Բառնասյան), Հայերենի ծայնավորների շարքում Ը-ի գրաված դիրքին (Բ. Գուլակյան՝ Ռուսաստան), Հայկական համակարգչային տառատեսակներին (Ա. Դաբուլյան), Հայկական գաղափարագրերի (նշանագրերի) համակարգչային համառոտագրված ծրագրին (Գ. Վահանյան), Կորյունի «Վարդ Մաշտոցի»-ին (Ա. Տերյան՝ ԱՄՆ), Գրիգոր Նարեկացու Խաչի ներբողյանի ակրոստիկոսին (Ն. Միրզոյան), Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» ստեղծագործությանը (Մ. Վ. Վան Լինդ), Հայագիր օլարալիզու գրականությանը (Ն. Չոբանյան), Օսմանյան կայսրությունում հայերի լեզվական իրավունքների ոլորտաբանները (Վ. Սվազյան), Կոմագենի գրավոր-մշակութային ակունքներին (Լ. Ասրյան), Հայկական և վրացական Աբուրեհն-

ների ստեղծման սկզբունքներին (Ա. Բաբայան), Հայոց ասեղնագործության հյուսածո արձանագրություններին (Կ. Բազեյան) թեմաներին:

Երրորդ՝ «Հայոց գրերի գյուրը և Հայոց Եկեղեցին» բաժանմունքում կարդացված գեկուցումները նվիրված էին Մեսրոպ Մաշտոցի գինվորական ծառայությունից մինչև եռգևոր ծառայությունը ընդգրկող գործունեությանը (Մեսրոպ արքեպս. Գրիգորյան՝ Վիեննա), Մաշտոցի հյուսիսային երկրորդ ուղևորության ժամանակին և խնդիրներին (Ա. Հակոբյան), Ալեանդալորության նկատմամբ Մաշտոցի վերաբերմունքին (Ս. Հոբոթյունյան, Վ. Բալասյան՝ Սթամբուլ), Հայոց Եկեղեցու որպես Էթնոմալապոլիտիկայի խորհրդանշանի (Ն. Հարություն), Հայոց եկեղեցական պարամագրության սկզբնավորմանը (Ա. Բոգոյան), Գրերի Գյուրը Օրմանյանի գնահատությամբ (Է. Կոստանյան), Հայկական և երևի ժուսական գրերի արևելքում գործում հունական մշակույթի ազդեցությանը (Ռ. Կարիկով՝ Ռուսաստան), Ավետարանի մաշտոցյան թարգմանության բնագրի վերականգնմանը (Ն. Բուշաուզեմ՝ Ավստրիա), Ազգային հիմներգության ձևավորմանը (Ա. Արևշատյան, Ս. Նավոյան), Սրբոց Թարգմանչաց եկեղեցական կանոնի և տոնի ձևավորմանը (Վ. Դերիկյան), «Շարակնոցի» թարգմանչաց կանոնին (Վ. Ներսիսյան), Գրերի Գյուրի մասին «Գիրք պարմառացի» վկայություններին (Է. Շիրիկյան), Ս. Գրիգոր Լուսավորչի ծագումնաբանությանը (Մ. Եվադյան՝ Ֆրանսիա), Հռիփսիմյանց վկայաբանությանը (Զ. Տեր-Դավթյան), Հայ-բյուզանդական միջնադարյան բանավեճերում հիշվող հայալեզու տերմիններին (Զ. Նանիկ՝ Գերմանիա), «Առակաց գրքի» միջնադարյան մեկնություններին (Ս. Գրիգորյան), «Այուր» և «սպուր» բառերը Մաշտոցին վերագրվող սկզբնաղբյուրներում (Օ. Վարդապարյան), Հայոց գրային համակարգի վաղ միջնադարյան բնագիտական բացատրություններին (Գ. Պողոսյան), Գրի և գրքի հետ կապված հայոց ծեսերին (Ն. Պիլիկյան), Հայոց Գրերի Գյուրին երաժշտապեսական խնդիրների համարեքտում դիտարկմանը (Ն. Ն. Սյունիսյան) թեմաներին:

Այս գիտաժողովը եկավ ոչ միայն ևս մեկ անգամ հավաստելու Մաշտոցյան գյուրի հայ ժողովրդի կյանքում խաղացած բացառիկ դերը, որպես հայոց աշխարհի երկրորդ լուսավորության քրիստոնեության ընդունումից հետո, այլև վեր հանելու և մարմնակերպ գիտաբանական այն հիմնախնդիրները, որոնք կան երկրորդ դարի հայ դասական պարմագրության, Հայոց Աբուբակի և ընդհանրապես հայոց գրային համակարգի և վերջինիս անցած պարմական զարգացման բնագավառում:

ՎԱՐՆԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՉԹՈՒԼԱՅԻՆ ԵՌԱՆԴՈՎ

Լրացավ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Մաշտոցի անվան Մարենադարանի արվեստի բաժնի վարիչ Հրավարդ Հակոբյանի ծննդյան 75-ամյակը:

Այս 75 տարիներից շուրջ հինգ տասնյակը կապված են հայ արվեստի և հայագիտության հետ: 1949 թ. ավարտելով Հոկտեմբերյան քաղաքի (այժմ Արմավիր) թիվ. 1 միջնակարգ դպրոցը, 1949-1952 թթ. ա-

վտրել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի քանդակագործության բաժնում, այնուհետև 1953-1958 թթ. Երևանի Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետում: Շնորհիվ ուսումնառության այս երկու միմյանց հաջորդող շրջանների, ինչպես գրում է արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանը,



«նա ձեռք է բերել արվեստագետի համար կարևոր երկու հմտություն՝ նկարչի աչք և աղբյուրագետի պրպտող միտք»:

1959 թվականից առ այսօր Հրավարդ Հակոբյանը աշխատում է Մաշտոցի անվան Մարենադարանում՝ 1986 թվականից ղեկավարելով Մարենադարանի միջնադարյան արվեստի բաժինը:

1968 թ. պաշտպանել է թեկնածուական արեւնախոսություն՝ «Վասպուրականի մանրանկարչական դպրոցի սկզբնավորումը և Աղթամարի XIV-XV դդ. նկարիչները» թեմայով, ստանալով արվեստագիտության թեկնածուի աստիճան:

1985 թ. պաշտպանել է դոկտորական արեւնախոսություն՝ «Վասպուրականի մանրանկարչությունը (XII-XV դդ.)» թեմայով, և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

1989 թ. համալսելության կարգով երավիրվում է նաև խաչատուր Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարան, նախ որպես ամբիոնի վարիչ, ապա 2000 թվականից՝ ամբիոնի պրոֆեսոր:

Անցնող այդ տասնամյակները Հ. Հակոբյանի կյանքում նշանավորվել են գիտա-մանկավարժական և հասարակական հարուստ և արդյունաշատ գործունեությամբ: Նա հեղինակ է շուրջ երկու տասնյակ աշխատությունների: Գիտնականի պրպտումների շրջանակում առանձնակի տեղ է գրավում Վասպուրականի արվեստը, որին է նվիրված նրա երկհատոր «Վասպուրականի մանրանկարչությունը» (հտ. Ա. Երևան, 1976 թ., հտ. Բ, 1982 թ.) գործը, ինչպես նաև «Հայկական մանրանկարչություն» շարքի Վասպուրականին նվիրված մե-

ծաղիր այլու (Երևան, 1978 թ.). որը 1989 թ. հրապարակվեց նաև ռուսերեն: Անհրաժեշտ է նշել, որ Հ. Հակոբյանի համաեղինակացությամբ են լույս տեսել նաև «Հայկական մանրանկարչություն» (Լենինգրադ, 1984 թ.) անգլերեն և «Հայկական մանրանկարչություն» (Երևան, 1987 թ.) ռուսերեն ալբոմները:

Վասպուրականի մանրանկարչությանը նվիրված իր ուսումնասիրությամբ Հ. Հակոբյանը վեր հանեց Հայոց պատմական այս մեծ նախնագի փորձեր գավառներում գրավող վանական գրչօջախների մանրանկարչական արվեստի մեջ եղած ընդհանրություններն ու փոքրությունները:

Գիտական հետազոտությունները ազգային հիմնախնդիրների պաշտպանությանը ծառայեցնելու բնորոշ օրինակ է գիտնականի «Արցախ-Ուրիքի մանրանկարչությունը» (Երևան, 1989 թ.) ուսումնասիրությունը, որին 1991 թ. հաջորդեց «Արցախի միջնադարյան արվեստը» գործը:

Ընդլայնելով Արցախի արվեստի ուսումնասիրության շրջանակը և գիտության միջոցով Արցախի դարին իր մասնակցությունը բերելու նպատակադրմամբ 1993 թ. նա Բեռլինում Գերմանիայի Ավերաբանական Եկեղեցու նախագահ Մանֆրեդ Ռիխտերի աջակցությամբ հրապարակում է «Լեռնային Ղարաբաղի (Արցախ) պայքարը, պատմությունը, մշակույթը, արվեստը» հիմնարար հատորը՝ աշխարհակցությամբ եվրոպացի հայագետ հնդի-նակավոր գիտնականների: Այս գրքում համակողմանիորեն ներկայացված է ոչ միայն Արցախի արվեստը, այլև արցախյան հիմնախնդիրը:

Այս գործի համար 1996 թ. Հ. Հակոբյանը արժանանում է ԼՂՀ-ի Եղիշեի անվան մրցանակին:

Առանձին մի խումբ են կազմում արվեստի պատմությանը և տեսությանը նվիրված հոբեյլարի այն գործերը, որոնք գրված են արվեստագիտության դասավանդման և ուսուցման մեթոդիկայի տեսանկյունից:

Այս շարքի առաջին աշխատանքն էր «Կերպարվեստը հայոց կրթարաններում» (Երևան, 1996 թ.) ուսումնասիրությունը, որը եկավ լրացնելու հայ կերպարվեստի ուսուցման պատմության, դրվածքի ու մեթոդական եղանակների մասին մեզանում եղած բացը:

Ուսումնական նույն թելադրանքով են գրված նաև «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» (Երևան, 1997 թ.), «Հայ արվեստի աշխարհում» (Երևան, 1998 թ.), «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց» (1-ին հրապարակությունը՝ Երևան, 1999 թ., երկրորդը՝ 2005 թ.), «Հայ արվեստի պատմությունը հին ժամանակներից մինչև մեր օրերը» (համաեղինակներ՝ Ա. Աղասյան, Վ. Ղազարյան, Մ. Հասրաթյան):

Գիտական հետազոտությունների հաջորդ ուղղությունը, որով զբաղվում է Հ. Հակոբյանը, հայ գաղթավայրերի արվեստն է: Բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել Իրաքիայի հայ համայնքի մասին: Իրալանդի համայնքի պատմությունը նա դիտարկում է Իրալիայում հայ արվեստի արտահայտման տեսանկյունից «Հայերը և Իրալիան» գրքում, որը ունեցել է երկու հրապարակություն (Երևան, 1999 թ. և 2005 թ.):

Շուրջով լույս կտեսնի նաև «Նոր Զուղայի հայ խոջաների ապարանքների որմնանկարները» ծավալուն ուսումնասիրությունը, որ Նոր Զուղայի որմնանկարչական արվեստը դի-

դարկվում է նոր շրջանի արևմտաեվրոպական ու արևելյան ավանդական զարդարվեստի հետ փոխված գուգահեռներում:


Գիտական հետաքրքրությունների այս լայն շրջանակը գուգակցելով մանկավարժական և հասարակական գործունեության ու քաղաքացիական բարձր նկատագրի հետ, Ն. Հակոբյանը վարում է նաև մի շարք գիտահասարակական պաշտոններ և պատրավորություններ: Նա արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական հասարակական կազմակերպության «Հայաստան-Իտալիա» ընկերության փոխնախագահն է, մի քանի գիտական հաստատությունների և գիտական խորհուրդների ու գիտական կոչումներ շնորհող հանձնաժողովների անդամ: Իր ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդ արվեստագետներ, պաշտպանելով իրենց թեկնածուական ատենախոսությունները, իրենց անձնագիրն են ստացել գիտության աշխարհում:

Ի գնահատություն գիտահասարակական այս գործունեության, Հրավարդ Հակոբյանը 2003 թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրին, իսկ օրերս՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատվո Գրին:

Երջանկափշարակ Վազգեն Առաքինի գահակալության փարիններից նա սերտորեն կապված է Մայր Աթոռի հետ՝ դեռևս 1970-ական թվականներից «Էջմիածին» ամսագրում փայտագրելով մեկ տասնյակից ավելի հոդվածներ:

Վերջերս լույս փռեցավ նրա «Հայոց Տերունական սրբապատկերները» հիմնարար աշխատությունը: Մեր Եկեղեցին պատկերապաշտության և պատկերամարտության նշանավոր վեճերի շրջանում միջանկյալ դիրք է գրավել, որը հայրնի է «պատկերահարգություն» անվամբ, ըստ որի պաշտվել է ոչ թե ինքնին պատկերը (իկոնան), այլ նրա պարունակած հոգևոր խորհուրդը: Ահա այս պատճառով Հայոց Եկեղեցին դասական իմաստով սրբապատկերներ չունի: Ն. Հակոբյանը սակայն մատենագրական աղբյուրների նրբին քննությամբ ցույց է տալիս, թե սրբապատկերը որպես հոգևոր ծիսա-պաշտամունքային երևույթ, ինչ արտահայտություններ է ունեցել Հայոց Եկեղեցում այս շրջագծում քննելով նաև թե՛ փարբեր սրբանկարներ և թե՛ ժողովրդային պաշտամունքի առարկա դարձած ձեռագիր Ավետարանների Տերունական պատկերները և մեծադյա կազմերը:

Այսօր ևս Ն. Հակոբյանը աշխատում է նույն եռանդով՝ մեկը մյուսի երևից ամբողջացնելով իր նոր ուսումնասիրությունները: 75-ամյակի օրերին լույս փռեցավ նրա «Կենսամարենագիտությունը», ուր ներկայացված է գիտնականի կյանքի անցած ճանապարհը, ինչպես նաև փայտագիր աշխատությունները և դրանց առիթով լույս փռած գրախոսականները: Ինչպես ինքը ասաց կարակելով, թե այս Կենսամարենագիտությունը եթե լույս փռեն մի երկու ամիս ուշ, ապա ևս երկու գիրք կնշվեր փայտագիր աշխատանքների ցանկում: Մաղթենք, որ անցնող ամիսներն ու փարինները այսուհետև ևս նորանոր գործերով հավելեն նրա աշխատությունների այս ցանկը, և Հրավարդ Հակոբյանը, շարունակելով նույն նվիրումով աշխատել, ոչ միայն իր հարուստ գիտա-ստեղծագործական փորձը փոխանցի իր կրտսեր գործընկերներին, այլև նրանց համար շարունակի մնալ գիտնականի և հասարակական մարահոգություններով ապրող մարավորականի կենդանի օրինակ:



**ՔԱՆԱԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ
Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ ԵՎ ՄԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ
ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՅՈՒՄ**

Մեպրեմբերի 11-ին՝ հաջվերացի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Հայ Եկեղեցու հնավանդ կանոնների համաձայն, նախորդ օրը խարտավիլակ Ս. Մուշեղ արևդա Բաբայանի վկայությամբ կատարվեց քահանայացուների ընծայման հանդիսավոր արարողությունը:

Հաջորդ օրը, հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիո Հայրապետական Պատվիրակ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, Հայ Եկեղեցու նվիրապետական աստիճանի՝ քահանայության արժանացան նախկին ճեմարանավարներ Վազգեն սրկ. Զեսաբլյանը, Մանուկ սրկ. Ղալաչյանը, Դավիթ սրկ. Միքայելյանը, Գոռ սրկ. Գրիգորյանը, Անդրանիկ սրկ. Հակոբյանը և քահանայից լսարանն ավարտած Արմեն սրկ. Մկրտչյանն ու Վարդան սրկ. Ավերիսյանը: Ձեռնադրող Սրբազան Հայրն ընծայացուներին համապատասխանաբար վերանվանեց. Վազգեն սրկ.՝ Ս. հաջապուր, Մանուկ սրկ.՝ Ս. Մեբեոս, Դավիթ սրկ.՝ Ս. Դերենիկ, Գոռ սրկ.՝ Ս. Գրիգոր, Անդրանիկ սրկ.՝ Ս. Մաշտոց, Արմեն սրկ.՝ Ս. Մեսրոպ, և Վարդան սրկ.՝ Ս. Մարիանոս: Հավարտ ձեռնադրության Սրբազան Հայրը նորընծաներին պատգամեց.

«Միայն ծիսակատարություն չէ, սիրելիներս, քահանայությունը, և այս խոսքս կուզեմ ուղղել նորած մեր Քահանա Հայրերին: Շար կարևոր է պաշտամունքը, շար կարևոր են Սուրբ Խորհուրդները, բայց միայն այդ չէ քահանայի պաշտոնը. նույնքան սուրբ է Ավերարանի խոսքը: Մենք և՛ խորհրդակատարության ծառաներն ենք, և՛ սուրբ խոսքի: Սուրբ խոսքը սուրբ և ճշմարիտ դավանությամբ ժողովրդին պիտի բացատրենք, ժողովրդի սրտի մեջ պիտի դրոշմենք» (տ՛ն էջ 21):

Նույն օրը Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում, ձեռամբ Կտրայքի թեմի առաջնորդ Ս. Առաքել եպս. Քարառյանի, դպրության և սարկավագության աստիճաններ շնորհվեցին քահանայից լսարանն ավարտած փասը սաների:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՄԱԿԱՐԳ**



Տ. ԽԱՉՈՍՈՒՐ ԺԱՆՆԱ ՔԵՍԵԼՅԱՆ
(ավագանի անունը՝ Վազգեն)

Ծնվել է 1976 թ. հունիսի 27-ին Էջմիածին քաղաքում:

1981-1991 թթ. սովորել է տեղի Ռ. Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1991-1998 թթ. ուսանել և ավարտել է Գևորգյան Հոգևոր ճեմարանը:

1998 թ. սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1998-1999 թթ. եղել է Գևորգյան Հոգևոր ճեմարանի վերակացու և միաժամանակ դասավանդել Նոր Կտակարան:

1999-2001 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2002 թվականից ծառայել է Մայր Աթոռ Սիմեոնեղեցական հարաբերությունների բաժնում որպես գործավար-քարտուղար:

2002 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ-եթովպական եկեղեցական հարաբերությունների պատմությունից» թեմայով:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Տ. ՄԵՔԵՈՍ ՔԱՇԱՏՐՅԱՆ ՂԱՍԵՅՅԱՆ

(ավագանի անունը՝ Մանուկ)

Ծնվել է 1976 թ. օգոստոսի 8-ին Երևանում:

1982-1992 թթ. սովորել է մայրաքաղաքի Ս. Սպանդարյանի անվան թիվ 24 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի Ժառանգավորաց վարժարանում:

1995-1996 թթ. սովորել է Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի Ընծայարանում:

1996-1998 թթ. ուսանել և ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանը:

1998 թ. աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ԶՂԶԿ-ում:

1998 թ. սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1998-2000 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2000-2001 թթ. ծառայել է ՀՀ ՊՆ-ում որպես ՀՀ ՁՈՒ Հոգևոր Մասնաշաղկի առաջնորդի օգնական:

2002-2003 թթ. ծառայել է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

2002-2005 թթ. եղել է Հայ Առաքելական Եկեղեցու Երիտասարդական Ուխտագնացությունների Կենտրոնի տնօրեն:


2005 թ. սեպտեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ս. Հովհան Որոտնեցու «Մեկնութիւն չորեքասան թղթոցն Պօղոսի» գործի ուսումնասիրությունն ու բնագիրը» թեմայով:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



Ս. ՄԵՍԻՍԻՅԱՆԻՆ Է ՂԻՄՈՒՄ ՁԵՌՆԱՂԵՐՆԵՐ ՍՐԲԱԾԱՆՆԱԿՈՐԸ:
Ս. ՄԵՍԻՍԻՅԱՆԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԳԵՐԻԳՈՅԻՆԸ



«ՆԱԽԱԳԹՈՒՆ»





«ՆՐԱԺԱՆՐՈՒՄ»



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ՍԵՐԱՊԻՄԱՆԻ
ԿԱՌԱՅԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ
ԿՈՄԻՏԵ

ՆՈՒՍՏԱՑ ՔԱՂԱՐԱՐՈՒԹՅԱՆ Է ԴԻՄԻՏՐԻ ՉԵԿԱՆԴՐԱՆԻ ՍԵՐԱՊԻՄԱՆՆԵՐԸ
Տ.



Տ. ԴԵՐԵՆԻԿ ՔԱՂԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

(ավագանի անունը՝ Դավիթ)

Ծնվել է 1978 թ. հունվարի 15-ին Արարատի մարզի Շառնուվյան գյուղում:

1985-1995 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1988-1993 թթ. սովորել և ավարտել է Արտաշատ քաղաքի Մելիք-Փաշանի անվան երաժշտական դպրոցը:

1995-2001 թթ. ուսանել և ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Սյունիանոս Նախավկայի փոխին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նաթան նախկուպոս հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001-2002 թթ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում:

2002 թ. հունիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Բ Վկայասեր Կաթողիկոսի խրատները» թեմայով:

2002-2004 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2004-2005 թթ. հոգևոր ծառայության է անցել Արարատյան հայրապետական թեմի Ներքին Դպիրի Ս. հարություն եկեղեցում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի փոխին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՎԱՆԱԳՐԻԳՈՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Գոռ)

Ծնվել է 1977 թ. նոյեմբերի 28-ին Արմավիր քաղաքում:

1993 թ. Արմավիրի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանն ավարտելով՝ ընդունվել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարան:

1995 թ. հանձնելով 10-րդ դասարանի ավարտական քննությունները Գյումրիի Անանիա Շիրակացու անվան թիվ 16 միջնակարգ դպրոցում ստացել է ավարտական վկայական:

1996 թ. ավարտելով Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը՝ ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան, որն ավարտել է 2001 թ.:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Սյուրբիաննոս Նախավկայի փոնին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է ստրկավագ:

2002 թ. հուլիսի 8-ին աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռում որպես հյուրընկալի օգնական, ապա 2003 թ. ապրիլ 22-ից՝ հյուրընկալ:

2004 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը և Հոնիի Կաթողիկոսությունը» թեմայով:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Նաչվերացի փոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Տ. ՄՄՇՏՈՑ ՔԱՇԱՆԿ ԿԱԿՈՒՅԱՆ

(ավագանի անունը՝ Անդրանիկ)

Ծնվել է 1978 թվականի ապրիլի 22-ին Գյումրի քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է Գյումրիի Հովսեփ Կարախանյանի անվան թիվ 30 միջնակարգ դպրոցում:

1995-1998 թթ. սովորել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1998-2004 թթ. ուսանել և ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանը:

2004-2005 թթ. Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նշանակվել է վերակացու Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Սյրելիանոս Նախավկայի փոխին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիմոն եպիսկոպոս Աղամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի փոխին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:



Տ. ՄՇԵՐՈՊ ՔԱՆՈՒՄՆԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

(ավագանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1964 թ. սեպտեմբերի 15-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղում:

1971-1979 թթ. սովորել է Սյունիական երաժշտական դպրոցի երաժշտական թիվ 7 միջնակարգ դպրոցում:

1980-1982 թթ. սովորել է Սյունիական երաժշտական թիվ 21 պրոֆեսիոնալ մանկապարտեզում ստանալով ավարտական աստիճանի աստիճան:

1983-1987 թթ. աշխատել է Սյունիական երաժշտական լիցեյում երաժշտական գործարարական սկզբում որպես փականագործ-հավաքող, այնուհետև՝ որպես երգիչ:

1985-1988 թթ. ուսումը շարունակել է Երևանի Լիցեյում երաժշտական լիցեյում Սյունիական մանկապարտեզի հետևյալ բաժնում, որն ավարտելով՝ ստացել է երաժշտական-լիցեյումի մասնագիտություն:

1988-1992 թթ. աշխատել է Արցախի հեռուստատեսության հասարակ լուսավորման բաժնում որպես ավագ վարպետ:

1990 թ. անցել է ծառայության Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմում:

1996 թ. ձեռնադրվել է դպիր, իսկ 2000 թ.՝ սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Պարզևարենայիսկոպոս Մարտիրոսյանի:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատրիարկ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:



Տ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՔԱՆԱԿԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Վարդան)

Ծնվել է 1977 թ. հոկտեմբերի 6-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում:

1984-1994 թթ. սովորել է Կոնկի Մարթնոս Մաղաթյանի անվան միջնակարգ դպրոցում:

1994-1996 թթ. սովորել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1996-1999 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000-2002 թթ. վերակազմել է եղել Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի Կոնիկ, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պապիկյան Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

ՔԱՆԱԿԱՅԱԿԱՆ ԶԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մեպարեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի իսկականությունը, տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Քահանայից լսարանն ավարտած ինը սարկավագներ, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի գլխավոր տնօրեն և Վաշինգտոնում թեմական պատվիրակ Տ. Վիգեն եպս. Ալբազյանի, սրաջան քահանայական աստիճան:

Տարիներ առաջ Ամենայն հայոց հայրապետի տնօրինությամբ հայ Եկեղեցու սպասավորներ պատրաստելու նպատակով կազմակերպված քահանայից լսարան ընդունվեցին հայաստանի տարբեր շրջաններից եկած բարձրագույն կրթությամբ դիմորդներ: Հերթական հունձը ընդգրկում է տնտեսագիտական, ճարտարագիտական, մանկավարժական և այլ մասնագիտական կրթություն ստացած անձերի, որոնք պատրաստակամություն էին հայտնել հերկելու հայ Եկեղեցու առաքելախառնակ կանոններին և հոգևոր սպասավորության կոչվելու:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, կատարվեց քահանայացուների ընծայման արարողությունը:

Հընթացք Ս. Պատարագի ձեռնադրող Սրբազան հայրն օծեց ընծայացուների ճակատը, աջ և ձախ ձեռքերը: Վրեժ սրկ. Ալեքսանդրյանը վերանվանվեց հովհաննես քահանա, Գուրգեն սրկ. Մարգարյանը՝ Ստեփաննոս քահանա, Առուշան սրկ. հարությունյանը՝ Մեպոս քահանա, Վարդան սրկ. Տեր-Մկրտչյանը՝ Միստոս քահանա, Ռոբերտ սրկ. Ստեփանյանը՝ Մաշտոց քահանա, Արմեն սրկ. Աբրահամյանը՝ Զգոն քահանա, Արկադի սրկ. Մաթևոսյանը՝ Շնորհք քահանա, Արտակ սրկ. Մարգարյանը՝ Թորգոմ քահանա, և հակոբ սրկ. Տեր-Բարսեղյանը՝ Գևորգ քահանա:

«Այսօր կոչված եք ծառայելու Աստծուն ու մեր Եկեղեցու միջոցով ծառայելու մեր ժողովրդին, և դուք այդ ծառայության մեջ, առաջին անգամ ապագա գործունեության մեջ Բրիստոսին որպես խորհրդանիշ պետք է ունենաք: Քահանայությունն Աստծո կողմից տրված պարգև է, և դուք այդ պարգևը պետք է լավ օգտագործել իմանաք: Քահանայությունն ամեն մարդու չի տրվում. ընտրվածներին է շնորհվում» Աստծո Ս. Խորանի առջև: Ունենալով Բրիստոս որպես իսկական հովիվ՝ պիտի առաջնորդեք ձեր ժողովուրդը դեպի եավիտենական կյանք: Որպես գեներ ունեցե՛ք ձեր հաջն ու Ավետարանը... Միրեցե՛ք ձեր ժողովուրդը իբրև ձեր անձերը» (տե՛ս էջ 25),- նորընծա քահանաներին պարգևանք Սրբազան հայրը՝ հորդորելով լծվել քարոզչական գործունեության և եովական կյանքի:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Տ. ՎԱՆԵՍԻԱՆԻ ԲԱՆԻՔԱՆԻ ՄԵԼԵՔԵՆԴՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Վրեժ)

Ծնվել է 1959 թ. դեկտեմբերի 15-ին Իրանի Թեհրան քաղաքում:

1966-1967 թթ. սովորել է Կեդի Նաիրի հայկական դպրոցում:

1967 թ. ընդունվելով ներգաղթել են Հայաստան՝ ընդունվելով Գյումրի քաղաքում:

1967-1975 թթ. սովորել է Կեդի Պետրոս Դուրյանի անվան միջնակարգ դպրոցում:

1975-1979 թթ. սովորել է Գյումրիի երկաթգծի տեխնիկումում:

1979-1981 թթ. ծառայել է Խորեղային բանակում:

1982-1988 թթ. աշխատել է Գյումրիի մեքենաշինական գործարանում:

1992-1999 թթ. զբաղվել է անհատ ձեռնհրեցությամբ:

1999-2001 թթ. սովորել է Մայր Աթոռ ՋԴԿ Ոստիկանների պատրաստման Գյումրիի լսարանում:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Զատնայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս-Քարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այբազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



Տ. ՍԵՂՈՒՆ ԶԱՆԳԵՆԱՆ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Առուշան)

Ծնվել է 1967 թ. օգոստոսի 2-ին Վայոց ձորի Կեչուր գյուղում:

1974-1984 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1984-1986 և 1989-1991 թթ. սովորել և ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը:

1986-1988 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1994-1995 թթ. աշխատել է Կեչուրի միջնակարգ դպրոցում:

1997-2002 թթ. աշխատել է Ջերմուկ քաղաքի հեռուստահաղորդիչ կայանում որպես հերթապահ-օպերատոր:

2002-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Զարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու որդի:



Տ. ՄԻՄԵՈՆ ԲԱՆԱԿԱՆ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

(ավագանի անունը՝ Վարդան)

Ծնվել է 1967 թ. հունվարի 3-ին Գեղարքունիքի մարզի Վերին Գեղաշեն գյուղում:

1974-1984 թթ. սովորել է Կեղի միջնակարգ դպրոցում:

1984-1989 թթ. սովորել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի

Անասնաբուժական ֆակուլտետում:

2002-2005 թթ. սովորել է Մայր Աթոռի Պապականության լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի Կոնիկ, ձեռամբ Գեղաշենի Տ. Առաքել եպիսկոպոս Քարաբյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գեղաշենի Տ. Վիգեն եպիսկոպոս Այբագյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:



Տ. ՄԱՇՏՈՑ ԲԱՆԱԿԱՍՏԵՓԵՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Ռոբերտ)

Ծնվել է 1972 թ. մայիսի 3-ին Արմավիրի մարզի Արևիկ գյուղում:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1991-1993 թթ. ծառայել է Մ Ջինված ուժերում:

1993-1996 թթ. սովորել է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

1996-2002 թթ. պատմության ուսուցիչ է աշխատել Արմավիրի մարզի Եղեգնուր գյուղի միջնակարգ դպրոցում:

2001-2002 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ԲԴԲԿ Ուսուցիչների պատրաստման լսարանում և աշխատել որպես կրոնի ուսուցիչ:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բաժանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Բարաձյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այրազյանի, ձեռնադրվել է ամուսնուցյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Տ. ԶԳՈՆ ՔԽՇԱՆԱՆ ԱՔԻՄՆԱՄՅԱՆ

(ավագանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 31-ին Երևան քաղաքում:

1980-1990 թթ. սովորել է Երևանի Խակոբյի անվան թիվ 132 ռուսական միջնակարգ դպրոցում:

1990-1995 թթ. սովորել է Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտում «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ:

1993-1995 թթ. ուսմանը զուգահեռ աշխատել է Երևան քաղաքի Վիճակագրական վարչությունում:

1995-1996 թթ. ծառայել է ՏՏ Ձինված ուժերում:

1997-1998 թթ. աշխատել է ՏՏ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության արժեթղթերի և բորսաների տնտեսությունում:

1999-2002 թթ. աշխատել է «Նայփոստ» ՊԲԲԸ-ի աշխատանքի կազմակերպման և վերահսկման վարչությունում:

2003-2005 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Բախանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Ս. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Ս. Վիգեն եպիսկոպոս Ալբազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ բախանա:

Ամուսնացած է, ունի երկու որդի:



Տ. ՇՆՈՐՀՔ ՔՓՆՄՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Արկադի)

Մնվել է 1973 թ. ապրիլի 12-ին Հրազդան քաղաքում:

1980-1990 թթ. սովորել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1992 թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետի աշխարհագրության բաժինը:

1997-1998 թթ. ծառայել է ՏՏ Զինված ուժերում:

2002-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բաղրամյանի պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել Եպիսկոպոս Բարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն Եպիսկոպոս Այբազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՎԱՆԱ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂՅԱՆ

(ավագանի անունը՝ Նակոր)

Ծնվել է 1974 թ. Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղում:

1981-1991 թթ. սովորել է Կեղի Սյունիան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում:

1991-1995 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նոգևոր ճեմարանում:

1996-1998 թթ. ծառայել է ՆՇ Զինված ուժերում որպես եղևնոր սպասավոր:

1999-2003 թթ. ծառայել է Արծվանիստի Վանական եկեղեցում:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բախանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել Եպիսկոպոս Բարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն Եպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

ՔԱՂԱՍՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

Սեպտեմբերի 25-ին՝ Վարազա Ս. Խաչի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ այս ամսվա ընթացքում թվով արդեն երրորդ քահանայական ձեռնադրությունը:

Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը քահանայության կոչեց յոթ սարկավագների՝ նրանց շնորհելով հոգևոր նոր անուններ: Գևորգ սրկ. Միրզոյանը վերանվանվեց Տ. Շահան, Հովհաննես սրկ. Ռուշանյանը՝ Տ. Ներսես, Վախթանգ սրկ. Առաքելյանը՝ Տ. Վահան, Հովհաննես սրկ. Հակոբյանը՝ Տ. Վարազ, Սանասար սրկ. Ղալիկյանը՝ Տ. Տարոն, Սարգիս սրկ. Յագիչյանը՝ Տ. Զավեն, և Արարիկ սրկ. Անանյանը՝ Տ. Շահեն:

«...Ձեր պաշտոնավարման սկզբից՝ քառասունյոթ խոկումի և պատրաստության շրջանից հետո առաջին իսկ օրը երբ սկսեք, ջանացեք ձեր կապը անխախտ պահել ձեր ծուխի ու համայնքի յուրաքանչյուր հայի, ամեն հավատարմոր զավակի հետ: Հավաքական աղոթքներից, քարոզներից ու հավաքություններից հետո ամեն մեկ հայի հետ կարողացեք պահել ձեր հարաբերությունը՝ դրոշմելու համար նրանց մարմնի և սրտի մեջ քրիստոնեական մեր Ս. Եկեղեցու վարդապետությունը, հայ ժողովրդի դարավոր արժեքները, գիրը, լեզուն և որպես հայ ապրելու կոչումը: ...Ձեր ուսման շրջանը այսօր առավել ևս նոր է սկսվում, որովհետև մինչև այսօր ամբարեցիք, այստեղից պիտի բաշխեք, ուրիշներին պիտի հասնեք տալու»,- իր պատգամը նորընծաներին ուղղեց Տարոն Սրբազանը (տե՛ս էջ 27):

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաև վեղարի փվչության արարողություն: Տ. Տարոնը, Տ. Զավենը և Տ. Շահենը, որպես կուսակրոն քահանաներ, ստացան վեղար՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

2005 թվականին ձեռնադրվել է արդեն 26 հոգևորական, որոնցից 23-ը՝ սեպտեմբեր ամսին:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ՉԵՌՆԱԿԱՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ. Տ. ՏՄԻՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԸ ՍՐԱՍՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՌՈՆՈՎ
ՕՏՈՒՄ Է ՉԵՌՆԱԿԱՂՈՒՎ ՔՈՒՆԱՄԱՆԵՐԻՆ



«ՆՐԱԺԱՌՈՒՄՆ»



Տ. ՀԱՆԵ ԱՐԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Արարյուն)

Ծնվել է 1982 թ. հոկտեմբերի 1-ին Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում:

1989-1999 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. ուսանել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2005 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Անդամ նախադասությունները չորս Ավետարաններում (գրաբար բնագիր)» թեմայով:

2004 թ. դեկտեմբեր 26-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի փոխին, ձեռամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի իսլամ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբեր 25-ին՝ Վարազա Ս. Խաչի փոխին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2005 թ. հուլիսից պաշտոնավարում է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանում որպես Նորին Արքեպիսկոպոսի գավազանակիր-գործավար:



Տ. ԶԱՎԵՆ ԱՐԵՂԱ ՅԱԶԻՉՅԱՆ

(ավագանի անունը՝ Սարգիս)

Ծնվել է 1981 թ. ապրիլի 20-ին Երևանում:

1988-1996 թթ. նախ սովորել է մայրաքաղաքի Մանվել Բաջունու անվան թիվ 54 միջնակարգ դպրոցում, ապա 1996-1998 թթ. Երևանի օպար լեզուների թեքումով թիվ 149 ավագ-դպրոց վարժարան-քոլեջում:

1999-2003 թթ. սովորել է Մեանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. ուսանել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2004 թ. դեկտեմբերի 26-ին՝ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի պոնին, ձեռամբ Գերաշևորի Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 25-ին՝ Վարագա Ս. Խաչի պոնին, ձեռամբ Գերաշևորի Տ. Տարոն եպիսկոպոս Ծերեճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ծառայության նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիվանատանը որպես գործավար:



Տ. ՏԵՐՈՆ ՄԲԵՂԸ ՂՈՒԼԻԿՅԱՆ

(ավագանի անունը՝ Սանասար)

Ծնվել է 1976 թ. սեպտեմբերի 21-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1993-1996 թթ. սովորել է Շիրակի թեմի Ըծայարանում:

1996-2001 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2001-2004 թթ. հոգևոր ծառայության է անցել Սամցխե-Ջավախքի Ընդհանուր Առաջնորդական Փոխանորդության Ծալկայի տարածաշրջանում որպես տեղի 13 հայկական գյուղերի հոգևոր սպասավոր:

